


3821

հայերէն



'2004





XVI

*G.*

may 1866

N 25

1110-473821

46357

ՅՈՎԱԿԻՓԻՆ

31-99

2-87

ՊԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

56

ՏԵՄԵՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հիմնադրված

3515



Ի ՏԵՄԵՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1842.

# ՅԱՆԿ

- ԳՎ . Ա : Տղայոց ու պատանիներուն համար ծանօթութիւն : 1
- ԳՎ . Բ : Յովակիմի Ուրբանուհիները Յակոբին Սիլվատիանի եղբայր : և այլն : 7
- ԳՎ . Գ : Յակոբին Սահբրէ հասնելը Վեներանին պարագրութիւնը : և այլն : 16
- ԳՎ . Դ : Յովակիմի երազը : Եղբայրնիւրուն Սիլվատիանի եղբայրը : և այլն : 24
- ԳՎ . Ե : Յովակիմի իր եղբայրնիւրուն հոգիները : և այլն : 31
- ԳՎ . Զ : Յովակիմի կենացը համար Ուրբանուհիին պաշտօնը : և այլն : 40
- ԳՎ . Է : Ուրբանուհիին պարտութիւնը՝ Յովակիմի ծանօթութեամբ գրանալուն համար : և այլն : 48
- ԳՎ . Ը : Յովակիմի ծանօթելը, և այլն : 55
- ԳՎ . Թ : Յովակիմի վերադարձն իր եղբայրը Պարտիզիանին գտնելը իրաջ . և այլն : 62
- ԳՎ . Ժ : Աստուծոյ ձեռքը : և այլն : 73
- ԳՎ . ԺԱ : Ստասիարարին երազը ու նոր ճիշտութիւնը : և այլն : 80
- ԳՎ . ԺԲ : Փարտանիին երազները : և այլն : 86
- ԳՎ . ԺԳ : Յովակիմի՝ Փարտանիին երազները ճիշտելը : և այլն : 94
- ԳՎ . ԺԴ : Աստուծոյ նախաձեռնութիւնը : և այլն : 101



ԳՎ. ԺԵ: Եգիպտացիներուն Յովսէփը  
երեւոյ Փրկելէն ահա պատրուելը : և այլն : 110:

ԳՎ. ԺԶ: Յովսէփին Եղեայրներուն՝ եր  
սուղէն երկըրպագոտելիւն : և այլն : 118:

ԳՎ. ԺԷ: Յովսէփին Եղեայրներուն ի-  
րենց յանցանքը Տելպէիս : և այլն : 126:

ԳՎ. ԺԸ: Յովսէփին Եղեայրներուն Տելիին  
եր սորակը անանին Տելիւն ելլելը : և այլն : 134:

ԳՎ. ԺԹ: Բեռնաձիւնը եր լաւալու համար  
Յակոբին հաճութիւնն պարը : և այլն : 142:

ԳՎ. Ի: Սէփօնին Բանաբէն դուրս Բերձէ-  
լը : և այլն : 151:

ԳՎ. ԻԱ: Յովսէփին Եղեայրներուն իրկին  
ճամբայ Բանաբէին : և այլն : 159:

ԳՎ. ԻԲ: Յովսէփ պակասին եր Եղեայր-  
նէրը երկէպոտելիւնն Տել : և այլն : 165:

ԳՎ. ԻԳ: Յովսէփ ինչոքէնքը եր Եղեայր-  
նէրուն ճանչցումելը : և այլն : 174:

ԳՎ. ԻԴ: Փարսասնին ու անոր ընդամէն-  
ին ուրախութիւնը , և այլն : 184:

ԳՎ. ԻԵ: Յակոբին պղտը Քանան  
հասնելին , և այլն : 190:

ԳՎ. ԻԶ: Յովսէփ եր հայրը Գեների Տել  
Բարնելը : և այլն : 198:

ԳՎ. ԻԷ: Յակոբին ու եր ընդամէնին  
Գեների Տել Բնակելը : և այլն : 210:

ԳՎ . ԻԳ : Եգիպտացիներուն իրենց ար-  
ջաւաները կերտուողի համար : Եւ այլն : 217:

ԳՎ . ԻԹ : Յակոբ իր կեանքին զանա-  
նին յօրհնալը : Եւ այլն : 224:

ԳՎ . Լ : Յովսէփին իր հօրը երկուք՝ Տե-  
նելը - Ժամանակը : Եւ այլն : 228:

ԳՎ . ԼԱ : Յակոբ իր օրհնու-լիւնը Յով-  
սէփին Գաղացը զլոյս լինացունելը : Եւ այլն . 238:

ԳՎ . ԼԲ : Յովսէփին արարու-լիւնը իր  
հօրը Տեանելուն զլոյս : Եւ այլն : 247:

ԳՎ . ԼԳ : Յովսէփին Եգիպտոսներուն նե-  
րս - Իննորբելին : Եւ այլն . 254:

ԳՎ . ԼԴ : Յովսէփին հահուան յօրհնալը :  
Եւ այլն : 263:

ԳՎ . ԼԵ : Յովսէփին զարբը : Լստու-ծոյ  
զլոյս ունեցած իր զօրտար հաւասարը : Եւ այ-  
լն : 272:

ԳՎ . ԼԶ : Յովսէփին իր հօրը ցո-ցըցած  
սէր ու հնազանդու-լիւնը : Եւ այլն : 281:

ԳՎ . ԼԷ : Յովսէփին հաւասարու-լիւնը  
իր Գաղացի խորտարելուն Տեղը : Եւ այլն : 291:

ԳՎ . ԼԸ : Յովսէփին ժողո-վիւնն որի  
դնելուն արիու-լիւնը . Եւ այլն : 298:

ԳՎ . ԼԹ : Յովսէփին Խոնարհու-լիւնը :  
Եւ այլն : 306:

ԳՎ . Խ : Յովսէփին ընդհանուր Բարե-  
սէր Բնասարու-լիւն իր ունեւնալը : Եւ այ-  
լն . 315:

# ՅՈՎԱՆՓՈՒՆ

## ՊԵՏՄՈՒԹՒՆԵՐ

Տղայոց ու պատանեկեաներուն համար գրված :

### ԳԼՈՒԽ Ե :

Աստուածաշունչին մէջի առաւել օգտակար ու պիտանի պատմութիւններուն մէկն ալ Յովսէփինն է, որն որ պարտին տղաքները միշտ փափաքանօք կարդալ : Հիմայ ես ալ անանկ կերպով մը պիտի սկսիմ աս պատմութիւնը ընել անոնց, որ անոնք օգուտ քաղեն անկէց :

Գուք շատ զիրքեր կրկարդաք՝ իմ իմ սիրելի տղաքներս, միայն ձեր զքօսանացը համար . ու ան զիրքերը առաւել կըսիրէք կարդալ՝ որոնք որ

ԳՎ . ԻԳ : Եգիպտացիներու մէջ իրենց ար-  
ջաւաները կերակուրի համար : և այլն : 217:

ԳՎ . ԻԹ : Յակոբ իր կեանքին վախճա-  
նին խորհեալ : և այլն : 224:

ԳՎ . Լ : Յովակիմ իր հօրը երկուսը՝ Տե-  
նելը և Ժամանակը : և այլն : 228:

ԳՎ . ԼԱ : Յակոբ իր օրհնութիւնը Յով-  
ակիմի գողցը զայս ընդցումելը : և այլն : 238:

ԳՎ . ԼԲ : Յովակիմի արարտութիւնը իր  
հօրը Տեանելը մէջ զայս : և այլն : 247:

ԳՎ . ԼԳ : Յովակիմի եղբայրներու մէ-  
ջ ինքրիւնի : և այլն : 254:

ԳՎ . ԼԴ : Յովակիմի հազարուն խորհեալ :  
և այլն : 263:

ԳՎ . ԼԵ : Յովակիմի վարքը : Աստուծոյ  
զայս ունեցած իր զօրանոր հասարակ : և այ-  
լն : 272:

ԳՎ . ԼԶ : Յովակիմի իր հօրը ցոյցած  
սէր ու հասարակութիւնը : և այլն : 281:

ԳՎ . ԼԷ : Յովակիմի հասարակութիւնը  
իր պաշտօնը հասարակելուն Տեղը : և այլն : 291:

ԳՎ . ԼԸ : Յովակիմի զորոյնութիւնի գե-  
ղեկը մարիութիւնը . և այլն : 298:

ԳՎ . ԼԹ : Յովակիմի խոնարհութիւնը :  
և այլն : 306:

ԳՎ . Խ : Յովակիմի ընդհանուր բարե-  
սիր բնասարակութիւնի իր ունեցեալը : և այ-  
լն : 315:

# ՅՈՒՍԷՓ ԻՆ

## ՊԵՏՄՈՒԹՒՒՆԵՐ

Տըտոյոց ու պատմանի ներսն համար գրված :

### ԳԼՈՒԽ Ե :

Աստուածաշունչին մէջի առաւել օգտակար ու պիտանի պատմութիւններուն մէկն ալ Յովսէփինն է , որն որ պարտին տղաքները միշտ փափաքանօք կարդալ : Հիմայ ես ալ անանկ կերպով մը պիտի սկսիմ աս պատմութիւնը ընել անոնց , որ անոնք օգուտ քաղեն անկէց :

Դուք շատ զիրքեր կը կարդաք՝ իմ իմ սիրելի տղաքներս , միայն ձեր զբօսանացը համար . ու ան զիրքերը առաւել կը սիրէք կարդալ՝ որոնք որ

սլատմութիւն են : Վահայն անոնցմէ  
 ՚ի զատ կըթութեան գիրքէր ալ  
 պէտք է որ կարգաք . ինչու որ , պար-  
 տիք գիտնալ՝ թէ ո՞ր բանը օգտակար  
 է , ու ի՞նչ բան պարտիք սորվիլ , որ  
 երբոր մեծնալու ըլլաք՝ աշխարհիս  
 մէջ աղէկութիւն ընէք , ու արքայու-  
 թեան մէջը յաւիտեան սուրբ ու եր-  
 ջանիկ ըլլաք :

Երբեմն դուք կըխաղաք ու շատ կու-  
 բախանաք , ու ես ալ կուզեմ ստ-  
 բանը . ինչու որ ձեզի օգուտ կընէ-  
 ան , ու նաև ուրախ ու երջանիկ .  
 վերջապէս անանկ օգտակար վարժու-  
 թիւն մըն է՝ որ սլառճառ կըլլայ ձեզ  
 քաջ ու աշխոյժ ընելու :

Վահայն ամէն ատեն խաղի պարա-  
 պիլ չըլար , ուրիշ դործեր ալ պար-  
 տիք ընել . սլատրաստը վեցէք աղէկ  
 բաներ ալ սորվիլ , որ մեծցած ժա-  
 մանեակնիդ օգտակար մարդեր ու կը-  
 սիկներ ըլլաք :

Ան տղաքները ու աղջիկները որ

ամէն ժամանակ կրխաղան ինքրդինք-  
նին զուարճացունելու համար՝ և ուրիշ  
բան չեն ըներ, երբոր մեծնալու  
ըլլան՝ ամէն տեսակ գործը կատեն, ճոյլ  
ու անօգուտ մարդիկ կըլլան. ո՛չ  
իրենց օգուտ կրնան ընել, ու ո՛չ ու-  
րիշին :

Ասանկ ալ թէ որ միայն պատմու-  
թիւններ կարդալու ըլլաք ձեր զուար-  
ճութեանը համար, ետքը ան տե-  
սակ գիրքերը առաւել պիտի սիրէք  
կարդալու, ու մէկալ բոլոր օգտա-  
կարները պիտի ասէք ծանր գործքի  
մը պէս :

Ա երջը ան օգտակար գիրքերը կար-  
դալը շատ դժուարութիւն պիտի ըլ-  
լայ ձեզի, ինչպէս ան տղան՝ որ բոլոր  
ժամանակը կրխաղայ, ու գործին ատե-  
նը դժկամակութիւն ցոյց կուտայ :  
Միտքերնիդ պիտի տկարանայ, ու ան-  
կէ ետեւ հազիւ կարող պիտի ըլլաք  
շահաւոր բանի մը վրայ խորհել. ու  
ամէնէն գէշը որ պիտի ըլլայ՝ աս է, որ

Մտուածաշունչը՝ որ ամէն գիրքերուն  
 ընտիրն է, անշուշտ անօգուտ գիրքի մը  
 պէս պիտի երևայ ձեզի: Աս չեմ ու  
 զեր ըսել՝ թէ դուք ամեւի՛ն մի կար  
 դաք զուարճացուցիչ պատմութիւն  
 ներ, ու թէ անոնք անօգուտ են. հա  
 պա կուզեմ ըսել՝ թէ պարտիք առա  
 լել խրատական գիրքեր ալ կար  
 դալ, որոնք որ պատճառ կըլլան  
 ձեզի խելացի ընելու, ու անոնցմէ օ  
 գուտ քաղելու: Վանաւանդ ան տե  
 սակ գիրքերը շատ պիտի բաղձաք  
 կարդալու, որոնք որ առաջնորդ կըլ  
 լան ձեզի ձեր հոգիին վրայ աղէկ խոր  
 հել տալու, ու թէ ի՛նչ պարտիք ը  
 նել փրկըվելու համար:

Արեւի է որ հիմայ սիրելի տղաքներս  
 պիտի ըսեն՝ թէ ի՛նչ երկան սկզբնա  
 լորութիւն մը եղաւ աս, ու շատ շու  
 տով ուզեն որ Հովսէփին պատմու  
 թիւնը սկսեմ: Աս անհամբերութիւնը  
 կըցուցունէ՛ որ դուք մինչև հիմայ մե  
 այն զուարճացուցիչ գիրքեր կարդա



յեր էք . անանկ որ չէք ուզեր չորս  
կամ հինգ բոպէի չափ պիտանի ու օգ-  
տակար գիրքեր կարդալ :

Եթէ սա ստոյգ է նէ , շուտով ջա-  
նայէք ան տեսակ գիրքերը կարդալ՝  
որոնք որ պատճառ կըլլան մտիկ ընել  
տալու , ու խորունկ և ծանր մտմտացը  
նելու :

Թէ որ ձեզմէ մէկը չուզէր ասանկ  
ընել , կարելի է շատ աղէկ պիտի  
ըլլայ որ սա գիրքը գոցէ ու ամենեին  
ձեռքը չառնէ :

Յովսէփին պատմութեանը մէջ  
շատ օգտակար ու պիտանի բաներ  
կան , որոնք մէկ զուարճալի կերպով  
մը պիտի աշխատիմ ձեզի զուրցելու :

Երբեմն ասկէ 'ի զատ ուրիշ բանի  
վրայ ալ պիտի զուրցեմ . այսինքն՝ ձեր  
յայտնի մեղաւոր ըլլալուն՝ ու ձեր  
յանցանքին ու վտանգներուն վրայօք ,  
ու ձեր ասպաշխարութեան կարօտ ըլ-  
լալուն վրայօք , ու Յիսուսի Վ. բիստո-  
սի վրայ հաւատք ունենալու և ձեր

սիրտերը Հոգւոյն սրբոյ շնորհքովը  
 փոխվելուն վրայօք, և ուրիշ ասոնց  
 նման բաներու վրայօք, որ շատ հար-  
 կաւոր է ձեզի դիտնալ, հաւատալ,  
 ու իմանալ :

Աթէ գիտնայի նէ՛ իմ սիրելի տղաք-  
 ներս, որ բոլորդ ալ կուզէք աս տե-  
 սակ բաներուն մտադրութեամբ ա-  
 կանջ դնել՝ քանի որ Յովսէփին  
 սրտումութիւնը կարդալու ըլլաք, նը-  
 շափ ուրախութեամբ պիտի նստէի ու  
 ջանայի օր ըստ օրէ անիկա դրելու :  
 Աղօթք ըրէք որ ամէնքդ ալ ասանկ  
 ները ուզէք կարդալու, ու նաև ես ալ  
 պիտի աղօթք ընեմ ձեզի համար :

Աստուած ինձի իր կարողութիւնը  
 տայ՝ որ աս գիրքը գրեմ, ու նաև ձեզի  
 ալ իր զօրութիւնը տայ՝ որ դուք ալ  
 կարող ըլլաք անիկա կարդալու, ու  
 իր Հոգւոյն սրբոյ զօրութեամբը  
 ձեր հոգիներուն օգուտ ընէ :

ԳԼՈՒԽ Բ:

Յովնէիին ազգաբանութիւնը : Յովնէին  
 Սիջազեպէն էլալը : Սասեիին Տեանելը :  
 Իննիստիին ծնունդը : Տղաները ինչպէս  
 պարտին իրենց ծնողացը հետ լաւելլ :

Յովսէփ Յակոբին որդին էր , Իսա-  
 հակ՝ Յովսէփին հօրը հայրն էր , ու  
 Մ.բրահամ ալ Իսահակին հայրն էր :  
 Բից շնորհք չէր Յովսէփին որ ասանկ  
 նախնիք ունէր , ինչու որ՝ անոնք Մատ-  
 ուածապաշտ մարդիկ էին , ու բոլոր  
 իրենց ընտանեացը մէջ անանկ սովո-  
 բութիւն եղած էր , թէ ինչ պետք են  
 ընէլ որ Մտուծոյ հետ բարեկամու-  
 թիւն ստանան ու անկէ օրհնելին :  
 Յովսէփ Սիջազեպին մէջը ծնած էր  
 իրեք հազար հինգ հարիւր տարիէն ա-  
 ուաջ . իր հայրը ան երկրին մէջը  
 ստանըչորս տարիի չափ նստած էր՝  
 Վաբան անունով մէկ հարուստ երկրա-  
 գործի մը հետ , ու Յակոբ օգնութիւն

կընէր անոր՝ արջառններուն ոչխարնե-  
րուն ու այծերուն վրայ պահպանու-  
թիւն ընելով :

Վաբանը Յակոբին մօրեղբայրն  
էր՝ Յակոբին մօրը Աեբեկային եղ-  
բայրը ըլլալով . Վաբան մէկ պտղա-  
տու երկիրի մը մէջ կրքնակէր , եր-  
կու գեղեցիկ գետերու՝ այսինքն՝ Տիզ-  
րիս ու Վփրատ գետերուն մէջը . շատ  
երկիրներու ու այծերու ու ոչխարնե-  
րու տէր էր , ու շատ ալ ծառաներ  
ունէր , որոնք որ իրեն համար կաշխա-  
տէին :

Յակոբ Վաբանին երկու աղջիկանը՝  
այսինքն Ղային ու Ռաբէլին հետ  
կարգըված էր , որոնց ետկինը Յովսէ-  
փին մայրն էր . ասոնցմէ՝ ի զատ՝ Յա-  
կոբ երկու կնիկ ալ ունէր Ռալայ ու  
Ռէլիայ անունով : Բնորում ան ժա-  
մանակը մարդկանց թոյլտուութիւն  
ըրած էր որ մէկ կնիկէն էվէլ ունե-  
նան . թէպէտ ասանկ հրաման տալուն  
ալ պատճառը կար . բայց հիմայ ար-  
գելեալ է , ու մեծ մեղք է ան :

Յակոբ մէկ մեծ բնութանիք մը եղած էր Վարանին հետ բնակած ատենը . կարծեմ թէ աղէկ է որ դուք անոր տղոցը անունները սորվիք , ինչու որ անոնք ետեւէ ետեւ տղոց հայրեր եղան . ու անոնց տղաքն ալ ուրիշ տղաքներ ունեցան . ու ասանկ բոլորը մէկ տեղ մէկ մեծ ժողովուրդ մը եղան , ու Վարայէլացիք կանչուվեցան . ու վերջը Վանանու երկրին մէջը մէկ զօրաւոր աղբ մը եղան :

Նսոնց Վարայէլացի կանչուվելուն պատճառը աս է՝ որ անոնք Յակոբէն ծնած էին , որուն անունը Վարայէլ էր . ու անոր տասներկու տղաքներն ալ տասներկու նահապետներ ըսվեցան : Յակոբին տղոցը անունները իրենց հասակներուն կարգովը ասոնք են : Ռուբէն , Շմաւօն , Գլի , Յուդայ , Գան , Եփթաղիմ , Գադ , Նսեր , Իսաքար , Օւրուղօն , ( Գինա աղջիկ մը , ) Յովսէփ , ու Բենիամին :

Ռաբէլ Յովսէփին ու Բենիամինին

մայրն էր . անոնք բոլորը Միջադետին  
մէջն էին ծներ , բայց ՚ի Ռենիամի-  
նէն , որուն վրայօք մասնաւորաբար  
քիչ մը բան պիտի խօսիմ :

Երբոր Յովսէփ վեց տարուի չափ  
էր՝ ու Սուրէն ամէնէն մեծ տղան՝  
տասնըվինք տարուի չափ , իրենց հայ-  
րը խորհեցաւ որ Միջադետէն ելլէ ու  
իր ընտանիքովը կրկին Վանան երթայ՝  
իր հայրենիքը , ուր որ իր ծերունի հայ-  
րը խաճակ տակաւին ողջ էր : Վա-  
նան մէկ պտղաբեր ու զուարճալի եր-  
կիր մըն էր : Յակոբ խորհեցաւ որ  
իրեն ու իր ընտանիքին շատ աղէկ պի-  
տի ըլլար , թէ որ եղած տեղեր-  
նուն ելլան , ու Վանան երթան : Վս-  
կից ՚ի զաա՝ Վստուած Յակոբին ըսեր  
էր իր երազին մէջը , որ ասանկ ընէ .  
ու ինքն ալ զիտէր որ Վստուծոյ հը-  
նազանդելով՝ ինքը իր կնիկները ու  
տղաքը իրենց պարտքերնին կատարած  
պիտի ըլլային , ու Վմենակարողն  
պաշտպանութեանը տակը պիտի ըլ-  
լային :

Միջազգեակէն մինչև Վանան շատ  
 երկար ու դժուար ճանապարհ մըն էր .  
 շատ քաջաարտութիւն ու ջանք կու-  
 ղէր , ինչու որ Յակոբ Տիմայ շատ հա-  
 քուստ մարդ մը ըլլալով՝ շատ տեսակ  
 կարասիքներ , ուղտերու՝ էշերու՝  
 անթիւ արջառներու՝ ոչխարներու՝  
 ու այծերու հօտեր ունէր :

Լսոնք բոլորը՝ այսինքն իր կնիկ-  
 ները , տղաքները , ծառաները ու  
 արջախինները Միջազգեակէն հանել ու  
 Վանան տանելը արդարև շատ դժուար  
 էր . բայց Լստուած անանկ հրաման  
 ըրեր էր . ու թէ որ դուք ալ անոր  
 պատուիրանքներուն հնազանդելու ըլ-  
 լաք՝ յիշեցէք իմ սիրելի տղաքներս ,  
 որ որչափ մեծ վտանգներու ու նեղու-  
 թիւններու մէջ ալ ըլլաք , անոնցմ,  
 մէկն ալ ձեր մտացը հաստատութիւ-  
 նը չի կրնար տկարացունել , կամ ձեզ  
 վախցունել :

Լրդեօք նմ պիտի վախնայ՝ երբոր  
 ինքը իր պարտականութեան ճամբուն

մէջն է, ու երբոր ամենակարող Աստուած իր առջևէն կերթայ, ու իր ճանապարհը կուղղէ. չի պիտի աշխատիմ հիմայ Յակոբին ճամբայ ելլալուն վրայօքը բան մը խօսիլ, ու ո՛չ անոնց Վանան հասնելէն առաջ ճամբուն մէջը պատահածներուն վրայօք. ինչու որ՝ անոնց բոլորը Աստուածաշունչին մէջը կրնաք կարդալ:

Բայց մէկ բան մը կայ Յովսէփին վրայօքը՝ որ առանց անիկա սլատմելու չեմ կրնար անցնիլ. ինչու որ թէպէտ ինքը պատանի մըն էր, սակայն իր սիրտը խորին տրտմութեամբ լեցված էր: Վանդի Միջագետք ձգելէն ու ճամբայ ելլալէն հինգ տարի ետև, քիչ մը ժամանակ մէկ տեղ մը մնալով՝ ու քիչ մը ժամանակ ուրիշ տեղ մը, ասանկով Ափրատին սկսեցին մօտենալ. ու Վանանու մէջ ան ժամանակը Ասքէլ քսկոյն հիվընդցաւ, ու մեռաւ. որ զբեթէ իր մեռնելէն քիչ ժամանակ առաջ Բենիամին ծնած էր:



Կս ժամանակը Յովսէփ տասներմէկ տարուի չափ էր . Ասաքէլ Ափրատ երթալու ճամբուն մէջը թաղվեցաւ , որ ետքը Վեթղէհէմ կոչվեցաւ . ու անոր էրիկը գերեզմանին վրայ մէկ քարէ յիշատակարան մը շինեց :

Նիմայ Յովսէփին կատարեալ ժամանակն էր , որ իր մօրը կորստեանը վրայօք շատ տրտմութիւն կիմանար . ու անշուշտ քանի որ ինքը ասանկ դառն նեղութեան մէջ էր՝ իր մօրը համար սուգի մէջ մտած կուլար . ու բոլոր անոր բրած մայրական խնամքները կրցիշէր , ու կըտրտմէր թէ ինչպէս պիտի ըլլայ որ մէյմալ իր մօրը երեսը չի պիտի տեսնայ , ու անոր մարդասիրութեան ձայներ չի պիտի լսէ :

Յովսէփ իր պզտիկ եղբայրը Վենիամին շատ կըսիրէր՝ որ ասանկ մէկ տրտմալի վիճակի մը մէջ ծնած էր . ու անոր վրայ ունեցած սէրը ետքը պիտի տեսնաք :

Իմ սիրելի տղաքներս , մէկ քարի

ու որդեսէր մօր մը յալզը զխտէ՞ք մի . մէկ տղի մը ասանկ մայր ունենալը հազար հազարոց ոսկիէն ու արծաթէն էվելի կածէ :

Մէկ Մտուածապաշտ մօր մը յարզը զխտէ՞ք մի , որ իր տղին համար՝ իր տղին հետը աղօթք կընէ , ու կըջանայ որ անոր հոգին երկինքը առաջնորդէ . առաւել աղէկ է մէկ տղի մը ասանկ մայր մը ունենալը , քան թէ բոլոր աշխարհը ու անոր մէջինները :

Մասնկ մայր մը ունի՞ք մի . թէ որ ունիք նէ՝ սիրեցէ՛ք անիկա , հնազանդ եղիք անոր , ձեզի տուած խրատներուն միտք դրէք , յիշեցէ՛ք բոլոր անոր տուած բարի կըթութիւնները , ջանացէ՛ք որչափ որ կրնաք նէ երջանիկ ընել անիկա :

Մասնկ մէկ մայր մը ունէ՞ք մի . թէ որ ունէիք նէ՝ յիշեցէ՛ք անիկա խանդակաթ սիրով . բոլոր անոր ձեզի համար ըլած բաներուն յիշատակը ձեր սրտին մէջը պահեցէ՛ք . ու

բոլոր անոր աղօթքները՝ խրատները՝  
 զգուշութիւնները ու յանդիմանու-  
 թիւնները միտքերնիդ բերէք : Կ'նոր  
 պէտք է ձեզ վարվիլ ասանկ մէկ մօր  
 մը հետ թէ որ ողջ է նէ , կամ անոր  
 յիշատակը ընել թէ որ մեռած է նէ .  
 կրնայ մի ըլլալ , որ մէկ անհնազանդ ,  
 ապերախտ , ու չար տղայ մը՝ աս է-  
 րեսները կարթայ , ու կայնի մէկ բոպէ  
 մը Յովսէփին հետը Աւաքէլին զե-  
 րեզմանին վրայ՝ ու չի մտմտայ , ու  
 սուղ չընէ իր սրտին չարութեանը վը-  
 րայ , որն որ կրնայ պատճառ ըլլար մէկ  
 տղի կամ աղջիկան մը սիրելի ու Աստ-  
 ուածապաշտ մօրը աղօթքները ու ա-  
 ղաչանքները ու արցունքները մուցը-  
 նել տալու :

Թէ որ ան մայրը ողջ է նէ՝ ինչպէս  
 տրամութեամբ կրվշտացընէ իր մօրը  
 հոգին , երբոր աս տեսակը վարք ունե-  
 նայ . թէ որ մեռած է նէ՝ ինչպէս կըր-  
 նայ համբերել որ երբ անոր դէմքը ,  
 սիրոյ ձայնը , քաղցրութիւնը ու

զթուծիւնը միտքը բերելու ըլլայ  
 չերթայ ու չի լայ Մտուծոյ առջին  
 ու չապաշխարս :

### Գ Լ ՈՒ Խ Գ :

Յոյնիւն Սամբրէ հասնելը : Վեբրոնիւն  
 սամբրոն-իւնը : Յոլեիւն լարսը : Յոյն  
 ունեցած երը Յոլեիւն լարս : Աղբայր-  
 ներոն նախանյո-իւնը : Սեղը թե որ շ-  
 պաշխարիլ շարիլ իւրաքանչիւր :

**Յ**ակոր ասկէ քիչ ժամանակ ետե  
 Սամբրէ հասաւ , ու իր ծեր հայ-  
 րը Խահակ դեռ ողջ գտաւ հոն , թէ  
 պէտ ինքը հարիւր վաթսուն տարուէն  
 էվէլ էր . շատ երջանիկ եղան մէկ  
 զմէկ ողջ գտնալնուն : Աս կըհամար-  
 ճակիմ ըսել ' թէ Յոյսէփ շատ ուրա-  
 խացաւ իր հօրը հայրը տեսնալու , ո-  
 րուն համար շատ բան լսած էր . ու  
 նաև նոյն զուարճալի տեղը՝ որուն մէ-  
 ջը ինքը կըբնակէր : Աս տեղս Արու-

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ. Բ. Ա. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈԼՈՒՄԻ ՎԵՐՈՒՄԸ

Հ. Բ. Ա. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈԼՈՒՄԻ ՎԵՐՈՒՄԸ

տողէ մէն քանիւ լեռքէ մղոնից չար էր  
 դէպի հայրենի ու ետքը Վերոն շա-  
 վեցաւ անոր մտք մէկ քարանձաւ մը  
 կար՝ որն որ Վերսալ տա քանին հա-  
 մար ծախու աւեր էր որ ինքը ու իր  
 կնիկը Սարրա անոր մէջը թաղվին ,  
 ինչպէս որ թաղվեցան . ու Վասակ  
 ալ երբոր հարիւր ու թաուն տարու էր ,  
 ու մեռաւ , նոյն քարանձաւին մէջը իր  
 հօրը ու մօրը քով թաղեցին :

3515

Ղանապարհորդները՝ որոնք քիչ  
 ժամանակ առաջ դացին Պաղեստինու  
 ան կողմերը պըտըտեցան , կըսեն թէ՛  
 Վերոն լեռան մը տակ շինված է ար-  
 զասաւոր ձորի մը մէջ , ու իր չորս  
 կողմի բլուրներն ալ կաղնիի ծառե-  
 ըով՝ մաթուղենիով՝ եղեիններով ու  
 զանազան գեղեցիկ ծառերով ծած-  
 կըված են :

Վս քաղաքը ունի մէկ զօրաւոր  
 բերդ մը , շատ հանդերձանք , շատ  
 խանութներ ու գեղեցկաշէն տու-  
 ներ , ու չորս հարիւր տնկորի չափ Վ-

ուսայ բնակիչներ՝ բայց ՚ի հարիւր շը-  
 բէի տուներէն : Անշուշտ ասիկա խա-  
 հակին ու հակորբին ժամանակը շատ  
 ծաղկեալ ու արդիւնաւոր երկիր մըն  
 է եղեր . որ էթէ անանկ չըլլար՝ անոնք  
 չի պիտի նստէին հոն իրենց ունեցած  
 մեծ բնասանիքովը , անթիւ ոչխարներու  
 վը ու այծերովը : Հակորբին գլխաւոր  
 գործը արջառ , ոչխար , այծ , ու ա-  
 սոր պէս բաներ պահել էր . իր ար-  
 զաքն ալ իրեն օգնութիւն կրնէին . ու  
 առաջին բանը՝ որ մենք Աստուածա-  
 շունչին մէջը կրկարդանք հովսէփին  
 ինչ գործի մէջ ըլլալուն վրայօք , գի-  
 տենք որ Վալլայն ու Օկլիֆային ար-  
 զոցը հետ ոչխար կարածէր :

Ան ժամանակը հովսէփ տասնը եօ-  
 թը տարու էր , ու իր հայրը միւս ար-  
 զաքնէրէն էլէլ հովսէփը կըսիրէր .  
 ինչու որ հակորբերը իննսուն տա-  
 րեկան էր՝ ան ժամանակը հովսէփը  
 ստացաւ : Արեւի է թէ հովսէփ կըր-  
 թեալ տղայ մը ըլլալով ու խնաստու-

Թեան աստիճաններ ցուցունելով , որ իր հասակին նայելով շատ մեծ բան էին , անոր համար իր հայրը անիկա շատ կըսիրէր :

Իր եղբայրները՝ բայ 'ի Բենիամին նէն որ ան ատենը պզտիկ տղայ մըն էր , կերևայ թէ Յովսէփին չափ կըթեալ չէին . Բաւլային ու Օէլփային տղաքները որոնց հետ Յովսէփ ոչխար կարածէր , անգամ մը գէշ բան մը ըսին , ու Յովսէփ անիկա իր պարտքը սեպելով գնաց իր հօրը զրուցեց :

Յովսէփ ասանկ մէկ տղայ մը ըլլալուն զարմանալու չէ , որ Յակոբ անիկա միւս տղաքներէն էվէլ կըսիսէր . ու կարելի է որ Յակոբ իր տղոցը առջին Յովսէփին վրայօք բան կըխօսէր՝ որ անիկա անոնց մէկ օրինակ մը ընէ , որ ամէնքն ալ անոր վարքին հետեւին : Յովսէփ նաև գեղեցիկ ու սրատուական հանդերձներ կըհագնէր զանազան գոյներով , որ իր հայրը տու-

եր էր իրեն՝ իբրև մէկ յատուկ նշանը  
 իր օրոյն , կամ անիկա միւս եղբայր-  
 ներէն որոշելու համար , և կամ նաև  
 անիկա իրենցմէ ; առաւել սլատուաւոր  
 ըլլալը ցուցունելու համար . ինչու որ  
 Մատուածաշունչին մէջը ասկէ ետև  
 չենք տեսնար : Յովսէփին ոչխար արա-  
 ծելը . ու կրկարծ ըլի թէ տունը հօրը  
 քով կրնաստէր , ու իր հօրը օղնութիւն  
 կրնէր անոր ընտանեացը և ուրիշ դոր-  
 ծերուն մէջ հոգ տանելով : Մտոր աս  
 բաները Յովսէփին եղբայրներուն շատ  
 ատելութիւն ու նախանձութիւն սլատ-  
 ճառեցին . ու անոր սլատահած ժամա-  
 նակնին խաղաղութեամբ չէին կրնար  
 խօսիլ անոր հետ . ու շատ անգամ ալ  
 երբոր քովէն կանցնէին ամենեւին բա-  
 րև չէին տար անոր . երբեմն ալ դառն  
 ու գէշ խօսքեր կրղրուցէին անոր դէմ ,  
 ու կարելի է ալ թէ՛ երբոր մինակ  
 ինքիրեննին ըլլային , իրենց ծեր հօրը  
 համար ալ նախատական խօսքեր կը-  
 զրուցէին , ու իրենց եղբօրը համար



ալ տրտունջ կրնէին որ անոր այնքան սէր տուած էր . ու նաև Յովսէփին համար ամբաստանութիւն կրնէին որ իրենց գործին մէջը կըմտնար ու ըրածներնին կամ ըսածներնին Յակոբին կըզրուցէր :

Հիմայ՝ սիրելի՛ տղաքներս, արդեօք դուք ալ ձեր եղբայրներուն կամ քուրերուն կամ դպրատան ընկերներուն կրնախանձի՞ք մի՛ անոնց վարքը ձերինէն աղէկ ըլլալուն համար, ու անոնց ծնողքները կամ վարժապետները անոնց վրայ ձեզմէ աւաւել սէր ունենալուն համար, կամ թէ անոնց՝ այս ինչ բան մը շնորհելնուն համար՝ որ դուք չէք ունեցած . թէ որ նախանձիք նէ, զիտէ՞ք թէ նախանձութիւնը ինչ բան է . ու նաև պարտիք գիտնալ՝ թէ ուրիշին վրայ նախանձութիւն ընելը ինչ գէշ ու մեղք բան է . թէ որ անոնք բարի ու երջանիկ են՝ ու կըսիրվին և կըսպատվին, ու անանկ պարզեներ կուենան՝ որոնցմէ դուք չունիք, պէտքը չէ՞ մի որ ու-

րախանաք նախանձեւու տեղը . ու ա-  
 նեց տրված պարզեները ետ աւնը-  
 վել ուզելուն տեղը՝ աղէկ չըլլա՞ր մի՞  
 որ դուք աշխատիք անոնցմէ օրինակ  
 աւնել , ու անոնց նմանիլ , ու անոնց  
 երջանկութեանը մասնակից ըլլալ .  
 ինչու որ ծնողքները ու վարժապետները  
 բաւական պատիւ՝ սէր՝ և ուրիշ շատ  
 բաներ ունին , որ կրնան բոլոր տղոցը  
 տալ , որոնց վարքերը համետ ու  
 բարի են ու այնպէս պարզեւի ու պատ-  
 ւոյ արժանաւոր : Հոյսէ՛վին պատ-  
 մութեանը մէջ պիտի տեսնաք՝ թէ  
 անոր եղբայրներուն ըրած նախանձու-  
 թեան պտուղները ետքը ո՛ւր հասան .  
 ո՛հ , չէ՛ք գիտեր՝ թէ արդեօք եղբօր  
 ու քրոջ նախանձելուն վերջը ո՛ւր  
 կերթայ . ամէն տեսակ մեղքը թէպէտ  
 առջի անգամին պղտիկ կերեայ , բայց  
 ետքը շուտով կաճի , ու վերջը շատ  
 վնասակար կըլլայ :

Արդեօք կըխորհի՞ք մի՞ որ բարկու-  
 թեան մէջ մէկը մէկալին մէյ՞նը զար-

ներլու ըլլայ ու ետքը չապաշխարէ նէ՛  
 վերջը ի՞նչ կըլլայ . թէ որ չապաշ-  
 խարէ,ք ու չաղօթէ,ք Վստուծոյ որ աս  
 բնութիւնը ձեզմէ հանէ , ետքը երբոր  
 բարկանալու ըլլաք , առաւել սաստիկ  
 պիտի զարնէ,ք . գիտէ՞ք մի արդեօք՝  
 ասոնց բոլորին վերջը ո՛ւր կերթայ .  
 երբոր բսեմ՝ թէ վերջը սպաննութիւն  
 կրճնանի , արդեօք պիտի զարմաննա՞ր  
 մի . շատերը ըրած են ան , ու կրնայ  
 ըլլալ որ դուք ալ ընէք : Վախանձու-  
 թիւնը մարդս մարդասպան կընէ . ա-  
 սանկ ալ թէ որ նախանձուտ սիրտ ու-  
 նէ ցողները չիզոջան ու չապաշխարեն ,  
 կրնան Հովսէփին եղբայրներուն պէս  
 գէշ բաներ ընել . ինչպէս որ պիտի  
 տեսնաք անոր սլառմութեանը մէջ :

Հիմայ՝ ուղիղ սրտով ապաշխարե-  
 ցէք , որ աս տեսակ կիրքեր չունե-  
 նաք . ու աղաչեցէք Վստուծոյ՝ որ իր  
 սուրբ Հոգին տայ ձեզի , որ դուք ա-  
 սոնց բոլորին յաղթէք . ու թէ որ տա-  
 կաւին չէք ապաշխարած ձեր ըրած

հախանձութեանը վրայ, կաղաչեմ ձեզի՝ որ աս ձեր երևելի սարսքը առանց ձանձրանալու կատարեք :

ԳՆՈՒԽՈՒՄ :

Յ՛նչե՛նչն էրապէս : Եւթայրներուն Սէ-ւի-  
 Երբ-ու-լը : Եւ Գեղնն նկարագրու-թի-նը : Յ՛նչ-  
 -ե՛նչն էր էւթայրներուն Երեւնն հարցունել-  
 -ն-՛ն-դ-ն-ի-լը :

Քանի որ Յովսէփի իր եղբայրներէն  
 այսչափ կանարգըվէր, Եստուած  
 անոր մէկ երազ մը տեսնալ տուաւ իր  
 բունին մէջը, որ իրեն ապառնի վե-  
 ճակին փոփոխութիւնը ու անիկա ա-  
 նոնց վրայ իշխան կարգըվելը կրցու-  
 ցունէր : Իր երազին մէջը տեսաւ՝ որ  
 բոլորն ալ մէկ դաշտի մը մէջ էին .  
 ու ամենքն ալ ցորենի փունջեր կը-  
 կապէին՝ որոնք որ առաջմանէ հնձած  
 էին . մէկէն ՚ի մէկ Յովսէփին կապած  
 փունջը ինքնիրենը ելաւ կանգնեցաւ,



Յովսէփին՝ ցորենի փունջերուն վրայ իր  
տեսած երազը պատմելը :



ու իրեն եղբայրներուն կապածները  
չորս կողմը պլորվեցան, ու անոր եր-  
կրբապաղութիւն ըրին :

Յովսէփ իր երազը եղբայրներուն  
պատմեց . բայց անոնք առաւել սկը-  
տեցին նախանձիւ անիկա ըսելովնին -  
իբրեն նախատական կերպով մը հար-  
ցուցին, թէ ի՞նչ ըսել ուզեց աս ե-  
րազը իրենց պատմելովը . ըսին անոր՝  
թէ իրաււորե՞լ դուն մեր վրայ պիտի  
իշխե՞ս մի . մենք բեզի երկրպաղու-  
թիւն մի՞ պիտի ընենք, ու հնազան-  
դի՞նք պիտի իբր մեր իշխանին կամ  
թաղաւորին պէս . ի՞նչ մեծ յիմարու-  
թիւն ու հպարտութիւն է որ քեզի պէս  
մէկ պատանի մը՝ մանաւանդ մեր փոքր  
եղբայրը ասանկ երազ մը տեսնայ, ու  
յոյս ալ ունենայ որ կատարվի, ըսին  
իր եղբայրները :

Ասկէ քիչ ժամանակէ ետև Յով-  
սէփ ուրիշ երազ մըն ալ տեսաւ, որ  
առաւել զարմանալի էր միւսէն :

Երազին մէջը տեսաւ՝ որ արեգակը

լուսինը ու տասներմէկ աստղ իր չորս կողմը շարված էին, ու իրեն անջին երկրպագութիւն կրնէին :

Յովսէփ աս երազը իր հօրը ու եղբայրներուն պատմեց, ու անոնք կրկարծէին թէ մարգարէութիւն կրնէկոր՝ որ չէ թէ միայն իր եղբայրները՝ որ տասներմէկ աստղերը կը ցուցունէէին, հապա իր հայրն ալ մայրն ալ՝ որ արևը ու լուսինը կը ցուցունէին, անոր երկրպագութիւն պիտի ընեն, ու իրենց իշխանին ու թագաւորին պէս անոր պիտի հնազանդին :

Յակոր կարծելով՝ թէ Յովսէփ ասանկ երազներ տեսնալովը պիտի հըպարտանայ ու դուռոզանայ, կամ թէ ճշմարիտ չի հաւտալով որ Յովսէփին ըրած մարգարէութիւնը պիտի ստոյգ կատարվի, յանդիմանեց անիկա. ըսելով թէ, Նո ի՞նչ երազ է՝ որ դուն տեսար. ես ու քու մայրդ ու քու եղբայրներդ իրան քեզի երկրպագութիւն մի պիտի ընենք :



Սակայն աս երազը Յակոբին զարմանալի երազ մը կերևար, մանաւանդ որ առջի տեսածին ալ շատ մօտ էր. ու Յակոբ ասիկա չի մտցաւ : Յովսէփին ետքի տեսած երազը կրկին բարկացուց իր եղբայրները առջինին պէս. անոնք ևս առաւել սկսեցին նախանձիլ ու ատել անիկա. անշուշտ անոնք մէկ պատահութիւն մը կրփնտուէին, որ անոր մէկ մեծ վնաս մը ընեն. ինչու որ նախանձութիւնը ու ատելութիւնը անդործ չեն կրնար մնալ :

Բոցի կրնմանին անոնք՝ որ քիչ մը ժամանակ պահված կրմնայ, ետքը կրկին սաստկութեամբ կրփռնկի. մենք ալ պիտի տեսնանք՝ որ Յովսէփին եղբայրներուն կերպերն ալ ասոր պէս իրենց ներսիղինին փռնկած էր :

Ասկէ քիչ մը ժամանակ ետև՝ հայրերնին անոնք Աիւքէմ խրկեց իր ոչխարները ու այծերը արածելու : Աստեղս Քերբոնէն դէպի հիւսիս վաթ-

տուն կամ եօթանասուն մղն է . որ շատ  
հեռու տեղ մըն էր ասկէց մինչև հոն  
իրենց հօրը ոչխարները ու այծերը  
տանելու համար . բայց ի՞նչ օգուտ ,  
պիտի տանէին մէկ տեղէն մէկալ տե-  
ղը մինչև որ բաւական կերակուր  
գտնային անոնց :

Սիւքեմին ձորին մէջը շատ աւատ  
անունը կը գտնային , սրտաճառք որ՝  
Լ. Գոռաձ ան դաշտը օրհներ էր :  
Լ. Ժմեան ճանապարհորդները որ Պա-  
ղեստինու ան կողմերը կերթան , կըսեն  
թէ՛ շատ զուարճալի ու պողատու մէկ  
երկիր մըն է ք շիմայ ան քաղաքը որ  
Ն. Կապուղ կըսվի , երբոր անոր քովե-  
ժօտ բլուրներէն նայելու ըլլ ըլի՛ կե-  
րևայ թէ՛ դեղեցիկ ու անուշահոտ հա-  
վանոցներով , ու տուներուն կէսը հա-  
րուստ պարտեղներով ու բարձր ծա-  
ռերու անտառներով ծածկրլած են :

Ս. Ջ կողմը ու ձախ կողմը Պարիզի-  
նին ու Վեբաղին լեռներն են , որոնց  
երկայն ժայռապատ ու անբերբի

բարձրութիւնները ամէն կողմէն տար-  
բեր են վարի հարուստ ձորէն, ու ան-  
ընդարձակ ձիթենեաց երկրէն :

Աստեղին մտն' որ Վրխատուսի ժա-  
մանակը Աեքար կոպէր, Յակոբ նա-  
հապետին հորը կար, ուր տեղ որ  
Վրխատու Սամարացի կնկանը հետ  
խօսեցաւ . ու Յովսէփ ինքն ալ հոս  
Թաղէցաւ, ինչպէս որ պիտի տես-  
նանք իր զարմանալի պատմութեանը  
վերջին մասին մէջը :

Աս զուարճալի տեղը խրկեր էր  
Յակոբ իր տղաքները, որ իր անթիւ  
ոչխարները պրածեն . սա տեղը իրենց  
տունէն հեռու ըլլալուն պատճառաւ  
հայրերնին քիչ ժամանակէ ետեւ բա-  
կրսեց հոգ ընել անոնց համար . ու  
Յովսէփը խրկեց' որ երթայ անոնք ու  
ոչխարները նայի, ու ինչպէս ըլլալնին  
իրեն զայ գրուցէ : Եւստ երկար մէկ  
ճանապարհ մըն էր ասանկ մէկ պա-  
տանիի մը՝ քալելով մինակ այսքան  
տեղը երթալը . սակէ՛ ի զատ Յովսէփ

ալ պէտք էր որ վախնար իր եղբայր-  
 ներէն . ինչու որ՝ եղբայրները անոր  
 շատ ներհակ ու թշնամի էին . բայց  
 անոր հայրը ըսաւ որ երթայ . ու մէկ  
 հնազանդ տղի մը այսչափ խօսքը բա-  
 ւական է : Յովսէփ ուրախու թեամբ  
 հնազանդեցաւ , ու իր տունը ձգեց որ  
 ան Վերրոնին գեղեցիկ ձորին մէջն  
 էր , ու ճամբայ ելաւ Սիւքէմ երթալու  
 իր եղբայրներուն համար , որ անոնք  
 դտնայ ու անոնց վիճակը խմանայ :  
 Յովսէփ շատ քիչ դիտեր իրեն ինչ  
 պիտի պատահէր , ու իր գլխուն ինչ  
 պիտի գար . ու ինչպէս Մատուած հի-  
 մայ անիկա ան ճամբուն մէջը կառաջ  
 նորդերկոր որուն վերջը մեծութեան  
 պիտի հասցընէր , ու իր երազները  
 կատարել տար :

Կաւ Յովսէփին ծեր հայրն ալ ա-  
 մենեւին չէր գիտեր իր հրաժարական  
 ողջոյնը տուած ժամանակը , թէ իր  
 գլխուն ինչ պիտի գար . ու շատ տա-  
 րիներ պիտի անցներ իր հնազանդ ու

սիրելի տղան կրկին տեսնալու : Մենք  
մէկգլմէկու ուրախուլթեամբ մնաս բա-  
րովը ըսին . ու չէին դիտեր թէ մինչև  
իրար կրկին տեսնալու ըլլաին նէ ,  
արդեօք ի՞նչ փորձանքներ պիտի գան  
զլխընուն :

ԳՎ՝ՈՒԽՈՒՆ :

Յ՛ղեայրնէրոն հօքնուք :  
Եղեայրնէրոն շարո-թի-նը՝ որ ինչէն իրենց  
իջեայրը հոցո-նէլ : Սեղը թշտոտո-  
թիւան պատճառ է : Ե՛հն շարո-թի-ննէրոն  
գը-նէն է . թե որ շարոշտութի նէ՝ ձերք շար-  
գիշ իրեայ :

Յովսէփ վերջապէս Սիւքէմ հասաւ .  
երբոր գաշտին մէջը կրպտրտէր իր  
եղբայրները գտնալու , մէկ օտարական  
մը պատահեցաւ անոր ու հարցուց ,  
թէ՞ ի՞նչ կրփնտուես հոս : Յովսէփ  
պատասխան տուաւ , թէ՞ Եղբայրներս  
կրփնտուեմ . կաղաչեմ ձեզի , ո՛ւր

տեղ անոնք իրենց ոչխարները կարծ-  
ժենկոր նէ ըսէք ինձի :

Մարդն ալ ըսաւ . Անոնք ասկէ  
զայցին , ու ես լսեցի՝ որ կըսէին թէ ,  
Քալէցէք Ղուլթայիմ երթանք :

Ղուլթայիմ առաւել հեռու էր դէպ  
ի հիւսիս . ու քսան մղոնէն առաւել  
հեռու է Սիւքէմէն . Յովսէփ շուտով  
հոն տեղը գնաց , ու իր եղբայրները  
գտաւ :

Արդարեւ Յովսէփ իր ճամբորդու-  
թիւնը լումընցունելուն համար շատ ու-  
րախացաւ , ու կըցուսար՝ որ շուտով  
կրկին իր սիրելի հօրը պիտի դառ-  
նար , ու բոլոր իր եղբայրներուն աղէ-  
կութիւնները անոր զրուցէր :

Երբոր Յովսէփին դալը տեսան իր  
եղբայրները , ու ստոյգ գիտցան իրենց  
եղբայրը ըլլալը նէ , արդեօք գիտէ՞ք  
մի անոր վրայօքը ինչ բաներ մտմտա-  
ցին :

Արդեօք ուրախացա՞ն մի որ անիկա  
տեսնալովնին իրենց տանը ընտանեա-

ցը ու իրենց սիրելի հօրը ինտոր ըլլալը պիտի խմանային :

Արդարև եթէ դուք անոնց տեղը ըլլայիք , ասանկ պիտի ուրախանայիք . բայց , ս'հ , դուք շատ քիչ գիտեք մարդուն սրտին նենդութիւնը ու չտրութիւնը :

Կս ձեզի ըսի՞ որ եթէ նախանձութիւնը ու ատելութիւնը բոլորովին սրտէ չի հանվի նէ , վերջը ս'լը կերթայ . հիմայ դուք պիտի տեսնաք իմ խօսքիս ճշմարիտ ըլլալը :

Ա՛չ անոնց տուներուն հեռու ըլլալը , ու ս'չ ալ ան զուարճալի ու անմեղ արհեստին մէջը ըլլալնին կարող եզան անոնց սիրտերը կակողցունելու , ու նաև իրենց կարծիքնին ալ մոռցընելու , որ կըսեպէին՝ Թէ Հոյսէփ ու իրենց հայրը իրենց շատ անխրաւութիւն ըրած են :

Անոնք Աիւքէմին զուարճալի ձորին մէջը կըպտըտէին , ու ան գեղեցիկ օդը կըշնջէին , ու ան զուարճալի տե-

սարանները կրտեսնէին , ու կանանց խոտերուն վրայ իրենց ոչխարները կարածէին , ու երկար ժամանակ ան զովադին վտակներուն ու ծառերուն տակը կը հանդէսէին :

Սակայն աս աղէկութիւններուն մէկ կըն ալ ամենեին անոնց սրտին մէկ ազդուութիւն մը չի տուաւ , որ իրենց եղբօրը համար ունեցած ռիսկերին սրտերնուն հանեն :

Ի՛նչպէս հանդիստ արհեստ մը ունէին , ու որչափ Նստուած անոնց աղէկութիւն կընէր , ու իր քաղցր զթութիւնները անոնց կըցուցընէր բոլոր իր մատերուն գործքերովը , որանք որ իրենց չորս կողմը կրտեսնէին . ու որչափ աս բաները պէտք էր անոնց սիրտերը շընորհակալութեամբ լեցունել ղէպի իրենց երկնաւոր Հօրը , ու նաև բարի սիրտ ունենալ տար իրենց ընկերներուն վրայ . սակայն անոնց սիրտերը շատ տարբեր էին :

Երբոր Յովսէփին դալը հեռուէն



տեսան , որ կարելի է թէ մէկ բլուրէ  
մը վար կիջնարկոր ան , ու տակաւին  
իր հօրը տուած հանդերձները հազած  
էր , իսկոյն իրենց ներսիդիի չար կիր-  
քերը շարժեցան :

Նոր երազը միտքերնին ինկաւ ,  
որ ամէնէն էվէլ առ բանին համար ա-  
նիկա այնչափ կատէին , ու մէկզմէկու  
ըսին . Նհա՛ երազատեսը կուգակոր ,  
ուրեմն եկէ՛ք անիկա մեռցունենք , ու  
փոսի մը մէջ նետենք . ու կըսենք թէ՛  
Պատառող դադան մը անիկա փառա-  
տեց . ու տեսնանք թէ անոր երազը  
ինչ պիտի ըլլայ :

Նոնց ամբարտաւանութիւնը՝ նա-  
խանձութիւնը՝ ու ատելութիւնն էր որ  
իրենց հարազատ եղբայրը մեռցունել  
տալու կաշխատցընէր . ինչու որ՝ եթէ  
Հովսէփին երազը կատարվելու ըլլար ,  
ան ժամանակը անիկա իբրև իրենց  
իշխանը ու թագաւորը պիտի սեպէին :

Ինչպէս կրնային անոնք իրենց փո-  
քըր եղբօրը հնազանդիլ՝ ու անոր

երկրագագութիւն ընել , երբոր միտքերնին կը բերէին իրենց հօրը Յովսէփին այնքան ցուցուցած սէրը , ու անոր տուած գեղեցիկ հանդերձները , որոնք իր սիրոյն՝ ու նաև անիկա իր եղբայրներէն պատվաւոր ընելուն մէկ յատուկ նշանն էր . ուստի աւաւել իրենց նախանձութիւնը կը շատնար . գիտէին որ անիկա աս պատուոյն արժանի էր . ինչու որ անոր վարքը ու բնութիւնը իրենցմէն շատ աղէկ էր :

Անոնք շատ կուգէին որ Յովսէփը ինչ որ ունէր ու կը վայէր նէ՛ անոնցմէ զրկուէր . որով իբր թէ իրենց երջանկութիւնը պիտի էվէնար :

Անոնց ատելութիւնը խիստ շատցաւ . շատ կուգէին որ Յովսէփին մէկ մեծ չարութիւն մը ընեն . պատրաստ էին անիկա մեռցունելու :

Կուգեմ որ աս տեղը քիչ մը կէնամ , որպէս զի ձեզի հասկըցունեմ մեղքին ինչ ըլլալը : Կուք կը տեսնաք Յովսէփին եղբայրներուն չար խոր-

հուրդներուն ու զգացումներուն ինչ-  
պէս սոսկալի բլլալը :

Արդեօք դուք ալ կրմտմտա՞ք մի  
ձեր չար խորհուրդներուն ու զգա-  
ցումներուն վրայ՝ որոնք որ ներսիդի-  
նիդ կը պահէք, ու երբեմն ալ ձեր  
խօսակցութեանը ու վարքերնուդ մէջը  
կը ցուցնէք :

Արդեօք զիտէ՞ք մի ինչպէս կերե-  
ան անոնք Աստուծոյ աւջին, որն որ  
բոլորը զիտէ ու կը տեսնայ : Ահ  
որ մեղքերնիդ բոլորով սրտիւ չէք ա-  
պաշխարած, ու Վրիստոսի միջնոր-  
դութեամբը ձեր մեղքերուն համար  
Աստուծակէ թողութիւն չէք խնդ-  
րած նէ, ու Հոգւոյն սրբոյ համար ալ  
աղօթք չէք բրած նէ որ իր զօրութիւ-  
նը ձեզի տայ՝ մեղքէն ետ կենալու,  
դուք ալ Յովսէփին եղբայրներուն  
պէս նոյն աղէտալի վիճակին մէջն էք.  
մեղքը ինտոր որ անոնց վարարեան էր,  
անանկ ալ ձերը պիտի բլլայ :

Ասով բտե՛լ կուղեմ՝ թէ քանի որ

չապաշխարէք՝ ետքը գէշ բաղձանք  
 ներու ու կիրքերու պիտի ծառայէք :  
 Աս գէշ սովորութիւնները ձեր վրայ  
 պիտի տիրեն ու միշտ գէշ խօսքեր ու  
 բաներ պիտի ընել տան ձեզի , մինչև  
 որ չի պիտի դիտնաք թէ ձեր չարու-  
 թեան վերջը ո՛ւր պիտի երթայ : Ըն-  
 մայ կըկարծէք որ ձեր մեղքերը շատ  
 պղտիկ են . սակայն ան մեծ՝ բարի՝ ու  
 ճշմարիտ Աստուծոյ պատուէրները  
 աւերելը պղտիկ բան չէ :

Ան ձեր բարեկամն է . մէկ բարե-  
 սիրտ մարդ մը պարտի բոլոր անոր  
 մարդասիրութիւնները յիշել , անկեա  
 սիրել ու անոր հնազանդ ըլլալ : Ան  
 ձեզ ստեղծեց , ու դուք անոր ստաց-  
 ուածքներն էք . պէտք է որ դուք ա-  
 նկեա սիրէք , ու անոր հնազանդիք .  
 և անոր ուղածն ալ ձեր սէրը ու հը-  
 նազանդութիւնն է , որ դուք ձեզ եր-  
 ջանիկ ընելէն ՚ի զատ , ուրիշներն ալ  
 երջանիկ ընէք . ինչու որ տղոցը սէ-  
 րը ու հնազանդութիւնն է որ զիրենք

ու իրենց ընտանիքը երջանիկ կընէ :  
 Ինչպէս որ յայանի է : Անանկ ալ  
 Աստուած սիրելը ու անոր հնազանդի-  
 լը իր մեծ ընտանիքին մէջի բոլոր ա-  
 րարածները երջանիկ կընէ : Մեղքը  
 բոլոր արարածներուն մէջը թշուառու-  
 թեան պատճառ է . ինչպէս դուք զի-  
 տէք որ ծնողաց անհնազանդութիւն  
 ընելը ու գէշ վարք ունենալը՝ ընտա-  
 նեաց մէջ մեծ թշուառութեան պատ-  
 ճառ կըլլայ :

Ուստի պէտքը չէ որ մէկ մեղքի մը  
 պղտիկ է ըսվի . վասն զի թէ որ ձեր  
 մեղքերուն վրայ չապաշխարէք ,  
 ու Յիսուսի Վրիստոսի չապաւիճիք  
 անով ձեր մեղքերէն փրկըվելու հա-  
 մար , ետքը ձեր չար խորհուրդները  
 ու զգացումները պիտի շատնան ու  
 դորանան քանի որ մեծնաք :

Արդեօք մեղք գործելուն վերջը  
 ուր պիտի երթայ . ու աս կեանքին մէ-  
 ջը ի՞նչ բաներ չի պիտի ընել տայ ,  
 ու նաև գալու աշխարհքին մէջը ուր  
 պիտի առաջնորդէ :

Մեղքին վարձքը մահ է . անանկ  
մահ մըն է հողւոյն՝ որ երկնային ուրա-  
խութենէն յաւիտեանս կը զըրկէ , ու ան  
աղէտալի՝ չար՝ ու ամենաթշուառ տե-  
ղը կը բռնանի , ու բռնողն որդը բնաւ  
մեռնելիք չունի , ու կը բազմապէս մարե-  
լիք :

### ԳՒՂՈՒԽՕ . Գ :

Յովեղիին կենացը համար Ուտ-Բեմին աղա-  
լանքը : Յովեղիին ժողովից : Իր էր-  
բայրնեւրոմն խորժրասրբոմն : Յովեղիին  
կենանին համար Յոսոբային աղալանքը : Յով-  
եղիին Լասայեւրոմն ժողովից , անոնց անկիւ-  
նից խորժրոմն , ու Լասայեւրոմն  
անկիւնը :

Յովսէփին եղբայրները հիմայ զինքը  
մեռացունելու վրայ են . մէկէն 'ի  
զատ բոլորն ալ իրենց սրտին մէջը  
ունին աս չար գործը ընելը . բոլորն  
ալ կը մտմտան թէ ինչ եղանակաւ ու  
ինչ կերպով ընեն սր չի յայտնըվի ,

ու իրենց հօրը հաւտայրնեն թէ մէկ  
վայրի գաղան մը փառատեց անիկա :  
Հիմայ անիկա մեռցունելու համար կը  
խօսին , ու կըսեն թէ՛ Նկէ՛ք մեռցու  
նենք անիկա , ու անանկ փոսի մը մէջ  
նետենք որ մարդ մը կարող չըլայ ա  
նիկա տեսնալու . ու ասանկ հիմայ բո  
լորն ալ կըլատարաստըլին՝ իրենց ամ  
բարտաւանութեան նախանձութեան  
ու ատելութեան չար կիրքերը հաճե  
ցունելու :

Բայց Մտուած թող չի տար որ  
իրենց ուղածը ընեն . տակաւին Մտ  
ուած շատ բաներ ունի Յովսէփին ը  
նելու ու կեանքն ալ ողջ պահելու իր  
մէկ եղբօրը միջնորդութեամբ , ոքն  
որ մէկալներուն չափ դէշ չէր :

Ռուբէնը ամէնէն Ռեծն էր . Մտ  
ուած անոր խղճմտանքը արթընցուց  
որ իրենց ընելու չարութիւնները  
տեսնայ . ու անոր սիրտը կակղացուց՝  
որ իր եղբօրը ու հօրը ողորմի :

Ռուբէն իր եղբայրներուն աղաչեց ,

որ Յովսէփը չի մեռցունեն . ու խրատեց անոնք՝ որ իրենց մօտը մէկ խորունկ փոս մը կար հոն նետուն :

Ռուբէն կը խորհէր թէ անոնք Յովսէփին անանկ բարկացեր էին՝ որ ամենեւին անիկա թող չի պիտի տային . ու կը յուսար թէ ետքը պատահու թիւն մը կրնայ դանալ անիկա տղատելու ու անկէ իր հօրը՝ Յակոբին զարձուներու :

Միւս եղբայրները Ռուբէնին խրատին հնազանդեցան . կարելի է խորհեցան՝ թէ իրենց եղբայրը իրաւցրնէ մեռցունելու ըլլան նէ , Ռուբէն ան մասին անոնց հետ մասնակից չի պիտի ըլլայ , ու բոլոր ըրածնին ալ իրենց հօրը պիտի երթայ զուրցէ :


Բայց հիմայ Յովսէփ իր եղբայրներուն քովը կը մօտենարկոր՝ որ իրենց հօրը աղէկութիւնը անոնց զուրցէ , ու նաև իրենց ինչպէս ըլլալը խմանայ :

Յովսէփ ինչպէս լացաւ ու պօռաց երբոր զինքը բռնեցին , ու զանազան գոյներով հազած զեղեցիկ հանդերձ .





Յովսէփին՝ եղբայրներուն զինքը բռնե-  
նին, և իր գեղեցիկ պատմութեանը վրայէն  
հանելնին, ու զինքը հորի մէջ ձգելնին : 42 :



ները հանեցին , ու մէկ խորունկ փոսի մը մէջ նետեցին . ու Յովսէփ ինքը հոն ձգված ատենը կըզարմանար ու կըդողար , չի գիտնալով թէ տակաւին ինչ պիտի ընեն իրեն :

Յովսէփ կըկարծէր՝ թէ կրկին պիտի դան ու զինքը մեռցունեն . կամ թէ՛ պիտի ձգեն հոն , որ անօթութենէ երթայ մեռնի :

Բայց հիմայ եղբայրները ինչ Ըրին . կանանչ խոտին վրայ նստեցան իրենց կերակուրը ուտելու , իբր թէ ամէնեւին բան մը չէին ըրած :

Ա՛յլ կըխորհի՛ թէ անոնք աս անողորմութիւնը իրենց եղբօրը ընելուն ետև նստին լռիկ , և ուրախութեամբ իրենց հացը ուտեն . բայց մեղքը մարդուն սիրտը կըկարծրացունէ . ատելութենէն անողորմութիւն առաջ կուգայ . անանկ գէշ բան մըն է՝ որ մէկ հօր տղաքը՝ երբոր իրարու նախանձելու ըլլան , վայրենի ու պատառող զազաններուն պէս մէկգմէկու կըլնասեն :

Ո՞վ էին ան մարդիկը որ հեռուէն  
կուգանինկոր ուղտերուն վրայ հեծած՝  
Յովսէփին եղբայրներուն մօտ , ուր  
տեղ որ տակաւին նստած հաց կուտէ-  
ին : Բնոնք խուճը մը Կամուջեւայի ու  
Մաղխանայիներ էին՝ որոնք որ Կով-  
Թայիմին արևելեան կողմը Կաղտաթ-  
ըսված երկիրը գացեր էին՝ անտեղէն  
շատ համբմներ , անուշահոտ իւղեր ,  
ու ստաշխն ծախու առնելու համար ,  
ու Եգիպտոս կըտանէինկոր հոն ծա-  
խելու , որոնք որ ան տեղի մարդիկնե-  
րը շատ կըսիրէին դործածել :

Բսոնց բոլորն ալ Բստուծմէ էր -  
Բստուած ինքը ասանկ կարգադրե-  
էր , որ աս վաճառականները աս ժա-  
մանակը աս ճամբայէն անցնին , որ  
Յովսէփին կեանքը ազատելու պատ-  
ճառ ըլլան , ու անոր երազին ճշմարիտ  
ըլլալը հաստատուի :

Հիմայ Յուդա ալ սկսեց Յովսէփը  
մեղքընալ , ու անոնց ըսաւ . Բնչ օ-  
գուտ կայ մեզի մեր եղբայրը մեռցու-

ներէն : Արդարեւ անանկ կերպով մը  
 կրնանք ընել՝ որ ամենեկին չի պիտի ի-  
 մացիլի . ինչո՞ւ անիկա պիտի մեռցու-  
 նենք . ան ալ մեր եղբայրն է , ու մեր  
 հօրը զաւակը : Այլէք անիկա վաճա-  
 ռականներուն ծախսենք , որ հիմայ հոս  
 պիտի դան . անոնք հեռու տեղվանք  
 կրտանին անիկա , ու մենք ալ կաղա-  
 տինք անոր արտասուց երազներէն :

Յուզա միւսները յորդորեց . ու  
 ամէնքը մէկ տեղ դացին Յովսէփը  
 փոսէն դուրս հանեցին : Յովսէփ անօ-  
 թի՛ դողալով ու վախնալով կրմամտար  
 թէ անոնք արդեօք ալ առաւել ի՞նչ  
 գէշ բաներ պիտի ընեն իրեն : Ա եր-  
 ջապէս Իսմայէլացիները մօտեցան ,  
 ու իբրև ոչխար մը կամ այծ մը ծա-  
 խելու նման՝ Յովսէփին զինը կտրե-  
 ցին . ու անոր արցունքներուն ու աղա-  
 ջանքներուն ներհակ՝ աս օտարական  
 ներուն քսան կտոր արծաթի ծախսե-  
 ցին , ու անոնք ալ Ազիպտոս տարին  
 անիկա : Եւ տեղս էր՝ ուր որ Եստուած

կուղէր թէ Յովսէփը երթայ . սակայն իր չար եղբայրները աս բանս չիյտէին . անոնք ամենեւին միտք չունէին որ իրենց եղբօրը ասանկ ընելով նին՝ վերջը իրենց միտքերնուն մէջը ունեցած չար խորհուրդները պիտի կործանի . ու նաև աս կերպովը իրենց եղբօրը առջին խոնարհելու և ամչնալու ճամբայ կրբանանկոր իրենց :

Աստուած անոնց չար խորհուրդները յաղթեց , որ իրեն ընելու աղէկ բաները կատարէ . անոր ասանկ ընելուն , ու բոլոր պատահելու բաները առաջմանէ զուշակելուն , ու ասոնց ասանկ տնօրինելուն ու կարգադրելուն , ու նաև բոլոր մարդկանց և ուրիշ արարածներուն համար մարդասիրաբար ու արդարութեամբ ընելուն , կըսենք՝ Վախախնամութիւն Աստուծոյ :

Աստուծոյ Վախախնամութիւնն է՝ որ ձեզ կըհողայ՝ իմ սիրելի զաւակներըս . ու պատահելու բաները ինքը կըտնօրինէ ու կըկարգադրէ , ու ինքն

է բոլոր ձեր միտարութիւններուն  
ու երջանկութիւններուն պատճառը :

Աստուծոյ նոյն նախախնամութիւնն  
էր , որ խեղճ Յովսէփը պաշտպանեց .  
դուք հիմայ խնայաք որ Աստուած  
իր նախախնամութիւնը ինչ զարմա-  
նալի կերպով Յովսէփին վրայօք կար-  
գադրեր էր , որ իր իմաստուն խոր-  
հուրդները գործքի դնէ :

Նաև պիտի տեսնաք , որ Աստու-  
ծոյ նոյն նախախնամութիւնն էր որ ա-  
ռաւել զարմանալի կերպով Յովսէփը  
խնամեց Ազիպտոսին մէջը , ուր տեղ  
որ ան գացեր էր իր սիրելի հօրմէն  
դատված , ու իբրև գերի մը օտար  
երկիր ծախված :

ԳԼՈՒԽ Ե Կ :

Սա-բե-նի-ն արդա-ն-լի-նը՝ Յով-ե-փ-ը ծախ-  
 ված գործարար-ն համար : Յով-ե-փ-ն եղբայրն է-  
 րո-ն իրե-նց հայրը հա-րա-ցն-լի-նն, ի-ն անի-ս  
 Տ-ա-տ : Ը-ն-ն-ն-ն-ն յանցանքը : Ս-ե-ղ-ը խա-  
 բե-ն-լի-նն ո-ս-ր-ն-ն-ն տա-լ ի-ն-ն-ն :

**Ո՛ւրբէն՝** որ իր եղբայրները ասանկ  
 խրատեր էր թէ Յովսէփը փոսը  
 նետեն, որ աս կերպով կարող ըլլայ  
 անոր կեանքը ազատելու ու կրկին իր  
 հօրը դարձունելու, Յովսէփին խամայ-  
 ելացւոյ ծախված ժամանակը՝ ինքը  
 հոն չէր. ետքը շուտով եկաւ, ու փո-  
 սին քովը գնաց, բայց անիկա հոն չի  
 դուստ : Ը-ս բանիս վրայ Ա-ուրբէն շատ  
 տրտմեցաւ ու յուսահատեցաւ, ու իր  
 հանդերձները պատուեց : Ը-ն ժամա-  
 նակը մարդկանց սովորութիւն եղած  
 էր ան երկրին մէջը աս բանը ընելը,  
 ու իբրև մէկ խորին տրտմութեան նը-  
 շան մըն էր. ու կարելի է Ա-ուրբէն  
 դիտնալով ըրաւ աս բանը որ անոնց



Հասկըցունէ, թէ ինչպէս սաստիկ  
 տրտմեր է եղբայրը կորանցունելուն  
 համար : Առբէն իր եղբայրներուն  
 քովը եկաւ, ու սրտառուջ աղաղակաւ  
 կանչեց . Տղան չի կայ, ու ես ո՛ւր պի-  
 տի երթամ : Առբէնին եղբայրները  
 Յովսէփին ինչ որ ըրեր էին նէ իսկոյն  
 անոր սրտովցին, ու ան ալ նայեցաւ  
 որ եթէ անոր աղատութեանը համար  
 ջանք ալ ընելու ըլլար նէ՞ ոչինչ բան  
 էր . ինչու որ թէ որ Վամայելացոց  
 երթալու ըլլար, անհնարին էր որ  
 Յովսէփը անոր տային, թէ և ստակն  
 ալ կրկին իրենց տրվէր . ու նաև  
 Առբէն ինքը բաւական ստակ չունէր  
 իր եղբայրը աղատելու . ու անկարե-  
 ի էր որ ան քսան կտոր արծաթը եղ-  
 բայրները Առբէնին տային որ երթար  
 կրկին Յովսէփը ծախու առնէր, ին-  
 չու որ՝ թէ որ ասանկ ընէին, ան ժա-  
 մանակը յիսերնին առած չի պիտի ըլ-  
 լային :

Հիմայ իրենց յանցանքը ծածկելու

համար հնարքներ սկսեցին խորհիլ ,  
որ Յովսէփին ինչ ըլլալը իրենց հօրը  
ու ընտանեացը չիմացունեն :

Մէկ մեղքը միւս մեղքին պատճա-  
ռն է . աս մեծ չարութիւնը իրենց  
անմեղ եղբօրը ըրին , ու իրենց ծե-  
րունի ծնողքը խաբելու համար՝ ստու-  
թիւններ հնարեցին :

Սակայն անստոյգ է , թէ արդեօք  
Ուուբէն նոյն խաբէութեան մէջը ա-  
նոնց հետ միացեալ էր թէ չէ . բայց  
ինչեւիցէ մէկու մը բան մը չի յայտ-  
նեց . ու աս կերպով անոնց չարութեա-  
նը հաղորդ եղաւ . ու անանկ յայտնի ե-  
րևցուց որ ինքը կը վախնար իր պարտ-  
քը կատարելու : Իրենց հօրը զուրցած  
սուտերնին աս էր . անոնք մէկ ուլ մը  
մորթեցին , ու Յովսէփին զեղեցիկ  
հանդերձը անոր արիւնին մէջը թաթ-  
խեցին , իրենց հօրը բերին ու ցուցու-  
ցին անիկա բոլորովին արունոտ , և ը-  
սին . Նսիկա մենք գտանք . թէպէտ  
չենք զիտեր թէ քու տղինդ է՝ թէ չէ :

Յակօբ իսկոյն ճանչցաւ՝ որ իր տը-  
ղին հանդերձն էր, ու ըսաւ. Չար գա-  
զան մը անիկա փառատած է. անշուշտ  
Յովսէփը կտոր կտոր եղած է :

Ի՛նչ մեծ տրտմութիւն եկաւ Յա-  
կօբին զլիսուն. ասանկ մէկ սաստիկ ցաւ  
մը չէր կրնար ըլլար որ անոր եղաւ.  
Ուսքէլը՝ որն որ այնչափ կըսիրէր,  
մեռեր ու Նփրատ թաղված էր. և հի-  
մայ իր երկրորդ սիրելին Յովսէփ, որ  
կըյուսար թէ իր ծերութեանը մէջ  
օգնութիւն մը ու մխիթարութիւն մը  
պիտի ըլլար, ան ալ դնաց. սակայն  
առաւել մեծ մխիթարութիւն մը  
պիտի ըլլար Յակօբին, թէ որ իր դա-  
ւակը ձեռքովը գերեզմանը դնելու ըլ-  
լար. բայց ան ալ չեղաւ :

Յակօբ իր վիշտերուն դառնութեան  
մէջը իր հանդերձները պատուեց ու  
հաստը կտաւ հագաւ, ու շատ օր ա-  
նոր համար սուգը մտաւ ու լացաւ :

Բոլոր իր տղաքները ու աղջիկները  
եկան անիկա մխիթարելու. բայց չու-

զէց մխիթարովիլ . ինչու որ՝ Աս իմ  
տղիս սուգովը զերեզմանը պխտի եր-  
թամ՝ ըսաւ Յակոբ , ու անանկ անոր  
համար կուլար :

Յակոբին տղաքները իրենց հայրը  
կըմխիթարէին Յովսէփին կորստեա-  
նը համար , որն որ իրենք ծառայու-  
թեան ծախեր էին , ու հեռու երկիր  
մը խրկեր էին իր սիրական հօրմէն  
զատելով :

Անոնք կեղծաւորաբար իրենց տրտ-  
մութիւնը հօրերնուն տրտմութեանը  
հետ կըխառնէին , բայց զաղտնաբար  
կուրսխանային ասանկ ըլլալուն վը-  
րայ . կըջանային անոր վիշտը բարե-  
խառնելու , որ նոյն իրենց գործած  
խաբէութիւնն էր որ անոր վիշտը այն-  
չափ շատցունելու սլատճաւ կըլլար :

Անոնք կերթային իրենց հօրը ար-  
ցունքները սրբելու , որ նոյն ժամա-  
նակը իրենց ձեռքն էր , միայն Յով-  
սէփը ողջ է ըսելով անոր՝ անիկա մը  
խիթարելը , ու անոր տրտմութեան

արցունքները ուրախութեան դար-  
ցունելը :

Ի՛նչպէս ապերախտ խաբէբայ ու  
կեղծաւոր զաւկըներ էին . անոնք որ-  
չափ որ իրենց յանցանքը կը շատցու-  
նէին , այնչափ ալ Աստուծոյ բար-  
կութիւնը անոնց վրայ կաճէր :

Բոլոր աս բաներուն մէջը դուք ձեր  
վտանգը կրնաք տեսնալ , թէ որ չար  
խորհուրդներ ու զգացումներ ունենաք  
ու գէշ գործքեր ընելու ըլլաք :

Կեցէ՛ք ու խորհեցէ՛ք աս վը-  
տանգին վրայօք . մանաւանդ ան մէկ  
բանին վրայ մտմտացէ՛ք , որ Յովսէ-  
փին եղբայրները ան մեղքին մէջը ձը-  
ղեց . այսինքն՝ անոնց բաժ սուտին ու  
ըրաժ խաբէութիւններնուն վրայօք :

Յիշեցէ՛ք որ ան յանցաւոր ու գէշ  
վարք ունեցող մարդիկները միշտ  
կուղեն ու կը ջանան իրենց յանցանքը  
ծածկելու . դուք միշտ ասանկ չէ՞ք մի  
խմանար , երբոր գիտնալով գէշ բան  
մը ըսելու կամ ընելու ըլլաք : Իայց

անոնք որ կուզեն իրենց գէշ վարքերը ծածկել, շատ կըջանան մէկ հնարքով մը կամ թէ համարձակ սուտով մը անիկա ընել :

Ինչպէս որ գիտէք, հասարակաբար կըսվի՝ թէ անոնք որ գողութիւն կընեն, սուտ ալ կըխօսին . ճշմարիտ է աս . ինչու որ գէշութիւն ընողները ինչ տեսակ որ ըլլայ՝ խաբէութիւն կըգործածեն, ու անիկա չի յայտնելու համար սուտ կըխօսին :

Ինչպէս անարդ՝ վախկոտ՝ ու յանցաւոր են ստախօսները . սուտ զուրյող շրթունքները Տէրօջը առջին պիղծ են . բայց անոնք որ ճշմարիտ կըխօսին, անոր ընդունելի են : Ստախօսները իրենց բաժինը ան լիճին մէջը պիտի ունենան, որ կըակով ու ծծումքով կըվառի :

Ուրեմն վախցէ՛ք մեղք զործելէն, բոլոր չար խորհուրդներէն, զզայումներէն, ու վարքերէն . ինչու որ աս բաները մարդս խաբէութեան ու սըտութեան կառաջնորդեն :

Ըս վտանգներուն դէմ ամենեւին ապահովութիւն չի կայ . բայց Մտուած սիրելուն ու անոր հնազանդելուն մէջը շատ կայ : Երդեօք Մտուած սիրելու ու անոր հնազանդելու սիրտունիք մի . թէ որ չունիք նէ , հոգիսէփին եղբայրներուն վրայ խորհեցէք . մտմտացէք անոնց չար կիրքերուն վրայ՝ որ իրենց եղբօրը ու հօրը ցուցուցին , ու ասոնց բոլորն ալ անոնց սրտին դէշութենէն առաջ եկաւ :

### Գ. Լ. ՈՒԽ. Ը :

Հովեփին ծախովը՝ Պեպոփրէն ներսինին . Լնոր պատահելննը Տեղէ արված է՝ Լնործոյ նախանահանելննը Տեղէ ցոցոնելու համար : Պեպոփրէննն ունեցած ները Հովեփին վրայ : Ուրիշներոնն ունեցած պարտերննն՝ պարտինն Լնործոյ վախովը խորհել :

Շատ երկար ճանապարհ էր՝ մէկ քանի հարիւր մղոն հեռաւորութեամբ՝ Գովթայիմէն՝ ուր տեղ որ

Յովսէփ ծախվեցաւ խամայէլացիներուն , Եգիպտոս երթալը՝ ուր որ անիկա տարին :

Աղէկ կըլլայ որ մէկը ցուցունէ ձեզի աս տեղվանքը աշխարհացոյցին վրայ , ու նաև Միջագետը ուրկից Յակոբ իր ընտանիքովը եկաւ , ու Վերբօն՝ ուրտեղ որ Յակոբ իր խաւհակ հայրը դտաւ , ու նաև Սիւքէմ ու Սեքար՝ ուրտեղ որ Յովսէփին եղբայրները իրենց հօրը ոչխարները ու այծերը կըպահէին . ու հոս տեղ Յովսէփ խրկըվեր էր իր եղբայրներուն ինտոր ըլլալը նայելու :

Եգիպտոս մէկ մեծ երկիր մըն է Միջերկէին մէջը կարմիր Ծովուն արևմտեան կողմը . շատ բազմամարդ երկիր մըն էր , ու անոր տիրողները փարաւոն կըկոչվէին , որ թագաւոր ըսել է :

Աս թագաւորները շատ զօրաւոր էին , իրենց տակը շատ զօրքեր ունէին . որոնց ինչ որ ուզէին կըհը-



բամայէին . ու աս պատճառաւ մար-  
դիկ շատ կը վախնային անոնցմէ , ու  
անոնց կը հնազանդէին :

Օրքերէն ոմանք միշտ իրենց քով  
ու իրենց տանը մօտ կը պահէին , ու  
բոնք Թաղաւորին պահապանները կը  
վէին . ու անոնք Թաղաւորին վրայ  
պահպանութիւն կը նէին , որ չըլլայ  
Թէ մէկը անիկա մեռցունէ կամ վնաս  
մը տայ անոր . ու նաև ասոնք Թաղա-  
ւորին դահիճներն էին՝ որ երբոր Թա-  
ղաւորը մէկ յանցանքի մը համար մէ-  
կը մեռցունել ուղէր , անոնք կը մեռ-  
ցունէին . Թաղաւորին պահապաննե-  
րը մէկ հրամանատար մը ունէին որ ի-  
րենց կը հրամայէր . ինչպէս որ տեսած  
էք զօրաց մէջ , որ ամէն խումբ մէջ  
մէկ գլուխ ունին . ու ան ժամանակը՝  
որ Յովսէփ Ազիպոս տարվեցաւ ,  
նոյն զօրացը հրամանատարին անունը  
Պետափրէս էր : Շատ հարուստ ու  
զօրաւոր մարդ մըն էր . բոլոր երկրին  
մէջը ամէնէն մեծը , ու Թաղաւորին

երկրորդն էր , շատ մեծ տուն մը ունէր ու շատ երկիրներ ու մարդիկներ ունէր իրեն տակը իր պաշտօնը կատարելու համար :

Իսմայէլացիները Նգիպտոս հասած նուն պէս՝ Յովսէփը աս Պետափրէսին ծախեցին . և թէպէտ չենք գիտեր անոր քանիի ծախվիլը , բայց անտալակոյս տուած քսան կտոր արծաթներ նուն էվել ծախված պիտի ըլլան . ինչու որ անիկա ծախու առին ստակ վաստրկելու համար , ինչպէս որ մարդիկները ապրանք կառնեն ու կրծախեն վաստակի համար :

Ասանկ՝ ողորմելի Յովսէփը երկու անգամ գերիի պէս ծախվեցաւ . և հիմայ մէկ օտար մարդու մը ձեռքը ինկաւ՝ օտար երկրի մէջ՝ իր տունէն , իր հօրմէն , իր ընտանիքէն ու իր բարեկամներէն հարիւրաւոր մղոն հեռաւորութեամբ : Բայց իրաւունք ունինք հաւտալու , որ Յովսէփ իր յոյսը Աստուծոյ վրայ դրած էր , ու անոր կա-

ղաչէր ու միշտ անոր կրնայէր իր  
պաշտպանութեանը ու առաջնորդու-  
թեանը համար . ու Վստուած պաշտ-  
պանեց , առաջնորդեց , ու օրհնեց  
Յովսէփը , ինչպէս որ պիտի տեսնաք :

Նաև պիտի տեսնաք Վստուծոյ նա-  
խախնամութիւնը՝ թէ ինչպէս կրկին  
տնօրինեց , որ Յովսէփ թաղաւորին  
սրահասպաններուն հրամանատարին  
ծախսի , որ իր կամքը ու Յովսէփին  
երազը կատարի :

Իմ սիրելի տղաքներս , կուզեմ որ  
միշտ միտքերնիդ սրահէք աս Վստուծոյ  
անխմանալի նախախնամութիւնը , քա-  
նի որ յառաջանաք Յովսէփին սրատ-  
մութեան մէջը . ինտոր որ հարկաւոր  
պատմութիւններուն մէկն է ան , որ  
Վստուած մեզի տուաւ Վստուածաշուն-  
չին մէջը :

Երբոր Յակոբին զաւկրներուն ու  
Խորայէլացոյ վրայօքը կարդալու ըլ-  
լաք՝ պիտի դտնաք թէ ինչպէս մեծ ու  
զօրաւոր ազգ մը եղան , ու ինչպէս

Յիսուս Վրիստոս աշխարհիս Վրկիչը  
 աս մարդոցը ցեղէն ծնաւ, ու նաև  
 ուրիշ շատ զարմանալի ու սքանչելի  
 բաներ պիտի գտնաք, որ միայն Յով-  
 սէփին ծախսիւ լէն ու Վրիստոս երթա-  
 լէն առաջ եկաւ :

Պիտի տեսնաք՝ որ Մատուած ամէն  
 բան իր նախախնամութեամբը, իր  
 կարգադրութեամբը, ու իր տնօրինու-  
 թեամբը առաջ կրտանի. ու ճշմարիտ  
 Մատուածը իր խորհուրդներուն մէջը  
 քարծր է, ու իր գործքերուն մէջը  
 զօրաւոր է. ու դուք ալ Մովսէսին  
 պէս պարտիք ըսել, թէ՛ Մով կայ քե-  
 ղի պէս՝ ո՛վ Տէր, ո՛վ կայ քեզի պէս  
 սրբութեան մէջ փառաւոր, գովու-  
 թիւններուն մէջ ահաւոր, ու հրաշք-  
 ներ ընող :

Յովսէփ քիչ մը ժամանակ հոն կե-  
 նալէն ետև, Պետափրէս տեսաւ որ ան  
 աշխատասէր ու հաւատարիմ՝ ծառայ  
 մըն էր, ու բոլոր իր վարքին մէջը  
 քարի էր : Ենոր պաշտօնը իր տէրոջը

տանը մէջն էր , ու Պետրափրէս հաս-  
կըցաւ որ իր գործքը շատ աղէկ կը-  
նէր , ու ընտանիքին մէջը ինչ պաշ-  
տօն որ յանձնուիլէր էր նէ ճարտարու-  
թեամբ ու իմաստութեամբ առաջ  
կրտանէր : Ըստուածաշունչը երբոր  
աս բանին վրայօքը խօսելու ըլլայ , ա-  
սանկ կըսէ . Ընոր տէրը տեսաւ՝ որ  
Ըստուած անոր հետ էր , ու բոլոր ինչ  
որ ըներ նէ՝ Ըստուած անոր ձեռքովը  
կըյաջողէր :

Մէկ քանի բան կար Հովսէփին  
խօսակցութեանը ու վարքին մէջը , որ  
կըցուցունէր թէ ինքը ճշմարիտ Ըս-  
տուծմէն կըվախնար , ու աս բանը  
երբոր Պետրափրէս տեսաւ սկսեց պա-  
տիւ տալ Հովսէփին :

Իմ սիրելի՛ զաւկընէրս , ազօթքը  
ըէ՛ք Ըստուծոյ՝ որ իր Սուրբ Հոգին  
ձեզի տայ , որ դուք ալ կարող ըլ-  
լաք Հովսէփին օրինակին նմանելու :

Դուք ալ պարտիք ձեր Տնողացը  
կամ թէ ուրիշ ձեր վրայ իշխանու-

Թիւն ունեցող մարդոցը հրամանները  
խոնարհութեամբ կատարել :

Ի՛նչ բան որ ընկաւ ըլլաք, Աստու-  
ծոյ վախովը ըբէք, ինչու որ ինքը  
կըհրամայէ ձեզի ձեր պարտքը ընե-  
լու . ու թէ որ ասանկ անիկա սիրելու  
ըլլաք ու անոր ծառայելու ըլլաք,  
ան միշտ ձեր պաշտպանը ու բարեկա-  
մը պիտի ըլլայ, ինչպէս որ Յովսէփին  
եղաւ :

Պ. Լ. 11 Ի Խ. Խ. Խ.

Յովսէփին վերադառնալ ըլլալը Պետեղ-  
բեօսին քան զժողովուրդն : Պետեղբեօսին ինչպէս շար-  
բեմաբեմ անոր զորքը ձեւ : Իր վտիւր Աստու-  
ծոյ տէր Տէրը գործելու : Անոր ստոր տեղը  
ամբաստանելու ու բանարը Գրիգոր : Բանս ին-  
Տէրը իր ունեցած բարե ձեւը : Բազմոց բան-  
արին զժողովուրդն ունեցած ինասկը : Աստու-  
ծոյ հետը ունեցաւ ին Տէր երջանիկութիւնը :

Յովսէփին վարքը իրենն յանձնրված  
պաշտօններուն մէջը անանկ աղէկ  
էր՝ որ Պետափրէս շատ ուրիշ

գործքեր ալ դրաւ անոր իշխանութեանը տակը . ու վերջապէս Հովսէփին վրայ ունեցած հաւատարմութիւնը այնչափ շատցաւ , որ իր տանը վերայ վերակացու ըրաւ , ու ինչ որ ունէր անոր ձեռքը յանձնեց :

Հովսէփի հիմայ Պետափրէսին ամէն գործքին գլուխը եղաւ . Պետափրէսին տանը մէջի ու արտին մէջի մարդոցը բոլորին ալ Հովսէփի կըհրամայէր , ու իր ուղածին պէս կըտնօրինէր . ու սասանկ ամէն բանին տնօրէնութիւնը ու հոգը Հովսէփիը կընէր . ինչպէս որ՝ Նստուածաշունչը մեզի կըզուրցէ , թէ՛ Պետափրէս իր ինչ տեսակ ստացուածք ունենալը անգամ չէր զխտեր , բայց ՚ի սեղանին վրայի կերակուրներէն , որ իր առջին կուգար : Ամէն բան Հովսէփի իր ճարտարութեամբը ու արուեստովը կըսպաստրաստէր , իր տէրոջը ու անոր ընտանիքին համար՝ առանց իր տէրոջը խառնրվելուն : Հովսէփի իր այսչափ յաջողութեանը մէջ չի

մուսուլման իր մարդասէր Մատուծոյն նախախնամութիւնը ու անոր ունեցած պարտականութիւնը, այլ մանաւանդ շատցուց Մատուծմէ վախնալը, ու անոր հնազանդիլը. ու սա դիպուածէն յայտնի է անոր ասանկ ըլլալը. ինչու որ՝ ասկէ քիչ ժամանակէ ետե ինքը փորձըվեցաւ մէկ դէշ դործք մը ընելու. սակայն ինքը դէմ կեցաւ ան փորձութեանը, ու յայտնի երեցուց որ ամէն բանէն էվելի Մատուծոյ դէմ մեղք գործելէն կըվախնայ: Պետափրէսին կնիկն էր որ ան մեղքը գործելու հրաւիրեց զինքը. ան շատ դէշ կընիկ մըն էր, ու սկսեց Յովսէփը իր էրկանը պէս սիրել:

Ընիկա արդէն մէկ էրիկ մը ունէր. ու ազէկ գիտէր որ շատ մեղք բան էր Յովսէփն ալ իր էրիկը ընելը, ու անիկա համոզելը որ ան զինքը իր կնկանը պէս սիրէ:

Ինչու որ՝ թէ որ մէկ կարգըված էրիկ մարդ մը կամ կնիկ մարդ մը ա-



սանկ բան մը ընելու ըլլայ ուրիշ իրեն  
 հետ չի կարգըված մէկի մը հետ, անի-  
 կա Մտուածոյ եօթներորդ պատուի-  
 ըանը կոտրած կըլլայ, որ կըսէ թէ՛  
 «Մի շնար» :

Աս կընշանակէ թէ մէկ կարգըված  
 էրիկ մարդ մը ուրիշ կնիկ մը չի պիտի  
 ունենայ բաց ՚ի անկից՝ որուն հետ որ  
 կարգըված է, ու մէկ կարգըված կնիկ  
 մըն ալ ուրիշ էրիկ մը չի պիտի ու-  
 նենայ բաց ՚ի անկից՝ որուն հետը որ  
 կարգըված է :

Ո՛վ որ աս բանը ընելու ըլլայ՝  
 կամ թէ միտքէն անցունելու ըլլայ,  
 շուտթիւն ըրած կըլլայ, ինչպէս որ  
 մեր Տէրը մեզի սորվեցուց. ու շատ  
 մեծ մեղաւոր եղած կըլլայ Մտուածոյ  
 առջին :

Պետաւրէսին կնիկը ջանաց որ  
 Յովսէփը համոզէ Մտուածոյ դէմ ան  
 մեղքը գործել տալու, ու անոր հրա-  
 մանը աւրելով աս սոսկալի գէշու-  
 թիւնը ընել տալու :

Բայց անոր ջանքերը ոչինչ եղաւ .  
ինչու որ՝ Յովսէփի հաստատուն էր իր  
Մատուծոյ հնազանդութեանը մէջ : Մ  
մէծ չարութիւնը ի՞նչպէս կրնամ ը-  
նել՝ ըսաւ Յովսէփի , ու Մատուծոյ  
դէմ մեղք գործել :

Հիմայ Պետափրէսին կնկանը սէրը  
ատելութեան դարձաւ , ու սկսեց անի-  
բաւութիւն ընել որչափ որ կրնար  
նէ . ինքը շատ դէշ սուտ մը ըսաւ իր  
էրկանը Յովսէփին համար . զըստը-  
տութիւն մը ըրաւ անոր՝ որ Յովսէփ  
կուզէ անիկա իր կնիկը ընել , ու Պե-  
տափրէս ալ հաւատաց անոր :

Մ խօսքին վրայ Պետափրէս շատ  
բարկացաւ ու միտքը դրաւ որ անիկա  
ալ իր տունը չի պահէ , ու վճռեց որ  
բանտը դրվի :

Նոյն բանտին մէջն էին ան մար-  
դիկներն ալ որոնք որ Թագաւորը բար-  
կացուցեր էին , կամ անոր օրէնքները  
չէին պահած . կրկարդանք Մատու-  
ծաշունչին մէջը՝ թէ անոնք կապ-

վաճ էին . ասանկ՝ կարելի է թէ  
Յովսէփն ալ կապված էր իր ձեռ-  
քերէն ու ոտքերէն , ու անանկ մուտ  
սենեակի մը մէջ էր դրված :

Հիմայ ինչպէս փոփոխութիւն մը  
եղաւ աս խեղճ երիտասարդին , որ իր  
յաջողութեան աստիճանէն վար ինկաւ  
մէկ սուտով մը՝ ու մէկ չար կնկան մը  
ղբարտութիւնովը , ու ասանկ անմեղ-  
երիտասարդը Պետափրէսին աչքէն  
իյնալով բանտը դրվեցաւ առանց մէկ  
պաշտպան մը ու բարեկամ մը ունե-  
նալու :

Սակայն թէ որ ինքը մարդոցմէ բա-  
րեկամ մը չունէր նէ , վերը մէկ Նմե-  
նակարող մը ունէր՝ որ իրեն պահա-  
պանն էր ու իրեն աղէկութիւն կընէր :

Արդարեւ Նստուած ինքն էր՝ որ ա-  
սանկ տնօրինեց իր իմաստուն նախախ-  
նամութեամբը , որ Պետափրէսին կը-  
նիկը զբարտութիւն ընէ Յովսէփին  
վրայ իր չարութեան խորհուրդներով  
վը , ու Յովսէփ Պետափրէսին ձեռքո-

վը բանտը դըրվի , որ իր գալու յաջո-  
ղութեանը ու մեծութեանը պատճառ  
ըլլայ , ու անոր երազին ճշմարիտ ըլ-  
լալը յայտնըվի :

Հատ մարդիկներ՝ թէ որ Յովսէ-  
փին տեղը ըլլային անանկ իր եղբայր-  
ներէն ծախված օտարականի մը հե-  
ռու երկիրի մէջ , ու սուտ տեղը ամ-  
բաստանված յանցանքի մը համար ,  
ու բանտը դըրված ու կոտորված ,  
չատ տրտունջ ու զանգատ պիտի  
ընէին . ու պիտի խորհէին՝ թէ  
Լստուած անողորմ ու անարդար է որ  
մեզ Թողուցեր է ասանկ նեղութիւն-  
ներ քաշելու :

Սակայն՝ Յովսէփի անոնց պէս չէր :  
Յաջողութեան մէջ չի հտարտացաւ ,  
ու նեղութեան մէջ խոնարհութեամբ  
համբերութիւն ըրաւ :

Բանտին պահապանը տեսաւ որ  
Յովսէփ ինչպէս կը վարվէր ու կը դ-  
գար . ու Լստուած՝ որ բոլոր մարդկանց  
սրտին վրայ կը տիրէ , պահապանին

միտքը դարձուց՝ որ Յովսէփին շատ  
երախտիք ու մարդասիրութիւն ընէ .  
ասանկ՝ մինչև անգամ բոլոր բանտին  
կառավարութիւնը ու տնօրէնութիւնը  
բանտարգէտը անոր ձեռքը յանձ-  
նեց :

Աս պաշտօնը մէկ նոր ու դժուար  
պաշտօն մըն էր Յովսէփին պէս մէկ  
երիտասարդի մը . աս ժամանակ Յով-  
սէփ կը կարծըվէր թէ քսանրեօթը  
տարեկան էր . բայց իր իմաստութիւնը  
բարեպաշտութիւնը ու հաստատու-  
թիւնը շատ մեծ էր իր տարիքին նայ-  
ելով :

Բանտին վերաբերեալ գործքերը  
Յովսէփ այնչափ իմաստութեամբ ա-  
ռաջ տարաւ՝ որ Մտուածաշունչին  
մէջը կը կարդանք թէ՛ « Բանտին պա-  
հապանը չէր նայէր Յովսէփին ըրած  
բանին . ինչու որ Տէրը անոր հետ էր ,  
ու ինչ որ ընէր՝ Տէրը կը յաջողէր » :

Տէրը անոր հետ էր . ինչ էրջան-  
կութիւն էր իրեն . դուք մեծ Քսիթա-

րութիւն կիմանաք, երբոր ձեր հայրը  
 ու ձեր մայրը հետերնիդ ըլլայ. մա-  
 նաւանդ երբոր տառապանքի, տրտ-  
 մութեան, ու հիւանդութեան մէջ  
 ըլլալու ըլլաք, որ կարօտ էք մէկի  
 մը՝ ձեզի խրատ տալու ու ձեր վրայ  
 հոգ տանելու: Արդեօք ո՞րչափ ժամա-  
 նակ ձեր ծնողքները քովերնիդ ըլլա-  
 լով վախերնիդ ու տրտմութիւններնիդ  
 հանդարտեցուցած են: Արդեօք քանի՞  
 անգամ ձեր տկար եղած ժամանակը,  
 ու ինչ ընելնիդ չի գիտցած ատեննիդ  
 գլուխնիդ անոնց վրայ դրած օղնու-  
 թիւն փնտռած էք: Ասանկ ալ մէկ  
 հայր մը ունիք երկինքը՝ որ ամէն-  
 իմաստ ու ամենազօր է. ան կուղէ որ  
 միշտ իրեն հնազանդիք՝ ինչպէս որ  
 տղաքը պարտին ասանկ մէկ մարդա-  
 սէր ու զօրաւոր բարերարի մը:

Ան կուղէ որ դուք ինքը սիրէք ու  
 իրեն հնազանդիք: Ինքը Աստուածա-  
 շունչին մէջը կըսէ ինչ պէտք ըլլալը  
 ինքը հաճեցունելու համար, ու ինչ

պէս ինքբողինքնիս և ուրիշները աղէկ  
 ու երջանիկ ընելու համար :

Ամէն բանէն առաջ Աստուած  
 ձեզմէ կըխնդրէ, որ դուք սրտով տրտ-  
 միք ձեր մեղքերուն վրայ, ու մեղքէն  
 հտ կենաք, ու Հիսուսի Վրիստոսի  
 ապաւինիք ձեզ փրկելու համար. ու  
 ձեզ՝ Հոգին Սուրբը խնդրելու համար  
 աղօթք ընելու կըհրաւիրէ, որ կարող  
 ըլլաք իր ուզածը կատարելու. ու թէ  
 որ ասանկ աղօթք ընելու ըլլաք, ան  
 ձեզի կըխոստանայ իր Սուրբ Հոգին  
 տալու. հիմայ աս երկնաւոր Հօրը չի  
 պիտի մի երթաք ձեր մեղքերուն հա-  
 մար տրտմած, ու անոնց բոլորը անոր  
 խոստովանիք. ու աղաչէք իրեն որ  
 Վրիստոսի միջնորդութեամբը ա-  
 նոնց թողութիւն շնորհէ, ու իր Սուրբ  
 Հոգին ձեզի տայ որ կարող ըլլաք զին-  
 քը սիրելու ու իրեն հնազանդելու :

Ան ժամանակը Տէրը ձեր հետը պի-  
 տի ըլլայ ինչպէս որ Յովսէփին հետն  
 էր. ու ձեր վրայ հոգ պիտի տանի՝

ձեր հօրմէն ու մօրմէն կամ ձեր  
 երկրաւոր բարեկամներէն առաւել :  
 Ինքը ձեր հետը պիտի ըլլայ՝ ձեզ իր  
 առանձին նախասխնամութեանը խնամ-  
 քին տակը ունենալով , ու ձեզ սրաշտ-  
 պանելով , ու հեռու պահելով բոլոր  
 յաջողութեան մէջ եկած փորձանքնե-  
 րէն : Աւ ճախորդութեան մէջ ձեզի  
 պիտի օգնէ , ու բոլոր ձեր գործքե-  
 լուն մէջը ձեր հետը պիտի ըլլայ ձեր  
 աղէկութեանը համար . և վերջապէս  
 ձեզ երկինքը իր քովը ու իր Արդւոյն  
 Յիսուս Վրիստոսի քովը պիտի առ-  
 նէ , ուրտեղ են բոլոր հաւատացեալ-  
 ները , ու յաւիտեանս մեղքէն ու նեղու-  
 թենէն ազատ պահելով՝ գիտութեան ,  
 աղէկութեան , ու երջանկութեան մէջ  
 պիտի յառաջացունէ :



ԳՆՈՒԽՈՒԹՅՈՒՆ

Երբ որ զայն ժամ լինի : Երբ որ ինչ ըլլալը , ու  
 մար օգոստոս : Տակաւորապէս իրար լինի : Յոյ՛ն  
 ինչին ան իրար լինի միմեանս փոխաբեր :

**Ս**արեւելի է զարմանաք որ Յովսէփին  
 սէս մէկ երիտասարդ մը ու նաև  
 օտարական մը ինչպէս քիչ ժամանա-  
 կի մէջ Պետափրէսին ու բանտապե-  
 տին հաւատարմութիւնը բոլորովին  
 ստացաւ՝ երբ որ ինքը Պետափրէ-  
 սին քովը ծառայ մը դացած էր , ու  
 միւսին քովն ալ բանտարդեալ մը :

Բայց աս տեղ մէկ պարզ պատ-  
 ճառ մը կայ անոր ասանկ յառաջա-  
 նալուն . այսինքն՝ Եստուծոյ կրօնա-  
 նար : Ա՛յր որ ըլլար՝ ու ինչ բան որ  
 ընէր , կը յիշէր թէ Եստուծոյ աչքը  
 միշտ իր վրայ էր , ու կը քննարկէր թէ  
 Եստուծոյ համար ունի տալու բոլոր իր  
 վարքին համար :

Եստուծոյ կրօնաւոր մէկ օրինակը տեսած

էք, երբոր Պետափրէսին կնիկը փոր-  
 ձեց անիկա մեղք գործելու: Ինչպէս  
 կրնամ աս մեծ չարութիւնը ընել՝ ը-  
 սաւ Յովսէփ, ու Մատուծոյ դէմ մեղք  
 գործել:

Մատուծոյ վախէն ՚ի զառ՝ ուրիշ  
 առաւել զօրաւոր բան մը չի պիտի  
 կրնաք գտնալ, որ ձեզ մեղք գործե-  
 լէն ետ պահէ ու ձեր պարտքը կատա-  
 րելու քաջալերէ:

Ին սիրով միացեալ մէկ վախ մըն  
 է, ու նոյն վախը ունեցող սիրելի  
 ու հնազանդ տղայ մը՝ միշտ կը ջա-  
 նայ իր ծնողքը չի բարկացունելու:

Կարգացէ՛ք ձեր Մատուածաշուն-  
 չը, ու ջանացէ՛ք Մատուծոյ ո՛վ ըլլա-  
 լը սորվելու, ու որչափ կրնաք նէ՛ ա-  
 նոր մեծութեանը ու բարութեանը  
 վրայօք սորվեցէք, որ տեսնաք թէ  
 ինչպէս պատճառ ունիք ասանկ մէկ  
 փառաւոր ու ողորմած էակ մը սիրելու  
 ու անոր հնազանդելու:

Իղօթք ըրէք որ Մատուծմէ վախ-

նաք, ու անիկա սիրէք. ու ամէն ժա-  
մանակ մի ոքերնիք բերէք որ ան միշտ  
ձեր քովն է, ու բոլոր ձեր խորհա-  
ծին ըսածին ու ըրածին համարը ա-  
նոր պիտի տաք:

Ան ժամանակը Յովսէփին պէս  
միշտ Աստուծոյ պահպանութեան տա-  
կը եղած պիտի ըլլաք. դէշ մարդիկ  
ները ձեր բարեգործութեան պատ-  
ճառը տեսնալովն՝ ձեզ պիտի յար-  
դեն, ու աղէկ մարդիկները ձեզ պի-  
տի սիրեն. ու դուք ան հաստատուն  
ճամբուն մէջը հեռուեցէք՝ ինչպէս որ  
Յովսէփը ըրաւ թէ յաջողութեան  
մէջ և թէ ճախորդութեան մէջ,  
ամէնուն պատիւը ու վստահութիւնը  
ստանալով:

Այլեւի պիտի յայտնըվին աս ճշմար-  
տութիւնները Յովսէփին պատմութեա-  
նը մէջ՝ ինչպէս որ պիտի տեսնանք:  
Յովսէփ բանտին կառավարութիւնը  
իր վրայ առնելէն քիչ մը ժամանակ  
ետե՛ր կու մարդ բերվեցան հոն, ու

րոնց վըսյօթ կուղեմ քիչ մը ծանօթու-  
թիւն տալ : Ահկը Ազխատոսի Թագա-  
ւորին տակաւապետն էր . աս մարդը  
Թագաւորին խմած զինիին հողը կը  
տանէր , ու կարելի է Թագաւորին զի-  
նիին բաժակը ինքը անոր կուտար .  
երբեմն ան զեղեցիկ հասուն խաշողնե-  
րը կառնէր , ու անոնց ջուրը կըքա-  
ւէր բաժակին մէջը , ու Թագաւորին  
կուտար խմելու : Ըին ժամանակները  
Ազխատոսին ու Նսիային մէջի բոլոր  
Թագաւորները տակաւապետներ ու-  
նէին . ու տակաւապետութեան պաշ-  
տօնը շատ յարգի բան մըն էր սեպ-  
ված :

Միւս մարդը՝ որ բանտը բերեր է-  
ին , Թագաւորին մատակարարն էր , որ  
Թագաւորին կերած հացին՝ և ուրիշ  
տեսակ կերակուրներուն վըսյ վերա-  
կացու էր . ասոր պաշտօնն ալ միւսին  
պաշտօնին պէս շատ պատուաւոր էր :

Արդարեւ իրաւունք ունինք ըսելու՝  
թէ աս մարդոցը երկուքն ալ շատ

աստիճանաւոր մարդիկներ էին . ինչու որ Աիկիլըսցի հին պատմագիր մը թէոզորոս անուամբ՝ որ Ազխատասի վրայոք զրամ էր , կըսէ՝ թէ թագաւորին զործակալները ( ինչպէս տակաւսապետը ու մատակարարը ) ազնիւ մարդիկներուն մէջէն , քահանայութեան արժան ընտիր ընտանիքներէն կընտրէին : Աերևայ թէ աս պաշտօնատարները մէկ կերպով մը բարկացուցեր էին թագաւորը , ու անանկ բարկացեր էր անոնց , որ Յովսէփին եղած բանտին մէջը դրաւ . աս բանտը թագաւորին պահապաններուն հրամանատարին՝ Պետափրէսին տանը մէկ կողմն էր , ու անոր իշխանութեան տակն էր : Պետափրէս տեսաւ որ տակաւսապետը ու մատակարարը բանտն էին դրուած , պատուիրեց Յովսէփին որ անոնց հող տանի , ու իրենց վիճակին վերաբերեալ ինչ որ պէտք էր նէ պատրաստեց : Բիչ մը ժամանակ բանտին մէջը կենալէն ետև երկուքն

ալ մէյտեղ երազ տեսան միև նոյն  
 զիշերին մէջը , որ շատ զարմացան ու  
 տրտմեցան : Ատքի աւուուն երբոր  
 Յովսէփ զնայ անոնք տեսնալու , ինչ  
 պէս որ սովորաբար կընէր՝ որ նայի  
 թէ արդեօք ամէն բան կանոնաւոր է  
 մի , տեսաւ որ՝ բան մը եղէր են տրտ-  
 մած նստեր են , հարցուց թէ պատճա-  
 ռը ի՞նչ է . ըսին թէ՛ Արկուբս ալ ե-  
 րազ տեսանք , ու անոնք մեզ շատ  
 տրտմեցուցին , ու նաև չի կայ մէկը որ  
 կարող ըլլայ մեր երազները թարգմա-  
 նելու , կամ անոնց միտքը մեզի մեկնե-  
 լու , թէ ի՞նչ կընշանակեն :

Յովսէփ անոնց ըսաւ . Անոնց մեկ  
 նութիւնները Աստուծոյ չի՞ն մի վե-  
 րաբերիր . կաղաչեմ ձեզի՝ որ անոնք  
 ինծի ըսէք : Ասկէ կերևայ թէ Յով-  
 սէփ որ ինքն ալ մէկ քանի երևելի  
 երազներ տեսած էր , ան մազիկնե-  
 րուն մէկն էր , որ առջի ժամանակնե-  
 րը Աստուած անոնց կարողութիւն  
 տրուեր էր երազներուն մեկնութիւնը

տալու , ու ետքի ըլլալու բաները ա-  
ռաջմանէ գուշակելու :

Տակառապետը իր երազը ասանկ  
պատմեց Յովսէփին . Այրազիս մէջը  
խաղողի որթ մը տեսայ , որ իրեք ոսո-  
ւունէր . մէկ քանի ըոպէին մէջը ոս-  
տերը մեծցան , ու շուտով ծաղկե-  
ցան , ու խաղողները հասան . ու թա-  
գաւորին բաժակը իմ ձեռքիս մէջն  
էր , որուն մէջը անոնք փրցունեւէս ե-  
տեւ ջուրը քամեցի , ու նոյն բաժակը  
Թագաւորին տուի :

Յովսէփ անոր երազին աս թարգ-  
մանութիւնը տուաւ . ըսաւ որ՝ Ան ի-  
րեք ոստը իրեք օր կրնշանակէ . ու ան  
իրեք օրվան մէջը Թագաւորը քեզ  
միտքը պիտի բերէ , ու կրկին առջի  
տեղը պիտի դնէ . ու դարձեալ ա-  
նոր տակառապետը պիտի ըլլաս , ու  
անոր զինի տաս խմելու :

Տակառապետը մեծապէս ուրախա-  
ցաւ աս իր երազին թարգմանութեա-  
նը , որ քիչ ժամանակէն ան անհան-

գլխատ ու անարդ բանտէն պիտի ելար ,  
 ու կրկին թագաւորին բարեկամու  
 թիւնը պիտի վայելէր :



### ԳՆՈՒԽ • ԺԸ :

Ստորագրարին իրազե աւանոր Տէմո-  
 նը : Յովնիկին հարգարեո-  
 Ստորագրո-  
 Տէրը :

Ստուածաշունչին մէջը չենք գտնար  
 թէ արդեօք տակառւայետը իր ե-  
 րազին մեկնութեանը համար շնորհա-  
 կալ եղաւ մի . բայց ետքը պիտի  
 տեսնանք որ անանկ շնորհակալութիւն  
 ընող մարդ չէ եղեր :

Քանզի Յովսէփ անկէ մէկ շնորհք  
 մը խնդրեց . ըսաւ , Արքայ դուն կրկին  
 քու սպաշտօնիդ վրայ դրվելու ըլլաս ,  
 ու կրկին թագաւորին հետ մէկտեղ  
 բարեկամանալու ըլլաս , կաղաչեմ քե-  
 ղի որ յարմար ժամանակ մը գտնալով



մարդասիրութիւն մը ընես ինձի , իս  
 փարաքոնին յիշես , որ աս տունէն հա  
 նէ . ինչու որ ես Նքրայեցեաց երկրէն  
 գողցրված եմ , ու նաև հոս ալ բան  
 մը ըրած չեմ որ զիս աս բանտը դրին :

Ետքը՝ մատակարարն ալ ըսաւ  
 իր երազը , ու կըյուսար իր թշուառ  
 վիճակին մէջը եղած ընկերին երազին  
 մեկնութենէն՝ որ Յովսէփը տուաւ՝  
 իրեն ալ անորինին պէս ազէկ պիտի  
 մարգարէանար :

Ըսաւ որ երազիս մէջը իրեք ճեր  
 մակ սակառ տեսայ իմ գլխուս վրայ .  
 ու ամէնէն վրայի սակառին մէջը թա  
 դաւորին համար եփած ամէն տեսակ  
 կերակուրներէն կար . ու նաև տեսայ՝  
 որ Թուչունները կուգային ու ան կե  
 րակուրներէն կուտէին :

Մատակարարը անհամբերութեամբ  
 կըսպասէր՝ որ նայի թէ Յովսէփ ինչ  
 մեկնութիւն պիտի տայ իր երազին .  
 Յովսէփ ըսաւ թէ՛ Վն իրեք սակառը  
 իրեք օր կընշանակէ , ու ան իրեք օրէն

ետե՛լ թագաւորը քեզ պիտի կախէ .  
 ու թռչուններն ալ պիտի դան ու քու  
 մարմինդ ուտեն : Մատակարարին ե-  
 րազին մեկնութիւնը շատ ցաւազին ե-  
 դաւ . թէպէտ աս խօսքին վրայ մա-  
 տակարարին ինչպէս զգալը չենք զի-  
 տեր : Յովսէփ ան երազներուն մեկ-  
 նութիւնները տալէն ետե՛լ , երբորդ օ-  
 րը փարսաւոնին ծննդեան օրն էր . ու  
 նոյն օրը շատ ուրախութիւն կը քար  
 թագաւորին տանը մէջը . ու բոլոր իր  
 աղնուականներուն , հրամատարնե-  
 րուն ու զործակալներուն մեծ հան-  
 դէս կընէր . աս հանդէսին մէջը հրա-  
 ման բրաւ որ տակաւապետը ազատվի ,  
 ու կրկին առջի վիճակին մէջը դրվի .  
 նոյն օրը տակաւապետը կրկին իր աս-  
 տիճանին հասաւ , ու նաև թագաւո-  
 րին զինի տուաւ խմելու :

Նաև՛ նոյն օրը մատակարարն ալ  
 կախվեցաւ , ու անոր մարմինը կտխա-  
 դանին վրայ թողվեցաւ որ երկինքի  
 թռչունները ուտեն անիկա :

Ասանկ Յովսէփ ան երազներուն մեկնութիւնները տալով՝ իր ճշմարիտ թարգմանիչ մը ըլլալը հաստատեց . աս կըրցուցունէ՛ որ Աստուած անոր սորվեցուցեր էր երազի մեկնութիւն տալը :

Ինչու որ՝ միայն Աստուած է որ ապառնի դիպուեաճներուն վրայօք դիտութիւն ունի . կամ թէ ան մարդիկները՝ որոնց որ Աստուած սորվեցուցեր է :

Աստուածաշունչին մէջը շատ մարդարեւութիւններ կան , որ առաջմանէ գուշակված էին . ետքը բոլորն ալ կատարվեցան : Ան մարգարութիւններուն կատարվիլը կըրցուցունէ թէ անոնք Աստուծմէ եկած են . ու նաև Աստուածաշունչն ալ որ մարգարութիւնները կըրարունակէ՛ Աստուծմէ եկած է . ու բոլորն ալ ճշմարիտ են :

Սենք Սուրբ Գիրքէն կըսորվինք՝ թէ տակառապետը իր աստիճանին հասնելէն ետե՛ Յովսէփը միտքը չի

բերաւ . անոր բանտին մէջի ըրած  
մարդասիրութիւնները՝ ու իր երազին  
մեկնութեամբը անոր տուած ազա-  
տութեան ուրախութիւնը բոլորովին  
մոռցաւ . ու նաև Յովսէփին աղաչան-  
քը որ իրեն գլխուն եկածները պարա-  
զաներով՝ մանաւանդ իր անմեղու-  
թիւնը թագաւորին յիշէ , անոնց բո-  
լորն ալ միտքէն ելաւ :

Աս տակառապետին զանցառութիւ-  
նը իր մեծ ապերախտութիւնը կը ցու-  
ցունէ ; ու նաև ուրիշներուն վրայ  
քիչ հոգ ունենալը , ու միայն ինք իր  
անձին նեղութիւններէ ու տանջանք-  
ներէ ազատիլ բաղձալը :

Աւաղ , ատանկ մարդիկներ որ չափ  
կան աշխարհիս մէջը , որ միտքն ի-  
րենց երջանկութեանը կը հետեւին ,  
ու ուրիշներուն երջանկութիւնը բո-  
լորովին կը մոռնան : Ասե՛ տղաքնե-  
րըն ալ երբեմն իրենց ճնողքը ու ա-  
նոնց ըրած բարերարութիւնները կը  
մոռնան : Արբոր իրենց ճնողքը կը հե-

ւընդնան կամ կըծերանան, երեսէ կը  
 ձգեն. և ասիկա անոնց ասկերախտ  
 ու չար սիրտեր ունենալը կը ցուցընէ :  
 Նայց իմ սիրելի՛ զաւկընեքս, ար-  
 դեօք դուք ալ ասանկ սիրտ ունի՞ք մի :  
 Արդեօք ձեր ծնողացը երախտիքը զի-  
 տէ՞ք մի : Արդեօք անոնց ձեզի ըրած  
 մարդասիրութիւնները միտքերնիդ  
 կը բերէ՞ք մի : Արդեօք անոնք կը սի-  
 րէք ու անոնց կը հնազանդի՞ք մի :  
 Արդեօք ձեր կարողութեանը չափ ա-  
 նոնք երջանիկ ընելու կը ջանա՞ք մի :

Մտիկ ըրէ՛ք թէ Աստուած ի՞նչ  
 կըսէ աս բանին վրայօք Աստուածա-  
 շունչին մէջը. ու աս խօսքը թող ձեր  
 սրտին մէջը տարաւորվի : «Նիծեալ  
 ըլլայ ան՝ որ իր հայրը կամ իր մայրը  
 կարնարգէ. ու բոլոր մարդիկ պիտի  
 ըսեն, անանկ թող ըլլայ» : Ի. () Է՛ն.  
 Ի՛նչ. 16 :

ԳԼՈՒԽ ԺԲ:

Փարտանին երազները : Յովակիմ խնջե-  
լու համար հարգելիք զից : Յովակիմ խոնար-  
հութիւնը : Սենսան սերը չէ տիրել ընդս-  
նին՝ որն որ սրբէշնէրոնն տրժանասոր է :

**Տ**ականապետը իր աստիճանին հաս-  
նելէն երկու տարիի չափ ետե որ  
տակաւին Յովսէփ բանտին մէջն էր՝  
ու ինքն ալ Յովսէփը բոլորովին մոռ-  
ցեր էր , փարաւոն երկու զարմանալի  
երազներ տեսաւ մէկ գիշերվան մէջ :

Երազին մէջը տեսաւ որ՝ Աեղոս գե-  
տին քովերը կը պտրտէրկոր . ու տե-  
սաւ որ՝ եօթը գէր ու գեղեցկադէմ  
կովեր ելան ան գետէն , ու սկսեցին ա-  
րածվիլ գետին եզերքին մօտ եղած  
դաշտերուն մէջ . նաև՝ ուրիշ եօթը  
կովեր ելան տկար ու տղեղ , ու ան գե-  
րերուն քովը դացրն կայնեցան . ու մէկ  
զարմանալի կերպով մը անոնց վրայ  
յարձակեցան , ու բոլորովին անոնք  
փառատեցին . թէպէտ առաջ ինչպէս

որ տղերդ ու նիհար էին , վերջն ալ  
նոյնը էին :

Թագաւորը արթընցաւ . շուտով  
կրկին քնացաւ , ու մէկ երազ մըն  
ալ տեսաւ՝ որ եօթը ցորենի հասկ  
բուսած էր մէկ ծղօտի մը վրայ , լե-  
ցուն ու շատ ազվոր . ու անոնց ետե-  
ւէն եօթը հասկ ալ ելաւ թուամած ու  
վտիտ , ու միւս լեցունները կերան :

Փարաւոն հետեւեալ առտուն շատ  
ներգացաւ աս երազներուն համար . ին-  
չու որ՝ խորհեցաւ թէ կարելի է անոնք  
մէկ նշանակութիւն մը ունենային , որ  
շատ հարկաւոր էր իրեն զխանալու :  
Ետքը՝ Ազիպտոսին բոլոր մողերուն  
ու իմաստուն մարդիկներուն ետեւէն  
մարդ խրկեց ու բերել տուաւ , որ  
նայի թէ իրեն տեսած երազներուն  
ի՞նչ մեկնութիւն կուտան :

Աս մողերը ու իմաստուն մարդիկ  
ները կը պարծենային՝ թէ երազ կը  
մեկնեն , ու ետքի ըլլալու զխալուած  
ները աւաջուց կը զբուցեն : Թէպէտ

\* նոյն ժամանակը իրենք ալ զխտէին որ բոլոր ըրածներնին խաբէութիւն էր . բայց շատ անգամ ուրիշները կըխաբէին , ու անոնց երազներուն սուտ մեկնութիւններ կուտային . սակայն մէկը չի համարձակեցաւ թագաւորին երազներուն մեկնութիւն մը տալու :

Ասանկ' մոգերը ըսին որ բոլորովին տարակուսանքի մէջ են . ու չեն գիտեր թէ անոնք ի՞նչ կրնանակեն . ուստի բանին վրայ թագաւորը առաջմանէ էվել ներդացաւ :

Հիմայ սա առաջին անգամն էր որ տակառասպելտը Յովսէփը միտքը բերաւ , ու անոր աղաչանքը յիշեց' թէ ինքը Յովսէփին բանը թագաւորին պիտի պատմէր : Աերևայ թէ' տակառասպելտին խղճմտանքը զինքը տանջեց' Յովսէփին ըրած մարդասիրութեանը համար . ինչու որ' թագաւորին սա հետևեալ խօսքը ըսելէն կուէ , թէ' Աս իմ յանցանքս կըյիշեմ այսօր , սկսեց Յովսէփին բանը պատ-



մեւ , թէ՛ Նորքոր երկուքս ալ ես ու մատակարարը բանտին մէջն էինք , մէյմէկ երազ տեսանք մէկ դիշերովան մէջ , ու նոյն տեղը մէկը կար Յովսէփ անու՛նով , որ անոնց մեկնութիւնները ստոյգ մեզի տուաւ :

Յովսէփին աս խմաստութեանը վերայօք թագաւորը շատ զարմացաւ՝ թէ ինչպէս անոնց երազներուն մեկնութիւնները անանկ ստոյգ տուեր է . և իսկոյն հրամայեց որ Յովսէփը շուտով իր առջին բերվի : Յովսէփին ինչ որ պէտք էր՝նէ պատրաստեցին , թագաւորին պալատը տարին , ու թագաւորին առջին հանեցին :

Թագաւորը Յովսէփին պատմեց իր երազները . ու ըսաւ որ՝ Մէկն ալ չի կրցաւ մեկնել անոնց միտքը . ու լսեցի՛ որ դուն երազի մեկնութիւն կրնաս տալ :

Թագաւորը կրկարծէր թէ Յովսէփ իր ճարտարութեամբը աս բանը կարող էր ընել , ինչպէս որ մոզերը ու

խմաստուն մարդիկները շատ ա՛ղամ կընէին :

Ա՛ն չէր գիտէր՝ որ միայն ճշմարիտ Մատուածը՝ կամ թէ ան մարդիկները որոնք որ ինքը կըթէր էր , անոնք միայն կարող էին ապառնի բաներուն վրայ տեղեկութիւն ունենալ , ու պատահելու բաները առաջմանէ մազարէանալ :

Յովսէփ կրնար անանկ ճամբայ մը բռնել որ թագաւորը իր վրայ ասանկ կարծիք մը ունենայ՝ թէ իր խմաստութեամբը աս բաները կընէր . ու շատ պատիւ ու գովութիւն ստանալ թագաւորին ու անոր գործակալներուն ու Նզիպտացւոց քովը :

Բայց Մատուծմէ կըլախնար . ինքը չէր ուզէր որ ուրիշները իրեն համար կարծեն թէ իր խմաստութեամբը երազներուն մեկնութիւնները կուտար . երբոր ինքը գիտէր՝ թէ միայն Մատուծոյ կարողութեամբն էր՝ որ անոնք կըմեկնէր . անոր համար բոլոր փառքը Մատուծոյ կըվայլէր :

Յովսէփի պատասխան տուաւ Վարաւոնին ու ըսաւ . Այս կարողութիւն չունիմ, Աստուած Վարաւոնին խաղաղութեան պատասխան մը պիտի տայ :

Աս խօսքը՝ որ Յովսէփի Վարաւոնին ըսաւ, Թէ կարողութիւնը կամ երազին մեկնութիւնը ինծմէ չէ, աղէկ միտքերնիդ պահեցէք :

Երբեմն կը պատահի, որ մէկը կը կարծէ՝ Թէ դուք մէկ աղէկ գործ մը ըրած էք, երբոր նոյն գործը ուրիշ մէկը ըրած է : Այս Թէ գործի մը համար չափէն էլեւ գովութիւն կը ստանաք, որ նոյն գործին ուրիշ մէկն ալ ձեզի օգնութիւն ըրած է . կամ Թէ ուրիշները կը կարծեն՝ Թէ դուք բան մը գիտէք, որ ամենեւին ան բանին վրայօք տեղեկութիւն չունիք . ու աս կերպով պատճառ կը լլաք որ ուրիշները ձեզի չափէն էլեւ պատիւ ընեն, որով ձեր հպարտութիւնը հաճեցունել տաք . ու ասանկով պատճառ կը լլաք ուրիշ մէկու մը պատիւը կամ գովութիւնը

իրմէն զըկելու , որուն որ ինքը ճըշմարտապէս արժանի է :

Աս բանը ես շատ անգամ ընտանիքի մը տղոցը ու դպրատան աշակերտներուն մէջը տեսած եմ , որ շատ գէշ բան է : Տասներորդ պատուիրանքը կոտրել է , որ մեզ կարգիլէ ուրիշներուն ունեցածին աչք տնկելու : Ասե ութերորդ պատուիրանքն ալ աւրել է , որ կարգիլէ գողութիւն ընելու . արդարեւ աս ալ մէկ տեսակ գողութիւն մըն է , որ դաղտնի ուրիշին պատիւը դուք կառնէք : Արբոր դուք ասանկ բանի մը մէջ փորձըվելու ըլլաք , Յովսէփին օրինակը ու ըսածը միտքերնիդ բերէք . ինչ բան է նէ ազատաբար ճշմարիտը խոստովանեցէք :

Գիտցածներնուդ կամ չի գիտցածներնուդ , ըրածներնուդ կամ չըրածներնուդ , և ուրիշներէն դուած օգնութիւններնուդ , բոլորովին շխտակը զուրցեցէք : Միտքերնիդ բերէք՝ որ թէպէտ ասանկ ժամանակ ձեր ընկերը

կրնաք խաբել , ( ինչպէս որ Հովսէփ  
 ուղեւոլ ըլլար Քարաւոնին կրնար բ-  
 նել , ) բայց Մատուած չէք կրնար խա-  
 բել . ինչու որ ձեր ներսիդիի գազտ-  
 նի խորհուրդներուն ու զգացումներուն  
 բոլորն ալ ձեր խօսակցութեանը ու  
 վարքին պէս ինքը գիտէ :

Չափէն է՛վել ձեր վրայ մի խոր-  
 հիք . խոնարհութեամբ թող ամէն  
 մարդ իրմէն է՛վել ուրիշը պատուէ :

Տէրը ամբարտաւոններուն դէմ  
 կը կենայ , խոնարհներուն շնորհք կու-  
 տայ :

ԳԼՈՒԽ ԺԳ:


Յժեղին՝ փարսանին երազները մինչ-  
 լը: փարսանին Յժեղիը, (Գգեղասու զլայ  
 Խառաղար ընչ-լը: Յժեղին նոր ամառնը:  
 Ենոր հարանիքը: Ոչնարդո-լեանն ու պարսա-  
 Խան-լեանն նկարո-մը հարարարանն ճամբայ  
 մըն է՝ որ ընչեղանն հարարարան-լեանն պարս-  
 նարը-:

**Փ**արաւոն իր երազները Յովսէփին  
 զուրցելէն ետև Յովսէփ ասանկ  
 պատասխանեց: Փարաւոնին երազնե-  
 րը մէկ է. Եստուած ինչ պիտի ընե-  
 նէ Փարաւոնին ցուցուց: Յովսէփ ըս-  
 կըսեց յատկապէս Փարաւոնին ե-  
 րազները մեկնել, ու անոնց ինչ նշա-  
 նակելը իրեն ցուցուց:

Են եօթը գեղեցիկ կովերը ու ան  
 եօթը ցորենին հասկերը եօթը տարի  
 կը ցուցընեն, որ բոլոր Ագիպտոսի  
 մէջ շատ առատութիւն պիտի ըլլայ.  
 աս եօթը տարվան միջոցին մէջը եր-  
 կիրը ամէն տեսակ բանը առատաբար



Յովսէփին՝ Փարաւոնին երագները մեկ-  
նելը :





պիտի բուսցունէ՛ մարդոց ու անոնց  
պահած կենդանիներուն համար պէտք  
եղածէն շատ էվելի առատութեամբ :

Նաև ան եօթը տկար ու վտիտ կո-  
վերը՝ որ ան եօթը գեղեցիկ ու գէրե-  
րը կերան , ու ան եօթը չորցած հաս-  
կերը՝ որ ան լեցունները կերան , եօ-  
թը տարի կըրցուցընեն , որ աս եօթը  
տարւան միջոցին մէջը շատ սով պի-  
տի ըլլայ . ու երկիրը քիչ կամ ամե-  
նեին պտուղ չի պիտի բերէ . կերա-  
կուրին կողմանէ շատ նեղութիւն պիտի  
բաշվի , ու առատութեան տարիէն  
ինչ որ պահվի նէ՛ ետքը սովին տարի-  
ները պիտի ուտվի :

Նաև Յովսէփ ըսաւ՝ որ աս երկու  
միօրինակ երազներուն մարդարեւ  
թիւնովը Մտուած կըրցուցընէ , որ  
ինքը քիչ ժամանակի մէջ աս բոլոր  
բաները անշուշտ պիտի կատարէ :

Վերջը Յովսէփ Քարաւոնին խրատ  
տուաւ որ բոլոր երկրին վրայ պաշ-  
տօնեաներ կարգադրէ , որ ան եօթը

առատութեան տարւան մէջի եղած  
հունձերն հինգ բաժինին մէկը առ-  
նեն՝ ու զանազան քաղաքներուն մէջ  
ղիպեն : Անատներ եօթը սովին տարի-  
ներուն մէջ մարդիկ բաւական կերա-  
կուր պիտի ունենան ու անօթութենէ  
չի պիտի մեռնին :

Յովսէփին աս խրաար թաղաւորին  
ու իրեն տերութեանը մէջի եղող գոր-  
ծակալներուն շատ հաճելի երևցաւ .  
ու նայեցաւ որ Յովսէփէն՝ ի զօտ ու-  
րիշ մարդ չէր կրնար գտնելիլ որ բո-  
լոր աս գործը կարող ըլլար առաջ  
տանելու . որուն ներսը՝ ըսաւ թաղաւո-  
րը՝ Աստուծոյ հոգին կայ :

Ան ժամանակը փարաւոն Յովսէ-  
փին ըսաւ . Արովհետեւ Աստուած աս  
բոլոր բաները քեզի ցուցուց , ալ քե-  
զի պէս խելահաս ու իմաստուն մէկը  
չի կայ :

Դուն իմ տանս վրայ վերակացու  
պիտի ըլլաս . ու քու խօսքովդ բոլոր  
իմ ժողովուրդս պիտի կառավարվի . ու

միայն ես իմ թաղութիս քե՛նէ, մեծ պի-  
տի ըլլամ: Աւ Գարաւոն Յովսէփին ը-  
սաւ. Ահա՛ ես քեզ բոլոր Ազխատոսի  
երկրին վրայ վերակացու դրի: Աս ը-  
սելէն ետե՛, Գարաւոն իր մատը դրած  
ազնիւ ու ծանրազին մատնին հանեց  
ու՝ Յովսէփին մատը դրաւ. ու զեղե-  
ցիկ հանդերձներ հաղցուց, ու անոր  
պարանոցը ոսկիէ մանեակ մը անցուց:

Ասոնց բոլորը Յովսէփին ունեցած  
դերադոյն իշխանութիւնը կը ցուցը-  
նէր, որ Թաղաւորը անոր տըւաւ, ու  
նաև անոր պատիւը որով որ ինքը պի-  
տի յարգըվէր:

Նաև Յովսէփին հրաման ըրաւ, որ  
իւ երկրորդ կառքը նստի. ու առջևէն  
քարոզ կը կարդային, որ անոր խո-  
նարհութիւն ընեն. ու ասանկ Յով-  
սէփ Ազխատոսին վրայ առանձին իշ-  
խանութեամբ վերակացու կարգադ-  
րըվեցաւ ու իբր երկրորդ Թաղաւոր:  
Ասոնցմէ՛ ՚ի զատ՝ Գարաւոն Յովսէփին  
ուրիշ նոր անուն մը տըւաւ. ասիկա

առջի ժամանակները սովորութիւն եղած էր արևելեան ազգերուն մէջը, որ երբոր թագաւորը մէկը ընդունէնէլու ըլլար, մանաւանդ օտարական մը, անունը կրփոխէր: Յովսէփին նոր անունը, փսոմփթոմփանէ դրաւ:

Աս նոր անունին նշանակութեանը համար մարդիկ զանազան կարծիքներ կրննն. ոմանք կրկարծեն՝ թէ անոր նշանակութիւնը գաղտնիքներ յայտնող ըսել է. ու անիկա Յովսէփին մեծ իմաստութեան համար տուեր էր, ինքը ան երազներուն մեկնութիւն տալուն, ու մարգարէական հոգի ունենալուն համար: Աւրիշները կրկարծեն թէ Ազխիպտացոյ մէկ բառն էր, որ Ֆրիկիս աշխարհի կրնշանակէր, աս մէկ փառաւոր պատուանուն մըն է, որ արևելեան ազգերը շատ կըգործածեն՝ Յովսէփին պէս մէկ մարդու մը բարեբարութիւնը բոլոր ազգին ցուցնելու համար:

Փարաւոն նաև Յովսէփին մէկ կնիկ

մըն ալ պատրաստեց Վստանէթ անու-  
նով՝ երևելի ընտանիքէ մը, որուն  
հայրը Վրեդ քաղաքին մէջը քահա-  
նայ կամ իշխան էր: Վսիկա Նդիսպոտսի  
մէկ անուանի քաղաքն էր, ու հաւանա-  
կան է որ Պետափրէս ան քաղաքին ու  
անոր քովի եղող երկրին վրայ իշխան  
էր: Յովսէփին այսչափ մեծ իշխանու-  
թեան ու պատուոյ հասնելուն նայելով  
պէտք է մտմտանք որ Վստուծոյ Հո-  
ղին Յովսէփին սրտին մէջը ըլլալով՝  
Փարաւոն անիկա այնչափ սիրեց, ու  
անոր տըւած խրատները ընտիր ու ի-  
մաստուն սեպեց. ինչու որ՝ Վստուած  
անիկա կրթեր էր: Վրդարև Փարա-  
ւոն ճշմարիտ Վստուծոյ վրայօք՝ որուն  
որ Յովսէփ կը հաւատար, բիչ կամ  
ամենևին չէր զիտէր. բայց Յովսէ-  
փին վարքին ու կենցաղավարութեանը  
մէջ շատ սքանչելի մէկ բան մը տե-  
սաւ՝ երբոր Յովսէփին ըսածը լսեց,  
թէ՛ Վս իմ իմաստութիւնս չէ, հա-  
պա Վստուած Փարաւոնին խաղա-

դուժեան սրատասխան մը պիտի տայ ,  
 աս բանին համար գարաւոն Յովսէփը  
 յարգեց , ու բոլոր իր յոյսը անոր դը-  
 բաւ : Ախտքերնիդ ըլլայ՝ որ ճշմար-  
 տութեան , ու Մտուծոյ պէտք եղած  
 պարտականութեան ճիշտ նկատումը  
 ամէն բանէն էվէլ ուրիշներուն՝ նաև  
 դէշ մարդոցը պատիւը ու հաւատար-  
 մութիւնը անգամ կրտամնայ : Անոնք՝  
 որանց հետ որ գործ ունիք՝ թո՛ղ դիտ-  
 նան , որ դուք Մտուծմէ կրվախնաք ,  
 ու միշտ կրթութեան ու աւաջնորդու-  
 թեան համար անոր կրնայիք՝ բոլոր ձեր  
 պարտականութիւնները կատարելուն  
 մէջը : Չեր վարքը որչափ առաւել  
 աղէկ դիտցրի , այնչափ առաւել  
 յարգ ու պատիւ կրտամնաք : Գանա-  
 զան պաշտօններու մէջ ուրիշները ձե-  
 ղի պիտի հաւատան : Թէպէտ կարելի  
 է որ իշխանութեամբ ու պատուով  
 Յովսէփին չափ չէք կրնար մեծնալ ,  
 սակայն ձեզի շատ ընդունելի պէտք է  
 ըլլայ՝ որ ասանկ հասարակ վիճակի մը

մէջ ուրիշներուն պատիւը ու հաւա-  
տարմութիւնը կըստանաք : Անկեազ  
կերպով ըլլալը ներքին զուարճութիւն  
մըն ալ առաջ պիտի բերէ , ու ան  
պատիւը ըստանալնուդ պատճառը ի-  
մանաք , որ Աստուծոյ շնորհացը օգ-  
նութեամբը ջանացէր էք իրմէն  
վախնալու , ու իր պատուիրանքները  
պահելու :

### ԳՆՈՒԽ • ԺԳ :

Աստուծոյ նախախնամութիւնը : Անոր հետե-  
ղանդիւր ու սպասելիլը՝ ձեր պարտականութիւ-  
նը ըլլալը : Հոգեկենսական ժողովիլը : Ա-  
նոր էրկո՞ւրդարեմերը : Անոնց ան-  
անկերման  
պարտաւորը : Անոնց ան-  
անկերման

Անչպէս զարմանալի եղաւ Հոյսէփին  
այսչափ յառաջանալը , որ ինքը  
Վանանու մէջ երկրագործի մը տղայ  
ըլլալէն՝ որ տասնիրէք տարի բան-  
տը մնալէն ետեւ , Ագիալտոսի կառա-

վառութեան սրաշտօնին բարձրնայ .  
 ու ան ընդարձակ երկրին մէջը իշխա-  
 նութեամբ երկրորդ թագաւոր կոչվի :  
 Ի՞նչ որ Հոլսէփին յառաջադիմու-  
 թիւնները լաւ նկատելու ըլլանք՝ ար-  
 դեօք որչափ պիտի զարմանանք ան  
 Աստուծոյ նախախնամութեանը վրայ ,  
 որ գէշէն աղեկութիւն առաջ բերե-  
 լով , ու մարդոց չար կիրքերը յաղ-  
 թելով . իր իմաստուն ու բարի խոր-  
 հուրդները կատարեց :

Աստուծոյ նախախնամութիւնը այս-  
 չափ կրկնելնուս պատճառը աս է , իմ  
 սիրելի տղաքներս , որ երբոր Հոլսէ-  
 փին պատահած դիպուածները իր  
 պատմութեանը մէջ կարդալու ըլլաք ,  
 իսկոյն անիկա մտքերնիդ եղած ըլ-  
 լայ : Ինչու որ չի կայ անանկ մէկ ճրշ-  
 մարտութիւն մը՝ որ Աստուծոյ ամենա-  
 խրնամ նախախնամութենէն էվել  
 զգացվելու արժանի ըլլայ : Ասիկա՝  
 Աստուածաշունչին ուրիշ մասերը ու  
 զանազան ազգերուն ու մարդիկներուն



պատմութիւնները կարդալով սորվեցէք : Չեր կեանքին ու ձեր բարեկամներուն կեանքին մէջը սորվեցէք :

Թէ որ ճշմարտապէս Մտուած սիրելու ու անոր ասլաւինելու ըլլաք , Մտուծոյ նախախնամութեան զիտութիւնը ձեզի մէկ անշարժ մխիթարութեան ու օգնութեան պատճառ մը պիտի ըլլայ :

Թէ որ ասանկ զիտնալու ըլլաք որ առանց անոր զիտութեանը ու հրամանին բան մը չըլլար , ու անոր թաղաւորութիւնը ինչպէս որ ամենամեծ բաներուն կը հասնի՝ անանկ ալ ամէնէն փոքրիկ բաներուն , անատենը ինչպէս որ տղայ մը իր հօրը կամ մօրը ձեռքին տակը ասպահով է , անանկ ալ դուք միշտ ասպահովութիւն մը պիտի զգաք անոր պաշտպանութեան տակը :

Սուրբ Գիրքերը մեզի կը սորվեցունեն որ Մտուած զինքը սիրողներուն ամէն բանի մէջ հետերնին կըլլայ

բարիք գործելու . ինչպէս յաջողու-  
թեան կամ ձախորդութեան մէջ ,  
առողջութեան կամ հիւանդութեան  
մէջ , կեանքին կամ մահուան մէջ :

Աստուած աս կերպով Յովսէփին  
հետ էր , ու նաև ձեր հետն ալ պի-  
տի ըլլայ՝ թէ որ դուք ալ բոլորով  
սրտիւ զինքը սիրէք ու ձեր յոյսը իր  
վրայ դնելու ըլլաք : Աս աշխարհիս  
մէջը նաև շատ բաներ պիտի դտնաք  
որ առաջին անգամէն շատ երկիւղալի  
պիտի երևան ու շատ վիշտ ու նեղու-  
թիւն տան : Սակայն ետքը Աստուծոյ  
ամենախնամ նախախնամութեամբը ,  
անոնք Թիթարութեան ու երջանկու-  
թեան պիտի դառնան . բայց թէ որ  
չի դառնան , ու զանազան տեսակ նե-  
ղութիւններ ու փորձութիւններ քա-  
շելու ըլլաք , հնազանդութեամբ ու  
համբերութեամբ տարէք : Ինչու որ՝  
Աստուած կրտսնայ որ իր տղաքը աս  
տեսակ պատիժներուն կարօտ են .  
ինչպէս որ՝ մէկ մարդասէր հայր մը

երբոր իր տղան հիւանդ կըտեսնայ ,  
դեղ կըստորաստէ անիկա բուրնտ  
ցունելու համար :


Աս նեղութիւնները ու փորձու  
թիւնները ձեր հողիներուն շատ օգուտ  
պիտի ընեն՝ թէ որ Աստուծոյ աղա  
ջելու բլաք իր Սուրբ Հողին ձեզի  
տալու , որ ան տառապանքները խո  
հեմութեամբ առաջ տանիք :

Անոնք ձեր Աստուծոյ ունեցած սէ  
րը ու Քրիստոսի վրայ ունեցած սէրը  
պիտի էվելցունեն , ու ձեզ անոր ամէն  
օրհնեալ օրինակին պիտի նմանցու  
նեն . անոնք ձեզ խաղաղական մահ  
ուան մը ու երկինքին մէջը յաւիտե  
նական երջանկութեան մը ստորաս  
տել պիտի տան :

Աւրեմն սորվեցէ՛ք Աստուծոյ նա  
խախնամութիւնը . ու ամէն օր զխո  
ցէ՛ք , որ դուք անկէ իմաստութիւն ու  
մխիթարութիւն ստանալու համար  
կապրիք :

Յովսէփի ևս առաւել սրտաւառ ու

նէր Մտուծոյ աս նախախնամութեա-  
 նը զարմանալու, ու անոր ապաւինե-  
 լու: Արբոր ինքը Ազիպտոսի վրայ  
 վերակացու դրվեցաւ՝ երսուն տարուի  
 չափ էր. ու մէկէնիմէկ դժուարին  
 զործքերու մէջ մտաւ. թագաւորը  
 ձգեց ու երկրին չորս կողմը ճամբոր-  
 դութիւն ընելու դնաց: Յովսէփ  
 մարդոց վիճակը տեսնալով հաս-  
 կրցաւ որ ինչ բան հարկաւոր էր  
 ան դալու սովին եօթը տարիներուն  
 համար պատրաստելու: Ան եօթը  
 առատութեան տարվան միջոցին մէջ  
 երկիրը ամէն տեսակ բաները առա-  
 տութեամբ բերաւ. Մտուած ա-  
 սանկ տնօրիներ էր ինտոր որ Յով-  
 սէփ Քարաւոնին ըսեր էր որ պիտի  
 ըլլայ: Ար ամենողորմ նախախնա-  
 մութեամբն էր, որ ամէն բան ա-  
 սանկ մէկ տեղ առաջ տանել տրւաւ.  
 Ինչպէս արեւին ծաղիլը ու անձրեւը,  
 ամպերը հովերը ու փոթորիկները, ու  
 նաև սերմանեաց ցանկիլը ու անոնց





Եւստու թեան եօթը տարիները փարա-  
ւոն թագաւորին շտեմարանները ցորենով  
լեցունելին :

համարիլք , ու հունձերուն ժողովրվիլք .  
բնակիչներուն ալ առողջութիւնք ու  
արիութիւնք , ու անոնց աշխատելու  
համար ունեցած հաճութիւնք ու կա-  
րողութիւնք :

Ան Բստուծոյ գթած նախախնամու-  
թիւնն էր . որ աս ամէն բաները մէկ  
տեղ առաջ բերելով՝ բոլոր ելկրին  
մէջը այսչափ առատութիւն եղաւ . ին-  
տոր որ Սուրբ Վերքը մեզի կրսէ , թէ  
Յովսէփ ցորենը ծովին աւազին պէս  
կըժողվէր . անկէ ետե սկսեց չափով  
համբել՝ որ նայի թէ սրչափ եղեր է  
սակայն այնչափ շատցեր էր որ համ-  
բելը ձգեց :

Ցորենը զանազան քողարներու մէջ  
չտեմարաններով պահեց . ու անշուշտ  
իր իշխանութեանը տակը պաշտօնեա-  
ներ կարգադրեր էր որ անոնք աղէկ  
պահվին , ժողովուրդներուն ապառնի  
սնունդ ըլլալու համար :

Սովին տարիները դալէն առաջ  
Յովսէփ երկու տղայ ունեցաւ , Մա-  
նասէ ու Լփրեմ :

Մանասէ մէկ բառ մըն է՝ որ մոռ-  
ցընող ըսել է . Յովսէփ աս անունը  
տըւաւ իր մեծ տղին ինչու որ՝ Մատ-  
ուած՝ ըսաւ Յովսէփ , բոլոր իմ վիշ-  
տերս ու բոլոր իմ հօրս տանը վիշտե-  
րը մոռցընել տըւաւ . այսինքն ան զա-  
նազան փորձութիւնները ու չարչա-  
րանքները որ ես հոս Ազխարտոսի մէջը  
բաշեցի , ու նաև անոնց բոլորը որ ես  
իմ նախանձ ու չար եղբայրներէս կը-  
րեցի երբոր իմ հօրս տունն էի :

Միւս տղին անունն ալ Ափրեմ գը-  
րաւ . որ աս բառը աճեցուցած կը-  
նշանակէ . ինչու որ՝ Մատուած՝ ըսաւ  
Յովսէփ , տաւապանաց երկրին մէջը  
իս աճեցուց :

Յովսէփ իր հօրմէն ու իր հօրը  
տանը զուարճութիւնէն ու իր ընկե-  
րութենէն շատ հեռու զատուած ըլլա-  
լուն , անշուշտ շատ մեծ մխիթարու-  
թիւն մը եղաւ իրեն աս երկու տղոցը  
հայր՝ ու ինքիրէնը մէկ ընտանիքի  
մը տէր ըլլալը :



Ու երջապէս առատութեան տարի-  
ները վերջացան, ու սովերը սկսեցին :  
Ըստ սովը ոչ թէ միայն Ազիպտոսի  
մէջ եղաւ, հասարակ ուրիշ երկիրներու  
մէջ ալ . ամէն տեղ սովը սաստիկ  
էր . ու ժողովուրդը իրենց կեանքը  
պահելու համար բաւական կերակուր  
գտնելու շատ դժուարութիւն կրթա-  
շէին՝ սակայն բոլոր Ազիպտոսի երկ-  
րին մէջը բաւական պահուած էր բը-  
նակիչներուն ուտելու համար :

Երբոր Ազիպտացիները իրենց տա-  
նը մէջի պահածներնին հատուցեցին  
ետե կերակուրի կարօտութիւն ու-  
նեցան, սկսեցին Փարսաւոնին հացի  
համար աղաղակելու . ու Փարսաւոն ալ  
բոլոր Ազիպտացիներուն ըսաւ . Յով-  
սէփին դացէ՛ք, ու ինչ որ ըսելու ըլ-  
լայ նէ ըրէ՛ք :

ԳԼՈՒԿՆԵՐ ԺԵՆԵՐ

Եւ զի յարտայնեն երանի Յովնէի իրենց փրկելի  
 չին պէտքս պատուելու : Յիսուս Վարխապետի ա-  
 ստուել զերազոյն փրկելու լուսուց : Եւ զի յարտ-  
 այնեն երանի Յովնէի զորեն ծախսուստնելու :  
 Վասնանոս մեջն ուղի : Յայնմն իր պաշտելի-  
 րանիս ծախսուստնելու համար Եւ զի յարտ-  
 իրկելու :

**Ե**ւ զի յարտայնեն երանի Յովնէի իրենց փրկելի  
 չին պէտքս պատուելու : Յիսուս Վարխապետի ա-  
 ստուել զերազոյն փրկելու լուսուց : Եւ զի յարտ-  
 այնեն երանի Յովնէի զորեն ծախսուստնելու :  
 Վասնանոս մեջն ուղի : Յայնմն իր պաշտելի-  
 րանիս ծախսուստնելու համար Եւ զի յարտ-  
 իրկելու :

Բայց չէ թէ նոյն մտքով ինչպէս  
 որ մենք Յիսուս Վարխապետը փրկելի  
 աշխարհի կրկոջենք , որ կարող է

մարդիկները իրենց մեղքերէն փրկելու, ու հողինին յաւիտեանական մահէն ազատելու. ու նաև Մատուածային ճշմարտութեամբը ու Հոգւոյն Արարոյ զօրութեամբը լեցունելու, որ աներկնային կերակուր մըն է ու հողին կրանուցանէ, ու պատճառ կրլայ մէկ առաւել գերազանց ու երջանիկ աշխարհի մը մէջ յաւիտեանս բնակեցընելու:

Բայց՝ ո՛հ, կրվախնամ թէ ան ողորմելի ու տգէտ Ազիպտայիները շատ քիչ հող կրտանէին իրենց հողիններուն վրայօք. կամ թէ ամենեւին չէին ջանար անոնք ինչ կերպով փրկելու, ու ան երկնային կերակուրը իրենց սնունդին համար ստանալու:

Գրեթէ բոլորին զխտաւորութիւնն ալ ան սոսկալի սովէն փրկըվիլն էր. ու երբոր տեսան՝ որ Յովսէփ կարող էր զիրենք անկէ փրկելու, անոնք անտարակոյս Յովսէփը ամէնէն աղէկ իրենց բարեկամը, ազատիչը, ու փրկիչը սեպեցին:

Սակայն հոս մէկ հարցում մը ունիմ  
 ձեզի . կըլիա իաքի՞ք արդեօք ու սլառ  
 րանստ էք մի Յիսուս Վրիստոսի եր  
 թալու ու հոգևոր սովէն ու յաւիտե  
 նական հոգւոյն մահէն փրկըլելու հա  
 մար . ինչպէս որ Ազիպտացիները  
 Յովսէփին կերթային սովին համար  
 քաշած նեղութիւններնուն՝ ու միայն  
 իրենց մարմնոյ մահէն ազատելու հա  
 մար . ես սա հարցումը հոս կըզնեմ , որ  
 դուք ձեզի անոր վրայ խորհիք ու սլա  
 տասխանը տուք :

Յովսէփ բոլոր ցորենին շտեմարան  
 ներք բացաւ որ զանազան քաղաքներու  
 մէջ լեցած պահեր էր , ու սկսեց Ա  
 զիպտացիներուն ծախել՝ որոնք կա  
 բող եզան իրենց ընտանիքովը ապրե  
 լու :

Արդեօք որչափ խեղճ ու զրեթէ  
 անօթութենէ մարող սղտի տղաքներ  
 ու աղջիկներ ուրախացան , տես  
 նալով որ իրենց հայրը ցորեն բերէր  
 է տուն , ուսկից որ մայրերնին կարող  
 էր անոնց հաց շինելու :

Խորհրդեցէ՛ք իմ սիրելի զուկընեքս  
 ձեր երկնաւոր Հօրը վրայ , որ բոլոր  
 ձեր պիտոյքը աւատաբար կուտայ ,  
 ու դուք ալ ձեր երախտագիտու-  
 թիւնը իրեն ցուցուցէք , իր պատուի-  
 րանքներուն հնազանդ ըլլալով :

Չէ թէ միայն Վզիպտացիները կու-  
 դային (Յովսէփէն ցորեն ծախու առ-  
 նելու , հասլա ուրիշ երկրի մարդիկ-  
 ներն ալ , ուր տեղ որ սովը ախրեք  
 էր . ու աս կերպով Մատուծոյ անաջ-  
 նորդութեամբը՝ իր իմաստութիւնը ու  
 ճարտարութիւնը պատճառ եղաւ շա-  
 տերուն կեանքերը ազատելու :

Իրաւցընէ Մատուծոյ զարմանալի  
 նախախնամութեամբը (Յովսէփ քիչ  
 ժամանակէն իր սիրելի Հօրը , ու ա-  
 նոր ընտանիքին , ու նաև իր եղբայր-  
 ներուն՝ որոնք որ զինքը անողորմա-  
 բար չարչարել էին , ու անոնց ընտա-  
 նիքներուն կեանքերը անօթութենէ ա-  
 ղատելու գործիք մը պիտի ըլլար : Կն-  
 չու որ սովը մինչև (Յուդայի երկիրը ,

այսինքն՝ Յակոբին եղած տեղը հասաւ , ու ան տեղի մարդիկները շատ նեղութիւն կրքաշէին սովին կողմանէ :

Աս նեղութիւններուն մէջը երբոր Յակոբ լսեց՝ որ Աղիպտոսէն ցորեն ծախու կրնայ առնել , խորհեցաւ հոն մարդ խրրկել ցորենի համար . իր տղաքը մէկ տեղ կանչեց , ու հարցուց թէ ինչո՞ւ համար այսչափ տրամուլութեամբ ու յուսահատութեամբ մէկ զմէկու վրայ կրնային . որ իբր թէ մէկ բան մը չի կրնար բլլըվիբ իրենց ազատութեանը համար :

Յակոբ անոնց ըսաւ , Ասեցի որ Աղիպտոսէն ցորեն կառնըվիկոր . պէտք է որ հոն երթաք , ու քիչ մը բան առնէք զիս ու ձեզ փրկելու համար . չէ նէ մահը հարկաւ մեզի պիտի հասնի : Արեւի է որ ան ժամանակը Յակոբ ու անոր ընտանիքը , իրեն տղաքը ու անոնց ընտանիքները՝ բոլորը իրարու մօտ կրնատէին . իբր թէ մէկ մեծ ընտանիք սը եղած էին , որոնց իշխանը

կամ գլուխը Յակոբ էր : Ընոնց ամե-  
 նուն ապրուստը մէյմըն էր , ու ամե-  
 նը մէկ տեղ կերակուրի համար նե-  
 դութիւն քաշելուն՝ հարկաւորեցաւ  
 որ մեծ ու զօրաւոր աշխատութիւն ը-  
 նեն մէկզմէկու ազատութեան համար :  
 Ընկէ Լ,գիպտոս շատ երկար ճանա-  
 պարհ մըն էր հարիւրաւոր մղոն հե-  
 ուաւորութեամբ , ու Յակոբին տղոցը  
 շատ անյարմար կըթուէր ասանկ հե-  
 ուու տեղ մը երթալը . բայց ինչ օ-  
 գուտ . ասկէ 'ի զատ ուրիշ կերպ մը  
 չի կար կերակուր գտնալու . ու Բե-  
 նիամինէն 'ի զատ բոլորն ալ խօսք  
 տուին երթալու :

Բենիամին Յովսէփին պզտի եղ-  
 բայրն էր , ու գիտէք որ իրենց մայրը  
 Ռաֆէլ մեռնելէն քիչ մը առաջ  
 ծնած էր : Եւ շատ պարագաներ կար ո-  
 բոնց յիշատակութիւնը Ռաֆէլը Յա-  
 կոբին սիրելի ըրաւ : Յակոբ Ռաֆէլը  
 բոլոր իր ունեցած կնիկներէն էվել  
 կըսիրէր . ու անիկա այնչափ սիրե-

լուն անոր զաւկընէրուն վրայ ալ շատ սէր ունէր . ու երբոր հաւատաց թէ Յովսէփը մեռեր է, ջեր ուզեր որ Ռեւնիամինը դունէն դուրս հանեն, որ չըլլայ թէ անոր գլխուն ալ փորձանք մը դայ :

Ամենեւին զարմանալու չէ որ Յակոբ Ռեւնիամինը այնչափ կը սիրէր, ինչու որ ան հիմայ հարիւր երեսուն տարուի չափ ծեր մարդ մըն էր : Քիչ տարի առաջ իր հայրը Իսահակ Վամբրէին ազարակին մէջը Աբրահամին ու Վարրային քովը թողեր էր :

Յակոբ ինքն ալ օր ըստ օրէ իր կեանքին վախճանին կը մօտիքնարկոր, ու յայտնի գիտնալով իր տկարութիւնը ու մէկի մը կարօտ ըլլալը, իր մը խիթարութեանը համար՝ Ռեւնիամինը Յովսէփին տեղը դրեր էր . ու քանի որ սուգ կընէր կորստիւմ տղին վրայ որն որ կը կարծէր թէ վայրենի դազանները փարատեր էին, առաւել Ռեւնիամինը կը զրկէր, ու կը զգուէր ա-



նիկա . ու իր օր ըստ օրէ նուազող  
կեանքին մէջը ան իբր իր մխիթա-  
րութիւնը , ու յենարանը սեպած էր :  
Արդեօք կըկարծէք՝ թէ Յովսէփին  
Նղբայրները Ազիպտոսի ճամբուն մէ-  
ջը կըխորհէին թէ Յովսէփը ծախած  
Խամայեւացիները ան երկիրը դացեր  
էին , ու կարելի է իրենց եղբայրը հոն  
կըստատահի :

Արդարեւ զարմանալի բան մը չի  
պիտի ըլլար , թէ որ աս տեսակ խոր-  
հուրդները անոնց միտքէն անցնելու  
ըլլային . սակայն անոնք կըկարծէին որ՝  
տակաւին ան հոն տեղ զերիի մը պէս  
կամ թէ շատ աղքատ վիճակի մը մէջ  
պիտի գտնան . ու թէ որ անանկ մէկ  
զօրսւոր ու պատուաւոր ու իրենց եղ-  
բօրը անգամ նմանութիւն ունեցող  
մէկն ալ տեսնալու ըլլային . անկարե-  
լի է որ անիկա իրենց եղբայրը Յով-  
սէփը կարծէին . ինչու որ՝ բոլորովին  
անհնարին պիտի երևար իրենց , որ  
ասանկ մէկ զերի մը ու նաև սլատ-

դուխտ մէկը օտար երկրի մը մէջ ա-  
սանկ պատուոյ հասնի :

ԳՂՈՒԽ յ. Թ :

Յովեղիէն եղբայրներոսն՝ իրեն ասօրին եր-  
կը բարձր-լինն ընելին : Ինչը զինչը ամանց  
ճանչոսնելնն ոչնարճատը : Ընանց քանորը  
բըջէլը : Յովեղիէն ամանց արնն արանե-  
լն հասար ընելը : Իննիտիննը քեթէլը հա-  
հար ամանց մէկը քանորին մը ըստսնելը :

Արբոր Ագիպտոս հասաւ, հարցու-  
ցին որ ինչ կերպով ցորեն կանային  
ճախու առնել . իմացան որ Փսոմի-  
թոմիտանէին պէտք էր երթալ . որն  
որ բոլոր երկրին կաւալարն էր . ու  
ցորեն ճախելը բոլորովին անոր իշ-  
խանութեանը տակն էր : Արբոր (3)ով-  
սէի իր սրալատը զնաց անոնք իր առ-  
ջը տարվեցան . ու երբոր իրեն մո-  
տիկցան ճուեցան երկրապազութիւն ը-  
րին անոր . ասանկ ընելը անոր խորին

մէկ յարգութիւն մը ցուցունէ՛լ էր , որ մինչև հիմայ աս սովորութիւնը աւրեւելեան ազգերուն մէջը կայ . ու նաև ասանկ գիտէին ու կըխոստովանէին որ ան իրենցմէ շատ գերազոյն է աստիճանով ու զօրութեամբ :

Հիմայ Յովսէփին երազը լեցվեցաւ . որ իր եղբայրներուն ցորենին փունջերը իրեն առջևը երկրպագութիւն ըրին , ու հիմայ անոնք ալ նոյն կերպով անոր առջին երկրպագութիւն ըրին ու բոլորն ալ իրենց յոյսը անոր վրայ դրեր էին որ իրենց ծեր հայրը ու բոլոր ընտանիքնին անօթութենէ ազատէ :

Ոտքի վրայ ելան ու Յովսէփին առջին կայնեցան . ու ամենևին կարծիք չունէին որ իրենց եղբայրն էր , բայց ինքը անոնք գիտէր , ու թէ որ ուզելու ըլլար՝ կրնար անոնցմէ իր ոխը առնել՝ անոնց իրեն տուած չարչարանքներնուն փոխարէն :

Բայց անոր գիտաւորութիւնը աւ

սանկ չէր . ու դէշին փոխարէն բարի  
ընելը գիտէր , ու միտքը դրեր էր ,  
որ իր եղբայրներուն ու իր ծեր հօրը  
վերին աստիճան աղէկութիւն ընէ .  
ինչ և իցէ , աս ասանկ ընելուն համար  
խորհեցաւ որ աղէկ չէ մէկէնիմէկ ին-  
քըզինքը ճանչցունէ :

Յովսէփ իր երազները միտքը բե-  
րաւ , ու անոնց մէկ մասին կատարվի-  
լը հիմայ տեսաւ , ու կըյուսար որ Աս-  
տուծոյ նախախնամութեամբը իր տե-  
սած երազներուն նայելով գործիք մը  
պիտի ըլլար առաւել զարմանալի  
զիպուածներ կատարելու :

Կերևայ թէ ինքը իր եղբայրները  
փորձել կուզէր , ու կարելի է թէ ա-  
նոնց առջի ըրած չարութիւններուն  
համար ճշմարիտ ասպաշխարութիւն  
ընել տալու կըբաղձար :

Նաև Յովսէփ տեսաւ որ իր պզտի  
սիրելի եղբայրը Ռենիամինը անոնց  
մէջը չէր . վախցաւ որ կարելի է ա-  
նոր ալ մէկ սարսափելի աստելութիւն

մը ըրած ըլլան՝ իրենց հօրը սիրելի զսուտը ըլլալուն համար, ու զուցէ անհիկա մեռուցած էին :

Յովսէփ զխտէր, թէ որ աս բանը ըրած ալ էին նէ շիտակը չի պիտի զրուցէին իրեն, երբոր Վենիսամիներն վրայօք հարցունելու ըլլար. հասլա մէկ սուտ մը պիտի ըսէին զինքը խաբելու համար. ինչպէս որ աւաջ իրենց հօրը ըրեր էին :

Աս սխտածաւներուն կամ թէ ուրիշ բաներու համար որ աղէկ մը չենք զխտէր, Յովսէփ չէ թէ միայն ինքըզինքը իր եղբ սյրներուն չի ճանչցուց, հասլա անանկ երկուցուց ինքըզինքը որ զլեթէ ամենեւին անոնց ով ըլլալը ինքը չէր զխտէր :

Ու նաև ինքը անանկ մէկ օտար ու այլանդակ կերպով մը հազվեցաւ, որ ամենեւին ինքըզինքը անոնց չի ճանչցունէ ու միտքին զրածները կատարէ : Ենոնց հարցուց թէ Ղուք ուսկի՞ց է կած էք :

Ու երբոր անոնք ըսին որ Վանանէն եկած ենք կերակուր ծախու առնելու համար . ան ժամանակը ստիպեց անոնք՝ որ Վուք լրտես էք . ու ըսաւ որ Վզիպտոսի աղքատութիւնը ու տկարութիւնը նայելու համար եկած էք , որ մէկ երանելի ու զօրաւոր աղբի մը խօսք տանիք . որ կուղէ հոս դալ ու Վզիպտացիները կողոպտել , և զուցէ յաղթել՝ անոնց երկրին ժառանգութիւնը ձեռք ձգելու համար :

Աս խօսքին Յակոբին տղաքները պատասխան տուին ու ըսին , լրտես ըլլալը ու ասանկ միտք ունենալը արդարեւ մենե՛ շատ հեռու է : «Վաւ լիցի տէր մեր՝ ըսին անոնք . քու ծառաներդ միայն կերակուր ծախու առնելու համար եկած են . մենք բոլորս ալ մէկ մարդու զաւկրներ ենք , աս կերպով ըսել կուղէին , որ անանկ զօրաւոր ցեղի մը կամ աղբի մը վերաբերեալ մարդիկներ չենք . հապա սակաւաթիւ ու առանձին ընտանիք մըն

ենք մէկ իշխանի մը տակ . մենք հաւատարիմ մարդիկներ ենք , քու ծառաներդ լրտես չենք” : Յովսէփ իր առջի ըրած ստիպումը կրկին ընելուն , անոնք ալ կրկին պատասխան տրւին ու ըսին , “ Մենք տասներկու եղբայր ենք . ու Վանանու երկրին մէջը մէկ մարդու մը զաւկրներ ենք . որ մեր ամենէն պզտիկը տունը իր հօրը քովն է , ու միւս եղբայրնիս ալ չի կայ” :

Վս վերջին խօսքը ըսելովնին , որ չենք գիտէր՝ թէ արդեօք սուտ մը ըսել կուզէին թէ չէ , անշուշտ կրկարձէին որ աս ճամբով զըուցելնին իրենց եղբայրը մնաած է կըհասկըցվեր : Յովսէփ ինքրդինքը անոնց ըսածներուն ամենեւին չի հաւտալու մը պէս կերեցընէր , ու անոնց քսալ թէ ձեր ըսածներուն սուտ կամ թրաւ ըլլալը հաստատելու մէկ ճամբայ մը կայ :

Փարաւոնին կեանքին վրայ երդում մը ըրաւ , ու անոնց ըսաւ , մինչև որ ձեր պզտի եղբայրը հոս չի գայ՝ դուք

ասկէ երթալիք չունիք . ձեռնէ մէկը  
խրկեցէք , ու թող անիկառ աւնէ հոս  
բերէ : ու դուք ալ բանտին մէջը կը  
կենաք որ ձեր զուրյաճներն ալ հաս-  
տատովի : չենէ անշուշտ լրտես էք :

Ետքը Յովսէփ անոնց ամէնն ալ  
բանտը դրաւ : ու երբորդ օրը անոնց  
գնաց ու քսաւ : ես Նստուծմէ կը վախ-  
նամ . բայց թէ որ աս բանը ընէք նէ  
կապրիք , թէ որ դուք հաւատարիմ  
մարդիկնէր էք նէ . թող ձեռնէ մէկը  
բանտին մէջը մնայ . ու դուք դացէք  
ու ձեր տանը կամ ընտանիքին ցարեն  
տարէք . բայց ձեր պղտի եղբայրը ին-  
ծի պիտի բերէք որ ձեր խօսքերուն  
ճշմարիտ ըլլալը յայանըվի : ու դուք  
ալ չի մեռնիք :

Հիմայ անոնց ըրած առջի չարու-  
թիւններնին առջևնին ելաւ : Թէպէտ  
իրենց եղբայրը Նամայեւացւոց գերի  
ճախելնին քսան տարիէն էվել անցեր  
էր , տակայն անոնց ըրած անողորմ ու  
չար գործքերնուն յիշատակութիւնը



հիմայ սկսեց անոնց խղճմտանքը ար-  
թընցունել, ու իրենց սրտին մէջը  
մեծ ցաւ մը զգացին :

Տեսան որ իրենք նեղութեան մէջ  
էին ու չիյտէին որ վերջերսին ինչ  
պիտի ըլլար, ու գիտէին որ իրենք  
ինչ որ քաշէին պէտք եղածէն քիչ  
էր, ու կրվախնային որ հոլսէփին ը-  
րած անօրէնութիւններուն փոխարէն,  
Աստուած իր վրէժը իրենցմէ պիտի  
տունէր :

Ասանկ սկսեցին իրենց զգացումնե-  
րը մէկզմէկու զրուցել. ըսին որ մենք  
մեծ յանցանք ըրինք ան ժամանակը  
մեր եղբօրը դէմ, որ երբոր անօր հող-  
ւոյն տաւապանքը կրատնայինք մեզի  
աղաչանք ըրած ատենը, ամենեւին ա-  
նօր մտիկ չէինք ընել. անօր համար  
հիմայ աս թշուառութիւնը մեր վրայ  
եկաւ : Առբէն պատասխան տրւաւ  
անոնց ու ըսաւ, թէ՛ Աս ձեզի չէի մի-  
շտէր որ ան աղին դէմ մեզք մի՛ զոր-  
ծէք, ու զուք չէիք մտիկ ընել. ա-

Նոր համար , ահա՛ անոր արիւնն ալ  
կրխնդրըլի , այսինքն , զուցէ անիկա  
անանկ ան ժամանակաւոր վտանգի մը  
մէջ ձգելնուդ համար Աստուած ձեզի  
պիտի հարցունէ , ու անանկ ընելնուդ  
համար Աստուած իր սաստիկ պատիժը  
ձեր վրայ պիտի խրկէ :

### ԳՆՈՒԽՈՒ ԺԿ :

Յիշե՛նք ինչպէս իրարմէ իրարմէ յանցանք  
մեկըմէկուսից ըսելովն իրենն արտինն ձեռագործե-  
լը : Սխալնն ընարը զլը՛ թանարնն մըլը իննս-  
լը-հասար : Յիշե՛նք ինչպէս իրարմէ իրարմէ  
առանձն թանանն իրարմէնն : Այլի հարգանն  
ու գիշ հարգանն մըլ արեղի արարելը-ի-  
նը : Արդեօք աս հարգացուլը ան իրարմէնն ար-  
դասե՛ն պիտի ըլլայ : Եւ ինչ ինչ ինչպէս իր  
գործքը իտարարէ :

Յովսէփ իր եղբայրներուն խօսակ-  
ցութիւնը լսեց ու անոնց բողորն  
ալ հասկրցաւ թէպէտ անոնք չէին  
կարծէր որ ան կըհասկընար , ինչու որ

Յովսէփ անոնց հետ թարգմանով կը  
 խօսէր . ու ինքը Ադիպտացւոց լեզ-  
 ւովը ինչ որ ըսէր՝ Աբրայեցերէն ա-  
 նոնց կը թարգմանէր որ իրենց խօսած  
 լեզուն էր : Անոնք Աբրայեցերէն ինչ  
 որ ըսէին՝ Յովսէփին Ադիպտացւոց  
 լեզւով կը թարգմանէր , իբրև թէ  
 Աբրայեցւոց լեզուն չէր հասկընար .  
 սակաւ ասանկ ըրաւ , որ իր ու  
 ըլլալը անոնք չի հասկընան : Արբոր  
 Յովսէփ իր եղբայրներուն խօսքերը  
 լսեց , սիրտը ելաւ . ու երեսը անդին  
 դարձուց . որ անոնք ինքը չի տեսնան ,  
 ու սկսեց լալ : Թէպէտ և շատ տար-  
 բերութիւն կար Յովսէփին անոնց վը-  
 րայ ունեցած սիրոյն ու անոնց առջի  
 ըրած կարծրասիրտ անողորմութեանը  
 մէջ տեղը : Ինքը գրեթէ սրատրաստ  
 էր իր ո՛վ ըլլալը անոնց գրուցելու ,  
 ու անոնք իրենց քաշած նեղութիւն-  
 ներնուն խալըսելու . սակայն խորհե-  
 ցաւ որ աղէկ չէ , ու կուզէր որ անոնց  
 հաւատարմութիւնը առաւել փորձէր

որ զխոնայ թէ արդեօք Ռենիամինին  
 համար խօսածնին իրան է մի, ու ա-  
 նոնց խորին ապաշխարութեան ա-  
 ուաջնորդէ ըրած յանցանքն ընուն  
 համար :

Յովսէփ ստանկ թարգմանով քիչ  
 մը ժամանակ անոնց հետ խօսելէն ետ-  
 քը, Ալմօնը ընտրեց որ հոն մնայ մին-  
 չև որ միւսները Վանան երթան, ու  
 Ռենիամինը բերին և հրաման ըրաւ  
 որ անոնց աւջիւր ան կապիլի, ու ա-  
 սանկ ընելովը կուգէր անոնց ցուցնել,  
 որ ան ստանկ կապիլած բանտին մէջ  
 պիտի մնայ, մինչև որ անոնք ետ  
 դառնան ու Ռենիամինը իրենց հետ  
 բերին : Ատքը Յովսէփ հրաման ըրաւ  
 առանց անոնց զխոնալուն որ անոնց  
 բերած ամաններուն բոլորը ցորենով  
 լցունեն, ու անոնց ամէն մէկին տը-  
 ւած ստակն ալ իրենց ամաննուն մէջը  
 դնեն, որ մինչև իրենց ճանապարհոր-  
 դութեան վերջը բաւական կերակուր  
 ունենան ուտելու : Ասանկ ցորենին ա-



Յովսէփին՝ իր չար եղբայրներուն ցորեն  
տալով օգնելը :



մանները իրենց էջերուն վրայ բեռցու-  
 ցած ճամբայ ելան Վանան երթալու .  
 ու իրենց եղբայրն ալ Սիմօնը մէկ  
 գոցված տեղ մը դըվեցաւ որ հոն մնայ  
 մինչև որ անոնք ետ դառնան : Հիմայ  
 աղէկ ու գէշ մարդոց մէջ տեղի ե-  
 դած ան մեծ տարբերութիւնը՝ կարդա-  
 ցած պատմութիւններնուս մէջ կը  
 տեսնանք , ինչպէս Յովսէփին ու իր  
 եղբայրներուն մէջ տեղի եղած տար-  
 բերութիւնը , որ առջինը Մատուծմէ  
 կըվախնար ու կըջանար իր պարտքը  
 ընելու ու վերջինները հպարտու-  
 թեամբ ասելու թեամբ , վրէժխնդրու-  
 թեամբ , ու չարութեամբ լեցուն էին .  
 ու կարելի է որ մինչև վերջը ալ ճըշ-  
 մարիտ ապաշխարութիւն մը չէին ը-  
 րած իրենց մեղքերուն համար , ու  
 բաղձանք ալ ունէին Մատուծ սիրե-  
 լու ու անոր հնազանդելու : Հիմայ  
 արդեօք դուք ալ աս երկու տեսակ  
 մարդոցը որոնք պիտի նմանիք : Արդեօք  
 ձեր հանդամանքը , վարքը , զթասը .

տութիւնը , անկեղծութիւնը , Յովսէփին ունեցածի՞ն պէս պիտի ըլլայ մի . կամ թէ անոր եղբայրներուն պէս խտտասիրտ ու չար մի պիտի ըլլայ . արդեօք Մատուծմէ կը վախնաք ու ան կը սիրէ՞ք մի . ու Մատուծոյ պատուիրանքներուն հնազանդիլ ու ուրիշներուն աղէկութիւն ընելը՝ ձեզի երջանկութիւն կը սեպէ՞ք մի . կամ թէ բոլոր ժամանակը միայն ձեր վրայօքը կը խորհիք , թէ ինչ կերպով բան մը ընէք կամ ստանաք որով անձնասէր բաղձանքները հաճեցունէք , ու դուք ձեզ երջանիկ ընէք աւանց ուրիշներուն աղէկութեանը ու երջանկութեանը վրայ հող տանելով : Գուք շատ աղէկ զիտէք թէ որ տեսակ մարդոց պարտիք դուք ձեզ նմանցունել . ձեր խղճմտանքը ձեզի կը գրբուցէ թէ որչափ աւաւել աղէկ պիտի ըլլայ Յովսէփին պէս ըլլալ , քան թէ իր եղբայրներուն : Թէ որ տակաւին ամենեւին Յովսէփին նմա



նութիւն մը չունիք, ու Մատուծոյ վը-  
 րայ ճշմարիտ սէր ու փրկիչին վրայ  
 ճշմարիտ ապաւինութիւն չունիք, ու  
 չէք ալ բաղձար անոր նմանելու, ու  
 Մատուծոյ կամքին հնազանդելու՝ և  
 ձեր ընկերին ալ աղէկութիւն ընելու  
 նէ՛, ան ժամանակը ինչ պիտի ընէք .  
 անանկ պիտի մնա՞ք մի առանց ձեր  
 մեղքերը ապաշխարելու, ու Վրիս-  
 տոսի վրայ հաւատք ունենալու՝ առանց  
 Մատուած ձեր բարեկամը, ու իր որ-  
 դին ձեր փրկիչը ընելու, առանց մահ-  
 ուան սրտորաստութիւն ընելու, ու  
 զերեզմանէն անդին առանց յոյս ունե-  
 նալու երջանկութեան :

Երբոր Յովսէփին եղբայրները նե-  
 ղութեան տակ մտան, իմացան որ ան  
 զայրացեալ Մատուծոյ բարկութիւնը  
 իրենց վրայ եկեր է՝ ըրած յանցանք-  
 նուն փոխարէն իրենք պատժելու :  
 Խղճմտանքը՝ քսան տարիէն էվել  
 անցնելէն ետքը արթընցաւ, ու անոր  
 խայթերը զգացին :

Թեպէտ ձեր առջի ըրած մեղքերը  
 ձեզի հիմայ ձայն չեն 'ի տար , ձեր  
 խղճմտանքը քնացած կըլլայ , ու ձեր  
 ըրած յանցանքները ու վտանգները  
 չէք իմանար , բայց Աստուած աս  
 կեանքին մէջը անգամ կարող է իր ի-  
 ըրաւունքովը յանկարծ ձեզ բռնելու :  
 ու ձեր խղճմտանքը արթնցունելու ,  
 ու ձեզ ահով ու վախով լեցընելու ,  
 ու իր առջին դողացընելու : Ա՛հ . ան  
 հանդերձեալ աշխարհին մէջը խեղ-  
 ճը իր ահարկու գործքերը պիտի կա-  
 տարէ , ու ան անզեղջ մեղաւորը , որ  
 յաւիտեանս Աստուծոյ երեսէն ու եր-  
 կինքին զուարճութենէն վռնտված է ,  
 ուրիշ բան չի պիտի դանայ իր քա-  
 շածներուն վրայ նայելով . բայց մի  
 միայն տառապանք . ու ապառնի ըլ-  
 լալու բաներուն վրայ նայելով յուսա-  
 հատութենէ 'ի զատ ուրիշ բան չի պի-  
 տի դանայ :

Աւրեմն թող հիմայ ձեր խիղճը իր  
 գործքը կատարէ . խորհեցէք թէ որ-

չափ ու քանի անգամ Մատուծոյ դէմ  
 մեղք գործած էք, ճշմարիտ սրտի  
 տրամութեամբ իրեն գացէք, ու խոս-  
 տովանեցէք անոր, աղաչեցէք Վր-  
 ըխատոսի բրաճներուն ու քաջաճներուն  
 միջնորդութեամբ որ ձեր մեղքերուն  
 թողութիւն բնէ: Են է ձեր փրկիչը ու  
 յոյսը, անոր միայն ապաւինեցէք:  
 Հողոյն Արբոյ համար աղաչեցէք՝ որ  
 ինքը անիկա մեզի խրկելու համար մե-  
 ռաւ, ու խոստացաւ որ Մատուծ  
 Վրխատոսի անունովը խնդրողներուն  
 ամէնուն պիտի տայ: Եղօթք ըրէք ու  
 խնդրեցէք Հողոյն Արբոյ համար. որ  
 ձեր սրտին մէջը դայ ու ձեզի հետ բը-  
 նակի, ու Մատուծաշունչին ճշմար-  
 տութիւններուն դիտութիւնը ձեզի  
 ճանչցրնէ, ու նաև ձեզ առաջնոր-  
 դէ ան ճշմարտութիւնները սիրելու,  
 ու անոնց հնազանդելու, ու պատճառ  
 ըլլայ ձեզ մեղքէ ետ պահելու ու միշտ  
 Վրխատոսի նայել տալու, ու մեղքին  
 զօրութենէն փրկելու. ու քանի որ

ողջ էք նէ ձեզ հաւատարիմ ընէ Մտ-  
տուծոյ ծառայելու ու ձեր ընկերացը  
աղէկութիւն ընել տալու : ու նաև եր-  
բոր մեռնելու ալ ըլլաք ան ժամանակն  
ալ անգամ ձեզ պատրաստէ Մտ-  
ուած սիրելու : ու իրեն ծառայել-  
լու : ու իր Արդւոյն երախտիքները ա-  
ռաւել գերագոյն ու երջանիկ աշ-  
խարհի մը մէջ վայելելու :

### Գ. Լ. Ա. Ի. Խ. Ժ. Բ. :

Յովնէիին եղբայրներուն մէջին իր պատիւ  
ամենին մեջին ելելու : Բարբոն լաւուր : Ս'է  
լար ինչ՞ ճը : Յովնէին պարտաւորութիւն իր  
պղտը ըստմե՛րուն լաւ : Աստուծոյն ինչո՞ր  
ոգեշ իօսե՛րը : Ինչնիսմը երկուսու հա-  
մար Յովնէին հրահան չէ պալ : Ի՞նչ ամեն հա-  
մար յոգե՛լու համար ճո՞ղայնն ջանալ :

Յովսէփին եղբայրները քիչ մը ժա-  
մանակ ճամբայ երթալնուն ետև ,  
ինչպէս որ կրկարդանք Մտուածա-  
շունչին մէջ , պանդոկի մը մէջ մտան

ինքըզննքնին զուլայնելու , ու իրենց  
էշերնուն կերակուր տալու :

Երբոր անոնցմէ մէկը իր ամանը  
կրթանարկոր իր էշուն համար կերա-  
կուր հանելու . տեսաւ որ իր տըւած  
ստակը անոր մէջը դրած էր , ան ժա-  
մանակը շատ զարմայաւ ու շուտով  
դնաց իր եղբայրներուն ըսաւ . ու ա-  
նոնք բոլորն ալ շատ խռովեցան ու  
կասկածով լեցվեցան , թէ կարելի է  
Նդիստոսի իշխանը կամ ուրիշ մէկ  
չար մարդ մը ըրած ըլլայ . որ մեր  
կրկին ետ դարձած ժամանակնիս ա-  
նոնք զողցեր էք ըսելով մեզի ամբաս-  
տանու թիւն ընեն : Կորհեցան թէ աս  
ալ մէկ ուրիշ նշան մըն է Մտուծմէ  
եկած , որ մեր առջի ըրած չարու-  
թեանը փոխարէն մեզ պիտի նեղէ ,  
ու ան Մտուծոյ ամենախնամ նա-  
խախնամու թիւն է որ աս դիպուածնե-  
րը ասանկ տնօրինեց իր տհաճութիւնը  
մեզի յայտնելու համար . ուստի մէկ  
զմէկու հետ խռովեցան ու ըսին աս

ինչ բան է որ Մտուած մեզի ըրաւ :

Մէկ չար խղճմտանք մը Մտուծոյ նախախնամութեան վրայ խորհելով ամենեւին իրեն մխիթարութիւն մը չի կրնար գտնալ : Մտուծոյ ամենատես աչքը ու ամենախնամ ձեռքը մեղաւորներուն մէկ անդադար տառապանքի ու նեղութեան մը պատճառ է : Յակոբին տղոցը համար ճամբուն մէջ առաւել ուրիշ բան մը պատահելուն վրայօք չենք դիտէր :

Իրենց տունը հասած ժամանակնին Նդիստոսի մէջ ինչ որ պատահելեր նէ , բոլորն ալ իրենց հօրը պատմեցին , ու երբոր ամէնն ալ իրենց ամանները կը բանային , կը տեսնային որ ամէնուն ստակն ալ իրենց ամանին մէջն էր . ու երբոր իրենք՝ ու իրենց հայրը մէկտեղ ան ստակները տեսան , բոլորն ալ վախցան : Աւ Յակոբ իրենց հայրը անոնց ըսաւ . « Իս իմ տղաքներէս զրկեցիք . Յովսէփը չի կայ . Սիմօնը չի կայ , ու Ղենիամինն ալ

պիտի տանիք . ասոնց բոլորն ալ ինձի  
դէմ բաներ են” :

Արդարև Յակոբին աչքին երևաց  
որ բոլոր իր զալու տարիներուն ակըն-  
կալութեանցը վրայ մէկ մութ ամս մը  
սլատեց . առաջ շատ նեղութիւն քա-  
շեր էր , բայց կըկարծէր որ՝ առա-  
ւել ունի քաշելու : Ինքը Մտուծոյ  
Նախախնամութիւնը մուցեր էր , որ  
կարող է զեշէն աղէկ յառաջ բերե-  
լու , ու իր հողւոյն դառնութեամբը  
աղաղակեց ըսելով , թէ բոլոր իմ տը-  
ղոցս վրայ պատահած բաները ինձի  
դէմ են :

Չէր գիտեր թէ աս եղած բաները՝  
Յովսէփի կրկին իր գիրկը ձգելուն , ու  
իրեն ու իր ընտանիքին մխիթարու-  
թեան սպառնալուքները պիտի ըլլային :

Ռուբէն իր հօրը թշուառութիւնը  
տեսնալով , Բենիամինին Ազիպտոս  
երթալուն վրայ , ու ինքը անոր սիրտը  
առնելու համար իրեն ըսաւ . իմ երկու  
տղաքս մեռցուր . թէ որ Բենիամինը

կրկին քեզի չի բերեմ . իմ ձեռքս  
 առ ի ու ես կրկին քեզի կը բերեմ :  
 Եւ խենդ ու զէշ խօսք մըն էր՝ որ  
 Ռուբէն ըսաւ . ինչու որ ինչ արդա-  
 րութիւն ունէր Ռուբէն իր տղաքը  
 մեռցունելու համար հրաման տալու .  
 ու թէ որ Բենիամինը կորսնցունելու  
 ըլլար , ինչ օգուտ պիտի ըլլար Հա-  
 կոբին՝ ան երկու մեծ ու անմեղ տղաքը  
 մեռցնելէն՝ անոնց հայրը պատժելու  
 համար :

Ռուբէնին զուրցած աս զօրաւոր  
 խօսքը Յակոբին մէկ օգուտ մը չըրաւ .  
 երբոր Բենիամինին զատվիլը միտքը  
 կը բերէր՝ չէր կրնար համբերել . ու  
 ըսաւ Յակոբ . «Իմ տղաքս ձեզի հետ  
 չի պիտի գայ . ինչու որ իր եղբայրը  
 մեռած է . ու ինքն ալ մէկ հատիկ մը  
 մնացած է՝ ու թէ որ ձեր գացած ճամ-  
 բուն մէջը անոր փորձանք մը պատա-  
 հելու ըլլայ , ան ժամանակը իմ ծե-  
 րութիւնս տրտմութեամբ գերեզմանը  
 պիտի իջեցունէք” :



Մովբ Բանանու երկրին մէջը աւաւել սաստկացաւ, ու վերջապէս Յակոբ ու իր տղաքը ու անոնց ընտանիքը Ադիպտոսէն ծախու աւաճ ցորենը կերան հատցուցին, և ուրիշ հնարք մը չի կար ցորեն ստանալու բայ 'ի կրկին Ադիպտոս երթալէն: Ուստի Յակոբ հրամայեց որ կրկին հոն երթան. թէպէտ իրենք աղէկ զիտէին որ միայն մէկ ճամբայ մը կար, այսինքրն թէ որ Բենիամինը հետերնին տանելու ըլլային, կըյուսային որ Ադիպտոսի կառավարը անոնց կերակուր պիտի տար: Յուզա սս բանին համար իր հօրը ըսաւ. թէ ան մարդը (այսինքրն Յովսէփ) մեզի յայտնի դուրցեց որ, թէ որ ձեր եղբայրը հետերնիդ չըլլայ, դուք իմ երեսս չի պիտի տեսնաք: Ի՞նչ որ մեր եղբայրը մեզի հետ կըխրկեսնէ. մենք ալ կերակուր առնելու կերթանք. թէ որ չես խրկեր նէ մենք ալ չենք երթար. ինչու որ ան մարդը մեզի ըսաւ որ, իմ երեսս չի

պիտի տեսնաք , թէ որ ձեր եղբայրը  
հետերնիդ չըլլայ :

Հիմայ ան յարդի նահապետը ինչ  
անհնարին փորձութեան մէջ մտաւ ,  
ինքը իր տղաքները , ու անոնց ընտա-  
նիքը անօթութենէն մեռնելու վտան-  
քին մէջն էին . թէ որ կերակուր չառ-  
նրվեր անոնց կեանքը զոհ պիտի ըլ-  
լար : Գենիամինը իր կեանքին պէս  
իրեն շատ սիրելի էր , ու ինչպէս կըր-  
նար ասանկ մէկ սիրելի տղէն զատ-  
վել : Իր հողոյն տառապանքէն իր  
տղաքը նախատեց անոնց անխոհեմու-  
թեանը համար :

Յակոբ ըսաւ՝ ինչու համար ան մար-  
դուն ըսիք որ տակաւին ուրիշ եղբայր  
մալ ունինք որ ինձի ասանկ չարաչար  
նեղութեան մէջ ձդեցիք :

Անոնք ալ պատասխան տրւին ու  
ըսին . թէ ինչպէս կրնայինք ընել ,  
երբոր ինքը յատուկ հարցումներ կը-  
նէր հոս մեր տանը վիճակին վրայօք :  
Հարցուց մեզի թէ , «Ձեր հայրը տա-

կաւին ողջ է՞ ու արդեօք ուրիշ եղ-  
բայր ալ լենի՞ք մի՞ . ու մենք ալ  
պարտաւորեցանք ըստ որ անոր հարցում-  
նե րուն պատասխանը տալ :

Առաջուց կրնայինք մի՞ զիտնալ որ  
ան մեղի պիտի ըսէ , թէ Վենիամինը  
հետերնիդ մէկ տեղ Ազխատոս պիտի  
բերէք : Տակաւին Յակոբ երկբայու-  
թեան մէջ էր , ու անիկա խրկելու  
համար մտքին մէջի խուռլութիւնը չէր  
անցեր . և իր տղաքը նայեցան որ ա-  
ռաւել անոր աղաչել ու ինքը համո-  
զել պէտք էր , որ իր տղին հրաման  
տայ հետերնին տանելու :

Յուդա աս բանը համարձակու-  
թեամբ Յակոբին ըսաւ , խրկէ տղան  
ինձի հետ , որ ելանք երթանք , ու  
մենք ու զուն ու մեր զաւկըններն ալ  
ողջ մեան չի մեռնին :

Ան ժամանակը Յուդա իր հօրը ը-  
սաւ , որ ինքը Վենիամինին վրայ հո-  
գաբարձու պիտի ըլլայ կրկին անիկա  
ողջ իրեն զառձուռնելու , ու ըսաւ որ՝

Թէ որ տղան կրկին քեղի չի բերեմ ու  
 առջիդ չի դնեմ՝ ան ժամանակը Թող  
 բոլոր նախատինքը ես կրած ըլլամ .  
 ինքն ալ նայեցաւ որ անոնք շատ ժա-  
 մանակ կրկորսընցունենկոր ասանկ  
 նստելով , ու Թէ որ ժամանակին ելած  
 ըլլային կարելի է հիմայ Ազխալտոս  
 գացած ու կրկին տուն դարձած էին :

### Գ Լ Ո Ւ Խ Ե Ժ Կ

Բենիամինը երբեք — համար Յակոբին հա-  
 ճախն արեւ : Ազխալտոսի կատարելին  
 համար պարտաւորը լաճ ընծանելը : Յակոբին  
 արդոյր ճանճայ ելլալը : Յովնիկին առնելու ել-  
 լալին : Լնոնց լախը յանցանքն լախ առաջ  
 Բերելը : Յովնիկին հարախարարին անոնց լա-  
 իր բարեխառնելը :

**Ա** երջապէս Յակոբին տղոցը աղա-  
 ջանքը կատարվեցաւ , Թէպէտ  
 Յակոբ ինքը յուսահատուԹեամբ հա-  
 ճուԹիւն տուաւ Բենիամինին երԹա-

լուն : Դնքը ըսաւ , թէ որ հիմոյ ա-  
տանկ պէտք է ընել նէ ըրէք , թէ որ  
իրաւյունէ ասանկ կըհարկաւորի նէ .  
որ՝ կամ ձեր ամէնքդ անօթութենէ մե-  
ռած պիտի տեսնամ , կամ չենէ իմ ա-  
մէնէն սղտիկ սիրելի տղէս Դէնիամի-  
նէն պիտի զատուիմ որ ձերն ալ եղ-  
բայրն է : Դնիկա կուտամ . զացէ՛ք  
զաւկընէրս . բայց կուզեմ որ ամէն  
ձեր կարողութեանը մէջի եղած տղէ-  
կութիւնը ընէք՝ Եղիստոսի կառա-  
վարին հաճութիւնը ստանալու հա-  
մար :

Կարելի է ինքը կրկարծէ , որ ան-  
ամաններնուդ մէջի գտած ստակնիդ  
դուք գողցերէք , ու դուք ալ ձեր չի  
դողնայը սլարտիք հաստատել : Մեր  
երկրին արդիւնքներէն քիչ մը անոր  
ընտիր բաներ տարէք . քիչ մը բա-  
լասան , մեղր , համեմ , տաշխն , ըն-  
կոյզ , նուշ , ու անոր ընծայ տրվէք ,  
ու առջի տարած ստակներնուդ երկու-  
քին չափ հետերնիդ առէք , ու ան ետ

բերածնիդ ալ հոն տարէք որ կարելի է սխալմամբ անոնք ամաններնուդ մէջը դրված ըլլան . ու անկէ վնաս մը չի գայ ձեզի :

Չեր եղբայրն ալ հետերնիդ առէք , ու ելէք գացէք կրկին ան մարդուն , ու ան ամենակարող Աստուածը ձեզի ողորմի ան մարդուն առջին . որ ձեր միւս եղբայրը ու Վենիամին նալ հետերնիդ խրկէ . թէ որ ես իմ տղաքներէս զըկըւիմ նէ թող զըկըւիմ :

Յակոբին տղաքները շուտով ճամբու համար սէտք եղած հարկաւոր պատրաստութիւնները ըրին . ինչպէս որ հայրերնին ըսեր էր , ու Յուդա Վենիամինը իր յատուկ պաշտպանութեանը տակը առնելով , կրկին ճամբայ ելան Ազխատու երթալու :

Նտարակոյս անոնց մէկըմէկէ զատուելը շատ սլտառուչ ու աղէտալի դգացում մը տըւաւ իրենց ծեր հօրը : Նոնց ամէնուն պատուիրելէն ետե , մանաւանդ Յուդային՝ որ նայի թէ Վե-

նիամիենին վնաս մը չի պատահի , ու  
ամենակարող Մատուծոյ առաջնորդ  
դուժիւնը ու պաշտպանուժիւնը անոնց  
համար խնդրելով իր բաժնրվելու օրհն  
ուժիւնը տրւաւ անոնց :

Անոնց կնիկները ու զաւկրները ի  
րենց չորս կողմը կայներ էին սէրերնին  
ընդունելու ու նաև մնաս բարով բսե  
լու . անոնք մինչև որ ան հեռակայ  
բլուրը դարձան՝ լուիկ կայնած ետև  
նուն կընայէին , ու մինչև որ իրենց  
աջվըներնուն բոլորովին չաներևու  
թացան նէ՝ ոչ իրարմէ զատվեցան ,  
և ոչ ալ իրենց սեպհական վրաննին  
դարձան : Իր սրտին տրտմութեան  
ամէն մէկ պատճառը կըհաւտանք ,  
որ Յակոբ մինակ գնաց իր զգացում  
ները Մատուծոյ առջին թափեց . ու  
իր զաւկրները անոր նախախնա  
մութեանը ու օրհնութեանը յանձ  
նեց , որ ինքը կարող է փրկելու . ու  
աղօթք ըրաւ որ ինքը կարող ըլլայ  
առ փորձութեան ժամին համբերելու ,

ու Վստուծոյ կամքին հնազանդ ըլլալու : Ահ վշտացեալ ծեր մարդ . Վստուած քեզի համբերութեան ու իր կամքին հնազանդութեան դասատրուութիւն մը կուտայ որ դուն սորվիս , թէ ինչպէս պէտք է ամէն բան անոր ձեռքը յանձնել : Վիչ ժամանակ մնաց որ ան մութ ամպերը , որոնք կերևան թէ քու աչքիդ առջին տարածուած են , շուտով ցիրուցան պիտի ըլլան , ու անոնցմէ ետե՛ս մէկ սլայծառ ու փայլուն օր մը պիտի ծագի քու ճամբուդ մէջը , որ դուն խաղաղութեամբ գերեզման իջնաս :

Ա երջասպէս Յովսէփին եղբայրները Վգիստոս հասան ու կրկին անոր առջևը ելան : Վրդեօք Յովսէփ ինչ եղաւ . երբոր Տենիամինին երեսը տեսաւ . իր Վասքէլ մօրը զաւակը . որուն հետ մանկութեան ատեննին շատ երջանիկ օրեր անցուցեր էին , ու որն որ քսան տարիէն էվել էր չէր տեսած :



Աս իր սիրելի եղբօրը դէմքը անց-  
եալ ժամանակներուն եղած դացած  
բաները յիշեցընել տըւաւ Յովսէ-  
փին . ու շատ դժուարութեամբ կարող  
էր իր դգացումները զսպելու , որ ին-  
քըզինքը եղբայրներուն չի ճանչցընէ :

Թէպէտ որչափ որ գորովագութ էր  
նէ , այնչափ ալ հաստատուն էր . և  
իր հաստատութիւնը առաւել շատ-  
ցուց . անանկ ճամբաներ բռնեց որ  
զրեթէ անոնց ո՛վ ըլլալը ինքը ամենե-  
ին չէր զիտեր :

Աս տեսութիւնը Յովսէփ իր եղ-  
բայրներուն հետ ուր տեղ ընելը չէնք  
զիտեր . բայց ինչևիցէ զիտէնք որ իր  
սեպհական տանը մէջ չըբաւ . ինչու  
որ՝ Աստուածաշունչէն կիմանանք թէ  
ան ժամանակը Յովսէփ իր մատակա-  
րարին հրամայեց որ իր եղբայրները  
իր սեպհական տունը տանի , ու ամէն  
բան պատրաստէ անոնց ցորեկվան հա-  
ցին համար իր կերած սովորական ժա-  
մին , ու նաև պատուիրեց որ ան հաց-

կերոյթը շատ առատ ու հարուստ ըլ-  
լայ :

Մատակարարը Յովսէփին ըսածին  
պէս ըրաւ , ու երբոր Հակոբին տը-  
ղաքները կառավարին տունը մտան .  
բոլորն ալ վախցան ըսելով , թէ ան  
ամաններուն մէջէն դուած ստակներ-  
նուս համար հիմայ բոլորս ալ պիտի  
դատվինք , ու բոլոր մեր ունեցածնե-  
րէն պիտի զրկւիլինք , ու մենք ալ կա-  
ռավարին գերի պիտի ըլլանք :

Արդարև թէ որ աս բանը անոնց  
պատահելու ըլլար՝ գրեթէ բոլորին  
ալ ինչ ճշմարիտ հատուցում մը եղած  
պիտի ըլլար իրենց եղբայրը գերիի  
պէս ծախելուն , ու հօրերնուն ըրած  
անիրաւութեանը ու խարէութեանը  
փոխարէն : Անոնք գիտէին որ ասանկ  
մէկ պատիժի մը արժանի էին . ու վար-  
մանալի բան մը չէ որ անոնք ան պա-  
տիժէն կրվախնային ու կըրողային , որ  
Աստուծոյ արդար դատաստանը ան պա-  
տիժը իրենց վրայ բերէ :

Միտքերնիդ պահեցէ՛ք իմ սիրելի զաւկընեւրս , որ չար խիղճէն 'ի զատ ուրիշ բան մը չի կայ որ մարդս այսչափ կը վախցընէ :

Ատուածաշունչը մեզի կըսէ թէ ամբարիշտը առանց մէկուն հալածելուն կըստիսչի . բայց արդարը առիւծի պէս յանձնապատան է : Տակաւին իրենք դուանը առջին կայնած ժամանակին մատակարարին քովը մօտեցան , ու սկսեցին ինքըզինքնին անոր առջևը արդարացընել իրենց ամաններուն մէջէն դտած ստակներնուն համար : Ինչպէս ան ստակները դտաննէ սլարազանելով անոր պատմեցին . ու ըսին որ՝ անոնք ետ բերեր ենք կըրկին կառավարին տալու : Աոյն ժամանակը խոստովանեցան , որ ամենեւին կարողութիւն չունինք զըուցելու թէ ան ստակները մեր ամաններուն մէջը ով դրուաւ , կամ ինչպէս հոն մտան :

Մատակարարը անոնց խռովութիւնը տեսնալով ջանաց որ անոնք խաղա

ղացրնէ , ու անոնց ըսաւ որ չի վախնան , ինչու որ գէշ բան մը եղած չէ . ու իրենց ալ վնաս մը չի պիտի պատահի :

Կարելի է որ՝ աս մատակարարը Յովսէփին ընտանիքին մէջը ըլլալուն՝ ճշմարիտ Վստուծոյ վրայօք սորված էր . ու ինքն ալ Վստուածասլաշտ մարդ մը ըլլար . որեւիցէ անոր խօսած լեզուն, մէկ Վստուծմէ վախցող ու անոր հնազանդող մէկի մը լեզուէն էր : Խաղաղութիւն ըլլայ ձեզի՛ ըսաւ ինքը . մի՛ վախնաք . ձեր Վստուածը ու ձեր հօրը Վստուածը ամաններնուդ մէջը ձեզի դանձ տուաւ , ես ձեր ստակը առած եմ : Վսել կուզէր որ ցորենի համար ձեր ստակը մէկ անգամ մը իմ ձեռքս հասած է , ու իմ ան ստակները առնելուս խոստովանութիւնը բաւական է ձեր պարկեշտ մարդիկ ըլլալը իմացրնելու : Էիմայ անոնք ինչպէս ձեր ամաններուն մէջը մտնալուն համար պէտքը չէ՛ որ ձեզ նեղէք ,

Ինոնք իմ տերօջմէս կառավարէն իբր  
ընծայի մը սէս սահեցէք կամ թէ  
սեպեցէք որ Իստուծոյ ամենախնամ  
նախախնամութիւնը , որուն որ կը  
խոստովանիք երկրպագելու , ու որուն  
որ ձեր ծեր հայրը կասկածի իբր  
պարզի մը սէս ձեզի խրկած է :

Գ. Լ. Ա. Ի. Ի. Ի :

Սէնտիսն Բանաստեղծութիւնը : Յով-  
նիստի եղբայրներուն փառած ընծաները ի-  
բեմ փառներն : Յովնիստի իր գագոյնմաները  
գծաւորաւ զսպելը : Իր եղբայրները ի-  
բեմ հեթ հոյ ուրիշը : Բարեկամութեան  
ձեռք մէջ թանկ գրոցներ , ու անհիշատակ  
ցոնելու պարտականութեանն :

Սիւքերնիդ բերէք որ Սիմէօնը իր  
եղբայրները Նենիամներ հետ բե-  
րենուն համար , բանտին մէջը սահ-  
ուած էր բայց հիմայ ազատեցաւ , ու  
մատակարարը անիկա միւսներուն քովը  
բերաւ . ու բոլորն ալ կառավարին

տունը մտան : Մատակարարը ան ժամանակի սովորութեանը պէս անոնց ջուր տրւաւ որ ոտքերնին լըվան , ու նաև իրենց հետը բերած էշերը կերակրեց : Աս միջոցին մէջը Յովսէփին եղբայրները հետերնին բերած ծանրազին բաներուն ծրարները արձըկեցին , ու ամէն բանը շտկեցին որ իրենց կողմանէ ու իրենց հօրը կողմանէ մէկ ընծայ մը ընեն անոր :

Աս ընծաները նոյն միջոցին մէջը պատրաստելուն պատճառը աս էր , որ իրենք զիտէին , որ Յովսէփ քիչ ժամանակէն ետ պիտի դառնար կերակուր ուտելու . ու նաև իմացան որ իրենք ալ նոյն տեղը հաց պիտի ուտէին : Արբոր Յովսէփ եկաւ՝ ան ժամանակը անոնք իրենց ընծաները անոր տրւին . ու մինչևդ ետինը ծռեցան երկրպագութիւն ըրին . ու հիմայ իր երազը զարմանալի կերպով մը կրկին կատարվեցաւ : Ան ժամանակը Յովսէփ թարգմանին ձեռօքը իրենց ինչ

պէս ըլլալը հարցուց . ու ըսաւ որ ան  
 ձեր զուրցած ձեր մարդը ձեր հայրը  
 ինչպէս է . տակաւին ողջ է՞ մի : Բ  
 նոնք ալ սխառասխան տըւին , թէ քու  
 ծառայ մեր հայրը լաւ առողջութեան  
 մէջ է , ու տակաւին ողջ է . ու զը  
 լուխնին ծռած երկրպագութիւն ըրին  
 անոր : Էիմայ Յովսէփ յատկապէս իր  
 խելքը առաւել Յենիամինին վրայ  
 ըլլալուն համար անոնց հարցուց , իբր  
 թէ ամենեւին իր ճշմարիտ եղբայրը  
 չի ճանչնալու մը պէս . թէ արդեօք  
 ձեր ամենէն սղտիկ եղբայրը աս է՞ մի ,  
 որուն համար զըուցէր էիք , երբոր  
 առջի անդամին Ազիպոսս եկար նէ :  
 Արբոր անոնք ալ ըսին թէ իսկ նոյն  
 մարդն է . Բն ժամանակը ինքը մէկ  
 դորովագութ ծնողքի մը պէս անուշ ու  
 համեստ կերպով մը իրեն ըսաւ , տղաս  
 Բստուած քեզի ողորմի :

Իր Յենիամինին վրայ ունեցած սէ  
 ըր անանկ շատ էր որ հաղիւ աս խօս  
 քերը կրնայ զուրցել , երբոր իր զգա

ցումները բոլորովին ինքը յաղթեցին :  
 Առաւել ուրիշ խօսք մը չի կրնաց  
 զրուցեր էր : Արշարև իր եղբօրնե-  
 րուն առջևը ալ չի կրնաց կայներ էր .  
 ու որչափ որ հնար էր նէ , վազեց իր  
 սենեակը գնաց , ու դառնապէս լա-  
 ցաւ : Սակայն վերջը իր երեսը լըվաց  
 որ չի դիտնան թէ ինքը լացեր է , ու  
 շուտով կրկին ետ դարձաւ . ու հան-  
 դարտութեան աստիճանով մը հրա-  
 մայեց որ անոնց համար պատրաստը  
 վաճ կերակուրը ներս բերվի : Յով-  
 սէփ ինքիրենը կերաւ . ինչպէս որ ա-  
 սանկ սովորութիւն էր թագաւորին ,  
 կառավարին , և ուրիշ ազնուականնե-  
 րուն : Աէկ քանի ալ եղիպտացիներ  
 կային որոնք իր ընտանիքին մէկ մասը  
 կրկազմըվէին . կամ թէ նոյն հացկե-  
 րոյթին հրաւիրուած էին . անոնք ալ  
 ինքիրեննին կերան . ու նաև իր եղ-  
 քայրներն ալ զատ ինքիրեննին :

Աստուածաշունչը մեզի կրղրուցէ  
 թէ աս զատ ուտելուն պատճառը աս





Յովսէփին՝ իր զգացումներէն յա  
առանձին իր սենեակը դառնալը



էր որ իրենց մէջը մէկ գարշութիւն  
մը կար . (որ շատ ատելի ու գէշ  
բան մըն էր Ազիպտացւոց կարծիքովը  
իրենց աղգերուն մէկը Աբրայեցիի մը  
հետ հաց ուտելը :

Ոմանք կը կարծեն թէ աս բանը Ա-  
զիպտացիներուն եղի , ու ուրիշ կեն-  
դանիներու երկրպագութիւն ընելէն  
եւաւ , որ շրէանէրը նոյն կենդանիներ  
ըը կը մտրթէին ու կուտէին . ու նաև  
զոհ կընէին . ուրիշներն ալ կը կար-  
ծեն որ Աբրայեցիները հովիւ ըլլալ-  
նուն համար Ազիպտացիները անոնք  
գարշելի կըսեպէին . ու աս մարդիկ  
ներէն շատերը Ազիպտոսի վրայ յար-  
ձըկած՝ բնակիչներուն շատ անիրաւու-  
թիւն ըրած էին : (Վէպէտ Ճշմարիտ  
պատճառը ստուգվիլը անհնարին բան  
է . աս բանը շատ ժամանակ առաջ  
պատահելուն՝ անոր ճշմարիտ պատ-  
ճառը ստուգելը դժուար բան է :

Երբոր Յովսէփին եղբայրները հա-  
ցի նստելու վրայ էին . Յովսէփ խնդ-

րեց որ իր ուզած կարգովը նստին : ու  
 նստելուն ետե երբոր իրարու վրայ  
 նայեցան ու տեսան որ ճիշտ իրենց  
 տարիքներուն կարգովը նստերէին :  
 11. ու բէնէն սկսեալ մինչև Ֆենիամինը  
 շատ զարմացան :

Արդարև աս շատ զարմանալի բան  
 մը երևաց անոնց , ու բոլորն ալ աս  
 բանին պատճառը չէին կրնար հաս-  
 կրնար : (Յովսէփին առջին շատ տե-  
 սակ կերակուրներ դրուած էր ինչպէս  
 որ սովորութիւն էր . Յովսէփ անոնք  
 բոլոր իր չորս կողմի մարդիկներուն  
 բաժնեց : Արբոր Յակոբին տղաքնե-  
 րը իրենց ամէն մէկուն խրկըւած կե-  
 րակուրներուն շատութեանը վրայ նա-  
 յեցան՝ կրկին զարմացան երբոր տե-  
 սան , որ Ֆենիամինինը հինգ անգամ  
 իրենց ունեցածէն էվելի էր :

Անոնք նոյն հացկերոյթը վայելե-  
 ցին , ու Յովսէփին հետ գինի խմելով  
 շատ ուրախացան , ինչպէս որ դրուած  
 է Ատուածաշունչին մէջը : (Թ. Էպէտ

ասկէ ամենեւին կարծելու չենք որ անոնք չափէ դուրս գինի կըխմէին . թէ որ ժամանակ ունենայի իմ սիրելի զաւկըներս , հոս տեղ քիչ մը պիտի կայնէի , ու բարեխառնութեան վրայօք ձեզի քիչ մը բան ըսէի , որ ինչպէս պէտք է բարեխառն ըլլալ ուտելուն ու խմելուն մէջ : Ան ձեզի լաւ աւուողջութիւն , աղէկ բնաւորութիւն , քաջ մտայ որոշում կուտայ . ու քանի որ մեծնալու ըլլաք , ձեզ օգտակար ու երջանիկ մարդիկներ ընելու կը պատրաստէ :

Ձեր օրինակը անզամ մէկ երջանիկ զօրութիւն մը պիտի ունենայ՝ ձեր եղբայրներուն , քուրերուն , ու ընկերներուն վրայ : Այն որ բաւական մեծցած էք նէ , կըյուսամ որ արդէն ջանալու սկսած էք ուրիշները բարեխառնութեան առաջնորդելու . ու անբարեխառնութեան նեղութիւնները աշխարքէն վերցնելու :

Աղէկ գիտցէք որ անբարեխառ-

նութիւնը մարդուն իրեն՝ իր ընտանի-  
 քին ու բոլոր աշխարքին մէկ անէծք  
 մըն է, բայց ընդհակառակը, բարե-  
 խառնութիւնը մարդուն աւողջու-  
 թիւն, ոյժ, մտքին պայծառութիւն ու  
 լուսաւորութիւն, ժրութիւն, զուար-  
 թութիւն, ու խղճմտանքի խաղաղու-  
 թիւն կուտայ, որոնք ձեզի առատ մէկ  
 հատուցում մը պիտի ըլլան՝ ձեր անձը  
 քիչ մը անբարեխառնութենէ ետ պա-  
 հելով :

ԳՆՈՒԽՈՒՄ :

Յովակիմն եղևայրնեւրոսն իրկնն ճամբայ ելլանուն իրենց արոնք երկուսն հասար : Իր հասարակարարինն անոնց արջնն իարելլէ, ու կուսաղարին գինննն լասալ գուղէր եւ Եւելլժ անոնց անբասարանննն Եւելլէ : Եւ լասանննն ինչ Եւելլէ : Սասալ Եւելլնննն անանննն Եւելլէ գոննն լլէլլ : Եւանց Եւելլննն Եւ Եւանննննն, ու Յովակիմն արջննն ելլանունն : Յուարայինն իսարողաննննննննն իրենց յանցաննննննն հասար : Յովակիմն ինչնն հասար ասաննն լլէլլ : :

**Յ**ովակիմն եղևայրնեւր լիտքերնին զբեր էին , որ ետկի առտունն ճամբայ ելլեն տուն երթալու . իրենց հետը տանելու ցորենը պատրաստելու վրայ ըլլալով , որ մատակարարին պարտքն էր՝ Յովակի հրամայեց անոր որ անոնց ամանները տարածներնուն չափ լեցրնէ . ու ամէն մէկուն ցորենի համար վճարած ստակնին ալ , իրենց ամաններնուն բերանը դնէ : Աւմատակարարին հրամայեց որ նաև իր

արծաթէ զինիին թասը առնէ որ յա-  
առուկ իրեն համար կըզործածէր ու  
Տենիամինին ստակովը մէկ տեղ անոր  
ամանին բերանը դնէ :

Բոլոր աս բաները մատակարարը  
ըրաւ , առանց Յովսէփին եղբայրնե-  
րը գիտնալով . ետկի առտուն կանուխ  
արշալուսին ժամանակը ճամբայ ելան :

Քիչ մը ճամբայ երթալնուն ետե ,  
որ տակաւին քաղաքէն շատ հեռու  
ցած չէին , Յովսէփ հրամայեց իր մա-  
տակարարին , որ անոնց ետեէն վա-  
զէ , ու առջենին կտրէ , ու անոնց  
հարցունէ . թէ ինչու համար ան չա-  
րութիւնը ըրին՝ իրեն ըրած մարդա-  
սիրութեանը փոխարէն : Ասե Յով-  
սէփ անոր ըսաւ որ՝ աս խօսքը զրու-  
ցելէն ետե անոնց ամբաստանութիւն  
մ'ալ ընէ կառավարին զինիին թա-  
սը զողջեր էք բսելով . ու նաև ա-  
պսպրեց որ ասանկ զրուցէ . աս ան թա-  
սը չէ՞ մի , որուն մէջէն իմ տէրս գի-  
նի կրիամէր ու նաև անով կըհմայէր  
աս բանը ընելնիդ շատ զէշ ըրիք :



Ոմանք կըխորհին թէ Նդիստացի-  
 ները՝ որոնք որ շատ աւելորդապաշտ  
 մարդիկներ էին, կըկարծէին որ մէկ  
 քանի մարդիկ անանկ թասեր ունէին,  
 կամ թէ միայն աս կառավարին ունե-  
 ցած թասը անանկ կարողութիւն մը  
 կուտար որ մէջը նայողները պատա-  
 ճելու բաները առաջմանէ կըտես-  
 նային, կամ թէ անցած դացած բան  
 մը՝ ու մէկու մը ըսածը կամ ըրածը  
 կըգիտնային: Շատերը կըխորհին թէ  
 աս բաւը որ մեր Նստուածաշունչին  
 մէջը հմայել թարգմանված է վերի  
 նշանակութիւնը ունի. բայց ուրիշնե-  
 րը կըկարծեն թէ նոյն բաւը մէջէ  
 մէջ փնտուել ալ կրնանակէ:

Նոնք կըխորհին որ մատակարարը  
 Յովսէփէն հրամայեալ էր ան իր գե-  
 ղեցիկ բաժակը գողցեր էք ըսելով՝ իր  
 եղբայրները ամբաստանելու. ու ու-  
 բուն համար (ինչպէս որ պիտի կար-  
 ծէին) ինքը շատ զգուշութեամբ ու  
 արթնութեամբ պիտի փնտուէ, ու

համայէ, ու անիկա ով գողնալը անշուշտ պիտի դառնայ : Անձի կերևայ թէ, ան բառին կրկին նշանակութեանը վերջինը ճշմարիտ է :

Մատակարարը Յովսէփին ըսածին պէս ըրաւ, ու Յովսէփին եղբայրները աս խօսքը ըսածնուն պէս՝ ինչպէս զարմանալնին դուք ձենէ կրնաք իմանալ :

Անոնք ալ իրենց աս բանին վրայ ունեցած զարմանքնին սկսեցին նկարագրել, «Անչո՞ւ համար մեր տէրը աս խօսքերը կըզրուցէ?» ըսին անոնք, քա՛ւ լիցի որ քու ծառաներդ աս կերպ բան ընեն. ահա՛ ան ստակը որ մենք մեր ամաններուն բերանը դտանք՝ կրկին Վանանու երկիրէն ետ բերինք քեզի, ուրեմն ինչպէս կրնայ ըլլար որ քու տիրոջդ տունէն արծաթ կամ ոսկի գողնանք. քու ծառաներուդ որուն քովը որ ան դանըվելու ըլլայ, ան թող մեռնի, ու մենք ալ մեր տիրոջը գերի կըլլանք : Մատակարարը

անոնց ըսաւ որ ես ասանկ ձեր խօսքը  
կըբռնեմ Թէպէտ ինքը անոնց ըսածին  
պէս անողորմաբար չի պիտի վարվէր  
անոնց հետ, ըսաւ Թէ՛ որուն քովը ան  
Թասը որ գտնըվելու ըլլայ ան իմ ծա-  
ռաս պիտի ըլլայ, ու դուք անպարտ  
պիտի ըլլաք: Ատքը ամաններնին վար  
առին, ու բացին որ փնտռեն. Սա-  
տակարարը ամէնէն մեծէն սկսեց, ու  
վերջապէս Վենիամինին ամանին մէ-  
ջէն Թասը գտնըվեցաւ:

Ան իրենց քովէն ելլելուն համար,  
իրենց զարմանքը ու տրտմութիւնը  
այնչափ շատցաւ, որ հաղիւ կրնային  
ասլրիլ. հանդերձնին սլառուտեցին,  
ինչպէս որ առջի ժամանակները տրտ-  
մութեան համար սովորութիւն էր.  
ցորենին ամանները կրկին էջերնուն  
վրայ բեռցուցին ու մատակարարին  
հետ քաղաքը դարձան: Արքոր կա-  
ռավարին տունը մտան, ու անոր առ-  
ջը ելան, ամէնը մէկէն դետինը ծը-  
ռեցան ու անոր երկրպագութիւն ը-  
րին:

Ու երբոր ոտքի վրայ ելան անոնց հարցուց, թէ ինչո՞ւ համար իմ թասս առիք տարիք. չէի՞ք կարծէր մի. որ ինձի պէս մէկ մարդ մը կայ որ ամէն տեսակ իշխանութիւնը իր ձեռքը ունի, զգուշութեամբ անիկա փնտռելու ու հմայելու, այսինքն՝ հաստատութեամբ անիկա առնողը որոշելու :

Յուդա իր եղբայրներուն տեղը աս խօսքին պատասխանեց, Վ՞նչ ըսենք մեր տիրոջը, ի՞նչ խօսինք կամ ի՞նչ պէս հասկցունենք մեր յանցանք չունենալը : Մտուած քու ծառաներուդ անիրաւութիւնը յայտնեց. ահա մենք ու ան՝ որուն քովը որ թասը գտնելուցաւ քու ծառաներդ ենք :

Կերեւայ թէ հազիւ Յուդա մէկ յոյս մը ունէր, որ ինքը կարող պիտի ըլլար իրենց անմեղութիւնը հաստատելու. կրնար կարծեր գուցէ Ռեւիհամինը անիկա գողցած ըլլայ : Բայց հաւանական է որ առաջ ալ ասոր նրման բան մը իրենց պատահելուն հա-

մար Յուդան կարծեց թէ անոնց բռնորն կառավարին կամ ուրիշ մարդու մը մէկ ձևն է . որ անոնք նեղութեան ու վտանգի տակ ձգեն որ սաստիկ պատժըվին :

Ասոր համար Յուդա յուսահատութեան կերպով մը խոստովանեցաւ , որ իրենք բոլորն ալ յանցաւոր են : Արեւի է թէ ինքը կըյուսար , որ աս կերպով Ռենիամիինին կեանքը կրնար փրկել , որուն համար ինքը երաշխաւոր էր եղեր իր հօրը : Աւ նաև կըխորհէր որ թէ որ ինքըղինքնին բռնորովին կառավարին զթութեանը յանձնելու ըլլան , ու խոնարհութեամբ իրենց յանցանքը խոստովանելու ըլլան , կարելի է կըհամոզվի . ու քիչ պատիժ կընէ , ու իրենք շուտով մեռցընելու տեղը բանտին մէջը կըպահէ . ու աս ճամբով ժամանակ կունենան հնարք գտնալու իրենց անմեղութիւնը հաստատելու համար :

ԳԼՈՒԽ ԻԲ:

Յո՛ւնե՛կ Կոմիտասն իր Երեւոյնէն իր Երեւոյնէն  
 Բնակիչ զարմելու: Իր Կոմիտասն ձեռքովն ձեռ-  
 քայ Կոմիտասն արժանի Բնակիչը: Իրե՛ն՝ Յոմիտասն  
 Կոմիտասն Կոմիտասն: Կոմիտասն Կոմիտասն:

**Մ**ու տեղ Յովսէփ ուրիշ պատե-  
 հութիւն մըն ալ ունեցաւ իր եղ-  
 բայրները պատժելու, որոնք որ իր  
 իշխանութեանը տակն էին:

Արեւար որ նոյն բաժակը զողնալնուն  
 մասնաւոր յանցանքը թողուլ, ու ա-  
 ռաւել խորին յանցանքով մը անոնք  
 յանդիմանել, այսինքն՝ իրենց եղբայրը  
 զողնալնուն ու զերիի մը պէս ծախել-  
 նուն համար: Ի՞նչ որ ասիկա ուրանա-  
 լու ըլլային ու հաստատէին ինչպէս որ  
 իրենց հօրը ըրին Յովսէփը մեռաւ ը-  
 սելով, ան տեղը կարող էր, իրենց  
 ստութիւնը առջևնին դնելու, ու ա-  
 նոնք մեծ խայտառակութեան ու եր-  
 կիւղի մը մէջ ձգելու: Ի՞նչ որ անոր

սրտին մէջը ասանկ մէկ բնաւորութիւն մը եղած ըլլար, ինչպէս սաստիկ ու արդար յանդիմանութեամբ կրնար անոնք նեղել ու իր ռիսք անոյմէ առնել, ու իր վրէժը կատարեալ հաճեցնել :

Սակայն իր անոնց վրայ ունեցած դժայցումը շատ տարբեր էր, ու թէ որ անոնք առաւել երկբայութեան մէջ սլահելու ըլլար, առաւել կրնար անոնք ասպաշխարութեան տակ բերել. բայց ինքը ասանկ ըրաւ, որ իր ներող ու ազնուարարոյ բնութեամբը տեսնան, ու անոնց ճանչցընել տայ Ղաթուծոյ նախախնամութիւնը որ անոր վրայ զարմանան թէ ինչպէս ան երազները կատարելութեան հասցուցորոնց համար այնչափ իրենք բարկացեր էին. որ արդէն նոյն երազներէն այնչափ աղէկութիւն եկած էր իրենց՝ ու իրենց սլատուաւոր հօրը՝ ու բոլոր անոնց ընտանեացը :

Մեղի շատ դժուար է ըստ ամե-

Նայի զիտնալ թէ արդեօք Յովսէփ ինչ ըրաւ իր եղբայրներուն քովը եղած ատենը : Անք աս բաններուն վրայօք բոլոր պարագաներով չիտենք , անոնց շատերը Աստուածաշունչին մէջը գրուած չեն :

Յովսէփ ինչ որ ըրաւ նէ , խորհեցաւ թէ լաւ պատճառ ունէր իր ըրածին . ու ճշմարտաբար կուզէր , որ իր կարողութեանը մէջ եղած աղէկութիւնը իր եղբայրներուն ու հօրը ընէ . ինչպէս որ առանց տարակուսի մեր տեսածներէն պիտի մակաբերենք , թէ որ քիչ մ'ալ առաջ երթանք իր պատմութեանը մէջ :

Թէ որ խաբէութեամբ սուտ շինելու համար մէկ բան մը ընէր կամ ըսէր , ( այսինքն՝ թէ որ չեղած բանի մը եղաւ , կամ թէ եղած բանի մըն ալ չեղաւ ըսէր , ) ան ժամանակը գէշ ըրած կըլլար . ու ինքըզինքն ալ չէր կրնար արդարացունել : Արեւիցէ անիկա պարզմտութեամբ դատենք միտ-



քերնիս բերելով , թէ ինչպէս գէշ ու  
 ասլիրատ մարդիկներու հետ կեանք  
 կրվարէր . ու ինչպէս կրվախնար որ  
 չըլլայ թէ իր ուլ ըլլալը գիտնան , ու  
 բոլոր իր ծեր հօրը , իր սիրելի Վե-  
 նիամինին , իր եղբայրներուն , ու բո-  
 լոր Վեբրոնի մէջ իր ազգականնե-  
 րուն ընտանեացը համար ունեցած ա-  
 դէկութեանը գաղափարները կոր-  
 սրվին : Հիմայ պիտի տեսնանք Յով-  
 սէփին տըւած պատասխանը Յուդայ-  
 ին : Աարծեմ միտքերնիդ է որ Յուդա  
 Յովսէփին բտեր էր թէ մենք բոլորս  
 ալ քու ծառաներդ ենք . որ Յովսէփ  
 կրնար անոնց բոլորն ալ բանտին մէջ  
 պահել . իբր մէկ պատիժ մը՝ ըրած  
 յանցանքնուն համար :

Քաւ լիցի , ըսաւ Յովսէփ որ ես ա-  
 սանկ բան մը ընեմ . բայց ան բաժակը  
 որուն քովը որ գտնըվեցաւ , ան իմ  
 ծառաս պիտի ըլլայ , ու դուք ալ ե-  
 լէ՛ք խաղաղութեամբ ձեր հօրը գա-  
 ցէք :

Բայց արդարև աս մէկ սաստիկ փորձ մըն էր Յուդային՝ որ ինքը հաստատուն խօսք տրւած էր իր հօրը , որ ամենեւին Վենիամինին վնաս մը չի պիտի պատահի . ու ապահովութեամբ անիկա նորէն Վեբրոն պիտի տաներ :

Հիմայ ինչ ըսէ կամ ինչ ընէ , ժամանակը անցած է որ իր եղբօրը անմեղութիւնը հաստատէ . ինքը խոստովաներ էր որ Վենիամինը , միւսները ու ինքը ամէնը մէկտեղ յանցաւոր էին :

Եզիպտոսին մէջ ամէնն ալ օտարական էին , բոլորովին մէկու մը զօրութեանը տակ՝ որն որ իշխանութեամբ Թադուորին երկրորդն էր . միջնորդ կամ բարեկամ չունէին , ու անանկ ծանր յանցանքով մը իրենց խոստովանութեամբը յանցաւոր եղած էին :

Թէ որ աս յանցանքը միայն Վենիամինին վրայ մնալու ըլլար , ինչպէս որ հաւանական էր թէ պիտի մը-

նար , հոն գերի պիտի ընէր անիկա .  
 ու ալ ամենեկին Վեբրոն չի պիտի  
 դարձնէր . ու անանկ Յակոբին ծե-  
 րութիւնը տրամութեամբ գերեզմանը  
 պիտի իջեցընէր :

Երբոր աւ շիտթեալ ու յուսահատ  
 եալ վիճակին մէջն էին , Յուդա սըր-  
 տառուչ խօսքերով ելաւ ու ըսաւ .  
 Կաղաչեմ քեզի ո՞վ իմ տէրս , թողը-  
 թիւն ըրէ , որ քու ծառայող մէկ խօսք  
 մը ըսէ քեզի , ու քու բարկութիւնդ  
 թող չի բորբոքի քու ծառայիդ դէմ ,  
 ինչու որ դուն ալ Փարաւոնին պէս ես՝  
 ու թաղաւորին հետ հաւասար իշխա-  
 նութիւն ունենալուդ համար շատ կը  
 դողամ ես քու առջիդ :

Ի՞մ տէրս . դուն հարցուցիր քու  
 ծառաներուդ թէ հայր կամ եղբայր  
 ունի՞ր մի . ու մենք ալ մեր տէրոջը  
 ըսինք որ մէկ ծեր հայր մը ու մէկ ալ  
 պղտիկ եղբայր մը ունինք որ իր ծե-  
 րութեան զաւակն է . ու անոր եղբայրն  
 ալ մեռած է , ու իր մօրմէն մէկ հա-

տիկ մը մնալուն համար՝ հայրը անհկա  
շատ կըսիրէ :

Աւ դուն ալ քու ծառաներուդ ը-  
սիր , որ անհկա հետերնիդ բերէք որ  
տեսնամ . ու մենք ալ մեր տիրոջը  
ըսինք որ տղան իր հայրը չի կրնար  
ձգել . ինչու որ թէ որ ան իր հայրը  
ձգելու ըլլայ , հայրը պիտի մեռնի .  
ու դուն ալ քու ծառաներուդ ըսիր  
որ , թէ որ ձեր պզտի եղբայրը հե-  
տերնիդ չի բերէք , ալ իմ երեսս չի  
պիտի տեսնաք :

Աւ երջապէս՝ երբոր քու ծառայիդ  
մեր հօրը դացինք , մեր տիրոջը զրու-  
ցածները անոր զրուցեցինք . ու մեր  
հայրն ալ ըսաւ որ կրկին դացէք ,  
ու մեզի քիչ մը կերակուր ծախու ա-  
ւէք . մենք ալ ըսինք չենք կրնար  
երթալ . թէ որ պզտի եղբայրնիս մեր  
հետը դալու ըլլայ , ան ժամանակը  
կերթանք . ինչու որ՝ ան մարդուն  
երեսը չի պիտի տեսնանք , թէ որ մեր  
պզտի եղբայրը հետերնիս չըլլայ : Աւ-

քու ծառայող մեր հայրը մեզի ըսաւ .  
 դուք զիտեք որ իմ կինս երկու տղայ  
 բերաւ մէկը ձեռքէս ելաւ ու ըսի որ՝  
 անշուշտ փարատվեցաւ . ու ան ժա-  
 մանակէն հետէ չի տեսայ . ու [Թէ որ  
 աս ալ տունելու ըլլաք . ու վտանգ մըն  
 ալ ասոր գլխուն զալու ըլլայ նէ , ան  
 ժամանակը իմ ձերութիւնս տրտմու-  
 թեամբ զերեզմանը պիտի իջեցընէք :

Անոր համար [Թէ որ հիմայ ես քու  
 ծառայիդ հօրը առանց տղին երթալու  
 ըլլամ . որուն կեանքը տղին կեանքին  
 հետ կապուած է , ու տեսնայ՝ որ տղան  
 մեր հետը չէ , անատենը ինքը պիտի  
 մեռնի , ու քու ծառաներդ մեր հօրը  
 քու ծառայիդ կեանքը տրտմութեամբ  
 զերեզմանը պիտի ինջեցընենք . ինչու  
 որ ծառայող երաշխաւոր եղայ անոր  
 հօրը ըսելով [Թէ , « [Թէ որ տղայդ կըր-  
 կին քեզի չի բերեմ ան ժամանակը  
 յաւիտեանս քու քովդ մեղապարտ  
 ըլլամ » :

Անոր համար հիմայ կաղաչեմ քեզի

որ տղին տեղը ծառադ գերի ըլլայ, ու  
 ոն իր եղբայրներուն հետ երթայ. ինչ  
 չու որ իմ հօրս երեսը ինչպէս սի-  
 տի նայիմ. գուցէ մէկ չար մը պիտի  
 պատահի անոր :

Գ. Լ. ՈՒԽ. Ի. Գ. :

Յովէէի ինքն զէնքը իր եղբայրներուն  
 ճանչընելը : Ընտր իր եղբայրներուն զու-  
 ցածները : Ընտնց յանցանքներուն լուր-  
 թիւն գալը : (Ժողով-Թեան պարտաւ : Ըրդե-  
 իսրդայցողը աս հոգին ասնի մի :

Յուդային աղաչանքը ոչինչ տեղը  
 չի գնաց. ինչու որ Յովսէփ երբոր  
 իր եղբօրը զըուցածը լսեց, մայրը՝  
 տունը՝ Վեբրոն, Սիւքէմ, Գօ-  
 թայիմ ասոնց բոլորը մէկտեղ սրտա-  
 ռուչ յիշատակութեամբ շուտով  
 միտքը եկաւ : Ըմենեին չէր ուզեր,  
 որ իր ծեր հօրը ասանկ մէկ նեղութիւն  
 մը պատճառելու բան մը ընէ, որ ա-

նոր ծերութիւնը տրամութեամբ դե-  
րեղմանը իջնայ : Մինչև որ Յուդա  
իր խօսքը լմնցուց , Յովսէփ անշունչ  
մտադրութեամբ մտիկ ըրաւ . անոր  
սիրտը լեցվեցաւ . ինչպէս որ դէմքէն  
ու ձայնէն կերևար . երբոր չի կրցաւ  
առաւել իր զգացումները զսպել՝ Տը-  
րամայեց որ եղբայրներէն ՚ի զատ բո-  
լորն ալ դուրս ելլէն , ու ըսածին պէս  
ըրին :

Ան ժամանակը Յովսէփ՝ արցունք-  
ները վազելով բարձր ձայնով սկսեց  
լալ . ու անանկ ձայնով լացաւ , որ  
տանը միւս կողմէրէն անոր ձայնը լսե-  
ցին . և երբոր անոնք աս զարմանալի  
վիճակին մէջն էին իր եղբայրներուն  
ըսաւ . Յովսէփը ես եմ . տակաւին  
հայրս ողջ է՞ մի . անոնք ալ զարմա-  
նալնուն սրտաստիտան չի կրցին տալ :  
Անշուշտ Ազիպտոսի կառավարը  
առջևնին կայնած տեսնալով , շատ  
զարմացած պիտի ըլլային :

Եւ Յովսէփ իր եղբայրներուն ըսաւ .

կաղաչեմ՝ ձեզի մօտս եկէ՛ք . ու անոնք  
 ալ քովը դացին , ու ինքն ալ ըսաւ .  
 Ես եմ ձեր եղբայրը Յովսէփը , որ Ե-  
 զիպտոսին մէջը ծախեցիք , հիմայ  
 անոր համար մի՛ նեղանաք , ու ինքի-  
 ընենիդ մի՛ բարկանաք՝ որ դուք ինձի  
 հոս ծախեցիք . ինչու որ Մատուած  
 ձեր առջևէն ինձի հոս խրկեց , որ  
 կեանք փրկեմ , ինչու որ երկու տարի  
 է , որ աս երկրին մէջը սով կայ . ու  
 տակաւին հինգ տարի ալ կայ . ոչուն  
 մէջը սերմ ցանելով ալ հունձք չի  
 պիտի ըլլայ : Աւ Մատուած իս ձենէ  
 առաջ խրկեց , որ ձեզ ու ձեր զաւ-  
 կրները աշխարքին մէջը պահպանեմ .  
 ու ձեր կեանքը աղատեմ :

Անանկ ալ դուք չէիք , որ իս հոս  
 խրկեցիք , հապա Մատուած էր որ իս  
 փարաւոնին հայր ըրաւ , որ ան խրա-  
 տեմ , ու հայրական խնամով իր պաշ-  
 տօններուն վրայ հոգ տանիմ , ու իր  
 տանը վրայ տէր ըլլամ , ու բոլոր Ե-  
 զիպտոսի երկրին մէջն ալ կառա-



վար : Եւ լաւ ըրէ՛ք իմ հօրս գացէ՛ք ու  
անոր ըսէ՛ք . ասանկ կըսէ քու տղադ  
Յովսէփը . Եստուած իս բոլոր Եգիպտոսի  
տոսին մէջը տէր ըրաւ , թող չուշա  
նայ ինձի գայ , ու դուն Գետեմի երկ  
րին մէջ պիտի բնակիս , ու դուն ու  
քու տղաքդ ու թոռներդ ու առջառ  
ներդ ու ոչխարներդ ու ինչ որ ունիս  
նէ ինձի մօտ պիտի ըլլան :

Եւ հոն ես քեզ պիտի կերակրեմ ,  
ինչու որ տակաւին հինգ տարի սով  
պիտի ըլլայ . գուցէ դուն ու քու ըն  
տանիքդ ու բոլոր ինչ որ ունիս նէ  
աղքատութիւն պիտի քաշեն :

Ու ասանկ ձեր աչքը ու իմ եղբօրս  
Բենիամինին աչքը կըտեսնայ , որ ան  
իմ բերանս է , որ ձեզի հետ կըխօսի .  
և բոլոր Եգիպտոսի մէջ ունեցած  
փառքս , ու բոլոր ինչ որ տեսաք նէ  
հօրս պատմեցէ՛ք . ու շուտ ըրէ՛ք գա  
ցէ՛ք և իմ հայրս հոս բերէ՛ք : Եւ  
Յովսէփ Բենիամինին վիզին վրայ ին  
կաւ ու լացաւ . ու Բենիամինն ալ ա

նոր վրայ ինկաւ ու լացաւ . նաև բոլոր իր եղբայրները սլադաւ ու անոնց վրայ լացաւ , ու անկէ ետև իր եղբայրները իրեն հետ խօսեցան :

Աս ի՞նչ օգտակար ու աղդու օրինակ մըն է , իմ սիրելի զաւկընեկա . Աստուած անիկա ձեր վարժութեանը համար Աստուածաշունչին մէջը դրաւ : Արդարև դուք անկէ շատ օգուտ կրնաք քաղել : Աղէկ միտք դրէք Հոմսէփին վարքին . վասն զի արժանի է որ դուք անոր վարքին նմանիք : Իր եղբայրները իր առջին կայնեցան , որոնք որ շատ վնասներ ու գէշ բաներ ըրեր էին իրեն . վերջապէս գիտցան որ ան Ազիպտոսին հօր կառավարը իրենց եղբայրն է եղեր . որն որ այնչափ դառնաբար ու անողորմաբար ատեր էին : Արդեօք իրենց ըրած ան մեծ յանցանքը ի՞նչպէս առջևնին եկաւ . ի՞նչպէս անարդ ու ամօթով եղած պիտի ըլլան անոր առջին , ու արդեօք ինչպէս արդարութեամբ կըխորհէին

որ անոր սաստիկ յանդիմանութեանը արժանի էին : Արեւի է որ անոնք յանդիմանվելու յոյս ունէին , իբր իրենց մէկ թէթե պատիժ մը թէ և ուրիշ պատիժ մալ ընելու չըլար . որն որ արժան էր իրենց ըրած չարութեանը փոխարէն :

Արդեօք անոնց սիրտը որչափ զարմանքով լեցուած պիտի ըլար . երբոր կըտեսնային թէ՛ բոլոր ասոնց տեղը՝ իրենց վնասեալ եղբայրը իրենց մարդասիրութիւն ընելու կաշխատէր , ու ամենեւին անոնք չէր մեղադրեր . և միշտ կաշխատէր որ անոնց ըրած չարութեան խորհուրդներուն յիշատակութիւնը Աստուծոյ ամենողորմ նախախնամութեանը զարձրնէ , որ նոյն նախախնամութեամբը Աստուած ինքը տիրապետէր էր Յովսէփին՝ իրենց սէր իրենց հօրը՝ ու անոնց ընտանեացը աղէկութեանը համար :

Արեւի է Յովսէփ աս մասին չափէն էվել քաղցը էր թէպէտ ինքը

գիտէր , որ ուրիշ առաւել յարմար ժամանակ մը պիտի ըլլայ , որ անոնք բոլոր ըրածներնուն վրայ պիտի մըտմըտան : Ինքը կուզէր որ անոնք գիտնան , թէ ինչպէս ազատաբար ու բոլորովին անոնց յանցանքին թողութիւն ըրած է : Աւ թէ որ անանկ մէկ բան մը ըլլար որ անոնք խորին ապաշխարութեան պիտի առաջնորդ էր իրենց ըրած յանցանքին համար , անշուշտ ասանկ մէկ եղբօր մը բարի ու ազնիւ վարք մը պատճառ պիտի ըլլար , որն որ այնչափ անողորմաբար վնասեր էին :

Արդեօք ձեզ վնասողներուն վրայ ինչ զգացում ունիք ու անոնց հետ ինչպէս կրվարվիք : Արյուսամ թէ մէկն ալ ձեզի մէկ վնաս մը ըրած չէ , ան վնասին պէս որ Հսվսէփին եղբայրները իրենց եղբօրը ըրին :

Ինքը ամենեւին վրէժխնդրութիւն ընելու միտք չունէր , ու չէր ալ ուզէր որ անոնց մէկ վնաս մը ընէ , ու

րոնք զինքը այնչափ վնասեր էին . ա-  
սոր ներհակը կուզէր որ որչափ կարօ-  
ղութիւն ունէր նէ անոնց աղէկութիւն  
ընէ՝ ըրած չարութիւններնուն փոխա-  
րէն : Ասե նայեցէք թէ ինչ մարդա-  
սէր՝ աղնիւ՝ ու բարի կերպով ան իր  
ղգացումները անոնց ցուցուց : Հոյսէփ  
անոնց ըրած չարութեանը ու անգը-  
թութեանը վրայօք ամենեւին մէկ խօսք  
մը չըրաւ , ու չուրախացաւ ալ որ ա-  
նոնք իր իշխանութեանը տակը ինկան ,  
ու անոնց յանցանքին ալ թողութիւն  
տալը իրեն մէկ պարծանք մը չի սե-  
պեց , ու նաև մէկ յանդիմանութիւն  
մը կամ նախատինք մը ու կամ խօսք  
մը չըրաւ որ իրենց պզտիկութիւնը  
ու անարդութիւնը իրենց հասկըցունէ :

Արդեօք դուք ալ ձեզ վնասողնե-  
րուն վրայ ասանկ զգացում ունեցա՞ք  
մի . կամ անոր ըրածին պէս ըրի՞ք մի .  
արդեօք չե՞ք մի խօրհիր՝ ու արժանի  
չէ՞ք մի սեպեր որ դուք Հոյսէփին ու-  
նեցած վարքին նմանիք :

Իրաւցընէ արժանի է նմանելու .  
 բայց թէ որ ձեզ վնասողներուն վրայ  
 Յովսէփին պէս չզգաք՝ ու անոր ըրա-  
 ծին պէս չընէք, ան ժամանակը դուք  
 անոր անիրաւ եղբայրներուն պէս եղած  
 կըլլաք . ու նոյն վրէժխնդրութեան  
 չար կիրքը ձեր սրտին մէջը առաւել  
 պիտի աճի :

Ուրեմն դուք աս բանին համար Ն.Ս.  
 տուծոյ առջին ճշմարիտ ապաշխու-  
 թեան կարօտ էք . ու ասկէ կերևայ  
 որ ձեր սիրտը չար է, ինչու որ դուք  
 Յովսէփին ու Վ. Բիստոսի հոգին չու-  
 նիք :

Քրիստոս իր թշնամիներուն յան-  
 ցանքը ներեց . ան չար ու անողորմ  
 մարդիկներուն անգամ՝ որոնք զինքը  
 խաչին վրայ դամեցին . ու ինքը իր  
 մեռնելու ըստէներուն մէջ անոնց հա-  
 մար աղօթք ըրաւ, որ Ն.Ս. տուած ալ  
 անոնց թողութիւն կուտար : Ու ինքը  
 մեղի ըսաւ որ, թէ որ մեր թշնամինե-  
 րուն՝ ու ինչ կերպով որ ըլլայ մեղի

գէշութիւն ընողներուն թողութիւն չի  
տանք , ու նաև անոնց համար աղօթք  
չընենք , ու չարութեան փոխարէն ա-  
ղէկութիւն չընենք նէ՛ Նստուած ալ  
մեզի թողութիւն չի պիտի տայ . հասա-  
լի ներկայութենէն յաւիտեանս մեզ  
պիտի վաւերէ :

Բոլոր աս բաներուն վրայ խորհե-  
ցէ՛ք . թէ որ ասանկ է նէ մտմբտալով  
դուք ձեզի հարցուցէ՛ք թէ արդեօք  
հիմակական եղած վիճակներնուդ չի  
պիտի՞ մի տարբերիք . ու ձեր ներսի  
հոգին չի պիտի՞ մի նորոզվի . ու Նս-  
տուծոյ հոգիովը չի պիտի՞ մի սրբըվի  
երկինքի մէջ իր ներկայութիւնը ու  
շնորհքը վայելլու համար ունեցած  
յոյսերնուդ առաջ :

Վ Լ ՈՒ Խ Խ Ե Ի Վ Ի :

Փարսաւոնին ու անոր ընտանիքին սարս-  
 Խո-լի-նը , Յովնէֆին եղբայրներսն Լագիդ-  
 րոս գալուն ձեռայ : Փարսաւոն Յովնէֆին ըսե-  
 լէ՝ որ իր հայրը ու Բուրը իր ընտանիքը հրա-  
 -նէրէրէ Լագիդրոս գալու : Յովնէֆ իր եղ-  
 Բայրները իրենց ճամբուն Տեղ պէտք է դաժ  
 Բաներով պարտաստելը : Յովնէֆին որ ամ  
 Խրատը զարովելուն ժամանակը : Յովնէֆին  
 ու անոր եղբայրներսն Տեղէ եղաժ Խալա-  
 զն-լի-նը :

Շատ ժամանակ անցած չէր որ Լ-  
 զիպտոսի Թագաւորը ու բոլոր ա-  
 նոր ընտանիքը ան եղաժ զարմանալի  
 բաներուն վրայօքը լսեր էին , որ ան  
 ցորեն ծախու աւնելու համար եկող  
 մարդիկները Յովսէֆին եղբայրներն  
 էին . ու իր սիրելի հայրը տակաւին ողջ  
 էր :

Անոնք բոլորը՝ Փարսաւոն ու իր  
 քովի եղաժ մարդիկները շատ ուրա-  
 խացան աս բանը լսելովնին . ու Փա-  
 րաւոն՝ Յովսէֆին վրայ ունեցած իր



Հաստատուն անճեական բարեկամութիւնը , ու Յակոբին և բոլոր անոր ընտանիքին վրայ զգացած խորին մարդասիրութիւնը՝ անոնց երջանկութեանը համար ցուցնել ուղեւով , Յովսէփէն խնդրեց որ աս բարեսէր հրաւերը իր եղբայրներուն տայ :

Փարաւոն ըսաւ՝ որ ըսէ քու եղբայրներուդ որ աս բանը ընեն , թող իրենց անասունները բուցնեն ու Վանանու երկիրը երթան , ու իրենց հայրը և իրենց ընտանիքները առնեն ու ինձի բերեն , ու Ազխատոսի երկիրին բարիքը ես անոնց պիտի տամ . ու անոնք ալ երկրին պարարտութիւնը պիտի ուտեն :

Ազխատոսէն կառքեր թող առնեն իրենց տղոցը ու կնիկներուն համար , և իրենց հայրը առնեն հոս բերեն . նաև իրենց բաներուն՝ այսինքն կարասիքներուն , ու զործիքներուն , և անոնց նման բոլոր ունեցածներնուն թող չի նային :

Յովսէփին եղբայրները Վորաւոնին մարդասիրութեանը շատ ուրախացան, ու ըսածին պէս պատրաստեցին ինչպէս որ Վարաւոն հրամար էր նէ: Յովսէփ անոնց կառքեր, ու նակիրենց ճամբուն համար շատ ուտելիք տրւաւ. ասոնց բոլորէն ՚ի զատ Յովսէփ անոնց հանդերձ ալ տրւաւ: Ընժամանակը սովորութիւն էր հարուստ մարդոցը որ հանդերձ կուտային անոնց որոնց որ մասնաւոր յարգութիւն մը ու բարեկամութիւն մը ցուցրնել կողէին: Սովորաբար անոնք զանազան տեսակ մեծութեամբ շատ հանդերձներ կը պահէին, որ երբոր ասանկ ընժաներ ընելու ըլլային, իսկոյն առանց յասպաղանաց կամ դժուարութեան կուտային: Յովսէփ աս կերպով ընելուն միտքը ան էր, որ Ազիպտացիները տնտեսան թէ ինքը ինչ աստիճան յարգութեամբ կուղէր իր եղբայրներուն հետ վարվիլ, ու ինչ զօրաւոր սէր ունէր անոնց վրայ:

Յովսէփ անոնց ամէն մէկուն շատ  
 լաթեր տրւաւ, սակայն Վենիամինին  
 իրեք հարիւր կտոր ոսկի անոնց տրվա-  
 ծէն հինգ անգամ էվել տրւաւ : Ասե-  
 իր եղբայրներուն հետ իր ծեր հօրը  
 ընծայ խրկեց . տասը էշ լեցուն Ա-  
 դիստոսի ազնիւ բաներէն, ու ուրիշ  
 տասը էշ ալ լեցուն ցորեն հաց ու  
 ընկուղ որ իր հայրը Վանանէն ելած  
 ու Ադիստոս եկած ատենը ճամբուն  
 մէջը զործածէ : Ա երջապէս բոլոր  
 պատրաստութիւնները լմնալէն ետե-  
 Յակորին տղաքները իրենց եղբօրը  
 մնաս բարով ըսին, ու ճամբայ ելան  
 Վերբոն երթալու :

Յովսէփին տրւած խրատը աս էր՝  
 որ զատվելնուն ժամանակը անոնց տը-  
 լաւ, որ իրենց շատ հարկաւոր էր .  
 նայեցէք որ ճամբուն մէջը մէկզմէկու  
 հետ կռիւ չընէք :

Յովսէփ կըխորհէր որ զուցէ ա-  
 սանկ բան մը պիտի ընէին, կարելի  
 է որ մէկզմէկու քով յանցանք պիտի

գանային , գուցէ մէկ քանին միւսնե-  
 րուն ամբաստանութիւն պիտի ընէին  
 ըսելով թէ , առաջ դուք էիք որ աս  
 բանը մեզի առաջագրեցիք , իր դառ-  
 նացուցիչ երազներուն ոխը առնելու  
 համար . գուցէ Առբէն ու Յուդա  
 պիտի ջանային ինքըզինքնին ան յան-  
 ցանքէն սրբացընելու , տաստիկ նա-  
 խատիները միւսներուն վրայ պիտի  
 ձգէին : Արեւի է Ռենիամինին պիտի  
 նախանձէին որ Յովսէփ անիկա այն  
 գերագոյն յարգութեամբ պատուեց .  
 ու ինքը անանկ մէկ սլարզև մը ստա-  
 ցաւ որ իրենց ամէն մէկին կամ թէ  
 բոլորովին ունեցածէն շատ ազնիւ էր :  
 Գուցէ անոր հետ մարդասիրութեամբ  
 վարվելու չէին . ու ասանկ իրենց հօ-  
 րը նեղութիւն տալու ճամբայ պիտի  
 պատրաստէին տուն հասած ժամանակ-  
 նին :

Գուցէ միայն պատահած բանին  
 համար չի պիտի կուվէին , հասլա ետ-  
 կի ըլլալու բաներուն վրայ ալ , թէ

ինչպէս իրենց ստացուածքը Ազիպտոս պիտի տանին . ու ինչպէս ամէն մէկը իր ունեցածը մանրամասնաբար պիտի զատէ :

Յովսէփ անոնց բնաւորութիւնը զիտէր որ անոնք ասանկ մէկ զգուշութեան խօսքի մը կարօտ էին . ու կը խորհէր որ նոյն մասնաւոր վիճակին տակը զրովելովնին հաւանական է որ նոյն խօսքը անոնց պիտի ազդէր , ու օգուտ ընէր : Մեր Փրկիչ Յիսուս Վրիստոսը ըսաւ . «Արանի խաղաղութիւն ընողներուն , ինչու որ անոնք Մտուծոյ զաւկընէրը պիտի կանչու վին» :

Արեմն իմ սիրելի զաւկընէրս Յովսէփին օրինակին նմանեցէք . ամէն մէկդ խաղաղութիւն ընող եղիք . ամէն ժամանակ ձեր եղբայրներուն ու քուրերուն ու ձեր ընկերներուն հետ խաղաղութեամբ վարվեցէ՛ք . որչափ որ կրնաք նէ հակառակութիւն ու կռիւ ընելէն ետ կեցիք , ամէնքդ մէկըմէկ

սիրելու, ու իրարու աղէկութիւն ընկելու առաջնորդեցէք :

### ԿՎՈՒԽՈՒԽԵ՛՛

Յախճին պապը Վրանան հասնելին, իրենց հօրը՝ Յովսէփը ողջ է ըսելին. Յախճին ուրախութիւնը. Անոնց բուրբին ճակատայ էլլալը և գիւրգուտ էրբալը : Անոնց երգումն զհօրին թով նստելին : Այն օգոստոսի տարի իր ըլլալը. ու տնոր պատճառը : Ապա ծոյ խոստումը Յախճին : Անոնց և գիւրգուտ հասնելը :

Սրկին Յակոբին զաւկընէրը ճամբայ ելան Վրանան երթալու : Ինչ զարմանալի նոր նոր լուրեր ունէին իրենց հօրը ու աղգականներուն տալու. սակայն ինչ ամօթով՝ ու ուրախութեամբ խառնուած զգացումներով Յովսէփին յաջողութեան պատմութիւնը պիտի ընէին. որ նոյն ժամանակը իրենց ըրած անօրէնութիւնը ու ստութիւնը պիտի յայտնըվէր :

Սերջապէս Վերբրոն հատան .  
բայց Յակոբին ու անոր ընտանիքին  
կողմանէ շատ կրցանկային գիտնալու  
թէ արդեօք ետկի երթալնուն վախ-  
ճանք ինչ եղաւ . ու տեսնան թէ արդ-  
եօք Սիմօնը ազատուած էր մի , ու  
Բենիամինն ալ անվնաս ետ դարձեր  
է՞ր մի :

Անոնք տակաւին Յովսէփին ողջ  
ըլլալը , ու իրեն բոլոր Ազխատոսի  
վրայ կառավար ըլլալը շուտով իրենց  
հօրը իմացուցին : Բ՛ս՝ առաջին անգա-  
մին շատ անյոյս ու նաև զարմանալի  
բան մը եկաւ Յակոբին , որ անոնց խօս-  
քը ճշմարիտ սեպէ . չի հաւտաց կամ  
չէր կրնար հաւտալ . որ իր տղան մեռ-  
նելէն ետև դառնայ . ու իր սիրտը կը-  
մարմըրէր : Բայց երբոր յատկաբար  
բոլոր անոր պարագաներուն վրայ ա-  
ռաւել լսեց , ու ան խօսքը՝ որ Յով-  
սէփ խրկեր էր , ու երբոր ան կառքե-  
րը տեսաւ որ ինքը ու բոլոր իր ընտա-  
նիքը Ազխատոս պիտի տանէին , ան

ժամանակը իր զգացումները փոխվե-  
ցան, տարակուսանքին ու յուսահա-  
տութեան տեղը ուրախութիւն եկաւ .  
ու ինքը Յակոբ Ահապետ ըսաւ :  
Շատ է աս ինձի, որ Յովսէփ իմ տը-  
ղաս տակաւին ողջ է եղեր . մեռնելէս  
առաջ ես պիտի երթամ անիկա տես-  
նամ :

Ինչպէս մէկ հօր մը սիրոյն զօրու-  
թիւնը աս մէկ քանի ազգու խօսքե-  
րովը կ'իմացվի, որ ինքը ամենեւին  
Յովսէփին զօրութեանը, ու աստի-  
ճանին ու անոր մեծ հարստութեանը  
և ունեցած փառքին չինայեցաւ .  
հապա միայն աս բանին վրայ խորհե-  
ցաւ թէ Յովսէփ տակաւին ողջ է ե-  
ղեր . ու ինքը իր սիրելի Աաքէլին  
տղան, ու իր գալու ծերութեանը տա-  
րիներուն մտիթարութիւնը կրկին  
պիտի տեսնայ :

Շուտով մէկ քանի պատրաստու-  
թիւններ ըրին . ու Յակոբ և իր մեծ  
ընտանիքը ճամբայ ելան Ագիպտոս



երթալու : Իրենց ճամբուն մէջը երդման ջրհոր ըսված տեղը եկան՝ որն որ բոլորովին Վանանու հարաւային արեւմտեան կողմը կիյնայ, ու Վերբոնէն ալ քսան մղոնի չափ հեռու է :

Ասան տեղն էր . որ Վերահամ Յակոբին հօրը հայրը՝ առաջ հոս եկեր էր, ու քիչ մը ժամանակ նստեր էր . և հոս խումբ մը ծառեր տնկեր էր, սրոնց ստուերին տակը իր անձը Վստուծոյ պաշտօնը կատարելու կուտար . հոս Վերահամ իր աղօթքները՝ յաւիտեան կենդանի Վստուծոյն կը մատուցանէր :

Հոս տեղն էր որ Վստուած Խահակին երեցաւ, ու ըսաւ . Ասեմ քու հօրդ՝ Վերահամին Վստուածը . մի վախնար ես քեզի հետ եմ ու քեզ պիտի օրհնեմ, ու քու զաւկրներդ պիտի շատցնեմ իմ Վերահամ ծառայիս համար : Ասկէ ետեւ նոյն անցքը յիշելու համար՝ Խահակ մէկ սեղան

մը շինեց , ու իր ողջակէզները ու աղօթքը Աստուծոյ բնծայեց :

Աս տեղս նստած ժամանակնին էր , որ Յակոբ իր մօրը Աեբեկային աւաջնորդութեամբը պատրողական ու չար կերպով մը նոյն օրհնութիւնը ինքը ստացաւ , որն որ Վասակ միտք ունէր Վսաւին տալու :

Նաև Արդման ջրհորէն էր , որ Յակոբ իր հօրը հրամանաւը Ասորոց միջազեար դնաց , ու ան տեղ Աաբեկին հետ կարգըվեցաւ . ուր տեղ որ Յովսէփ ծնաւ : Արբոր ան երեւելի նահապետը աս օգտակար տեղը հասաւ , անշուշտ ան բոլոր բաներուն յիշողութիւնը իր մտքին խորին մէկ ազդեցութիւն մը տրւած պիտի ըլլայ : Անտարակոյս Յակոբ ամչնալով ու ճշմարիտ զղջումով ետին նայած պիտի ըլլայ ան չար խաբէութեանը համար . որ իր հօրը ըրեր էր , ու ջերմեռանդ շնորհակալութեամբ Աստուծոյ շնորհակալ եղած պիտի ըլլ-

լայ , բոլոր իրեն եղած բարերարու-  
 թիւններուն համար , որոնց որ ինքը  
 արժանի չէր : Յակոբ Արղման ջրհորը  
 ձգել էլլայէն ետքը՝ աս բարերարու-  
 թիւնները որչափ տարբեր կերպով  
 տեսաւ , ու հիմայ ալ Յովսէփին ողջ  
 ըլլալը՝ որուն համար ինքը ճամբայ ե-  
 լած էր տեսնալու , բոլորը անցուց :  
 Առաւել ուրիշ ինչ յարմար տեղ  
 մը կրնար Յակոբ ան Աստուծոյ իրեն  
 ըրած մեծամեծ մարդասիրութիւննե-  
 րը խոստովանէր , ու բոլորով սրտիւ  
 զոհութիւն ու շնորհակալութիւն ըներ  
 անոր : Յակոբ ասանկ ըրաւ . ինչու որ  
 Աստուածաշունչին մէջը գրված է ,  
 թէ ինքը իր Իսահակ հօրը Աստուծոյ  
 զոհ ըրեր էր . նոյն Աստուծոյն՝ որն որ  
 խոստացեր էր Իսահակը օրհնելու , ու  
 անոր անթիւ զաւկրներ տալու , ինչ-  
 պէս որ արդէն սկսված էր նոյն ընտա-  
 նիքին մէջի զաւկրները բազմանալու՝  
 որուն գլուխը Յակոբ էր : Աս խոստու-  
 մը հիմայ Աստուած կրկին Յակոբին

դըռուցելու վրայ էր : Կնչու որ Մատ-  
 ուած ինքը Յակոբին հետ գիշերը ե-  
 րազին մէջը խօսեցաւ ու ըսաւ . Յա-  
 կոբ Յակոբ : Կն ալ ըսաւ հոս եմ .  
 ին՛քն ալ ըսաւ , ես եմ Մատուած . քու  
 հօրդ Մատուածը , մի՛ վախնար Ազիպ-  
 տոս երթալու . ինչու որ ես քեզ մէկ  
 մեծ ազգ մը պիտի ընեմ . ես քեզի  
 հետ Ազիպտոս պիտի երթամ . ու ան-  
 շուշտ քեզ ետ պիտի դարձնեմ . ու  
 Յովսէփ իր ձեռքը քու աջվընէրուդ  
 վրայ պիտի դնէ , այսինքն քու մեռնե-  
 լու ժամանակդ աջվընէրդ պիտի գոցէ :

Մատուծոյ այս խոստումը ետքը  
 առատաբար լեցուեցաւ . Յակոբին  
 զաւկընէրը մէկ մեծ ազգ մը եղան՝ որ  
 ետքը Քանան դարձան . ու աս մտքով  
 կրնայ ըսիլ որ Յակոբ ինքը կրկին  
 իր զաւկընէրովը ետ դարձաւ :

Կաւ Յովսէփին իբրև մէկ շնորք  
 մը եղաւ , որ իր մեռնելու հօրը  
 աջվընէրը գոցէ . որ աս բանը Յակոբ  
 մեծ ուրախութեամբ՝ իբր սիրոյ ու մե-

Ճարանայ նշան մը ղգացած պիտի  
ըլլայ :

Երդման ջրհորէն ճամբայ ելան Ա,  
զիպտոս երթալու, ու Յակոբին տը  
ղաքները իրենց հայրը և իրենց զաւ  
կրները ու իրենց կնիկները Քարսու  
նին խրկած կառքերուն մէջ դրած ա  
նանկ տարին, ու իրենց ոչխարները,  
ու կարասիքները՝ որ Վանանու մէջ  
ստացեր էին, առին ու Ազիպտոս տա  
րին. Յակոբ ու բոլոր իր զաւկրները  
մէկ տեղ վաթսունը վեց հոգի էին :

ԳԼՈՒԽ ԻԳ:

Յովնէի իր հայրը Գեօրգի Տը Քարեօնը :  
 Իր եղբայրներուն հինգը Փարսոսին առջևը  
 հանելը , ու անոր՝ Գեօրգի Տը Քարեօնը հը-  
 րաման ասլը : Յովնէի իր հայրը Փարսոս-  
 նին առջևը հանելը : Յովնէին ինչ ըսելը :  
 Անանքին խորճութիւնը : Սուհին ինչ ըստ-  
 ւը : Արդեօ՞ւս խորհոցողը Տեօնէն աստ-  
 րաստը ամէ՞ն Տ :

**Յովսէփի** իր հօրը անանկ խօսք խըր-  
 կած էր , որ երբոր ինքը իր ընտա-  
 նիքովը Ազխատոս գալու ըլլար՝ Ա-  
 զխատոսին ան մասին մէջը պիտի բը-  
 նակէր , որ Գեօրգի կովէր . աս տեղս  
 Ազխատոսին արեւելեան կողմը դէպ 'ի  
 կարմիր ծովուն ու Վանանու սահ-  
 մաններուն վրայ կիյնար :

Յակոբ Յուդան խրկեց , որ իր հօ-  
 րը մօտենալը Յովսէփին զուրցէ , ու  
 Յովսէփի իր կառքը պատրաստեց , ու  
 Գեօրգի գնաց իր հայրը բարեւելու , և  
 ինքը անոր առջևը ելաւ , ու վիղը ին-



Յակոբ Նաճապետին՝ իր երկար ատեն  
կորսընցուցած որդին ղխմաւորելը :





կաւ , և քիչ մը ժամանակ վիզին վը-  
րայ լացաւ : Արդեօք անոնց ամէն մէ-  
կուն զգացումը ինչպէս եղած պիտի  
ըլայ աս վայրկեանին մէջը երբօր է-  
րար կրկին տեսան նէ , որ շատ ժա-  
մանակ իրարմէ զատված էին : Արչափ  
փորձութիւններու մէջէ անցեր էին .  
ինչ փոփոխութիւններ եկեր էր անոնց  
վրայ :

Ժամանակը իր հօրը մազերը ճեր-  
մըկցուցեր էր . ծերութիւնը ու տրտ-  
մութիւնը իր երեսները փոսը ինջե-  
ցուցեր էին , և ուսերը տնկըվեր էր :  
Արբօր անոնք վերջին անգամը իրար-  
մէ զատվեր էին նէ , Յովսէփ տասնը-  
եօթը տարեկան պատանի մըն էր՝ որ  
Սիւքէմին ձորը զացեր էր իր եղբայր-  
ները փնտրուելու . բայց հիմայ մարդ-  
կութեան սահմանին հասեր էր . հայր՝  
ու Ազիպտոսին կառավար եղեր էր :

Յակոբ Յովսէփին ըսաւ ասկէ ետե-  
թող ես մեռնիմ , ինչու որ քու երեսդ  
տեսայ , որ տակաւին ողջ ես :

Ուրիշ առաւել բան չէր կրնար  
 զուրցել . իր սրտին՝ վերջին հաճու-  
 թիւնը լեցուած էր . ու ինքը պատ-  
 րաստ էր խաղաղութեամբ երկրէս  
 ելլելու , որչափ շուտով որ Վստուած  
 յարմար դատեր ինքը կանչելու : Վն  
 ժամանակը Յովսէփ անոնց ըսաւ՝ ես  
 փարաւոնին պիտի երթամ . ու ձեր  
 դալը անոր խմայնեմ . ու ձեր երեսը  
 անոր դիտցնեմ , որ դուք հովիւ էք .  
 ու ձեր արջառները ու ոչխարները  
 բոլոր հետերնիդ էք բերած : Ասե-  
 ՛ Յովսէփ անոնց զըուցեց , որ երբոր  
 փարաւոն անոնց հարցունելու ըլլայ  
 աս բանը ըսեն անոր , որ ինքը իրենց  
 հրաման տայ Ատեմի մէջ բնակելու .  
 վասն զի անոնք անանկ մէկ երկրի մը  
 մէջ պիտի ըլլային , ու իբրև իրենցը  
 եղած պիտի ըլլար . ու Ազիպտացի-  
 ներէն պիտի զատվէին . ու Յովսէփ  
 գիտեր որ աս բանը անոնց շատ մխի-  
 թարութիւն ու յաջողութիւն պիտի  
 տար :

Անոնք Ազխարացիներուն ատել-  
լութենէն ու ներլուծիւնէն ազատ պի-  
տի ըլլային . որոնք որ առաջմանէ զը-  
րուցեցինք թէ հովիւլուծեան գործը  
շատ կանարգէին : Յովսէփ անոնց գա-  
լը փարաւոնին զրուցելէն ետե իր  
եղբայրներէն հինկը առաւ , ու թա-  
գաւորին առջևը հանեց :

Փարաւոն անոնց արհեստը հար-  
ցուց . ու անոնք ալ պատասխան տը-  
ւին թէ , քու ծառաներդ բոլորն ալ  
հովիւ են , մենք ալ ու մեր հայրերն  
ալ :

Նաև փարաւոնին ըսին , թէ մենք  
աս երկիրը բնակելու համար եկեր  
ենք . ինչու որ՝ քու ծառաներդ սը-  
նունդ չունին իրենց ոչխարներուն ու  
այծերուն և արջառներուն համար .  
ու նաև Վանանու մէջ ալ սովը  
սաստկացաւ . անոր համար հիմայ կա-  
ղաչենք հրամանոցդ՝ որ հրաման տաս  
մեզի Վեսեմին մէջ բնակելու : Թա-  
գաւորը անոնց խնդրուածքը շնորհեց ,

ու ըսաւ Յովսէփին, թէ որ իր եղբայր-  
 ներէն յարմար մարդիկներ կայ նէ,  
 ճարտար ու հմուտ իրենց արհեստին՝  
 իր արջառներուն վրայ վերակացու  
 ընէ: Ասև Յովսէփ իր հայրը Յակոբ  
 բերաւ ու փարաւոնին առջևը հանեց.  
 ու Յակոբ փարաւոնը օրհնեց: Փա-  
 րաւոն հարցուց Յակոբին թէ քանի  
 տարեկան ես. ան ալ պատասխան  
 տրւաւ «Իմ պանդխտութեան տարի-  
 ներուս օրերը հարիւր երեսուն տարի  
 են, քիչ ու դժուարին եղաւ իմ  
 կեանքիս օրերը, ու իմ հայրերուս  
 կեանքին տարիներուն օրերուն չսփ-  
 չի հասաւ. անոնց պանդխտութեան  
 օրերուն պէս»:

Պանդուխտ ան մարդուն կամի՞ որ  
 մէկ յատկացեալ տուն մը չունենար,  
 ու մէկ երկար ճամբու մը մէջ կըլլայ  
 տեղէ տեղ ճամբորդութիւն ընելով,  
 որ իր միտքը դրած տեղին շատ կը-  
 ցանկայ հասնելու: Այս բոլոր ճամբոր-  
 դութեանը կըսվի պանդխտութիւն:

Իրաւունք ունէր : Յակոբ ինքըզինքին  
 պանդուխտ մը ըսելու , ու իր կեանքին  
 ալ պանդխտութիւն մը : Ինքը մէկ  
 տեղէն մէկալ տեղը կերթար զանա-  
 զան վիճակներու մէջէ անցնելով . ու  
 հիմայ իր ծերութեան հասակին մէջը  
 ուրիշ ճամբորդութիւն մալ կրնէր ,  
 ուրիշ բնակարան մը գտնալու հա-  
 մար : Թէպէտ ինքը կըհաւատար որ  
 երկինքին մէջը ուրիշ աւաւել աղէկ  
 տուն մը կար բոլոր Աստուծոյ ժողո-  
 վուրդոցը համար . ու իր աչվները  
 միշտ հոն կրնայէր . ինչու որ՝ ինքը  
 ասանկ ասպաւինած էր , որ բոլոր իր  
 Թափառականութիւնները ու փորձու-  
 թիւնները՝ անտեղ պիտի անցնին , ու  
 հոն ինքը յաւիտեան հանգստութիւն  
 պիտի գտնայ : Ինքը չէր յուսար որ  
 իր նախնեացը ասրած տարիներուն  
 չափ պիտի ասրի , ու Թէպէտ ինքը  
 հարիւր երսուն տարի ասրեր էր ,  
 բայց որչափ շուտով անցան անոնք ,  
 ու որչափ քիչ երեցան անվախճան

յաւիտե՛նականութեան հետ բաղա-  
տելով :

Աղէկ ըսեր էր Յակոբ, որ իր տա-  
րիները գէշ տարիներ եղան . ինչու  
որ Աստուած իր իմաստուն ու սուրբ  
Նախախնամութեամբը յարմար դա-  
տեց, որ իր ծառան Յակոբը շատ տե-  
սակ նեղութեամբ ու տրամութեամբ  
փորձէ :

Արդեօք դուք ալ Յակոբին պէս  
աշխարհքիս մէջը պանդուխտ ըլլալ-  
նուղ վրայօք կըմտմտա՞ք մի : Ահ  
չէք գիտեր թէ արդեօք որչափ փոփո-  
խութիւններ ու փորձութիւններ ձեզի  
կըսպասենկոր : Աարելի է թէ ձեր սի-  
րելի ծնողքներնուղ ու բարեկամներ-  
նուղ պիտի զատուիք, ու ձեր ազնիւ  
տունը պիտի թողուք, ու շատ տեսակ  
նեղութիւններու ու տրամութիւննե-  
րու մէջէ պիտի անցնիք : Այն որ Յա-  
կոբին քաշած նեղութիւններէն շատ  
քիչ նեղութիւն քաշելու ըլլաք, ու  
շատ հանգստութեան և խաղաղութեան

օրեր անցունելու ըլլաք , միտքերն  
 նիդ բերէ՛ք , որ ձեր պանդխտութիւնը  
 շուտով պիտի անցնի : Ա՛յրջապէս  
 մահը պիտի գայ՝ ու որչափ շուտով  
 գալը չէք գիտեր :

Որչափ ձենէ շատ պղտիկները ար-  
 դէն իրենց պանդխտութիւնը լմընցու-  
 ցած են : Գացէք ձեր մօտերը եղած  
 գերեզմանատանը մէկը , ու գերեզման-  
 ներուն քարերը փորեցէք ու նայեցէ՛ք  
 թէ որչափ հողիներ թաղված են հոն .  
 որոնց պանդխտութեան օրերը ձերին  
 ներէն շատ եղած են :

Բայց ինչ պիտի ըլլար՝ թէ որ շատ  
 ապրելու ըլլայիք : Յակոբին պէս ան  
 ժամանակը պիտի ըսէիք . երբոր ձեր  
 անցեալ կեանքին վրոյ նայելու ըլլայ-  
 իք . իմ պանդխտութեան տարիներս  
 քիչ եղաւ . անոնք գոլորշի մը պէս  
 անցան դացին , որ քիչ մը ժամանակ  
 կերևայ ու անկէ ետե կաներևութա-  
 նայ :

Դուք ալ Յակոբին պէս դէպ ՚ի

յառաջ պիտի նայիք ան յաւիտենա-  
 կանութեանը՝ որն որ ամենեւին վախ-  
 ճան չունի : Յակոբին պէս պատրաս-  
 տրվելու էք ան յաւիտենականութեան  
 մէջը մտնալու . որ երբոր Յովսէփ  
 տեսաւ . կրկին յայտնեց իր մեռնելու  
 պատրաստութիւնը : Արդեօք դուք ալ  
 մեռնելու պատրաստ էք մի , մահը  
 մեծ ու ծանր բան է . մարդուն ձեռ-  
 վըները չեն շարժեր . շրթունքները  
 չեն խօսիր . աչվները չեն տեսներ ա-  
 կանչները չեն լսեր . թոքերն ալ շրն-  
 չառութիւն չեն ընէր , ու սիրտն ալ  
 չի բաշխէր . բոլոր մարմինը կը պաղի ,  
 փատ կը կտրի , ու անշարժ կը մնայ . և  
 շուտով գերեզմանը կը դրվի՝ հոն սպա-  
 սելու , մինչև որ դատաստանի կանչը  
 վաճ օրը մեռելիներէն յարութիւն առ-  
 նէ : Բայց աս մահուան մէկ պզտի  
 մասն է . Քրիստոնեայի մը ամենեւին  
 վախ դալու չէ . մահը անոր քաղցրիկ  
 բունի մը պէս պիտի երևայ . ու գե-  
 ըրեզմանը խաղաղ ու հանդարտ հան-



գըստանալու տեղ մը պիտի դայ՝ իր  
 տկար ու հոգնած մարմնոյն համար :  
 Մահը շատերուն ասանկ երևաց որոնք  
 կատարեալ խաղաղութեամբ և ու  
 բախութեամբ մեռան : Ա՛հ , երանի  
 թէ ձեզի ալ ասանկ երևար երբոր  
 մեռնելու ըլլայիք : Սակայն միայն  
 մարմնոյն ապականութիւնը՝ մահուան  
 մէկ պզտի մասն է : Մահը՝ հոգին  
 մարմինէն կըզատէ , ու յաւիտենակա  
 նութեան կառաջնորդէ : Երաւցընէ  
 աս է մեռնելուն ամենէն մեծ ու ծանր  
 մասը : Հոգինիդ՝ ու բոլոր ներսիդի  
 նիդ ինչ որ ունիք նէ որ կըխորհի  
 կըզգայ ու կըզործէ , և կարողութիւն  
 ունի զուարճանալու , ու նեղութիւն  
 կրելու , այսինքն՝ ձեր անմահ հոգին  
 ան յաւիտենական աշխարհը կել  
 թայ կամ յաւիտեան երջանիկ ըլլա  
 լու , ու կամ յաւիտեան թշուառ : Ա  
 նիկա հոն կերթայ՝ ան երկար դարերը  
 անցունելու . որոնք ամենեւին վախճան  
 չունին , Աստուծոյ ու Քրիստոսի բա

րեկամութեանը ու շնորհքներուն վայ-  
 ելչ ութեամբը , մաքուր ու սուրբ հո-  
 գիներուն ընկերութեամբը . որոնք  
 բոլորը Աստուած՝ ու մէկզմէկ կը սի-  
 րեն , և բոլոր էակներուն ամենիմաստ  
 ու ամենաբարի Վոյացուցչին երկբը-  
 պագութիւն ու ծառայութիւն ընելով ,  
 ու ան անհամար կերպերով ցուցված  
 իմաստութեանը ու բարութեանը  
 զմայլելով . և ուրախ ըլլալով , ուրի-  
 շին երջանկութիւնը ու աղէկութիւնը  
 տեսնալով , և անդադար սրբութեան  
 երջանկութեան ու զիտութեան մէջ ա-  
 ռաջ երթալով : Աստ [Թէ ան հոն կեր-  
 թայ՝ ասոնց բոլորը կորսընցունելու .  
 աս անխառն տեսարանէն յաւիտեանս  
 վըրնտովելու , ու ան անարգ և Թշուա-  
 ռական էակներուն մէջ տեղը բնակե-  
 լու . ան ամենազղուելի և մեղանջա-  
 կան բաները լսելով ու տեսնալով , և  
 ան չար ու անզոսնելի խղճմտանքին ա-  
 հը , դողը , զգալով , և սուգ ընելով՝  
 անզեղջ մնալուն ու մեռնելուն յիմա-

ընդթեանք վրայ, ու Վրիստոսի  
 վրայ հաւատք չունենալով: Արբոր ե-  
 տեւ նայելու ըլլայ ուրիշ բան չի պի-  
 տի գտնայ, բայց միայն վշտալի յի-  
 շատակութիւններ. երբոր չորս կողմը  
 նայելու ըլլայ՝ միսիթարութեան ու  
 օգնութեան նշոյլ մը չի պիտի տես-  
 նայ. երբոր առաջ նայելու ըլլայ՝ փո-  
 փոխութեան մը յոյս չի պիտի ըլլայ.  
 ու ասանկ իր ժամանակը տրտում ու  
 սոսկալի յուսահատութեամբ պիտի  
 անցընէ. գիտնալով թէ՛ բոլոր աս-  
 թշուառութիւնները պիտի շարունա-  
 կեն ու էվելնան առանց թեթեւութեան  
 ու վախճանի: Արդեօք մեռնելու  
 պատրաստամ՞ էք մի: Մեր Տէրը  
 Յիսուս Վրիստոսը ճշմարտապէս  
 կըսիրէ՞ք կոր մի, ու բոլորով սրտիւ-  
 անոր կըհաւտամք կոր մի:

ԳԼՈՒԽ ԻԿ :

Յակոբին ու իր ընտանիքին Գալուսի մեջ  
 բնակելը : Աստուծոյ ըրած մարդասիրութիւն  
 նը անոնց : Ան իսրայելացիներն վրայ ունեցած  
 Աստուծոյ Բարեբարութիւնը : Արդեօք իսր-  
 այելցի Աստուծոյ շնորհակալ է ե՞ :

**Յ**ակոբ Աստուծոյ օրհնութիւնը  
 փարաւոնին վրայ դալու համար  
 կրկին աղաչեց ու ետքը իրմէն դատ-  
 վեցաւ : Ասկէ ետեւ շուտով Յովսէփ  
 սկսեց աշխատիլ՝ որ իր հօրը , ու իր  
 եղբայրներուն , ու անոնց ընտանիքնե-  
 լուն՝ ան երկիրը ժառանգել տայ .  
 որն որ փարաւոն հրաման ըրեր էր ա-  
 նոնց տրվելու՝ իրենք բնակելու հա-  
 մար :

Արսովէր թէ աս շատ գեղեցիկ մէկ  
 երկիր մըն էր . ընտիր ու հաճելի  
 տեղ մը , ուր որ Յակոբ բոլոր իր  
 պանդխտութենէն ու փորձութիւննե-  
 րէն ետքը իր ծերութեան տարինե-  
 լուն մէջը՝ հոն երջանկաբար նստե-

ցաւ իր զաւկընէրովը , ու անոնց ըն-  
տանիքներովը : Յովսէփ ան ճշմարիտ  
հնազանդ տղան՝ ու սիրելի եղբայրը ,  
բոլոր ինչ որ պէտք էր նէ անոնց հա-  
մար՝ պատրաստեց . ան սովին տարի-  
ներուն մէջ իրենց օգնութեան ու  
դարմանին համար , ու անոր Ազիպտո-  
սի վրայ կառավար ըլլալը , ու իր պա-  
տիւը որով մարդիկները անիկա բռն-  
ներ էին , բաւական մէկ ապահովու-  
թիւն մըն էր իր հօրը ու իր եղբայր-  
ներուն որ իրենց հետ տեսութիւնը  
նորդները յարգութեամբ իրենց հետ  
կրկարվէին :

Երբոր Յակոբ ու իր շատկոր ըն-  
տանիքը աս կերպով նախախնամու-  
թեան պարգևները կրկայելէին , ու իր  
առատաբուղի ձեռքէն կրկերակրը  
վէին , արդեօք ինչպէս յայտնի զգա-  
ցած պիտի ըլլային ան Աստուծոյ ի-  
րենց կողմանէ ըրած զարմանալի միջ-  
նորդութիւնը . անանկ մէկ թշուառ  
սովի մը մէջէ անոնց բոլորը հանելը

ու ապահով ան երկիրը բերելը , ուր  
տեղ որ միայն սնունդ կը գտնուի ,  
չատ զարմանալի մէկ ազատութիւն մըն  
էր :

Նաև ասկէ 'ի զատ ան երկրին  
սլաշտպանութեանը տակն էին . ու իր  
չտեմարանին կերակուրէն կը կերակ-  
րուիէին , առանց կերածներնուն ստակ  
խնդրելու : Հոս Մտուծոյ մարդա-  
սիրութիւնը համարձակ կը յայտնուի  
որ ան թաղաւորին սլաշտպանութիւ-  
նը ու առատութիւնը մէկ տղի մը ու  
եղբօր մը ձեռքովը իրենց եղաւ :  
Ու նաև աս Մտուծոյ բարութիւնը  
կը ցուցնէր թէ ինքը ինչպէս երկայն-  
մտութեամբ ու համբերութեամբ լե-  
ցուն էր անոնց , որոնց անողորմ չա-  
րութիւնը ու ստութիւնը իր նախախ-  
նամութեամբը յաղթելով աս տղան  
ու եղբայրը Նդիպտոս խրկեր էր , որ  
ան անոնց սաստիկ պէտք եղած ժամա-  
նակը ելլէ կայնի իրենց փրկիչը ու  
բարեկամը ըլլայ :

Անշուշտ, հիմայ դուք պատրաստ էք ըսելու թէ Յակոբ ու իր ընտանիքը շատ երախտադիտութեան պատճառներ ունէին Մատուծոյ, ու պարտական էին աս շնորհակալութիւնը իրենց ցուցընելու՝ ինքը սիրելով, ու իր պատուիրանքներուն հնազանդելով :

Արդեօք Մատուած ձեզի համար ինչ ըրած է. արդեօք իրեն բոլոր բարութեանցը՝ ու ձեզի ըրած երկայնմբտութեանը ու համբերութեանը վրայօք կըխորհիք մի՞ : Ար ինքը ձեր ծնէլէն ՚ի վեր շատ աղէկութիւններ ըրած է անթիւ կերպերով, բայց դուք անոր դէմ շատ անգամ մեղք գործած էք :

Ինքը ձեզի աղէկ դժուշուութիւն ըրած է, ու ձեր պիտոյքը հողացած էր ձեր ծնողացը ու բարեկամներուն ձեռքովը ինչպէս որ Յակոբին ու իր ընտանիքին ուղածները Յովսէփին ձեռքովը հողաց :

Դուք սով չէք տեսած որ ձեզ նե-

դացրնէ ու վշտացունէ . դուք սլար-  
տականութիւն չունիք որ ձեր տունե-  
րը թողուք , ու ուրիշ երկիր երթաք  
կերակուր դոնալու համար :

Դուք հազարաւոր մտիթարութիւն-  
ներ , ողորմութիւններ , ու շնորհքներ  
ունիք . ու մինչև հիմայ առատաբար  
անոնք կը վայելէք : Արդեօք Աստուծոյ  
բոլոր ըրած բարերարութիւններուն  
շնորհակալ կը լլա՞ք մի . ու իր որդւոյն  
որ իր արունը խաչին վրայ թափեց ա-  
նոնց փրկութեանը համար՝ որոնք ու  
իրեն կը հաւատան :

Արդեօք աս երախտագիտութիւն-  
ները Աստուծոյ կը ցուցրնէ՞ք իր մի .  
ինքը սիրելով ու իրեն հնազանդե-  
լով , ու Յիսուս Քրիստոսի օրինակին  
նմանելով , ու ուրիշին աղէկութեանը  
ու երջանկութեանը համար ձեր կա-  
րողութեանը մէջի եղած ջանքը ընե-  
լով :

Ասոնք երեւելի հարցումներ են , ու  
պէտք է որ դուք անոնց վրայ մտմը



տաք , ու անոնց պատասխանը տաք :  
Ի՞նչպէս պատասխան պիտի տաք ա-  
նոնց :

Արդեօք պիտի ըսէ՞ք մի , որ մենք  
չենք գիտէր Աստուծոյ ու իր Արդւոյն  
շնորհակալ ըլլալը ինչ բան է . ու  
նաև չենք գիտէր թէ ինչպէս խնդրենք  
Աստուծոյ կամքը կատարելը . ու ու-  
րիշներուն աղէկութիւն ընելը , մանա-  
ւանդ անոնց հոգիներնուն :

Ինչպէս պատրաստ էք ըսելու թէ  
Յակոբ ու իր ընտանիքը որչափ գէշ  
ու աստերախտ պիտի ըլլային , թէ որ  
բոլոր Աստուծոյ գթութիւններուն շը-  
նորհակալ չըլլային . ու չաշխատէին  
ղինքը սիրելու ու իր պատուիրանքնե-  
րուն հնազանդելու : Բայց պիտի ը-  
սէի թէ ինչպէս ասանկ անարդ ու ա-  
նրդալ կրնային ըլլալ դուք ձեր վը-  
րայ խորհեցէք . թէ որ Յակոբ ու իր  
ընտանիքը Աստուծոյ շնորհակալու-  
թիւն չընէին որ ձեզի շատ գէշ ու ա-  
պերախտութիւն կերևայ . դուք ան

բանին վրայ մտմտացէք, որ Աստուած՝ ու իր որդին Յիսուս Վրիստոս ձեր զգացումներուն ու վարքերուն վրայ պիտի վճռեն. ան ժամանակը թէ որ դուք ապերախտ գտնուիլու ըլլաք. որչափ անարգ ու անզգայ որչափ երախտամոռաց ու գէշ պիտի երևաք անոր առջին :

Միայն աս պէտք է ձեզի ընել որ դուք ձեզ Աստուծոյ առջին խոնարհեցրնէք, ու աս ապերախտութենէն ու բոլոր ուրիշ մեղքերէն ետ կենաք :

Պարտիք բոլոր աս ձեր մեղքերը Աստուծոյ խոստովանիք ու անոր աղաչէք Վրիստոսի միջնորդութեամբ որ անոնց թողութիւն տայ ու Հոգին սուրբ խրկէ ձեր վրայ. որ մէկ զըղջացեալ ու շնորհակալու սրտով մը՝ ասկէ ետեւ զինքը բոլոր հոգիով սիրէք, ու իր կամքը կատարելու ետեւ իյնաք :

Թէ որ ասանկ ընելու ըլլաք՝ Աստուծոյ շնորհքը, Վրիստոսի բարե-

կամուժիւնք , ու շողոյն սրբոյ զօ-  
րուժիւնները կընդունիք , ու աս  
կեանքին մէջը ու յաւիտենական  
կեանքին մէջը կօրհնելիք :

### Գ Լ Ո Խ Խ Ի Բ :

Նգիւղաբնակիչներուն իրենց արժանիքը ին-  
չախորհ հասար (Յովակիմի ասուելիքն : Անոնց  
իրեն ինչախորհ ուղիւնն . ս ինչը պէնքննն ս-  
իրենց երկերը ասուելիքն : Յովակի մանց  
սերս ասուլ յանելու հասար : Մէկ հշարիւնա-  
որ օրէնք ին՝ Բուլը Բերտերուն հինգերորդ  
հարը լազաորիքն ըլլալուն : Գիտողութեան  
արժանի հարձհոնքն : Յովակիմի ձարիքն  
ձրայօք :

Սովը առաւել սաստկացաւ Նգիւղ-  
տոսին ու Վանանու մէջն ալ .  
Աստուածաշունչին մէջը կըկարդանք  
որ մարդիկները կըմարելին կամ թէ  
կըտկարանային ու սրտաթափ կըլլայ-  
ին սովին պատճառաւ :

Յովսէփ շարունակ Ազիպտոսի ու  
 Բանանու բնակիչներուն ցորեն կը  
 ծախէր, ու անոնց փոխարէն ստակը  
 կառնէր. մինչև որ զբեթէ բոլորը  
 իրենց ստակը հատուցածի պէս էին :  
 Եւ ստակները Յովսէփ կառնէր ու  
 փարաւոնին տունը կը պահէր. ինչու  
 որ Թադաւորին իր ստացուածքը էր :  
 Արբոր զբեթէ ստակին բոլորովին  
 հատած էր, Ազիպտացիները իրենց  
 նեղութեան մէջը Յովսէփին եկան ու  
 բռին. «Մեզի հաց տուր, ինչու հա-  
 մար պիտի մեռնինք քու առջիդ ստակ  
 չի մնալու համար» :

Յովսէփ մէկ քանի աղւոր պատ-  
 ճառներ ունէր Ազիպտացիներուն ա-  
 ռանց ստակի ցորեն չի տալուն : Առեցէ  
 կըխորհէր որ Թէ որ ձրի տալու ըլ-  
 լար անոնց շատերը ծոյլ պիտի մնայ-  
 ին, ու ուրիշներն ալ անիկա ինքը  
 զինքներնուն ու իրենց արջառներուն  
 համար խոցեմութեամբ ու խնայու-  
 թեամբ դործածելու չէին :

Յովսէփ անոնց ըսաւ որ՝ ցորենի  
 համար տալու ստակին տեղը արջառ-  
 ներնիզ ալ կառնեմ . ու աս կերպով  
 ուրիշ աղէկութիւն մ'ալ պիտի ը-  
 նէր որ ան կենդանիներուն շատերուն  
 կեանքերը անօթութենէ մեռնելէն  
 պիտի ազատէր : Ասանկ Ազիպտացի-  
 ները իրենց արջառները Յովսէփին  
 կրքերէին ու ինքը անոնց ձիերուն  
 ոչխարներուն արջառներուն ու էշե-  
 րուն տեղը իրենց հաց կուտար : Բայց  
 շուտով բոլորը իրենց արջառները ու  
 ոչխարները աս կերպով Յովսէփին  
 տրւին , ու կերակուրի տեղ փոխե-  
 ցին . թէպէտ նորէն կարօտ եղան կե-  
 րակուրի : Տակաւին իրենց երկիրնե-  
 րը ու ինքրզինքնին իբրև ծառայ կամ  
 գերի թաղաւորին տալու էին :

Անոնք ասանկ ըրին , ու Յովսէփ  
 ալ անոնց կերակուր տրւաւ . ու աս  
 կերպով բոլոր Ազիպտոսի երկիրը ու  
 անոր բնակիչներուն ծառայութիւննե-  
 րը իբր փարաւոնին իր սեպհական

ստացուածքին պէս ստացաւ : որ անոր օգուտին համար երթան աշխատին :

Աս բանը սովին վերջին տարիին մէջը պատահեցաւ : անանկ որ մարդիկ յոյս ունէին որ ետքի տարին երկիրը նորէն պիտի սկսէ սուստարար իր պտուղը բերել : Թէ որ սերմ ցանվելու ըլլայ :

Անոր համար Յովսէփին աղաչեցին որ իրենց սերմն տայ : որ նոյն ժամանակը իրենց երկիրները ու ինքրդինքնին կերակուրի համար ստակի տեղ տրուեր էին . որ կարող ըլլան ետքի տարվան համար հանդերձանք պատշաստելու ու բոլոր Ազիստոսին մէջը բաւական ցորեն գտնելու :

Թէպէտ անոնց խնդրուածքը կատարելէն առաջ բոլոր բնակիչները պզտիկ զաւառներէն ու աւաններէն քաղաքը տարաւ : Ասանկ ընելուն պատճառը աս էր որ գուցէ շատ դիւրին պիտի ըլլար անոնց կերակուր

տալը , թէ որ շտեմարաններուն մօտ  
ըլլային որոնց մէջը ցորենը պահված  
էր . ու բոլոր ցորենին շտեմարանն  
ալ ինչպէս որ առաջ ըսինք քաղաք  
ներուն մէջն էին : Վերմերը իրենց  
կերակուրը թաղաւորէն կառնէին ա  
ռանց իրենց երկիրները տալու , եր  
բոր ուրիշ բնակիչները կուտային :

Նոնք կարելի է հասարակութեան  
մէջը գերազոյն ու ազատ սեպված է  
ին : Նոնց մէջէն թաղաւորը իր ե  
րևելի դործակալները ու ուրիշ ատե  
նակալները կընտրէր , իր տէրութեա  
նը մէջը իրեն օգնելու համար , ու ա  
նանկ զանազան պաշտօններ ունենալ  
նուն պատճառաւ մինչև սովին վեր  
ջը փարաւոնին ծախքովը կերակրը  
վեցան :

Սովին վերջի տարին անցնելէն ա  
ռաջ Յովսէփ ժամանակին սերմ բաժ  
նեց բնակիչներուն , ու տրւած ժամա  
նակը ըսաւ . Նոսրվան օրս ձեզ ու  
ձեր երկիրները փարաւոնին համար

Ծախու առած եմ . ահա՛ ձեզի սերմ  
կուտամ ցանեցէ՛ք . սակայն ժամանա-  
կին երբոր աճելու ըլլան , հինգին մէկ  
մասը փարաւոնին պիտի տաք . ու չորս  
մասը ձերը պիտի ըլլայ՝ երկրին սեր-  
մին համար , ձեր կերակուրին ձեր ըն-  
տանիքին ու ձեր տղոցը համար :

Երկրին տարեկան արդիւնքին հինգ  
երրորդ մասը Թագաւորին տալը մըշ-  
տընջենաւոր օրէնք մը եղաւ Ագիպտոսի  
մէջ , որ բոլոր բնակիչները կու-  
տային . բայ՛ի Վուրմերէն . որոնք  
որ աս տեսակ հարկ չէին հատուցա-  
նէր : Սակայն մենք հիմայ աղէկ բան  
մը չի պիտի համարինք , որ Յովսէ-  
փին պէս մէկը՝ անօթութենէ մեռնող  
ներուն երկիրները ու ինքրզինքնին  
կերակուրի համար բնութեամբ առ-  
նէ , կամ թէ ան գինէն ստակ հատու-  
ցանել տայ յօժարութեամբ ինքիրեն-  
հուն ալ տալու ըլլային : Թէպէտ բո-  
լոր աս բաները պարագաններովը չի-  
տենք . բայց թէ աս Ագիպտոսի բնա-



կիչներուն միտքերը առաւել լուսա-  
 ւորեալ ըլլար, կրօնականք թէ Յով-  
 սէփ ալ աս կերպով չի պիտի ընէր :

Վերջապէս կերևար՝ թէ բնակիչ-  
 ները բոլոր երկրին գործածութիւնը  
 վրանին առած էին . ու բոլոր իրենց  
 աշխատութիւններուն պտուղներովը  
 կրվայելէին բայ 'ի արդիւնքներուն  
 հինգերորդ մասէն որ թագաւորին  
 հարկի մը պէս կրհատուցանէին :  
 Քանի որ Ագիպտոսի միւս կողմերը  
 աս բաները կրլային . Յակոբ որ իր  
 ընտանիքը խաղաղաբար ու ազատա-  
 բար Վեսեմի մէջ կրբնակէին : Ա-  
 նոնց ընտանիքները հտուէ կըշատնայ-  
 ին . ու մինչև սովին վերջի տարին,  
 անոնք իրենց ստացուածքները առա-  
 ւել շատցուցին, ու յաջողութիւն  
 գտան, ու ծաղկեցան :

Յտիպէ իր կեանքին զտխճանին Տօբեմայը :  
 Յովեղիին իր հօրը Կեանք-Երկուցը : Յա-  
 իոբին Յովեղիը զնորաւիցը որ անոր երգոս-  
 ընել Կայ, որ երբոր ինքը Տեանելու ըլլայ  
 իր Տարձնը իր հայրերուն յոճը լսողէ : Յովեղ-  
 իին աւ Բանը ընելուն հասար երգոս-  
 ը : Արգոսին ինչ ըլլայ :

**Տ**անըրեօթը տարի Յակոբ իր ընտա-  
 նիքովը Աղիպտոսի մէջ նստելէն  
 ետե՛ որ ան ժամանակը հարիւր քառ-  
 սունը եօթը տարեկան եղաւ, տեսաւ  
 որ ինքը շատ տկարացեր էր, ու  
 յայտնի իր կեանքը վերջանալու մօտ  
 էր : Անոր համար Յովսէփին ետեւէն  
 մարդ խրկեց, որ ան ժամանակին կա-  
 ըող ըլլայ անիկա տեսնալու, ու մէկ  
 աղաչանք մը ընելու՝ որուն որ ինքը  
 շատ կրքաղճար :

Անանկ մէկ ղիպուած մըն էր՝ որ  
 Յովսէփ կրկարծէր թէ ժամանակը  
 շատ հեռու չի պիտի ըլլար . թէպէտ

անանկ մէկ բան մըն էր , որ Յովսէփին սիրտը շատ ցաւցուց ու տրտմու թեամբ ինքը գնաց իր հայրը տեսնալու , որուն մեռնելու խրատները հիմայ գիտեր որ սլիտի լէր :

Մէկ երեւելի բան մը կար , ինչպէս որ վերը ըսի , թէ Յակոբ իր սրտին մէջը ունէր , այսինքն ինքը կըբաղձար՝ որ Քանանու մէջ թաղվի , իր հօրը երկրին մէջը , որ իր մարմինը անոնց մարմիններուն հետ մէկ տեղ իրենց դերեզմանատունը մէջը ըլլայ :

Աբրահամ Ափրոնի այրը աս բանին համար ծախու առեր էր . ասոր մէջն էր որ իր մարմինը , Կասահակը՝ ու Կամայէլը թաղէր էին : Հոս տեղն էր՝ որ Յակոբ ու իր եղբայրը Կասա իրենց հօրը Կասահակին մարմինը թաղէր էին . Հոս տեղն էր որ Սարգա , Աեբեկա , ու Ղայ թաղվէր էին . ու նոյն տեղն էր , որ հիմայ Յակոբ կըբաղձար որ իր զաւկրները ինքը մեռնելէն ետև թաղեն : Ինքը սրտին

աս փափաքը լեցունելու այնչափ կը  
բաղձար որ ուրիշ բանով մը ինքը չի  
պիտի հաճէր թէ որ Յովսէփին եր-  
դում մը ընել չի տար՝ աս բանը ընե-  
լուն :

Յակոբ Յովսէփին ըսաւ թէ որ քու  
առջիդ շնորհք գտած եմ նէ ; այսին-  
քըն ; թէ որ իս ճշմարիտ կըսիրես նէ  
տղաս ; ու կուզես ինծի մէկ մեծ երախ-  
տիք մը ընել ; կաղաչեմ քեզի դիր  
քու ձեռքդ իմ երանիս տակը ու ինծի  
հետ մարդասիրաբար ու ճշմարտաբար  
վարվէ : Աղաչեմ քեզի որ ինծի Լ-  
զիպտոս չի թաղես ; հապա կուզեմ որ  
իմ հարերուս քովը պառկիմ . իս Լ-  
զիպտոսէն հանէ ; ու անոնց գերեզմա-  
նատունը տար ու իս թաղէ : Աւ Յով-  
սէփ ալ ըսաւ ; ըսածիդ պէս պիտի  
ընեմ . Յակոբն ալ ըսաւ երդում մը  
ըրէ ինծի . Յովսէփ ալ ըրաւ . ու Իս-  
րայէլ այսինքն ; Յակոբ ինքըզինքը  
իր զաւաղանին զլիսուն վրայ կռթըն-  
ցուց ; ու Աստուծոյ երկրպագութիւն

րրաւ : Կնքըղինքը դաւազանին գլխուն  
 վրայ կռթնցունելուն պատճառը՝ իր  
 մարմինը տկար ըլլալուն համար էր  
 ու աս կը ցուցընէր թէ որչափ երևե-  
 լի բան մըն էր հակոբին որ իրենց մէ-  
 ջը ըրեր էին : ու որուն համար ինքը  
 ասանկ Մստուծոյ առջին երկրպագու-  
 թիւն ըրեր էր իրեն օրհնութիւնը խնդ-  
 րելու համար : Մսկէ ետեւ հովսէփ տուն  
 դարձաւ ու գլխեր որ քիչ ժամանա-  
 կէն ինքը կրկին իր սիրելի հօրը մահ-  
 ուանը տխտի կանչովի : Մս հովսէփին  
 ըրած երդումը՝ մէկ խոստում մըն էր  
 օր իր հօրը ըրաւ : ու հիմակվան սովո-  
 ըական կերպով եղած երդումներէն  
 բոլորովին տարբեր էր : Վրիստոս մե-  
 զի պատուէր տըլած է որ ամենեին  
 երդում չընենք, ու անոնք որ հատարակ  
 խօսակցութեան մէջ ամէն ժամանակ  
 կընեն՝ իր պատուիրանքը կաւրեն, ու  
 մէկ բարեպաշտ Վրիստոսեայ մը ամե-  
 նեին ասանկ բան չի կրնար ընել :

ԳԼՈՒԽ Ի :

Յովնէփինն իր հօրը երբեք չէր համարել ժամանակը իր բոլոր գործը ղէլը համար . իր պայքը հէտ ասեցելը : Յովնէփինն իր լեռանները իր դասը ներսում պէս ընդունելը , անոնք օրհնելը :  
 Աս օրհնութեանը Ռինո-լի-նը :

**Ա** երջապէս ան վշտալի լուրերը  
 Յովսէփինն եկաւ , որ հիմայ իր հայրը մահվան մօտեցերէ : Յովսէփ արտորաց իր հայրը տեսնալու . որ իր վերջին վայրկեաններուն մէջը՝ զինքը մխիթարէ , ու ամէն խնամքը ու հոգը տանի . որ ասանկ մէկ բարի ու մարդասէր հօր մը արժանի էր :

Ինքը իր երկու տղան հետը առաւ Մանասէ ու Ափրեմ . որ առջինը քրտանը հինգ տարուի չափ էր , ու վերջինը մէկ տարու մը պակաս . հիմայ անոնց հայրը յիսուներ վեց տարուի չափ էր :

Յակոբ ան ժամանակը անանկ տկար

էր որ անկողինէն ջեր կրնար ելլար . սակայն երբոր ըսին՝ որ Յովսէփ եկեր է ինքը տեսնալու . այնչափ հաճելի եղաւ աս լուրը իրեն , ու անանկ զինքը կենդանացուց , որ բաւական զօրութիւն գտաւ անկողինին մէջը նըստելու , ու իր տղան բարեկէլու և անոր հետ խօսելու :

Յակոբ կուզէր որ մեռնելէն առաջ ամենէն հարկաւոր բաները անոր ըսէ , ինքը յիշեց ան ուխտերը որ Աստուած Աբրահամին , Իսահակին , ու իրեն ըրէր էր . ու կըբաղձար Յովսէփին իմացունելու՝ թէ որչափ օգտակար պիտի ըլլար իրեն ու իր տղոցը :

Քանանու երկրին մէջը իրեն երևալը ու ինքը օրհնելը . ու ան ժամանակի ըրած խոստումները անոր պատմեց որ իր զաւկրները սաստիկ պիտի բազմանան որոնց Քանանու երկիրը պիտի տայ յաւիտեան ժառանգութեան համար :

Անկէ ետև ինքը Յովսէփին ըսաւ

որ Մանասէն ու Նփրեմը իր զաւկընէրուն տեղը դրած է, ու իր ընտանիքին մէկ մասը սեպած է իր զաւկընէրուն պէս, ու անոնք և անոնցմէ եղողները իրեն ու բոլոր իր զաւկընէրուն խոտացված օրհնութիւններուն ժառանգակից սեպեց :

Նոր հաւատքը հաստատուն էր Մատուծոյ խոտումներուն վրայ . ամենեւին տարակոյս չունէր անոնց կատարվելուն, որ իր զաւկընէրը կրկին իրենց հօրերնուն երկիրը պիտի դառնային : Ասոր համար էր որ Յակոբ Յովսէփին երդում ընել տրւաւ . որ իր մարմինը Վանան դարձունէ : Յակոբ կուղէր որ աս բանը ընելովը, ու հիմակու ըսած խօսքերովը իր տղին ու անոր տղոցը ու անոնց զաւկընէրուն սրտին մէջը մէկ զօրաւոր սէր մը յառաջ բերել տայ իրենց հայրերուն երկրին վրայ, որ հոն դառնալու սատիկ բաղձանք մը ունենան որչափ շուտով որ նախախնամութիւնը ճամբայ բանալու ըլլար :



Իր Վանանու վրայ ունեցած սէրը՝ մահուան մէջը անգամ խիստ շատ էր : Ինքը հոն թաղվելու համար մեծ ուրախութիւն մը կրողգար :

Աս տեղին անցած զացած բաները իր սիրտը առաւել քաղցր յիշողութիւններով լեցուցին . ու նաև հակոբ իր սիրելի երկրին համար հովսէփին միտքին վրայ ուրիշ տպաւորութիւն մը ունէր ընելու ան անցած դիպուածներուն մէկը իր միտքը բերել տալով , որ մէկ զաւակ մը առանց խիղճը շարժելու չի կրնար խորհիլ :

«Յակոբ ազնիւ նահապետը ըսաւ , երբոր ես Ասորոց միջագետէն կուգայի , Սաբէլ ճամբան՝ Վանանու երկրին մէջը քովս մեռաւ՝ երբոր քիչ ճամբայ մնացեր էր Վաբրատ հասնելու , ու ինքը հոն Վաբրատին ճամբուն մէջը թաղեցի” : Բոլոր ազգերը ան տեղը կըսիրեն , ուր տեղ որ իրենց նախնիքներուն ոսկորները

Թաղված են : Ա՛հ . մեր հայրերուն  
 գերեզմանները : Արչափ ազդու մը  
 տածմունքներ յառաջ կը բերէ աս  
 խօսքը : Ա՛վ կրնայ առանց խորին  
 զգացումով մը ան տեղին վրայօք խոր-  
 հեւ , ուր տեղ որ մէկ ծնողք մը եղ-  
 բօր կամ քրոջ մը ազգականի մը կամ  
 բարեկամներու մարմինները Թաղված  
 են :

Կարծեմ թէ իր հօրը դորովաշարժ  
 սխառմութիւնը Աաքէլին մահուանը  
 ու Թաղվելուն վրայօք Յովսէփին սիր-  
 տը սուգով լեցուց , ու իր որդիական  
 երախտադիտութեանը արցունքները  
 սկսեց աչվըներէն վազել իր սիրելի  
 մօրը յիշատակութիւնը միտքը դա-  
 լով : Յակոբին ծերութիւնը գրէթէ  
 աչքին լուսերը տարեր էր . քիչ մը  
 կը տեսնար՝ բայց շատ անորոշ . « ա-  
 սոնք ո՞վ են » ըսաւ ինքը երբոր երկու  
 երիտասարդ մարդիկ իր աղօտ տեսու-  
 թեամբը տեսաւ , որոնք իր անկողինին  
 քովը կայնէր էին :

« Ընոնք իմ զաւկըներս են՝ » ըսաւ  
Յովսէփ որոնք Մատուած ինծի հոս  
տեղ տըլաւ :

Ըն ժամանակը սիրով Յակոբ ա-  
նոնց հօրը ըսաւ , կաղաչեմ քեզի ին-  
ծի բեր անոնք որ օրհնեմ :

Ու անոնք անոր քովը դացածնուն  
պէս գրկեց ու պագաւ , ու Յովսէփին  
ըսաւ . ամենեւին յոյս չունէի քեզ  
կրկին տեսնալու . բայց Մատուած ար-  
ժանի ըրաւ ոչ թէ միայն քեզ տես-  
նալու հասցա քու զաւկըներդ ալ :

Ետքը Յովսէփ իր զաւկըները հօրը  
գիրկէն ետ առաւ ու իր երեսը դէպի  
գետինը խոնարհեցուց : Մանկ ըրաւ  
որ Յակոբին ու բոլոր չորս կողմի մար-  
դիկներուն ցուցընէ թէ ինչ սէր ու  
պատիւ ունի իր սիրելի հօրը վրայ , ու  
ինչպէս ինքըզինքը Ազխատոսի հա-  
րուստ ու զօրաւոր կառավարը ըլլալը  
բոլորովին մոռցեր էր , երբոր ինքը  
հասարակ զաւկի մը պէս իր հօրը

մահուանը անկողինին քովը կայներ  
էր :

Յովսէփ ելաւ ու կրկին իր տղաքը  
իւր հօրը քովը բերաւ որ անոր օրհ-  
նութիւնը առնեն : Աս ընելովը Յով-  
սէփ կուզէր որ իր հայրը ինտոր որ  
սովորութիւն էր՝ օրհնած ժամանակը  
իւր աջ ձեռքը մեծ տղին գլխուն ու  
ձախ ձեռքը սլզտի տղին գլխուն վրայ  
դնէ :

Անոր համար Յովսէփ իր աջ ձեռ-  
քովը Ափրեմը բռնեց ու դէպի Յա-  
կոբին ձախ ձեռքին տարաւ . ու իր  
ձախ ձեռքովը Մանասէն բռնեց ու  
դէպ 'ի Յակոբին աջ ձեռքին տարաւ :

Սակայն շատ զարմացաւ , երբոր  
տեսաւ որ իր հայրը մէկէնիմէկ իր  
ձեռվները խաչածե բրաւ , որ իր աջ  
ձեռքը Ափրեմին՝ սլզտիկին գլխուն  
վրայ , ու իր ձախ ձեռքը Մանասէին՝  
մեծին գլխուն վրայ դրաւ , ու ասանկ  
սկսեց Աստուծոյ օրհնութիւնը խնդ-  
րել անոնց վրայ :

« Ու Յակոբ Յովսէփը օրհնեց անոր զաւակընէրը օրհնած ժամանակը ու ըսաւ . Եստուած՝ որուն աւջին իմ հարեքս Եբրահամ ու Իսահակ հաճելի եղան այսինքն զինքը սիրեցին ու իրեն հնազանդեցան . ան Եստուածը՝ որ բոլոր իմ կեանքիս մէջը մինչև աս օրս իս կերակրեց . ան հրեշտակը՝ որ իս բոլոր ան վնասներէն ազատեց . օրհնեն աս զաւակընէրը . ու իմ անունս ու իմ հարերուս Եբրահամին ու Իսահակին անունները ասոնց վրայ կանչվին , ու երկրիս մէջ տեղը աճին ու բազմանան :

Երկար ժամանակ կըքշէ թէ որ Յակոբին գործածած հրեշտակ բառին մեկնութիւնը տալու ըլլանք : Եւ աս ուսումնական ու բարեպաշտ մարդիկներ կըխորհին՝ թէ ան Եստուծոյ որդւոյն իրեն համար էր , որ ետքը վարինջաւ աշխարհքին մէջը ապրելու ու մեռնելու , որուն համար որ Յակոբ ըսեր էր : (Թէ որ ասանկ է նէ Յակոբ

աղէկ զբուցեր էր անոր համար որ բոլոր վնասներէն ինքը փրկեր էր, ու աղաչեր էր՝ որ բոլոր իր օրհնութիւնները Յովսէփին զաւկընէրուն վրայ դայ. ու նաև բոլոր գէշութիւններէն հեռու պահէ:

Ինչու որ՝ գիտէք թէ Վ.բիատոս է գերազանց Ֆրկիչը. որ իրեն յուսացողները մեղքէն ու դժողքէն փրկելու համար խաչին վրայ արուն թափեց, ու անոնք կօրհնէ ու փորձութիւններէն հեռու կը պահէ, և վերջապէս երկինքի թաղաւորութեանը մէջ յաւիտեան իր քովը կառնէ:

Յակոբին աս աղօթքը ընելուն զիտաւորութիւնը որ իր անունը. ու Վ.բրահամին ու Կասահակին անունները Ն.փրեմին ու Մանասէին վրայ կանչը վի. աս էր որ Վստուծոյ կարողութեամբը անոնք ան մեծ ընտանիքին հետ միաւորէ որուն մէջը ինքը, ու իր հարը՝ ու հօրը հարը բնակէր էին. ու ասանկ անոնք ժառանգակից ըլլան ան

օրհնութիւններուն՝ որ Մատուած Մ. ք. րահամին, Խահակին, ու իրեն ու ա- նոնց զաւկըներուն խոստացիր էր :

Յակոբին աղօթքը որ Ափրեմին ու Մանասէին զաւկըները աճին ու բազմանան, վերջը յետագայ տարիներուն մէջը սքանչելի կերպով մը կատարուեցաւ :

Ինչու որ՝ Յակոբին ըրած աղօթքէն երկու հարիւր քառասուն տարիի չամանցներէն ետեւ . Մովսէսի ժամանակը, անոնց զաւկըներուն թիւը՝ որոնք քսան տարեկան ու անկէ էվել էին, ու կրնային ալ պատերազմի երթալ, ու թսուներհինգ հազար երկու հարիւր կը հաշուէր, որ Յակոբին միւս տղոցը մէջի գտնելած զաւկըներէն շատ է վելի էին :

ԳՆՈՒԽՈՒՄ :

Յախճիկի օրհնութիւնն Յովնէիկին որոշը վրայ վր նոյննիւ : Յովնէիկին Բաթիկն : Յախճիկին հարգարեութիւնն , ու իր զուարթութեամբ օրհնելու : Իր հաճու : Երբեք առ խորհուրդ ինչէ՞ Դ որ Յախճիկին ոչնչ հաճի :

**Լ**արբոր Յովնէիկի տեսաւ որ՝ հայրը իր աջ ձեռքը Լափրեմին գլխուն վրայ դրեր էր . ինքը նեղացաւ և իր հօրը ձեռքը Լափրեմին գլխուն վրայէն վերցուց որ Սանասէին գլխուն վրայ դնէ : Աւ Յովնէիկի իր հօրը ըսաւ . աւտանկ չըլար իմ հայրս . ինչու որ աւսիկա է անդրանիկը . քու աջ ձեռքդ անոր գլխուն վրայ դիր : Բայց իր հայրը մերժեց ու ըսաւ ես դիտեմ . զաւակս , ես դիտեմ . ան ալ ազգ մը պիտի ըլլայ ու պիտի մեծնայ , այսինքն Սանասէին զաւկրները պիտի շատնան ու զօրանան : Բայց ճշմարիտ անոր պզտի եղբայրը իրմէ մեծ պիտի



ըլլայ ու անոր զաւկընէրը շատ ազգեր  
պիտի ըլլան :

Յակոբ՝ Յովսէփին զաւկընէրուն  
վրայ իր օրհնութիւնը լմնցընելու ժա-  
մանակը ըսաւ , քեզմով Նարայէլը  
(կամ իմ զաւկընէրս Նարայէլացիները)  
օրհնեն ու ըսեն . Եստուած քեզի Նփ-  
րեմին ու Վանասէին պէս ընէ , ու ին-  
քը Նփրեմը Վանասէին աւջկը դը-  
րաւ : Եսով Յակոբ ըսել կուզէր ,  
որ Նփրեմը ու իր զաւկընէրը՝ որոնց  
բոլորին մէկ տեղ Նփրեմ կամէր շատ  
զօրաւոր ու յաջող պիտի ըլլան , ու  
նաև Վանասէն ու անոր զաւկընէրն  
աւ նոյնը պիտի ըլլային . որ Նարայէ-  
լի ժողովուրդը ասիկա տեսնալով նին  
երբոր ուզէին մէկու մը համար օրհ-  
նութիւն խնդրել աղօթք ընէին որ  
Եստուած անիկա Նփրեմին ու Վանա-  
սէին ցեղին մարդոցը պէս յաջող ը-  
նէ : Յակոբ աս օրհնութիւնը ինքը  
մեռնելէն աւաջ իր թուներուն ու իր  
զաւկընէրուն կուտար՝ անշուշտ ինքը

Մտտուծոյ մէկ յատուկ հոգւոյն զօրու-  
թեանը տակը եղած պիտի ըլլար, որ  
կարող եղաւ աս կերպով առաջ նայե-  
լու ու իր զաւկըններուն պատահելու  
բաներուն վրայօք մարգարէանալու .  
որ ետքը իր մարգարէութիւնները  
շատ երևելի կերպով մը լեցուեցաւ :

Հիմայ ինքը սկսեց իր մահուանը  
մօտենալուն խօսքերը զուրյել . ահա  
ես պիտի մեռնիմ . բայց Մտտուած  
քեզի հետ ըլլայ (ըսաւ Յովսէփին) ու  
քեզ կրկին քու հարերուդ երկիրը  
տանի . այսինքն Մտտուած կրկին քու  
զաւկըններդ, ու միւս տղոցս զաւկընե-  
րը և բոլոր Իսրայէլացւոց ազգը Ա-  
գիստոսէն պիտի հանէ, ու կրկին  
Բանան դարձնէ :

« Դարձեալ՝ քու եղբայրներուդ ու-  
նեցած երկրին ժառանգութենէն մէկ  
մաս մըն ալ էվել տրւի քեզի . որ իմ  
սուրովս ու աղեղովս Մմորհացւոց  
ձեռքէն առեր էի :

Արկարծըվի թէ՛ ան երկրին մասը՝

որ ասանկ Յակոբ Յովսէփին ու անոր  
զաւկըններուն ընծայ բրաւ Սիւքէմին  
մէջն էր, ու նոյն տեղը Նմօրին զաւ-  
կըններէն ծախու աւեր էր: Հաւանա-  
կան է որ՝ Նմօրհայիք բռնութեամբ  
աս տեղը Յակոբին ձեռքէն աւեր է-  
ին ու ինքն ալ ետքը նոյն տեղին հա-  
մար պատերազմ ընելով կրկին աւեր  
էր: Հոս տեղն էր որ ետքը Յովսէ-  
փին մարմինը թաղեր էին. աս նոյն  
տեղն է որ Յովհաննու Մեծտարանին  
չորրորդ գլխուն մէջը գրուած է. ուր  
տեղ մեր Փրկիչին ինտոր Սեբար եր-  
թալը կըղըցուլի ան երկրին մօտ որ  
Յակոբ իր տղին Յովսէփին տըւեր  
էր: Հիմայ աս ծեր նահապետը ա-  
ռաւել երեւելի ու հարկաւոր պաշտօն  
մը ունէր կատարելու. այսինքն իր  
տղոցը մարգարէական նշան մը տալու  
որ գիտնան, թէ իրենց զաւկըները  
ինչ պիտի ըլլան բուն իրենց ընտա-  
նիքներուն կամ ցեղերուն մէջէն, եր-

բոր Վանանու երկիրը ժառանգելու  
ըլլան :

Մէկ տեղ ժողովրդեցէ՛ք , ըսաւ  
Յակոբ որ վերջին օրերը ձեզի պատա-  
հելու բաները ըսեմ : Մէկ տեղ ե-  
կէ՛ք ու լեցէ՛ք ո՛վ դուք Յակոբին զա-  
կրնները . ահանջ դէ՛ք ձեր հօրը Վա-  
րայէլին : Հոն բոլոր տասվերկուքն ալ  
առանց մէկին պակսընալուն իրենց սի-  
րելի հօրը մեռնելու անկողինին չորս  
կողմը կայնեցան : Ինչ երկելի տեսա-  
լան մըն էր իրեն , որ ինքը ու անոնք  
այնչափ փորձութիւններէ ու փոփո-  
խութիւններէ անցնելուն ետքը՝ միայն  
կրկին մէկզմէկ զտնան ու վայելին :  
Ու նաև անոնց ալ ինչ ազդու խրատ-  
ներ ու զարմանալի մարդարեւթիւն-  
ներ էր . որ մէկու մը պակուենքներէն  
լսեցին , որն որ ան անտեսանելի աշ-  
խարհքը մտնալու վրայ էր ապառնի  
ըլլալու բաները իր առջին փուլած  
ունենալով :

Երկար ժամանակ պիտի քշէ թէ որ

Հակոբին աս մարգարէութեանը յատկութիւնները մասնաւորաբար պատմելու ըլլանք : Թէպէտ ինքիրեննիդ կրնաք կարգար . կամ թէ ձեր ծնողացը ու վարժապետներնուդ կամ անոնց տրված գիրքերուն օգնականութեամբը կրնաք սորվիլ : Կնչու որ՝ անոր մէջը շատ բաներ կը դանբովի որ դժուար է հասկրնալը . բայց երբոր ձեր հասակը ու ընդունակութիւնը յարմարելու ըլլայ , ան ժամանակը անոր մէջէն շատ բաներ պիտի գտնաք որ պատճառ պիտի ըլլան ան Բստուծոյ զարմանալի նախախնամութեանը վրայ ձեզ զարմացրնելու , ու Սուրբ գրոց ճշմարտութիւնը տեսնալու աս զարմանալի մարգարէութիւնը կատարվելովը , որ այնչափ տարի առաջ գուշակվեր էր :

Աս խօսքերը զըուցելէն ու իր ամէն մէկ տղան օրհնելէն ետե . Հակոբ մէկ ծանր կերպով մը անոնց պատուիրեց , որ ինքը Քեբրովի մօտ Մամբրէի ա

զարակին մէջ իր հարերուն քովը  
Թաղէն :

Մինչև աս ժամանակ Յակոբ իր  
անկողինին վրայ նստած էր՝ Թէպէտ  
ինքը մարմնով տկար էր . բայց իր սի-  
րելի Յովսէփը տեսնալուն , ու իր  
մտքին մէջի եղած օգտակար մտած-  
մունքներէն մէկ ժամանակաւոր զօրու-  
թիւն մը ստացեր էր : Նաև մարդա-  
րէական հողին ալ՝ որ անոր վրայ ե-  
կեր էր՝ իր հողւոյն զօրութիւնը սովո-  
րական պայծառութենէն էվել լուսա-  
ւորվեր էր . որ անոր չորս կողմի ե-  
ղողները հաղել կրնային հաւատալ ,  
որ իրենց լաճները մահուան վերջի  
կէտին հասնող մէկու մը բերնէն կել-  
լեր :

Բայց հիմայ Յակոբ իր վերջին ե-  
րևելի պարտականութիւնները կատա-  
րեր էր : Ար տղոցը իր վերջին օրհ-  
նութիւնը տըւեր էր : Աւ երբոր իր ը-  
րած աշխատութիւններէն հողնած տե-  
սաւ որ ալ ինքը կըմարէրկոր ու մեռ-

ներու վրայ էր , ուղեց որ ինքըղինքը  
 մէկ հանդարտ վիճակի մը մէջ դնէ .  
 ասանկ իր ոտվըները անկողինին մէջը  
 քաշելով ու մէկ կողմը կծկըտելով  
 խաղաղութեամբ իր վերջին շունչը  
 կտրեց ու իր հողին ղինքը ստեղծողին  
 ձեռքը յանձնեց : Տիրոջը առջին  
 պատուական է իր սրբերուն մահը :  
 Արդարին մահուանը պէս մեռնիմ . ու  
 իմ վախճանս անոր վախճանին պէս  
 ըլլայ : Արդեօք կուզէ՞ք մի ասանկ  
 մեռնիլ . Աստուծոյ ապաւինեցէ՞ք՝  
 ինչպէս որ Յակոբ ըրաւ . Քրիստոսի  
 ապաւինեցէ՞ք որ իր միայն փրկիչ ըլլալը  
 ձեզի կատարեալ յայտնըված  
 է : Սիրեցէ՞ք անիկա . հնազանդ եղի՞ք  
 անոր . ջանք ըրէ՞ք որ դուք ձեզ անոր  
 նմանցընէք : Դուք ձեզ բոլորովին ա-  
 նոր տըէ՞ք՝ ուրիշներուն աղէկութիւն  
 ընելով որ շատ մէկ զուարճալի դործ  
 մըն է ճշմարիտ Քրիստոնէի մը :  
 Գիտցէ՞ք որ դուք Յակոբին պէս աշ-  
 խարհիս վրայ օտարական մը ու պան-

դուխտ մըն էք : Աշխարհը մի սիրեք  
 ձեր յոյսը երկինքին վրայ դրե՛ք : Յա-  
 կոբին պէս հաւատքով ապրեցե՛ք :  
 Խնդրեցէք որ երբոր բոլոր բաներէն  
 ձեռք քաշելու ըլլաք ան երկինքի մէջի  
 խոստացեալ Վանանու երկիրը եր-  
 թաք՝ ուր տեղ որ միայն յաւիտենա-  
 կան հանգստութիւն կրնաք գտնալ :

Ան ժամանակը Յակոբին պէս ա-  
 ռանց ասի ու խաղաղաբար ու քաղց-  
 ըութեամբ կրնաք մեռնիլ . և պատ-  
 րաստ ըլլալ աս հոգերով ու փորձու-  
 թիւններով լեցուն աշխարհքը թողե-  
 լու , ու երկինքը երթալու , ու յա-  
 լիտեան Տիրոջը հետ ապրելու :



ԳՎՈՒԽՈՒ ԼԻՆ

Յոճեճին որսոմ-լե-նը իր հօրը Տե-  
նելու-ն զլայ : Անոր մարմնը համեմեկ-նով  
պատելու- համար Յոճեճին հրամայելը : Յո-  
նիքին համար էլլած ու-գը : Անոր Լուսն-ի  
ամոր Ամսբուհի այրին մեջք Լուսն-ի  
նիքին էլլայուն-նով պատժել զլու- համար  
ունիցած զախելունին : Ս'ել շար ինդճ իր ու-  
նիցողին նելու-լե-ննելը :

Յովսէփ շատ վեշտ զգաց իր հօրը  
մահուանը վրայ . ինքը անոր երե-  
սին վրայ ինկաւ՝ ու լացաւ : ու պա-  
գաւ անիկա : Ինչ զօրաւոր սէր մը ու-  
նեցած պիտի ըլլայ իր հօրը վրայ . ու  
ինչ խորին տրտմութիւն մը զգացած  
պիտի ըլլայ անկէ զատվելուն համար :

Մեռնելու ժամանակը անոր աջը-  
ները գոցեց , ու հիմայ ինքը կուզեր  
որ ամէն մէկ պատուոյ նշանը իրեն ցու-  
ցընէ . ու ինքը անանկ կերպով մը  
Թաղէ , որ իր հայրը որչափ սիրելը

ու անիկա յարդելը իր եղբայրները ու  
 Լճիսպտացիները տեսնան :

Յովսէփ իր սեպհական բժիշկնե-  
 րուն հրաման ըրաւ որ ան ժամանակի  
 սովորութեանը պէս իր հայրը համեմ-  
 ներով պատեն : Լս անանկ մէկ զար-  
 մանալի բան մըն էր որ չէր թողեր մէկ  
 մեռած մարմին մը փտտելու , ու ան  
 մարմինին կերպարանքը ու պատկերը  
 անանկ մէկ կերպով մը կը պահէր որ  
 շատ տարիներ կը մնար :

Քառսուն օր աշխատեցան աս գոր-  
 ծողութիւնը կատարելու . բայց առ-  
 ջի երսուն օրվանը մէջ պէտք եղած  
 հարկաւոր բաները պատրաստեցին ,  
 ու բոլորը եօթանասուն օրվան մէջ  
 կատարեցին :

Լսիկա Յովսէփին , ու Յակոբին  
 ընտանիքին մէկ յարմար միջոց մըն էր  
 սուգ ընելու . որ կըսեն թէ նոյն ժա-  
 մանակը , Լճիսպտացիները անոնց հետ  
 մէկտեղեցան . ու աս կերպովս յայտ-  
 նեցին թէ փարաւոն , ու իր ժողովուր-

դը Յովսէփը ինչպէս կը պատուէին ,  
 ու ինչպէս կը ջանային անոր սիրելի  
 հօրը մահովանը համար աս տրտմու-  
 թեան նշանովը իրենց յարգը ցուցը-  
 նելու :

Եթանասուն օրվրնէ ետև՝ Յովսէփ  
 հրաման առաւ փարաւոնէն Վանան  
 երթալու , ու հոն իր հայրը թաղելու .  
 որ երդումով մը խոստացեր էր աս  
 բանը ընելու :

Հատ մեծ հանդիսաւոր թաղում  
 մըն էր . Յովսէփ ու բոլոր իր եղբայր-  
 ները իրենց ընտանիքնովնին բաց ՚ի  
 պղտի տղաքներէն , ամէնը մէկ տեղ  
 դացին , ասոնցմէ ՚ի զատ նաև բոլոր  
 տէրութեան գործակալները , ու իր  
 տանը աղնուականները , ու Ազխպտոսի  
 ծերունիները , ու պատուաւոր մար-  
 դիկները , ու անոր հետ մէյ յտեղ կառ-  
 քեր ու ձիաւորներ ելան՝ ու ան մէկ մեծ  
 խումբ մը եղաւ :

Ան տեղը՝ որ աս անթիւ ու հոյա-  
 կապ հանդէսը պիտի երթար մէկ քա-

նի հարիւր մղոն հեռու էր , ու երբոր  
Վանանու մէջ հասան , ու ան տեղը  
եկան որ Ատաղ կրսվէր , հոն ինչպէս  
որ սովորութիւն էր իրենց սրտին  
տրումութիւնը շատ մեծ ու սաստիկ  
ողջումով մը յայտնեցին : Աւաս կեր-  
պով իրենց սուղը եօթը օր շարունա-  
կեցին :

Հոս տեղի մօտ բնակող Վանա-  
նացիները երբոր աս սքանչելի տեսա-  
րանը տեսան ըսին . աս անտանելի  
մէկ սուղ մըն է Ազխատացիներուն ,  
ու ետքը հոն տեղին սուղ Ազխատոսի  
ըսվեցաւ :

Աս տեղէն ան հանդիսաւոր բազ-  
մութիւնը մինչև Վերբով եկան ու  
հոն Սամբրէի այրին մէջ Վերահա-  
մին , Իսահակին , Սառային , Աերե-  
կային ու Նիային քով հակոբն ալ  
թաղվեցաւ (ինչպէս որ երդումով մը  
խօսք տալ տըւեր էր իրեն տղոցը աս  
բանը ընելու :

Աս իրենց մեռած ճնողքին՝ վեր-

Ջին տրտմալի պաշտօնը կատարելնուն  
 ետև . Յովսէփ ու իր եղբայրները ու  
 բոլոր իրենց հետ եղողները Ազխատոս  
 դարձան :

Հիմայ որ իրենց հայրը մեռած էր՝  
 Յովսէփին եղբայրները սկսեցին վախ-  
 նալ որ անկէ ետև ալ մէկ պատճառ  
 մը չի պիտի ունենայ իրենց հետ մար-  
 դասիրութեամբ վարվելու : Անոր ըս-  
 տոյդ բնաւորութիւնը՝ իր Աստուածա-  
 վախ մարդ մը ըլլալը ու բարեսէր և  
 ողորմած հոգի մը ունենալը մինչև  
 հիմայ չէին հասկըցեր : Անոնք կը  
 կարծէին որ տակաւին իրենց առջի ը-  
 րած անողորմութիւնը ու չարութիւնը  
 բարկութեան կիրքերով միտքը պա-  
 հած էր . կըխորհէին որ աս դա-  
 ցումները տակաւին ծածկած պահեր  
 էր , ու միայն իրենց հօրը պատուոյն  
 համար իրենց հետ մարդասիրաբար  
 կըվարվէր . ու նաև չէր ալ ուզեր որ  
 իր տղոցը մէջ հակառակութիւն մը  
 տեսնալով , իր մեռնելու օրերուն մէ-

Չը իր սիրտը վերաւորէ : Բայց հե-  
մայ , ըսին , ալ Յովսէփին զգացում-  
ներուն վրայ սա արդեւքը չի մնաց ,  
անոնց պաշտպանը գնաց . ալ ուրիշ  
մէկը չի կայ որ իրենց ու բարկացեալ  
եղբօրնուն մէջ տեղը միջնորդ ըլլայ .  
ու իրենք կը դողային անոր վրէժխնդ-  
րութեանը ակնկալութիւնովը :

Հիմայ իմ սիրելի տղաքներս սա  
բանին մէջը դուք առաւել զարմանա-  
լի վկայութիւն մը պիտի տեսնաք , որ  
մեղքին թշուառութիւնը կը ցուցնէ :

Յովսէփին եղբայրները տակաւին  
իրենց առջի ըրած անօրէնութեանը  
յիշատակութիւնը իրենց մտքին մէջը  
աղէկ պահեր էին , որչափ ժամանակ  
երբոր Յովսէփը կը տեսնային , ան  
թողայիմին մէջի եղած բաները առ-  
ջենին կուգար , ու ինքը զինքնին կը  
նախատէին ու կը դողային :

Կը տեսնային որ ինքը իր պաշտօ-  
նին ազնիւ հանդերձներովը հազված  
էր . բայց անոնց խորհուրդը մի միայն

ան իր գեղեցիկ հանդերձին վրայ էր , որ արունին մէջը թաթխեր էին . ու անով անանկ մէկ գէշ խաբէութիւն մը ըրեր էին իրենց ողորմելի հօրը :

Կրտսնային որ ինքը իշխանութիւնով ու պատուով նստած էր կամ թէ իր փայլուն կառքը հեծած էր . բայց առաւել ան զարմանալի փոսին պատկերը միտքերնին կուզար . որուն մէջը իրենց եղբայրը նետեր էին . ու ան խամայէլացիները որոնց գերիի մը պէս ծախեր էին :

Ասանկ է , որ անցած դացած մեղքերը վերջը մարդուն միտքը կուգայ , ու խիղճը կարթնցնէ , որ ան չար մեղաւորը մեծ տանջանքներով սաստէ :

Ու խիղճը մեղաւորին կիմացընէ թէ որչափ արդարութեամբ ինքը արժանի է պատժըվելու :

Աս նոյն բանն էր՝ որ Յովսէփին եղբայրները այնչափ վախցուց . որ ան իրենք սաստիկ պիտի պատժէ :

Իրենք գիտէին որ պատիժի արժանի էին . ու նաև թէ որ բոլոր իրենց կողքորը ըրածներնին գիտցրվէր : Ազիպտացիները ու ուրիշ ամէն մարդ պիտի խորհէին թէ անհնարին է որ անոնք առանց պատիժի անցնին :

### ԳՎ ՈՒՍ . ԼԳ :

Յովակիմն էպէսյրմեբոսն ներսի ինքրելէն : Յովակիմն մարդասիրութեանը , ու իրենց ձախը համարարուցնելլ : Անոնց շնորհակալութեան պարտականութեաննը՝ Յովակիմն , ու Ասորոսոց : Արդեօք սա խորացողք սրելնեբոսն գեշութեան ըրած է՞ թ : Սի՞նչպէս իւրագոյ անոր զոյցօր :

Յովակիմին բարկութիւնը իջեցընէ . լու համար , խորհեցան որ մէկ բոլորով սրտիւ խնդրուածք մը ընեն իրենն : Անոնք ան մեծ պատիւը գիտէին , որ միշտ իր հօրը կըցուցընէր , ու ան սրտեռանդ սէրը որով անոր



յիշատակութիւնը միշտ իր միտքին  
մէջը կը պահէր :

Անոր համար իրենք շիտակ Յովսէփին  
երթալու վախնալնուն իրենց  
կողմանէ մէկը խրկեցին անոր , որ  
չըլայ թէ անոր բարկութիւնը իրենց  
դէմ շարժի : Ասե կարելի է թէ ան  
մարդը՝ որուն աղաչեր էին իրենց տե-  
ղը Յովսէփին երթալու , հարազատ  
բարեկամութիւն մը ունէր անոր հետ՝  
իր վարքին աղնուութեանը ու պատ-  
ուականութեանը համար , որ կարող  
պիտի ըլլար բոլորովին իրենց դէշ  
վարքերնուն ներումը ընդունելու :

Բայց գլխաւորաբար իրենց յոյսը  
աս մարդուն երթալուն վրայ դրեր է-  
ին . ինչու որ ան խրկելու մարդերնին  
խրատեր էին որ Յովսէփին ըսէ՝ քու  
հայրդ պատուիրեց ինքը մեռնելէն ա-  
ռաջ ըսելով թէ՛ ասանկ պիտի ըսէք  
Յովսէփին կաղաչեմ հիմայ քեզի ,  
ներէ՛ քու եղբայրներուդ յանցանքը ու  
անոնց մեղքը՝ որ քեզի դէմ ըրած են :

Ու հիմայ կաղաչենք քեզի թողու-  
թիւն ըրէ՛ քու հօրդ Աստուծոյ ծառա-  
ներուն : Անոնց ըրած աս աղաչանքը  
ողորմած զգացումներ ունեցող մէկ  
զաւկի մը ըրեր էին . անանկ մէկ զաւ-  
կի մը , որ միշտ հնազանդութեամբ իր  
հօրը հրամանները ու խնդրուածքները  
կրկատարէր . ու անոր վրայ ունեցած  
սէրը միօրինակ ու հաստատուն էր :

Անոնց ըրած աս աղաչանքը՝ Աս-  
տուծոյ մէկ բարեպաշտ բարեկամին  
ըրեր էին , որուն նախնիքներուն ,  
ու հօրը Աստուծոյն խոստովաներ էին  
իրենք հաւատալու , ու համարձակ ը-  
սեր էին անոր ծառաները ըլլալու :  
Ասոնք մէկ հօր մը զաւկըներ էին .  
ամէնը միեւնոյն Աստուծոյն հաւատա-  
ցող , ու Յովսէփին հետ Աբրահա-  
մին , Իսահակին , ու Յակոբին խոս-  
տացած օրհնութիւններուն մասնակից  
ըլլալովնին , հիմայ անկէ ներում կը  
խընդրէին :

Յովսէփ շատ գթած ու բարերար

զգացումներ ունէր . ու անանկ ազնիւ  
 բնութիւն մը որ ամենեւին անոնց ա-  
 սանկ անարգութիւն մը ու վրէժխնդ-  
 րութիւն մը ընէլ՝ կարելի է որ միտ-  
 քէն անգամ չէր անցներ . իր առ-  
 Վստուած ունեցած պարտականու-  
 թիւնները յայտնի կիմանար բոլոր ի-  
 րեն ըրած բարերարութիւններուն հա-  
 մար . ինքը միշտ իր ընկերներուն  
 մարդասիրութիւնը սիրով կը պահէր .  
 ու իր տկարութիւնը ու մեղանշական  
 ըլլալը՝ յայտնի զգալով՝ չի կրնաց ա-  
 նոնց ազաջանքին դէմ կենալ :

Աս ազաջանքը անոր սրտին բոլոր  
 բարի զգացումները արթնցուց : Իր  
 մտքին առջին բերաւ իր հօրը քաղցը  
 յիշատակութիւնները : Աստուած-  
 պաշտութիւնը առաւել ջերմաբար իր  
 սրտին մէջը փրօւրնկեցաւ , որ ինքը-  
 զինքը չի կրնաց զսպել ու սկսեց լալ :

Կըկարծըվի թէ իսկոյն իր եղբայր-  
 ները կանչել տըլաւ . ինչու որ կըս-  
 վի թէ՛ անոնք ինքը տեսնալու գացին ,

ու ծուեցան՝ ինչպէս որ առաջ ըրեր  
 էին, ու երկրպագութիւն ըրին անոր :  
 Աւ ըսին ահա՛ մենք քու ծառաներդ  
 ենք . ու Յովսէփ անոնց ըսաւ մի՛ վախ-  
 նաք . ինչու որ իս Մատուծոյ տեղն է՞ք  
 մի դրէր . ըսել կուզէր որ՝ ես ալ ձե-  
 ղի պէս մէկ մարդ մըն եմ : Ինչո՞ւ համար  
 ասանկ ահով ու դողով իմ առջևս  
 կայնէրէք . միայն Մատուած է որ ձեր  
 դորժքերը պիտի դատէ . դուք միայն  
 անոր պիտի տաք ձեր ըրածներուն  
 համարը, անոր դէմ էր որ դուք մե-  
 դանչեցիք : Էիմայ ինքըղինքնիդ անոր  
 առջևը խոնարհեցուցէք . ու խորին  
 ապաշխարանքով իրմէն թողութիւնը  
 խնդրեցէք : Իմ կողմանէս բոլոր ձեր  
 վախերը թող դադարին :

Դուք ինձի դէմ չարութիւն խոր-  
 հեցաք . բայց Մատուած ինձի համար  
 աղէկութիւն խորհեցաւ . ինչպէս ալ  
 աս օրս եղաւ, որ շատ մարդիկ ողջ  
 պահվեցան : Ենոր համար հիմայ մի՛  
 վախնաք . ես ձեզ ու ձեր զաւկըները

պիտի կերակրեմ . ու ինքը անոնք կը  
ձսիլթարէր ու մարդասիրաբար անոնց  
հետ կըխօսէր :

Ի՞նչ քաջալերութիւն մը եղած  
պիտի ըլլայ աս անոնց սրտին , թէ որ  
անոնք ասանկ զգացումներ ունեցած  
ըլլային , որ պարտական էին ունե-  
նալ . արդեօք աս մարդասիրութիւն  
ները ի՞նչպէս իրենց սրտին մէջ պի-  
տի տպաւորվէր :

Աս միջոցին անոնք որչափ պարտա-  
կան էին իրենց եղբօրը շնորհակալու-  
թիւն ընելու իր ազնիւ ու համեստ  
վարքին համար . ու մանաւանդ Աս-  
տուծոյ՝ իր երկայնատութեանը ու համ-  
բերութեանը համար : Ինչու որ ան  
Աստուծոյ բարեշնորհ նախախնամու-  
թեանը կարգադրութիւնն էր , որ ա-  
նոնց չար խորհուրդները խափանեց .  
ու անոնցմէ այսչափ աղէկութիւն ա-  
ռաջ բերել տրւաւ Յովսէփին որն  
որ այնչափ ատեր էին , ու նաև իրենց  
հօրը , ու իրենց անգամ , ու իրենց ըն-

տանեացը : Իմ սիրական զաւկընէրս ,  
 արդեօք դուք ալ ասոնց նման միջոց  
 ներու մէջ գտնուված է՞ք մի . արդեօք  
 ուրիշի մը գէշութիւն ընելէն ետքը  
 խղճմտանքնիդ ձեզ յանդիմանած է՞  
 մի . ու Մատուծմէ վախցած է՞ք մի .  
 որ գուցէ մէկ կերպով մը ձեզի պիտի  
 պատժեր ձեր ըրած յանցանքին հա  
 մար :

Հաւանական է որ աս կերպ բաներ  
 ձեզմէ մէկ քանիններուն պատահած է .  
 ու թէ որ անանկ է նէ , արդեօք ձեզի  
 մէկ պարտականութիւն մը սեպելով՝  
 ձեր ըրած յանցանքը իսկոյն խոստովա  
 նած է՞ք մի , ու ան ձեր բարկացուցած  
 մարդն ալ ձեզի թողութիւն տըւած է  
 մի :

Ինքըզինքնիդ Մատուծոյ առջևը հը  
 նազանդեցուցած զգացի՞ք մի իրեն  
 դէմ գործած մեղքերնուդ համար . ին  
 չու որ երբոր ձեր բնկերներուն գէշու  
 թիւն ընէք , Մատուծոյ պատուիրանք  
 ները աւրած՝ ու իր իշխանութիւնը ա  
 նարգած կըլլաք : Ինքը կարգիլէ ձեզ

զէշութիւն ընելէն, ու կուզէ որ միշտ  
աղէկութիւն ընէք: Ինքը ձեզի կը  
սրտուիրէ որ դուք ձեր ընկերները  
ձեր անձին պէս սիրէք. ու նաև զին  
բըն ալ՝ բոլոր ձեր հոգիովը կարո  
ղութիւնովը ու միտքովը սիրէք:

Արդեօք ճշմարիտ տրամուծիւն մը  
զգացած էք մի ձեր ընկերին զէշու  
թիւն ընելնուդ համար. ու բոլորով  
սրտիւ անկէ թողութիւն խնդրած էք  
մի. միտքերնուդ մէջը դրած էք մի որ  
անոր հետ եղածին պէս վարուիք:

Արդեօք Աստուծոյ շնորհակալ ե  
ղած էք մի ինքը ձեզ նոյն պատիժէն  
մէկ դի պահելուն համար. որուն որ  
դուք արդարապէս արժանի էիք, ու  
նաև ան մարդոցը զէշութիւն ըրած  
նուդ դէմ՝ ինքը ձեր յանցանքին թո  
ղութիւն տալուն ու բարեկամութիւն  
ցուցընելուն համար:

Արդեօք միտքերնուդ մէջը հաս  
տատած էք մի, որ Աստուծոյ շնորհ  
քովը՝ ու Վրիստոսի Յիսուսի օղնու

Թեամբը կրկին ասանկ գէշ բաներ  
 չբնէք, ու բոլոր մեղքերուն դէմ դը-  
 նէք: Թէ որ հիմայ քիչ մը կայնիք  
 ու մտմտաք զգուշութեամբ ու աս վե-  
 ըի հարցումները ինքզինքներնուդ  
 հարցունէք, կարծեմ թէ ձեր սրտին  
 ինչ վիճակի մէջ ըլլալուն վրայօք  
 քիչ մը բան պիտի սորվիք: Դուք շատ  
 աղէկ գիտէք որ Հովսէփին եղբայր-  
 ները ինչպէս պարտական էին իրենց  
 ըրած գէշութեանը վրայ զըջալու:  
 Երդեօք դուք ալ ինչպէս որ պէտք էր  
 նէ ըրած էք մի: Թող ձեր խիղճը  
 խօսի: «Թէ որ սիրտերնիդ ձեզ դա-  
 տապարտէ նէ միտքերնիդ բերէք թէ  
 Եստուած ձեր սրտերէն մեծ է ու բո-  
 լոր բաները գիտէ»: Են՝ որ իր մեղ-  
 քերը կըծածկէ, անոր յաջողութիւն  
 չի կայ, բայց ով որ կըխոստովանի ու  
 կըհեռանայ անոնցմէ, ողորմութիւն  
 պիտի դոնայ:



## ԳՎՈՒԽՈՒ ԼԳԻՆ

Յովակիմինն հազուամե հասկնալը . Յովակիմի էր  
 եղբայրնեւրը երբ մեցնելը էր հարմինը Վրա-  
 նանա . մէջ լեռնալեւոն համար , որ ար արեւ  
 տնոնք էր հասարակել լեւ' Իսրայելացիները պի-  
 րի երկամն . էր մեանելը որ էր հարմնայն համե-  
 ներով պատիւը . ինչոն համար էր նա հրաման  
 ընելը էր հարմինը Լազիպոսի մէջ պահելը  
 համար , մինչն որ Իսրայելացիները Վրանան  
 արտանան : Լապոնոյ ստանչելի նախնայնա-  
 հաւաններ :

Յովակիմինն եղբայրնեւրը կրկին Գե-  
 սեմ իրենց ընտանիքներուն դար-  
 ձան , ուր տեղ որ կը բնակէին , շատ  
 կաճէին ու կը բազմանային . ու դորձ-  
 քերնուն մէջը շատ յաջողակ էին , Լա-  
 զիպոսի թագաւորին սլաշտպանու-  
 թեանը ու իրենց մարդասէր ու խնա-  
 մակալ եղծօրը հոգաբարձութեան  
 տակը ըլլալով :

Իրաւունք ունինք հաւատալու որ  
 ան ժամանակը փարաւոնն ու իրմէն ե-

տե յաջորդաբար եկող Թագաւորնէրը Յովսէփը շատ կըսիրէին . ու նաև Եղիպտոսին վրայ կառավարութեան պաշտօնին մէջը ըլլալով՝ քաղցրութեամբ ու արդարութեամբ կիշխեր ժողովուրդին վրայ , ու բոլոր ազգին հաճելի էր :

Ինքը այսչափ ապրեցաւ որ Եփրէմին ու Սանասէին զակրները տեսաւ ու շատ հոգ կըտանէր անոնց կրթութեանը համար , ու նաև հետերնին շատ սիրով կըվարվէր :

Սերջապէս իր մարմնոյն ծերութիւնը իր մահվան մօտենալը իրեն յիշել տըլաւ . իր տկարութիւնը որ ըստ օրէ կըշատնար . ինքը իր եղբայրները չորս կողմը ժողովեց ու իր մահվան մօտենալը անոնց ըսաւ , ու ան Լստուծոյ խոստմունքներուն վրայօք անոնց հետ խօսեցաւ , որ իրենց հարերուն՝ իրենց՝ ու իրենց զակրներուն համար ըրեր էր :

« Լստուած ձեզի այցելու պիտի ըլլ

լայ” ըսաւ ինքը . ու ձեզ աս երկրէս  
 պիտի հանէ , ու ան երկիրը պիտի  
 տանի . որ երդումով խոստացեր էր  
 Մ.բրահամին Իսահակին ու Յակոբին :

Ինքը գիտէր թէ՛ որչափ հարկաւոր  
 էր Իսրայելացւոց որ Վանան դառ-  
 նալը ամենեւին միտքերնուն չի հանէին  
 իբր իրենց ակնկալութիւններուն ամ-  
 մէնէն երևելին սեպելով :

Չենէ անոնք պիտի կարծէին որ  
 Ագիպտոս իրենց մշտնջենաւոր ու սեպ-  
 հական բնակարանը պիտի ըլլար . ու  
 ան տեղի բնակիչներուն հետը խառ-  
 նրվելով , ու կուսպաշտական սովորու-  
 թեանց մէջ իյնալով՝ ճշմարիտ Մ.ս-  
 տուծոյն երկրպագութիւն ընելը պի-  
 տի մոռնային :

Նաև Յովսէփ իր եղբայրներէն եր-  
 դում մը առաւ , ինչպէս որ Յակոբ  
 իր հայրը իրմէն աւեր էր որ իրեն  
 մարմինը հետերնին Վանանու երկի-  
 րը տանին . երբոր հոն դառնալու ըլ-  
 լան :

Չենք գիտեր թէ՛ արդեօք ուրիշ  
 է՞նչ կանոններ կամ խորհուրդներ տը-  
 ւաւ անոնց իր վերջին մեռնելու վայր-  
 կեաններուն մէջը : Ինքը շուտով իր  
 խօսքը կտրեց ու մեռաւ, որ ան ժա-  
 մանակը հարիւր տասը տարու էր :

Ընոր մարմինը համեմներով պա-  
 տեցին ու սնտուկի մը մէջ պահեցին .  
 մինչև որ Խարայեւացիները անկէ ե-  
 լան . ու ան ատենը անիկա հետերնին  
 Վանան տարին . ու Սիւքէմին մէջ  
 թաղեցին, ուր տեղ որ Յակոբ Ա-  
 մովրին տղոցմէն ծախու աւեր էր, ու  
 նոյն տեղը ժառանգութեան համար  
 Յովսէփին տղոցը տրւեր էր :

Ընտարակոյս Յովսէփ մասնաւոր  
 մէկ դիտաւորութիւն մը ունէր աս  
 կերպով կարգադրելուն, որ իր մար-  
 մինը Ազիպտոսի մէջ պահվի, մինչև  
 որ Խարայեւացիները Վանան իրենց  
 հօրը երկիրը դառնալու ըլլային : Ը-  
 նոնք՝ անոր ոսկորները շատ մեծ յար-  
 գութեամբ պիտի բռնէին . անոր մար-

մինը պահած տեղերնին շատ անգամ  
 իրենք՝ իրենց զաւկընները՝ ու իրենց  
 զաւկըններուն զաւկընները պիտի եր-  
 թային ու տեսնային : Ինչու որ՝ զրե-  
 թէ Յովսէփին մեռնելէն հարիւր յի-  
 սուն տարիէն ետեւ էր , որ Յակոբին  
 զաւկընները Սովսէսի ձեռքովը Լզիպ-  
 տոսէն ելան , ու Վանան գացին :

Լս տեղը անոնց շատ սիրելի ու  
 Սուրբ տեղ մը պիտի ըլլար , ու  
 Յովսէփին ու անոր հօրը քաղցր յի-  
 շատակութիւնները միշտ անոնց մտքին  
 մէջը արթուն պիտի պահել տար :

Լմէն ժամանակ միտքերնին պիտի  
 ձգէր Լզիպտոսի մէջ իրենց օտարա-  
 կան ըլլալը . ու Բստուծոյ մէկ առա-  
 ւել աղէկ երկիր մը անոնց տալը , որ  
 ինքը խոստացեր էր . ու իրենց երեւե-  
 լի պարտականութիւնը , որ Բստուծոյ  
 նախախնամութեանը պատրաստելու  
 ճամբովը՝ Յովսէփին մարմինը հետեւը-  
 նին տանին :

Կաւ՝ ան երեւելի ժամանակը միտ-

քերնին պիտի բերէին երբոր Յովսէփ յատկապէս աս պաշտօնը կատարվելու համար իր եղբայրներուն պատուիրեր էր :

Իր մեռնելու վայրկեաններուն մէջն էր, որ բոլորը ամենակարօղին առջևը մէկ երևելի երդումով մը խոստացան որ իր հրամանները հաւատարմութեամբ պիտի կատարվին :

Թէպէտ Յովսէփ ինքը մեռած էր, սակայն կրկին անոնց հետ պիտի խօսէր, ու տարվէ տարի իր խրատական ձայնը պիտի լսվէր թէ, Մատուած ձեզի այցելու պիտի ըլլայ, ու աս երկրէն ձեզ պիտի հանէ, ու ան երկիրը տանի որ Մ.բրահամին, Իսահակին ու Յակոբին խոստացեր էր : « Իրաւցընէ Մատուած ձեզի այցելու ըլլայ ու դուք ալ իմ սոկորներս ասկէ պիտի տանիք » :

Ինչպէս զարմանալի են Մատուածոյ ճամբաները, որ իր նախախնամութեամբը բոլոր իր իմաստուն ու սրբազան խորհուրդները կրկատարէ :

Աստուած Յովսէփը բոլոր իր  
 կեանքին մէջը՝ ան իր սեպհական ժո-  
 դովուրդը սովէն ապրեցնելու մէկ  
 գործիք մը ըլլաւ, որ նոյն ժողովուրդը  
 ճշմարիտ Աստուծոյն զխտութիւնը ու  
 երկրպագութիւնը պիտի պահէին. ու  
 նոյն ժողովուրդէն ետքի տարիներուն  
 մէջը առաւել զօրաւոր մէկ ազատիչ  
 մը պիտի ելլէր: Յիսուս՝ աշխարհի  
 փրկիչը: Աստուած Յովսէփին մահը  
 Խարայեւացիներուն հաւատքը՝ իրենց  
 հարեբուն եղած խոստումներուն մէ-  
 ջը զօրացունելու պատճառ մը ըլլաւ.  
 ու ան երկիրը դառնալու բաղձանքը  
 իրենց մէջը ողջ պահել տրվաւ, ուր  
 տեղ որ մէկ սեպհական ազգ մը պիտի  
 ըլլային, ուրկէ Քրիստոս պիտի ծը-  
 նէր՝ ու չարչարանք քաշէր ու մեռ-  
 նէր. ու անկէ փրկութեան աւետաւոր  
 լուրերը պիտի քարոզվէր բոլոր ետ-  
 քի բնակիչներուն:

Ան զարմանալի երազները՝ որ Յով-  
 սէփ իր մանկութեան ժամանակը սե-

սեր էր : որոնք Մատուծոյ զօրութեամբ  
 ըր անոր մտքին վրայ յառաջ եկած  
 էին քիչ մը օգնութիւն ըրին : Յով-  
 սէփին որ նախախնամութեան զարմա-  
 նալի գործքերը կատարէ :

Ինքը կիմանար որ՝ մէկ հարկաւոր  
 պաշտօն մը պիտի ունենար ընելու .  
 թէպէտ անոր ինչ ըլլալը չէր կրնար  
 ըսէր :

Մ բաները անշուշտ Յովսէփին  
 միտքը բանալու ու ան գերագոյն վի-  
 ճակին հասցընելու պատճառ կըլլային  
 որուն մէջը ինքը պիտի դրվէր :

Նաև իր երազներուն կատարվին  
 ալ Մատուծոյ վրայ ունեցած հաւատ-  
 քը զօրացուցած պիտի ըլլայ :

Ինզամ մը տեսաւ որ եղբայրները  
 իր առջևը եկան ու իրեն երկրպագու-  
 թիւն ըրին : իր վեհափառութիւնը ու  
 իրենց նուաստութիւնը խոստանալով :  
 Ուրիշ անգամ մ՝ ալ անանկ ընծաներ  
 ընդունեց իր հօրմէն . որ կըցուցունէ-  
 ին թէ Յակօբ ու իր ընտանիքը յար-



մար դատեր էին նոյն յարգութեամբը  
ինքը պատուելու, որ իր բոլոր իշխա-  
նութեանը ու պատուոյն արժանի էր :

Աս ընծաները տըւած ժամանակնին  
եղբայրները կրկին ծուեցան իր առ-  
ջւը, ու երկրպագութիւն ըրին իրեն .  
ու երբոր իր հօրը ինչ վիճակի մէջ  
ըլլալուն վրայօք հարցումներ ըրաւ,  
անանկ մէկ պատասխան մը տըւին ա-  
նոր, որ իրենց հայրը իբր Յովսէփին  
ծառան ըրին : Օւեցան կրկին եր-  
կրրպագութիւն ըրին իբր թէ աս ա-  
նունովը՝ ու ասանկ խոնարհութիւն ը-  
նելովնին կուզէին իրեն ցուցընել որ  
բոլոր իրենց ընտանիքը աս խոնարհու-  
թիւնը Ազիպտոսի կառավարին հա-  
մար ունէին :

Ա երջապէս իր հայրը իր եղբայր-  
ները ու անոնց ընտանիքները ան տէ-  
րութեանը մէջը նստած ժամանակը  
տեսան, որուն վրայ ինքը կառավար  
էր :

Անշուշտ անոնք իր տէրութեան

տակը հպատակներ էին, ու իր բարութիւնովը կրկերակրովէին՝ ու իր իշխանութեամբը կրպաշտպանովէին :

Իրաւցընէ իր եղբայրներուն փունջերը իր փունջին առջևը ծռեցան երկրպագութիւն ըրին ու արեգակը լուսինը ու տասնըմէկ աստղերը իրեն խոնարհութիւն ըրին :

### Գ. Լ. ՈՒ Խ. Լ. Ե. Լ. :

Յովնէփին լարսը : Աստուծոյ զլոյս «նեցած իր զօրութիւն հասարակ : Աստուծոյ ճշմարիտ գիտականացութեան հիմն առ է : Աստուծոյ խորհրդացողը Աստուծոյ զլոյս առ հասարակ «նեց՞ Թ :

Աստուած՝ ինչպէս որ տեսանք շատ մեծ գործքեր ունէր Յովսէփին ընել տալու, ու երբոր անոնք կատարվեցան, ինքը իր հաւատարիմ ծառան իրեն առաւ : Ան անշուշտ կը հաւատանք որ Աբրահամին Իսահակին,

Յակոբին , ու քոլոր Տէրօջը փրկած  
ներուն քովն է :

Ու քանի որ իր ոսկորները ան ի  
րենց հօրը խոստացված երկրին մէջը  
պահված են , իր հողին ան երկնային  
Քանանու երկրին երջանկութիւնը ու  
փառքը յաւիտենական հանգստու  
թեամբ կրվայելէ :

Իմ սիրելի զաւկրներս միտվընիդ  
ան երկնային ժառանգութեանը շտկե  
լու ու ձեր յոյսը անոր վրայ հաստա  
տելու համար էր , որ ես աս Յովսէփին  
պատմութիւնը գրելու այնչափ ջանա  
ցի : Ուստի իմ գործս աւարտելէն ա  
ռաջ՝ կուզեմ ձեզ խորհիլ Մտու  
ծոյ տալու շնորհքովը , թէ որչափ ա  
ռաւել ձեզի հարկաւոր է պատրաստ  
գտնելիլ , որ երբոր աշխարհքին վը  
րայէն ձեր աշխատութիւնները լմըն  
ցունելու ըլլաք , երկնքին յաւիտենա  
կան հանգստութեանը մէջ մտնաք , ու  
յաւիտեանս յաւիտենից Տիրօջը քո  
վըն ըլլաք :

Քանի որ Յովսէփին օսկորները Ազիպտոսի մէջ էին, իր աղգականներուն ցանկութիւնները բորբոքել տրվին ան իրենց հօրը երկիրը դառնալու: Ասանկ ալ Յովսէփին վարքին յիշատակութիւնը ձեր սրտին մէջը մէկ զօրաւոր բաղձանք մը յառաջ բերէ անոր եղած տեղը՝ ան երկնաւոր երկիրը երթալու, որուն Քանան շատ անյարմար ու անկատար նմանութիւն մը ունէր:

Քիչ մըն ալ Յովսէփին վարքին երեւելի յատկութիւններուն վրայօք մտմտանք, որ շատ արժան է մեզի անոր նմանելու ու նայինք թէ արդեօք նոյն վարքէն մենք ալ ունինք մի:

Յովսէփ շատ զօրաւոր հաւատք մը ունէր Աստուծոյ վրայ. ինքը Աստուած մարմնաւոր աջվրներովը չէր տեսեր. բայց անոր հութիւնը կը հաւատար, ու դիտէր որ անիկա անհուն զօրութիւն, խնաստութիւն, արդարութիւն, բարութիւն ու ճշմարտութիւն ունեցող մէկ Ասկ մըն էր:

Յովսէփ կը հաւատար որ՝ Մատուած զանազան ժամանակ Մքրահամին , Իսասահկին , ու Յակոբին հետ խօսեր էր . ու իր հայրը իրեն ինչ որ սորվեցուցեր էր նէ ան խօսածներնուն վրայօք ճշմարիտ էր , ու անոնց բոլորն ալ անշուշտ պիտի կատարվէին :

Ինքը կը հաւատար որ բոլոր իր խորհուրդները , զգացումները , ու վարքը Մատուծոյ համար պիտի ըլլան : Մասնկ ալ հանդերձեալ կեանքին մէջը Մատուած անոնք միայն երկինքը պիտի ընդունէ , որոնք զինքը կը սիրեն , ու իրեն կը հնազանդին . ու մեղաւորները իր առջևէն յաւիտեան պիտի վաճառէ : Արքեւի է Յովսէփ քիչ մը տեղեկութիւն ունէր Վրխատոսի վրայօք , ու անոր դալստեանը կը սպասէր իբրև իր Փրկիչը ու յոյսը սեպելով :

Ինչու որ Մքրահամ : Յիսուսի Վրխատոսի օրը տեսաւ ու ուրախացաւ .

ու չի տարակուսւիլի որ Աբրահամաս  
գիտութիւնը իր տղոցն ալ չի սորվե-  
ցուց , ու անոնք ալ իրենց տղոցը . ու  
աս կերպով Յակոբ ու իր ընտանիքը  
տեղեակ էին աս գիտութեանը վրայօք :

Պօղոս առաքեալին Աբրայեցւոց  
գլխած թուղթին ժառերլորդ գլխուն  
մէջը պիտի գտնանք՝ որ Յովսէփ ան  
մարդոցը հետ մէկ տեղ սեպւեցաւ ,  
որոնք որ ընտիր էին Աստուծոյ վրայ  
ունեցած զօրաւոր հաւատքներնուն  
համար . ու անոր խոստումները հաս-  
տատ բռնելնուն համար :

Կըսվի թէ հաւատքով Յովսէփ իր  
մեռնելու ժամանակը Խարայէլի զաւ-  
կըներուն ելլալը ըսաւ , ու իր ոսկոր-  
ներուն համար պատուիրեց :

Աս ասանկ ըլլալուն պատճառը ան  
էր որ ինքը մէկ անշարժ վստահու-  
թիւն մը ունէր Աստուծոյ խոստմանը  
վրայ . որ Խարայէլացիները կրկին  
Քանան պիտի դառնային ու ան զը-  
ւարձալի երկիրը բուն իրենց երկրին  
պէս պիտի վայելէին :

Բայց ինչպէս որ ասանկ մէկ վստա-  
հութիւն մը ունէր Աստուծոյ ան Իս-  
րայէլացւոց ըրած խոստումներ վրայ՝  
ու կը հաւատար անշուշտ անոնց կա-  
տար վե՛լուն , անանկ ալ նոյն ապահո-  
վութիւնը ունէր բոլոր Աստուծոյ  
խոստումունքներուն ու ըսածներուն վը-  
րայ , ու կը հաւատար որ անոնց բոլորն  
ալ պիտի կատարվին :

Յովսէփին վարքին , խորհուրդնե-  
րուն , զգացումներուն , ու բնաւորու-  
թեանը մէջը՝ ինչ աղէկ բան որ կար՝  
ճշմարիտ ու ուղիղ , և Աստուծոյ  
կամքին ալ հաւասար՝ անոնց բո-  
լորն ալ աս կենդանի ու զօրա-  
ւոր հաւատքէն առաջ եկած էր : Ա-  
նոր հաւատքը ան ամուր ու ծանր քա-  
րերուն կը նմանի , որ հողին մէջը խո-  
րունկ ու հաստատ կը թաղվին . ու ա-  
նոնց վրայ տունը կը շինվի ու կը կայնի :

Աս բանը ճարտարապետները շատ  
աղէկ գիտեն . ու թէ որ ուզեն մէկ  
տուն մը հաստատ կանգնեցնել՝ անոր

հիմը շատ հաստատ ու ամուր կըշի-  
նեն : Աստուծոյ վրայ հաւատք ունե-  
նալը վարքին բոլոր ճշմարիտ դերա-  
դանցութեանը հիմն է : Առանց ասոր  
կրնայ ըլլար որ աղէկութեան նշոյլ  
մը կամ թէ դրսըվանց վարքի մը  
յատկութիւն երևայ . բայց ճշմարիտ  
դճացումներ չի կրնար ըլլալ սրտին  
մէջը :

Մինչև որ մէկ տղայ մը չի հաւա-  
տայ թէ իր հայրը բարի ու աղէկ  
ծնողք մըն է , և իր ընտանիքը ա-  
ղէկ կըկառավարէ ու անոնք աղէկ ու  
երջանիկ ընելու համար ամէն բան  
կուղէ ընել , և թէ անոր պատուէր-  
ները արդար են , սպառնալիքները  
'ի գործ պիտի դրվին ու խոստում-  
ները պիտի կատարվին . ու մինչև որ  
ասանկ մէկ մեծ վտահուլութիւն մը չու-  
նենայ իր ծնողքին վրայ՝ ճշմարիտ սէր  
ու հնազանդութիւն մը չի պիտի ունե-  
նայ :

Թէպէտ կրնայ դրսըվանց անանկ բա-



ներ ընել , որ սիրոյ ու հնազանդու-  
թեան արտաքին երևոյթ մը ունենայ .  
սակայն սրտին մէջը անոնց համեմատ  
զգացումներ չի պիտի կրէ , ու մէկ  
հնազանդ ու սիրելի զաւկի մըն ալ  
վարք չի պիտի ունենայ :

Վմանապէս՝ մինչև որ դուք ալ  
Յովսէփին պէս ճշմարիտ ու զօրաւոր  
հաւատք մը չունենաք Վստուծոյ ձեր  
երկնաւոր Հօրը վրայ՝ դուք ալ ճշմա-  
րիտ սէր ու հնազանդութիւն մը չէք  
կրնար ունենալ իրեն . ուղիղ խոր-  
հուրդներ , զգացումներ , ու բարի  
վարք չէք կրնար ունենալ . ճշմարիտ  
վարքի մը ազնուութիւն չէք կրնար  
ձեռք ձգել , ու չէք կրնար ալ պատ-  
րաստըվիլ երկիկնքը երթալու երբոր  
մեռնելու ըլլաք :

Նրդեօք աս հաւատքը Վստուծոյ  
վրայ ունի՞ք մի , ու Վստուածաշուն-  
չին մէջի բոլոր ձեղի սորվեցուցածնե-  
րուն , բոլոր իր պատուիրանքներուն ,  
խոստումներուն , ու սպառնալիքնե-  
րուն կը հաւատա՞ք մի :

Թէ որ Յովսէփ՝ Եստուծոյ ան խոստմունքին միայն հաւատալու ըլլար, այսինքն Խարայեւացոց Վանան դառնալուն՝ ան ատենը աս բանը ամենեւին կարող չի պիտի ըլլար ընելու, ու ճշմարտապէս բարի մէկ մարդ մը ըլլալու, ու ան երկնաւոր Վանանը երթալու համար պատրաստուիլելու: Ի՞նչ որ դուք ալ բոլոր Եստուծոյ Եստուածաշունչին մէջի սորվեցուցածներուն հաւատալու ըլլաք՝ անատենը աս ալ պիտի հաւատաք թէ մինչև որ ճշմարիտ ասպաշխարութիւն չընէք ձեր մեղքերուն վրայ, ու Տէր Յիսուս Վրիստոսին ասպաւինելու չըլլաք, ու ձեր հաւատքին ճշմարիտ ըլլալը չի ցուցընէք Եստուծոյ պատուիրանքներուն հընազանդելով, չէք կրնար փրկուիլ:

Արդեօք աս ճշմարտութիւններուն ուղիղ սրտով կը հաւատա՞ք մի. անոնք միտքերնիդ բերելով՝ ի գործ կը դնէ՞ք մի:

Յովնէիին՝ իր հօրը ցո-ցո-ցած «հրը ու հնա-  
 պանդո-լի-նը : Ըս զարտին ցարկո-լի-նննն-  
 ըն՝ ինչ որ ճշմարիտ ու հասարակութեան ըլլան, Ըս-  
 րո-ծոյ զրոյ հո-տար ունի-նարէնն տառը ի-  
 գտն : Ըրդեօր իտրդոցողը ի՞նչպէս իր զարմէ  
 իր ծնողացը հետ : Յովնէիին իր էղբայրնե-  
 րոն զրոյ ունի-ցած մեծ հարդաս-իբո-լի-նը ու  
 «հրը : Ըսրո-ծոյ ու Քրիստոսի հո-տարալը՝  
 «բիշնիբոնն զրոյ «հր ունի-նար ի-րոց : Ըրդ-  
 եօր իտրդոցողը տա «հրը ունի՞ մի :

Յովսէփին՝ Ըստուծոյ վրայ հաւատք  
 ունենալուն մէկ պտուղն ալ՝ իր  
 ծնողացը վրայ ունեցած զարմանալի  
 սէրը ու պարտականութիւնն էր : Ըս-  
 ւ ըս զարքրս մէկ ուրիշ գերազանց  
 արդիւնքն էր :

Ես շատ տղաք գիտեմ որ մէկ  
 քաղցր ու սիրելի բնաւորութիւն մը  
 ունին, ու շատ սէր ու հնազանդու-  
 թիւն կրցուցունն իրենց ծնողացը,  
 սակայն Յովսէփին ունեցած հաւատ-

քին պէս Մատուծոյ վրայ հաւատք մը  
 չունին : Բայց արդեօք աս բանը ամէն  
 ժամանակ՝ ու նաև իրենց ծնողքը Մա-  
 տուծոյ բարեկամները սեպելով մի  
 կընեն , ( ինչպէս որ Յակոբ Մատու-  
 ծոյ մէկ բարեկամն էր ) . երբոր Մա-  
 տուծոյ պատուէրները իրենց կըսոր-  
 վեցընեն , ու անոնց հնազանդեցընելու  
 կըջանան : Ո՛հ . աս տեղ շատ մեծ  
 տարբերութիւն մը կայ :

Շատ ծնողքներ կան որ իրենք Մա-  
 տուծոյ վրայ կենդանի հաւատք՝ ու  
 Քրիստոսի վրայ հաստատ յոյս չու-  
 նին . և անանկ կապրին ու շարժմունք-  
 ներ կընեն , որ գրեթէ ամենևին եր-  
 կինք ու դժոխք չի կայ . ու անանկ կը-  
 խորհին որ իբր թէ աս աշխարհէն  
 միայն իրենց տունը . ու իրենց տղաքն  
 ալ իրենց ըրածին ու զգացածին պէս  
 կըվարժեն :

Հիմայ զարմանալի բան մը չէ որ  
 ասանկ տղաքները աս կերպ ծնողքնե-  
 րը կըսիրեն . երբեմն ալ շատ սիրելի  
 ու հնազանդ կըլլան անոնց :

Թէպէտ աս անանկ բան մըն է , որ  
չատ քիչ կը պատահի . բայց ծնողք-  
ները Թող Յակոբին պէս ըլլան . Թող  
անոնք Աստուծմէ վախնան ու անոր  
հնազանդին , ու ջանան իրենց տղաքը  
Աստուծոյ վախովը վարժելու :

Անատենը իրենց տղաքները ճշմա-  
րիտ ու հաստատուն սէր ու հնազան-  
դութիւն մը չի պիտի ունենան իրենց  
ծնողացը , մինչև որ իրենք ալ Յով-  
սէփին պէս Աստուծոյ վրայ զօրաւոր  
ու հաստատ հաւատք մը չունենան :

Տղոցը երևելի պարտականութիւնն է՝  
իրենց ծնողքը սիրելու , ու անոնց հը-  
նազանդելու , իրենց քովը չեղած  
ժամանակն ալ իրենց քովը եղածի  
պէս . ինչպէս որ մեծ բաներու մէջ՝  
անանկ ալ պզտիկ բաներու մէջ .  
ինչպէս որ բերկրալի ու զուարճալի  
բաներու մէջ , անանկ ալ վշտի ու  
նեղութեան մէջ . ինչպէս որ աս  
կեանքին վերաբերեալ բաներուն

մէջ . անանկ ալ հանդերձեալ կեանքին վերաբերեալ բաներուն մէջ :

Կաւ իրենց ճնողացը վրայ ունեցած սիրոյն ու հնազանդութեանը մէջ ալ պէտք է որ մշտատե մնան , ու ասոնք իրենց բնութեանը մէջ պէտք է միշտ հաստատուն ըլլայ , ու մինչև կեանքերնուն վերջը տևէ :

Ճնողքները պէտք է որ իրենց տղոցը ասանկ սորվեցընեն՝ թէ ամէն ժամանակ ու որևիցէ բանի մէջ թէ յաջողութեան մէջ , թէ ճախորդութեան , թէ աւողջութեան մէջ , թէ հիւանդութեան , ու մանաւանդ ծերութեան ժամանակի եղած թուլութեանը ու տկարութեանը մէջ պարտին ջանալ իրենց ճնողքը հանգիստ ու երջանիկ ընելու :

Հիմայ թէ որ աս ճնողքները Բ.ս. տուծոյ վրայ ճշմարիտ սէր ունենային . արդեօք որչափ պիտի բաղձային իրենց տղաքն ալ Բ.ստուծոյ ու Գրկիչին բարեկամները ընելու . ու որչափ ողոր-

մելի սխտի ըլլային անոնք անող ջու-  
թեան ու մեղքի մէջ տեսնալու :

Չեր զգացումները ու վարքերը իմ  
լսածներուս հետ բաղդատեցէք ու ը-  
սէք ինձի թէ անոնց բոլորն ալ ճշմա-  
րիտ չե՞ն մի . այո՛ ճշմարիտ են . Ա-  
դուք ալ ճշմարտապէս սիրելի ու հը-  
նազանդ տղաքներ չէք կրնար ըլլալ ,  
ան ճշմարիտ սէրը ձեր ծնողացը վրայ  
չէք կրնար ունենալ , ու ձեր ծնողա-  
ցը վրայ ունեցած պարտականու-  
թիւններնիդ չէք կրնար կատարել ,  
մինչև որ Աստուծոյ վրայ Յովսէփին  
ունեցած հաւատքին պէս հաւատք մը  
չունենաք :

Ծնողքներնիդ սիրելը ու անոնց հը-  
նազանդիլը , Աստուծոյ ու Քրիս-  
տոսի վրայ ձեր ունեցած հաւատքէն  
առաջ կուգայ . ու շարունակ պար-  
տիք աղօթք ընել , որ ձեր հաւատքը  
շատնայ . և Յովսէփին հաւատքին  
պէս հաստատ ու զօրաւոր հաւատք մը  
ըլլայ , ու ձեզ ալ առաւել սիրելի

ու հնազանդ ընել տայ անոնց՝ որոնք  
որ ձեզի համար այնչափ աշխատած  
են :

Ու թէ որ ձեզմէ ոմանք՝ իմ սիրելի  
զաւկընէրս, անհնազանդութիւն ըրած  
էք նէ ձեր ծնողացը, որ կարելի է ը-  
րած էք, մտմտացէք աս տեսակ վար-  
քին մեծ չարութեանը վրայօք :

Աս բանը ոչ թէ միայն մարդոց  
աչքին անարդ ու անհաճոյ կերեայ,  
հապա Աստուծոյ աչքին ալ առաւել  
ատելի կերեայ : Իրաւցընէ աս բանը  
Աստուծոյ պատուիրանքներուն մէկը  
աւրել է : Թէ որ նոյն մեղքին մէջը  
մնացիլի ու չապաշխարիլի . ան ժամա-  
կը Աստուծոյ բարկութիւնները ձեր  
վրայ պիտի դայ :

Աս բանը յայտնի կրցուցընէ որ  
զուք Աստուծոյ վրայ ճշմարիտ հա-  
ւատք՝ ու կատարեալ սէր չունիք ու  
իր կամքը կատարելու չէք բաղձար :

Արդեօք աս վիճակին մէջը մընա-  
լու կը համարձակիք մի :



Յուսէիին՝ Աստուծոյ վրայ ունեցած  
 հաւատքը ուրիշ զարմանալի ստուղ  
 մը առաջ բերել տրվաւ իր բնաւ  
 ըութեանը մէջ . այսինքն բարեգութ  
 ու քաղցր զգացումներ իր եղբայրնե  
 ներուն վրայ , ու անոնց համար զանա  
 զան աղէկութիւններ ընելու իղձ մը՝  
 որոնք իրեն այնչափ գէշութիւններ ը  
 րեր էին : Աւրիշ բան չէ , հապա մի  
 այն Աստուծոյ ու Ֆրիչին վրայ աս  
 տեսակ ճշմարիտ հաւատք ունենալն  
 է , որ մեզ Աստուածաշունչին մէջը  
 գրված Աստուծոյ ու Վրիստոսի վար  
 քին վերաբերեալ բոլոր բաներուն  
 կը հաւատայլնէ :

Աս նոյն հաւատքն է որ մեզ կա  
 ճիւղի Աստուած սիրելու , ու ա  
 նոր պէս սուրբ ըլլալու բաղձանք մը  
 ունենալու :

Միայն աս տեսակ հաւատքն է՝ որ  
 կրնայ մեր սրտին մէջը մեր ընկերնե  
 րը սիրելու համար մէկ ճշմարիտ սէր  
 մը յառաջ բերել տալ :

Ու թէ որ մենք մեր ընկերները անկեղծութեամբ սիրելու ըլլանք, ու անոնց աղէկութեանը համար ջանանք որ անոնք աս աշխարհիս մէջը ու դալու աշխարքին մէջը հանգիստ ըլլան, ան ժամանակը մեր անկեղծութեամբ Աստուած սիրելնուս մէկ յայտնի վկայութիւն մը կրնանք ունենալ :

Արդեօք աս մասին դուք ալ Յովսէփին պէս է՞ք մի . դուք ալ ձեր եղբայրներուն ու քուրերուն վրայ նոյն զգացումը ունի՞ք մի . ինչպէս որ Յովսէփ իր եղբայրներուն վրայ ունէր :

Արդեօք բոլոր ձեր զօրութեանը մէջ եղած աղէկութիւնը անոնց ընելու կը ջանա՞ք մի . ու անոնց հողիններուն աղէկութիւն ընելու կ'ընտանա՞ք մի :

Արդեօք մարդասիրաբար անոնք կը խրատէ՞ք մի երբոր անոնց գէշութիւն ընելը տեսնալու ըլլաք, ու դուք ձեզ մէկ բարի օրինակ մը կընէ՞ք մի անոնց՝ ձեր խօսակցութեանը ու վար-

քին մէջ : Ու աղօթք կընէ՞ք մի որ կա-  
րող ըլլաք աս բանը ընելու :

Արդեօք անոնց համար աղօթք կը-  
նէ՞ք մի , որ Աստուած իր սուրբ հոգին  
անոնց տայ՝ ու անոնք Վրիստոսի հե-  
տեողներ ընէ : Արդեօք համբերու-  
թիւն ու խոնարհութիւն կընէ՞ք մի եր-  
բոր ձեզ բարկացընելու ու նեղացընե-  
լու բան մը ըսեն , կամ ընելու ըլլան :

Արդեօք ռիս կամ վրէժխնդրութիւն  
կըզգա՞ք մի անոնց դէմ . արդեօք ա-  
նոնց թողութիւն կուտա՞ք մի . ու չա-  
րին փոխարէն բարին կըհատուցանէ՞ք  
մի . ու Աստուծոյ կաղաչէ՞ք մի , որ ա-  
նոնց յանցանքին ներում շնորհէ ու ա-  
նոնց առաւել բարի վարք ու զգացում  
ներ տայ : Ի՞նչ որ աս տեսակ վարք ու  
զգացումներ չունենաք ձեր եղբայր-  
ներուն ու քուրերուն վրայ , ան ժա-  
մանակը յայտնի կերեայ որ ձեր ըն-  
կերներուն , ու Աստուծոյ վրայ ալ  
ճշմարիտ սէր չունիք , ու նաև բոլոր  
վին տարբեր էք Յովսէփէն , ու բոլոր

սուրբերէն , որոնց հետ Յովսէփ հիմայ այնչափ երջանիկ է Մատուած սիրելով , ու իրեն ծառայութիւն ընելով :

Ու թէ որ դուք ալ ձեր առջի վիճակին մէջը մնալու ըլլաք , ամենեին արժանի չի պիտի ըլլաք ան աշխարհքը երթալու , ուր տեղ որ սէր , խաղաղութիւն ու ուրախութիւն կայ :

Ան աշխարհքը մէկը չի կրնար երթալ , քանի որ անոր մեղքերուն Վրիստոսի արիւնովը թողութիւն եղած չէ նէ . ու Վրիստոս ինքը ըսաւ . թէ որ դուք ուրիշներուն թողութիւն չի տաք դուք ալ Մատուածմէ թողութեան յոյս չէք կրնար ունենալ :

«Թէ որ մէկ մարդ մը ըսելու ըլլայ թէ ես Մատուած կրսիրեմ , ու իր եղբայրը կատէ , ան ստախոս է . ինչու որ ան՝ որ իր եղբայրը կրտեսնայ ու չի սիրեր նէ , ի՞նչպէս Մատուած կրնայ սիրել , որ ինքը չէ տեսած” : «Գունքու Տէր Մատուածդ բոլոր քու սըր-

տովղէ հողիովղէ , զօրուԹիւնովղէ , միտ-  
քովղէ , ու քու ընկերդ քու անձիդ պէս  
սիրէ” :

### Գ Լ Ո Ւ Խ Լ Ե Կ :

Յովակիմն հասարակութիւնը իր պաշտօնը  
խառնելընէ մեջը : Անոր օրինակները : Ան  
Բանը Աստուծոյ վրայ հասարակութիւնը  
յառաջ գալը : Արդեօք խորացողը սո հասարակ-  
ութիւնը ունի՞ մի :

Յովակիմ շատ քաջ ու զօրաւոր հա-  
ւատք մը ունէր Աստուծոյ վրայ .  
ինքը կը հաւատար որ Աստուծոյ աջքը  
ամէն ժամանակ իր վրայ էր . ու սա-  
բանը իրեն մէկ մեծ հաւատարմութիւն  
մը պատճառեց՝ ան մարդոցը պաշտօն-  
ները կատարելու որոնք որ զինքը բռն-  
ներ էին :

Ինքը ինչ վիճակի մէջ որ դրվէր ,  
աս իր վարքին յատկութիւնը կը ցու-  
ցընէր :

Յովսէփ իր մէկ քանի եղբայրնե-  
րուն զէջ վարքերը իր հօրը զրուցե-  
լը՝ իրեն մէկ սլարտականութիւն մը  
կըսեպէր, չէր վախնար աս սլարտա-  
կանութիւնը կատարելու :

Ինքը հաւատարմութեամբ իր հօրը  
հնազանդեցաւ . առաջ Սիւքէմ ու  
ետքը Ղօթայիմ երթալով՝ իր եղբայր-  
ները տեսնալու համար . որ թէպէտ  
անշուշտ պատճառ ունէր անոնց վրէժ-  
խնդրութենէն վախնալու :

Յովսէփ անանկ հաւատարմու-  
թեամբ Պետափրէսին տանը մէջ ծա-  
ռայութիւն կրնէր, որ Պետափրէս  
ինքը բոլոր իր տանը վերաբերեալ  
պաշտօնները անոր յանձնեց :

Ինքը երբոր մէկ բանտարդեալ մըն  
էր, ան ժամանակը անգամ հաւատար-  
մութեամբ բանտին տիրոջը կանոնները  
ու հրամանները կրկատարէր . ու ամէն  
բանի մէջ ալ իր վարքը միօրինակ  
էր . ասոր համար միւս բանտարդեալ-  
ներուն հոգը անոր ձեռքը տրւին . ու

բոլոր բանտին կառավարութիւնը ա-  
նոր յանձնելուցաւ : Անտարակոյս աս  
դժուար վիճակին մէջն ալ՝ որ ամէ-  
նուն կողմանէ խօսք առնող ու տրւողը  
ինքն էր , իր պարտականութիւնները  
կատարելու համար՝ նոյն հաւատար-  
մութիւնը կը պահանջէր :

Բոլոր աս բաները՝ իր հաստատուն  
ու ազնիւ բնաւորութիւնները կը հաս-  
տատէին . ու մեծ հաւատարմութեամբ  
ու յաջողութեամբ ուրիշ առաւել  
ծանր պաշտօններ կատարելու կը  
պատրաստէին :

Անտարակոյս Փարաւոն Յովսէփին  
վարքին վրայօք լսած էր Պետափրէ-  
սին քովը բանտին մէջը եղած ժամա-  
նակը . ու դիտէր որ ասանկ մէկ մար-  
դու մը հաւատարմութիւն կրնայ ըլ-  
լելիք :

Փարաւոն՝ Յովսէփը մինչև իր ա-  
թոռին մօտ բարձրըցուց , ու անիկա  
Եգիպտոսի վրայ կառավար ըրաւ : Ան  
ծանր ու դժուարին վիճակին մէջը՝ ու

ան փորձանաւոր պարադաներուն մէջը տեսաք որ ինչ հաւատարմութեամբ իր պաշտօնը կրկատարէր : Ի՛նչ ճշմարտութիւնով թագաւորին բոլոր ուզածները առաջ կրտանէր՝ Եզիպտացւոց աղատութեանը համար . ու ինչ հաւատարմութեամբ բոլոր իր հօրը ու եղբայրներուն ըրած խոստումները կրկատարէր : Արդարեւ Յովսէփ միշտ Աստուծոյ կրնայէր՝ իր իր Սուրբ Հոգին ընդունելու համար , որ ինքը ասանկ հաւատարիմ ըլլայ : Ինքը գիտէր որ ամէն բարի խորհուրդ ու զգացում ու բաղձանք Աստուծմէ կուգայ : Ի՞նչ որ ինչ վիճակի մէջ որ կը գտնուէր , ինքը Աստուծոյ իմաստութեանը շնորհքին ու զօրութեանը կարօտ ըլլալը գիտէր :

Ինքը Աստուծոյ վրայ ճշմարիտ հաւատք ունենալուն համար՝ միշտ աղօթքի հետ էր :

Նայեցէ՛ք ինչ է մէկ ճշմարիտ բարի մարդ մը ըլլալը : Ասանկ մէկ



մարդ մը ինչպէս որ Աստուծոյ վերաբերեալ պաշտօնները ուղղ ութեամբ կրկատարէ, անանկ ալ իր ընկերներուն վերաբերեալ պարտականութիւնները բոլորը հաւատարմութեամբ կրկատարէ: Ասանկ մէկ մարդ մը ինչպէս որ պղտի բանի մը մէջ հաւատարիմ կըլլայ անանկ ալ մեծին մէջ. իր ընկերներուն աչքէն հեռու եղած ատենը իրենց քովը եղածի պէս: Ինչպէս որ յաջողութեան մէջ, անանկ ալ ձախորդութեան մէջ: Ինտոր որ անիրաւութեան ու բռնութեան մէջ հաւատարիմ կըլլայ, անանկ ալ հաճութիւն ու արժանի հատուցում ընդունելուն մէջ:

Ասանկ էր Յովսէփին հաւատարմութիւնը: Արդեօք ձեր հաւատարմութիւնն ալ ասոր պէս է՞ ձեր ծնողացը, ձեր վարժապետներուն, ձեր վարպետներուն, ու բոլոր ձեր խօստացած մարդիկներուն, ու ան մարդոցը՝ որոնց պաշտօնները պիտի

կատարէք : Առանց ասանկ մէկ հա-  
ւատարմութեան մը ձեր վարքերը ա-  
մէն բանի մէջ մեծ ըլլայ կամ թէ  
պղտիկ շատ անկատար պիտի ըլլայ  
ձեր ընկերներուն կարծիքին մէջք ան-  
գամ :

Ին ժամանակը անոնց հաւատար-  
մութիւնը ընդունելէն պիտի արգել-  
վիք ու մէկ հարկաւոր գործ մըն ալ  
ձեզի չի պիտի յանձնուի :

Ու կարելի է շատ դժուարութիւն  
պիտի դոնաք, ձեռք զարկած բաներ-  
նիք յառաջացունելու :

Բայց ամենէն գէշը աս պիտի ըլլայ  
որ ձեր խիղճը ձեզ պիտի դատապար-  
տէ : Աւրիշներուն գէշութիւն ընելնիդ  
պիտի իմանաք . ու ինչպէս որ կուգէ-  
իք թէ անոնք ձեզի ընէին, դուք ա-  
նոնց անանկ չընելնուդ համար անոնց  
հաւատարմութեանը ու պատուոյն չի  
պիտի արժանանաք :

Նաև Աստուծոյ շնորհքները պիտի  
կորսընցունէք . ամէն ժամանակ ու

ամէն տեղ անհաւատարիմ մարդիկնէրը ինքը կրտեսնայ, ու իր դիտողութենէն չէք կրնար փախչիլ :

Աստուծոյ՝ համար տալու էք բոլոր ձեր ընկերներուն վերաբերեալ պարտականութիւնը չի կատարելնուդ համար : Աղօթք ըրէ՛ք, ու ջանացէ՛ք որ աս տեսակ յանցանքէն ու յիմարութիւնէն հեռու պահվիք : Աղաչեցէ՛ք որ Աստուծոյ վրայ ճշմարիտ հաւատք ունենաք, ու անոր աչքը միշտ ձեր վրայ ըլլալուն համար խորունկ ու անփոփոխ զգացում մը ունենաք . ու հաւատարիմ ըլլալու համար իրմէն աւրիութիւն ու զօրութիւն խնդրեցէ՛ք, որ կարող ըլլաք ձեր ընկերներուն բրած խոստումներնիդ տեղը տանելու :

Ա ասն զի իր ուզածը աս է, որ դուք ձեր սէրը ասանկ ցուցնէ՛ք, ու ձեր հնազանդութիւնն ալ իր պատուիրանքներուն :

### ՅՈՒՆԻԿՈՒՄ ԼՏ՝

Յոզակիկին զորոյո-լի-տնն պէ՛մ պնէլը-ն ա-  
 ըն-լի-նը : Լ՝ս աբիո-լի-ննը Լ՝ս արո-ժոյ զլայ  
 հա-ապոս ո-ննի-նալէն յա-աաջ գ-ալը : Արար-  
 ցողին նոյն զորոյո-լի-ննի-նը պարարտ-ի-լը . ո-  
 նոնն ինչպէս յաղ-լի-լը-նն պօրո-լի-նն առնի-լը-  
 ի-լը-պը : Յոզակիկին՝ Լ՝ս արո-ժոյ զլայ ո-ննի-նաժ  
 յոյսը , ո- ա՛նոր իմանցը հնապան-ի-լը : Լ՝-  
 սոնց՝ Լ՝ս արո-ժոյ զլայ ճշմարիտ հա-ապոս ո-  
 ննի-նալէն յա-աաջ գ-ալը : Լ՝րդե-օր իարարացող  
 առ յոյսը ո- հնապան-ի-լը-ննն ո-ննի՞ օ :

**Յ**ովսէփին պատահած զիպուածին  
 մէջը տեսանք՝ որ իր Լ՝ստուծոյ վը-  
 լայ ունեցած հաւատքը զինքը սրճափ  
 կարողացուց ան մեծ մեղքին դէմ զնե-  
 լու ու յաղթելու :

Իր ան ժամանակի բրածէն պատ-  
 ճառ ունինք հաւատալու թէ իր Լ՝ս-  
 տուծոյ պատուիրանքներուն վրայ ու-  
 նեցած ուժը , ու անոր դէմ մեղանչե-  
 լու վախը , երբոր ան մեծ փորձու-

Թիւնը իրեն պատահեցաւ , իր բնու-  
թեանը երևելի մէկ նշանն էր :

Նստարահոյս Յովսէփին աս տեսակ  
շատ փորձութիւններ պատահած էր .  
դէշ ու կուտպաշտ մարդոց մէջ բնա-  
կելով , ու իր կեանքին զլիսաւոր մա-  
սը Թաղաւորներու ու շատ հարուստ  
ու պատվաւոր մարդոց հետ անցունե-  
լով . հաւանական է որ իրեն զուար-  
ձութեան ստիպել ու մեղքի հրաւի-  
րել եղած պիտի ըլլայ , որ ինքը Նստ-  
տուճոյ սիրուն ու ծառայութենէ բաժ-  
նելի :

Իր բոլոր վարքը՝ ինչպէս որ իր  
պատմութեանը մէջը կերևայ , մանա-  
ւանդ անոր վերջին մասին մէջը , կը-  
ցուցնէ թէ ինքը շատ փորձութիւն-  
ներու դէմ գրած պիտի ըլլայ . ու իր  
սիրտը ու բոլորովին ինքըզինքը իր  
հարերուն Նստուճոյն յանձնած պիտի  
ըլլայ :

Փորձութիւնները միայն հարուստի  
կամ զօրաւոր մարդոց մէջ չեն պատա-

Տիր , հասլա ընդհանուր կըլլայ . ոչ վիճակը ու ոչ ալ հասակը անկէ ազատ կընայ ըլլար :

Չեղի ալ երբեմն փորձութիւններ կըպատահին : Ամանք ձեր ընկերներէն կըհրաւիրեն որ հետերնին տեղ երթաք կամ անանկ բաներ ընէք , որ դէտէք թէ անոնք դէշ բաներ են , կամ թէ անանկ զմայլեցուցիչ բաներ կըբերվի առջենիդ , որոնց հետեւիլը ու միաբանիլը Մատուած մուցընելու , ու ձեր անօր վերաբերեալ պարտականութիւնը միտքէ հանելու պատճառ կըլլան :

Հիմայ երբոր ասանկ վիճակներու մէջ իյնալու ըլլաք արդեօք ինչպէս կըլլայ ձեր վարքը . արդեօք հաճութիւն մը կուտաք սա փորձութիւններուն . կամ թէ հոգսէփին պէս դէմ կըդնէք անոնց ու կըյաղթէք :

Ա՛րչափ հաճութիւն տալու ըլլաք անոնց , այնչափ ձեր դէմ դնելուն զօրութիւնը կըբիջնայ . բայց որչափ

յաղթելու ըլլաք : այնչափ զիւրին  
կըլլայ վերջի դալու ամէն մէկ ջանքը  
ու յաղթութիւնը :

Փորձութեան դէմ դնելու ու անիկա  
յաղթելու համար՝ Յովսէփին ունե-  
ցածին պէս մէկ զօրաւոր հաւատք մը  
պարտիք ունենալ Աստուծոյ վրայ :

Ասանկ պիտի դգաք թէ ինքը միշտ  
ձեր քովն է , ու բոլոր ինչ որ կըսէք  
ու կընէք ինքը կըրտեսնայ . ու ձեր  
ներքին խորհուրդները կըքննէ :

Պարտիք գիտնալ թէ շատ մեծ  
գէշութիւն ու յիմարութիւն է ասանկ  
մէկ բարի ու արդար էակի մը դէմ ա-  
նիրաւութիւն ընելը , որուն տհաճու-  
թիւնը շատ աղէտալի ու ամենաթըշ-  
ուաւ գէշութիւններուն մէկն է . ու  
իր հաճութիւնը միայն մէկ ճշմարիտ  
երջանկութիւն մըն է :

Երբոր ան փորձութիւնը Յովսէ-  
փին պատահեցաւ իր բարեպաշտ զը-  
րուցվածքը աս էր : Աս ինչպէս աս  
մեծ մեղքը ու գէշութիւնը Աստուծոյ

դէմ կրնամ ընել : Անանկ ալ դուք  
պարտիք աս խօսքը ըսել երբոր փոր-  
ձութեան հանդիպելու ըլլաք :

Աւանց ասոր ու աւանց Աստուծոյ  
վրայ ճշմարիտ հաւատք ունենալու ,  
ուրկից որ նոյն խօսքը յառաջ կու-  
գայ . աս դէշ նենգաւոր աշխարհին  
մէջը միշտ վտանդներու մէջ պիտի  
ըլլաք . ու թէպէտ անոնցմէ շատ չէք  
վախնար սակայն աս աշխարհիս ու  
հանդերձեալ աշխարհին մէջը ձեր  
կործանմանը պատճառ կըլլան : Վ.բ.  
ըիստոսի գացէ՛ք . իրեն ասլաւինեցէ՛ք  
իրեն անունովը աղաչեցէ՛ք որ ինքը  
վերէն իր զօրութիւնը ձեզի խրկէ որ  
կարող ըլլաք փորձութեան դէմ դնե-  
լու , ու ձեր հողիներուն թշնամիներ-  
ուն յաղթելու՝ նոյն զօրութիւնովը :

Թէ որ աս բանը ընելու զանցա-  
ւութիւն ընէք մէկ փորձութիւնը  
միւսին ետեւէն պիտի հաճիք կատա-  
րելու . մինչև որ մեղքին գերի ըլլաք



կիյնամ : Աւրեմն որչափ անգամ ձեր  
կամքը ձեր ծնողացը ու ուրիշներուն  
կամքին դէմ եղած պիտի ըլլայ . որ  
Մատուած ձեզի հրամայած է անոնց  
հնազանդելու ու աս կերպով և ու-  
րիշ զանազան կերպերով Մատուծոյ  
կամքին դէմ դրած պիտի ըլլաք :

Նաև որչափ անգամ բարկութեան  
ու նեղութեան ու տրտունջի մը ողի՝  
ու ձեր ծնողացը ու բարեկամներուն  
ձեր աղէկութեան համար խորհած  
բաներուն դէմ դժգոհութիւն մը՝ ու  
Մատուծոյ նախախնամութեանը ձեզի  
ըրած բաներուն դէմ տհաճութիւն մը  
ցուցըցած պիտի ըլլաք :

Արդեօք շատ անգամ պատահած  
չե՞ն մի , ու ասոնց բոլորն ալ չի՞ մի  
ցուցընէր թէ՛ դուք որչափ կարօտ էք  
ձեզ Մատուծոյ առջին խոնարհեցունե-  
լու , ու ապաշխարութիւն ընելու բո-  
լոր ասոնց , ու միւս մեղքերուն վրայ ,  
ու Տէր Յիսուս Քրիստոսին ապաւի-  
նելու թողութեան համար , ու Մ.

տուժոյ ընդունելի ըլլալու համար .  
 ու ջերմեռանդ սրտիւ աղօթք ընելու  
 հողւոյն սրբոյ համար , որ ձեզ ա-  
 ռաջնորդէ Վատուժոյ ապաւինելու ու  
 իրեն կամացը բոլորովին հնազանդե-  
 լու :

Գ. Լ. ՈՒԽԽ. Լ. Թ. :

Յաճեալին խոնարհութիւնք : Լնոր զկայ-  
 ութիւննեւրը . Բարի հարգոց մը ի դաժ խո-  
 նարհութիւնք Լնոր զկայ հաւատարմութի-  
 նալէն յառաջ իոգոց , արտեւոյ ի սրբոցոց  
 առ խոնարհութիւնք ունի՞ մի , առանց մար-  
 Բարիստանի հետ հաղարհութիւն չէ՞ իրնար ու-  
 նիւնալ :

Խոնարհութիւնք Յովսէփին բնաւ  
 րութեանը մէկ յատկութիւնն էր ,  
 կարծեմ թէ զխոնարհութեան արժանի  
 մէկ բան մըն է ան : Արտելի է միւս  
 բաներուն պէս այնչափ զարմանալի  
 մէկ բան մը չէ . սակայն կերեւայ թէ՞  
 իր խոնարհութիւնը շատ էր :

Թէ որ անանկ հպարտ մէկը ըլլալու ըլլար ու ինքըզինքը հպարտացընելու մէկ դիտաւորութիւն մը ունենար, Պետափրէսին տանը մէջի բոլոր պաշտօններուն վրայ վերահայտեղած ատենը, շատ առիթներ կար ասանկ զգացումներ իր սրտին մէջը ոտք հանելու:

Ու թէ որ ինքը իր մեծութեամբը հպարտանալու ըլլար, անհնար էր որ Մատուծոյ վրայ ասանկ մէկ հաւատք մը ունենար, ու անոր դէմ ասանկ մեղք գործելու վախ մը ու ան զօրաւոր փորձութեանը յաղթելու զօրութիւն մը:

Մատուած հպարտներուն հակառակ է, բայց խոնարհներուն շնորհք կուտայ. թէ որ Յովսէփ խոնարհ չըլլար նէ, արդեօք աս շնորհքը իրեն կըտրվէր մի: Մ բաներուն մէջը շատ առիթներ կար իր հպարտութիւնը շարժելու, երբոր ինքը Վարաւոնին առջևը բերվեցաւ. թէ որ ինքը ընդ-

Հանրապէս ու սովորաբար խոնարհ  
մէկը չըլլալու բլլար :

Հատ իմաստուն Կազիպտացիներ՝  
որոնք որ Թագաւորին ու ժողովրդոցը  
քով շատ յարգի էին , ոչինչ տեղը  
Չանացին անոր երազները մեկնելու .  
բայց վերջը Յովսէփ պատանին  
խրկրվեցաւ անոնք մեկնելու , ու ա-  
ղաչեցին իրեն՝ որ աս բանը ընէ ին-  
չու որ ան իմաստուն մարդիկները  
խոստովանեցան , որ ան բանը իրենց  
զխտութենէն շատ հեռու էր :

Փարաւոն Յովսէփին հետ անանկ  
մէկ կերպով մը խօսեցաւ որ իբր Թէ  
իր երազները մեկնելու զօրութիւնը  
միայն ան ունէր . բայց Թէ որ Յովսէփ  
աս զօրութիւնը Աստուծմէ ընդունեցի  
ըսելուն տեղը , խոստովանէր Թէ իր  
բուն կարողութենէն յաւաջ եկած  
էր , ան ժամանակը գիտէր որ Փարա-  
ւոն ու բոլոր իր իմաստուն ու պատ-  
ուաւոր մարդիկները պիտի զարմանայ-  
ին , ու յարգէին Թէ աս մարդկային

էութենէն տարբեր մէկ մարդ մըն է :

Ինչ սաստիկ փորձութիւն մը պիտի ըլլար աս, թէ որ Յովսէփ ճշմարտութիւնը ծածկեր . ու ըսեր թէ աս զօրութիւնը իզմէ է :

Ըն ժամանակը Յովսէփին հաւատքը շատ զօրաւոր ու հաստատ էր . զիտէր որ բոլոր ան երազները մեկնելուն զիտութիւնը վերէն էր եկած : Ըն մէկ յարմար պարկեշտութիւնով մը ու ճշմարիտ խոնարհութիւնով մը զըուցեց ատ իմ բանս չէ . Ըստուած փարաւոնին խաղաղութեան պատասխան մը պիտի տայ :

Իր հետեւեալ բարձր աստիճանին մէջը երբոր Ազիպտոսի վրայ կառավար եղաւ, ու բոլոր իր հօրը ու եղբայրներուն հետ վարված ատենը՝ մէկ պարծենալու ու հպարտութեան նշան մը ամենեւին վրան չէր տեսնուիր :

Ըստը ներհակը մէկ մարդասէր ու ներողամիտ ոգի մը ունէր . ու իր ծեր հօրը շատ սէր ու պատիւ կըրցուցնէր

ու իր մեծութիւնը միշտ Մատուծոյ  
 նախախնամութենէն առաջ եկած կը  
 սեպէր , ու զարմանալի խօսքերով իր  
 եղբայրներուն վախը կը բարեխառնէ .  
 երբոր իր արդար վրէժխնդրութենէն  
 կը դողային : (Մի վախնաք , ինչու որ  
 ես Մատուծոյ տեղն եմ մի) բոլոր աս  
 քաները յայտնի կը ցուցնեն թէ՛ ինքը  
 իր բնաւորութեանը մէջ ճշմարիտ  
 խոնարհութիւն մը ունեցած պիտի  
 ըլլայ : Բոլոր խոնարհ ու բարի մարդ  
 կանց բնաւորութիւնն ալ ասոր պէս  
 է , թէ և ինչ կերպ ըլլայ իրենց հա  
 ըրատութիւնը կամ գիտութիւնը աս  
 տիճանը կամ պատիւը :

Իրենք հովսէփին պէս գիտեն թէ՛  
 շատ տգէտ են թէ և ուրիշները իրենք  
 իմաստուն կարծեն , իրենց ինչպէս  
 անկատար ու մեղաւոր ըլլալնին գի  
 տեն թէ և ուրիշները իրենք սիրով ու  
 պատուով յարգելու ըլլան :

Մատուծոյ վրայ ունեցած հաւատք  
 նին իրենց կառաջնորդէ ան էակին

Նայելու որն որ ամբիժ մաքրութեամբ  
 ու անարատ սրբութեամբ լեցուն է .  
 ու ինքըզինքնին անոր առջևը կըխո-  
 նարհեցունեն :

Ու երբոր իրենց չորս կողմի եղող  
 ընկերներուն վրայ նայելու ըլլան , ու  
 տեսնան անանկ մէկը որ Մտուած չի  
 սիրէր ու իրեն ծառայութիւն չընէր .  
 ինքըզինքններնուն կըհարցունեն թէ  
 ո՞վ է ան որ մեզ անոնցմէ կըտարբե-  
 րէ :

Անոնք գիտեն որ իրենք բնականա-  
 բար ուրիշներէն աղէկ չեն , ու թէ որ  
 մէկ տարբերութիւն մըն ալ կայ նէ ,  
 անիկա Մտուածոյ շնորհքը ըրած պիտի  
 ըլլայ :

Ու նաև իրենց ընկերներուն հետ  
 խօսակցութիւն ընելով մէկ հեզ ու  
 հանդարտ ոգի մը պիտի ցուցնեն .  
 միտքերնին բերելով թէ « խոնար-  
 հութիւնը պատիւէն առաջ է » . ու  
 նաև « երանի հողով աղքատներուն ,  
 ինչու որ անոնցն է երկինքին արքայ-  
 ութիւնը » :

Արդեօք դուք ալ ան հողևով աղքատներուն կարգին մէջն է՞ք մի . ու նաև դուք ձեզ Աստուծոյ առջին ճրշմարտապէս կրխոնարհեցունէ՞ք մի ձեր մեծ անարժանութեանը համար : որ դուք իրեն դէմ այնչափ մեղք կրգործէք : ու ինքը այնչափ քիչ կամ կարելի է ամենեւին չէք սիրէր ու իրեն չէք ծառայէր :

Արդեօք ինչպէ՞ս ընկերութիւն կը նէք ձեր չորս կողմի եղողներուն հետ : ու անոնց հետ ինչպէս կրվարովիք :

Արդեօք հպարտութիւն մը կրդա՞ք մի ձեր դէմքին ու հանդերձին վրայ . ձեր ընտանիքին կամ որ և իցէ ստացուածքներուն վրայ . կամ թէ ձեր կեանքին մէջի ակնկալութիւններուն վրայ . կամ զուցէ բարի վարք ու զգացումներ ունենալուն համար :

Արդեօք ուրիշներուն հետ ի՞նչպէս կրվարովիք ամարդութեամբ ու անհողութեամբ մի . ամբարտաւանութեամբ ու նախատինքով մի :



Արդեօք պատիւէ ինկած ու անպիտան մէկը տեսնալու ըլլաք նէ : ա նիկա մարդու տեղ չի դնելիք կրնէ՞ք մի :

Աս խնդիրները ձեր առջևը կը դընեն որ մէկ մը ձեր անցեալ վարքին վրայ նայիք , ու մէկ մ'ալ հիմակվան ունեցած խորհուրդներնուդ վրայ նայիք , ու տեսնաք թէ՞ արդեօք խոնարհութեան ճշմարիտ ոգի մը ձեռք բերած էք մի :

Աւանց աս տեսակ խոնարհութեան մը դուք Յիսուս Վրիստոսի ու իր փրկութեանը հետ հաղորդութիւն մը չէք կրնար ունենալ . ինչու որ Վրիստոս ինքը սրտով խոնարհ ու հեղէր . ու բոլոր իրեն հետեողներն ալ պարտին անանկ ըլլալ :

Թէ որ Վրիստոս ինքըղինքը չի խոնարհեցունէր , ու չուղէր ան իր երկնային փառքերը ձգել , ու թշնամիներուն նախատանայը յանցնառու ըլլալով՝ կեանք չի վարէր աշխար-

հիս վրայ , ու խաչին վրայ մեռնելու  
 ջրլար ան ժամանակը մեր վիճակը ին-  
 սո՞ր պիտի ըլլար :

Մենք անյոյս պիտի մեռնէինք մեր  
 մեղքին մէջը ու պիտի կորսըվէինք ,  
 թէ որ Փրկիչը ինքրդինքը չի խոնար-  
 հեցունէր մեզ մեղքէն ու դժոխքէն  
 փրկելու համար :

Ասանկ ալ մենք խոնարհ ըլլալու  
 չե՞նք մի . մանաւանդ որ խեղճ ու  
 թշուառ մեղաւոր ենք . ու մենք մեզ  
 խոնարհեցունելու ու միշտ խոնարհու-  
 թեան մէջ պահելու պարտականու-  
 թիւն ունինք :

Ուրեմն կրկին հպարտ ու ամբար-  
 տաւան պիտի ըլլանք մի : Մենք ի՞նչ  
 ենք կամ ի՞նչ ունինք հպարտութեան :

Ճշմարտեղիքն ընդհանուր բարեւեղ բնա-  
րութիւնն իւր սննդնալը : Աս բանին՝ Աստու-  
ծոյ վրայ հասարակ սննդնալըն յառաջ գալը :  
Կարգացողը շատ իւրողն աղէկութիւնն իրնայ  
ընելը : Արդեօր ինչը աղէկութիւնն ընելը-  
նից իւր սննդն յի . ստ իրցը ի գործ իւրը-  
նելն յի : Ուր արեղ որ ստանի իրցն ս- ղարս ըն-  
կայ , հոն արեղ շատ հոգն ս- ղարս կայ : Ին-  
չընէն ինչ որ ճշմարտեղիքն պարտաւ- ղութեանը հըզ արե-  
սանս , պարտիմս հասարակ որ ինչը ս- ղին բանի  
հըզ բարեւեղութիւնն էր :

Վաւարքը սիրով կըյաջողվի . այս-  
ինքն , Աստուծոյ վրայ ճշմարտ  
հաւարք մը ունենալը , մարդուն սըր-  
տին մէջը մէկ իղձ մը յաւաջ կըբե-  
րէ , ուրիշներուն աղէկութիւնն ընե-  
լու . ու անոր խօսակցութիւնը ու  
վարքը ան իղձին հետ համեմատ կըլ-  
լայ :

Ասանկ էր Յովսէփին հաւարքը . ու  
իր սրտին մէջը իր ընկերներուն վրայ

բարերարութեան ոգի մը՝ ու անոնց  
աղէկութեանը համար աշխատելու  
ջանք մը առաջ բերել տրվաւ :

Մենք չենք տեսնար որ Յովսէփ  
միայն իր փառքը էվելցունելու հա-  
մար, յատուկ խորհուրդներ ունէր իր  
մտքին մէջը :

Բոլոր իր կեանքին մէջը՝ իր փառ-  
քը ու իշխանութիւնը Վստուծոյ նա-  
խախնամութեամբը իրեն եկաւ, ու  
ոչ թէ իրեն խնդրելովը : Ան ընդհա-  
նուր պատիւը՝ որով Թադաւորը ու բո-  
լոր աղքը բռներ էին, իր ազնիւ ու  
բարեսիրտ բնաւորութիւնը կը ցուցը-  
նէ :

Թէ որ ասանկ չըլլար՝ Վարաւոն  
այնչափ մարդասիրաբար չի պիտի ըն-  
դունէր Յովսէփին մարդիկը ու Յակո-  
բին Թաղմանը հանդէսին մէջն ալ  
այնչափ զարմանալի պատիւ չի պիտի  
ցուցընէր : Ասոր նման մէկ ազնիւ ու  
բարերար կառավարէ մը՝ ի զատ ու-  
րիշ մէկը չէր կրնար ասանկ սիրոյ ու

պատուոյ նշաններ ընդունիլ անանկ մէկ  
 զօրաւոր թագաւորէ մը ու իր անթիւ  
 ժողովուրդներէն :

Աս ուրիշներուն աղէկութիւն ընե-  
 լու իղձը ու ջանքը , դուք ձեզի պար-  
 տիք մէկ մեծ պարտաւորութիւն մը սե-  
 պել : Արդեօք որչափ անգամ . քանի  
 որ ձեր եղբայրներուն քուրերուն ու  
 ընկերներուն քովն էք , կրնաք անոնց  
 անանկ բաներ ըսել կամ անանկ քաղց-  
 րիկ կերպով բաներ ընել , որ անոնք  
 առաւել աղէկ ու երջանիկ ընելու  
 պատճառ պիտի ըլլան :

Արդեօք չի կայ անանկ խեղճ մար-  
 դիկներ ձեր դրացիներուն մէջը , ո-  
 լոնց ձեր ճնողքները կամ բարեկամնե-  
 րը կուզեն քիչ մը բան տալ որ դուք  
 անոնց տանիք . ու աս կերպով դուք  
 ձեզի սովորութիւն պիտի ընէք . ձեր  
 մանկութեան հասակին մէջը չքաւոր-  
 ներուն օղնութիւն ընելու :

Արդեօք բաւական միծցած չէք մի-  
 որ դուք ձեր աշխատութեամբը քիչ

մը բան վաստը կիք , ու նոյն վաստը կածնիդ զանազան օգտակար բաներու համար տաք :

Արդեօք ասանկ մէկ բաղձանք մը ունի՞ք մի ուրիշներուն աղէկութիւն ընելու . թէ որ ունիք նէ , ես մեծապէս կուրախանամ , ու աղօթք կընեմ որ ան ձեր սրտին մէջը էվէնայ , ու ձեր մէջը մէկ սովորութիւն մը ըլլայ . ու ձեզ առաւել ան երկինքի բնակիչներուն նմանցընէ , ու նաև ձեզ պատրաստել տայ յաւիտեան անոնց հետ սուրբ ու երջանիկ ըլլալու : Բայց միտքերնիդ ըլլայ որ եթէ ասանկ մէկ ճշմարիտ իղձ մը ունիք նէ . նոյն իղձը ինքիբնէր գործքով պիտի յատնելի բաժնեկրող կամ բրաժնեկրող մէջը :

Բայց թէ որ ուրիշները առաւել աղէկ ու երջանիկ ընելու համար բան մը չէք ըսեր կամ ըներ նէ , ան ժամանակը յայտնի է որ դուք անոնց համար բարերարութեան զգացումներ չունիք :

Որովհետև ինտոր որ մէկ ծառ մը  
բարի պտուղ կըբերէ . կամ մէկ ա-  
նարատ աղբիւրէ մը մաքուր ջուր կը-  
վաղէ , անանկ ալ բարեսէր զգացում-  
ներ ունեցող մարդը միշտ ինքըզինքը  
ուրիշներուն աղէկութեանը համար  
կըղնէ :

Դուք ալ արդեօք ասանկ բարեսէր  
զգացումներ ունի՞ք մի . արդեօք ձեր  
քովը եղողները աղէկ ու երջանիկ ընե-  
լու իղձ ունի՞ք մի , արդեօք անոնց ան-  
մահ հողիները երջանկացնելու կը-  
բաղձա՞ք մի :

Ահ իմ սիրելի տղաքներս . թէ որ  
ասանկ մէկ իղձ մը չունիք նէ , շատ  
մեծ յանցանքի մը ու վտանգի մը վի-  
ճակի մէջ էք :

Աստուած սէր է : Ինքը կատար-  
եալ բարերար է : Ինքը կուրախանայ  
աղէկութիւն ընելու . ու անդադար ա-  
ղէկութիւն կընէ :

Յիսուս Քրիստոս կատարեալ բա-  
րերար է . մոմտացէ՛ք ան բաներուն

վրայ՝ որոնք որ ինքը ըրաւ , ու կրեց՝  
 ձեզ ու ուրիշները յաւիտեան երջա-  
 նիկ ընելու համար , միայն թէ իրեն  
 ապաւինեցէ՛ք , ու իր ամենօրհնեալ  
 օրինակին նմանեցէ՛ք :

Երկինքին բնակիչներուն բոլորն  
 ալ կատարեալ բարերար են . անոնք  
 կուրախանան Նստուած սիրելու ու ա-  
 նոր ծառայութիւն ընելու , իրենց չորս  
 կողմի եղողներուն սրբութիւնը ու եր-  
 ջանկութիւնը էվելցունելով , ու Նս-  
 տուծոյ բարերարութեանը ու զթու-  
 թեանը պատուիրանքները ՚ի գործ  
 դնելով :

Նրդեօք դուք ալ ասանկ զգա-  
 ցումներ չունի՞ք մի : Աւրիշները աղէկ  
 ու երջանիկ ընելու համար չէ՞ք մի  
 ջանար : Միայն դուք ձեզի համար մի՞  
 կըխորհիք թէ՛ ինչ կերպով դուք ձեզ  
 զուարճացնէք . դուք կուզէ՞ք որ ձեր  
 ծնողքները ու բարեկամները միայն  
 ձեզի ձեռնտու ըլլան ձեր երջանկու-  
 թեանը համար . բայց դուք անոնցը



չէք նայիր : Ըստնք ձեր անձնասէր  
 ու մեղաւոր ըլլալը չե՞ն մի ցուցընէր :  
 Ուրեմն Ըստուած ի՞նչպէս առանց  
 տհաճութեան կրնայ ձեր վրայ նայիլ .  
 ի՞նչպէս ձեզ երկինքը կրնայ ընդու-  
 նել , մինչև որ մէկ մեծ փոփոխու-  
 թիւն մը չըլլայ ձեր զգացումներուն  
 ու վարքին մէջը նէ :

Դուք առ փոփոխութեանը շատ կա-  
 ըտու էք որ ձեր հիմակլան անձնասէր  
 զգացումներուն ու վարքերուն տեղը ,  
 Ըստուած՝ ու ձեր ընկերները ճշմար-  
 տապէս սիրէք :

Սակայն մինչև որ առ երկու բանը  
 չընէք . ո՛չ ասանկ փոփոխութիւններ  
 կրնայ ըլլար , ու ո՛չ ալ կրնաք սկսել  
 ուղիղ զգացումներ ունենալ ու բա-  
 րեղործութիւն ընել , այսինքն մինչև  
 որ ձեր անձնասիրութեանը ու մեղ-  
 քերնուդ համար բոլորով սրտիւ չի  
 տրամիք . ու տէր Յիսուս Վրիստոսին  
 չապաւինիք որ ձեզ բոլոր մեղքեր-  
 նուդ աղատէ :

Աս է բարեպաշտութեան սկիզբը ?  
 հիմա պիտի սկսէք մի խոնարհու-  
 թեամբ ձեր մեղանջականութիւնը Վս-  
 տուծոյ խոստովանիլ , ու փրկութեան  
 համար Քրիստոսի ապաւինիլ . ու  
 հողւոյն սրբոյ համար աղօթք ընել ,  
 որ ձեր հողիներուն վրայ թափվի . որ  
 աս կերպով մէկ մեծ փոփոխութիւն  
 մը ըլլայ ձեր հողիներուն մէջը , մե-  
 ղանջականութենէն սրբութեան փոխ-  
 վելու : Աւ նաև միայն ձեր երջանկու-  
 թիւնը համար ունեցած անձնասիրու-  
 թեանը մէկ դի ձգելու ու Վստուծոյ  
 ու փրկիչին վրայ եռանդադին սէր մը  
 ունենալու հետևելու , ու մէկ զօրաւոր  
 իղձ մը ունենալու ձեր սրտին մէջը ,  
 որ բոլոր ձեր կարողութեանը մէջ ե-  
 դած ջանքը ուրիշներուն աղէկութեա-  
 նը ու երջանկութեանը համար ընէք :



